



հունիս



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

JUSTICE

2026

ԻՐԱՎԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂԱԿԱՆ
ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ



ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2026
N 4 (65)

Գիտական հանդես
Հրատարակվում է 2008 թվականից

Հիմնադիր և հրատարակիչ՝ «Իրավական կրթության և վերականգնողական
ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Գլխավոր խմբագիր՝ Աշոտ Հայրապետյան - իրավաբանական գիտությունների
դոկտոր, դոցենտ

Բոլոր իրավունքները պաշտպանված են:

Վերատպելը միայն հանդեսի խմբագրության թույլտվությամբ:

Խմբագրության կարծիքը միշտ չէ, որ համընկնում է հեղինակների կարծիքի հետ:

Գովազդային նյութերի բովանդակության համար խմբագրությունը

պատասխանատվություն չի կրում:

Հեղինակային նյութերը վերանայվում են և չեն վերադարձվում:

«Արդարադատություն» գիտական հանդեսն ընդգրկված է Հայաստանի
Հանրապետության բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ) սահմանած
դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերական գիտական
հրատարակությունների ցուցակում:

Խմբագրության հասցեն՝ 008, ք. Երևան, Մ. Խորենացու 162ա,
հեռախոս՝ 060380686

Էլ. կայք՝ www.ardaradatutyunjournal.com

Հրատարակված է 15.06.2026թ.

Տպագրությունը՝ էլեկտրոնային:

Լրատվական գործունեություն իրականացնող «Իրավական կրթության
և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ

Հասցեն՝ ք. Երևան, Մ. Խորենացու 162ա

Գրանցման վկայական - N 278.210.03426, գրանցված է ՀՀ արդարադատության
նախարարության պետական ռեգիստրի Էրեբունու տարածքային բաժնի կողմից:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Սրբուհի Գալյան ՀՀ Արդարադատության նախարար, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի ամբիոնի դասախոս:

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

- Աշոտ Հայրապետյան** ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի անդամ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դեցեմտ, գլխավոր խմբագիր:
- Արմեն Հարությունյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
- Աշոտ Խաչատրյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
- Արմեն Եսայան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
- Ստեփան Ծաղիկյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր: Հայ-Ռուսական (սլավոնական) համալսարանի իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քրեական և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչ:
- Սերգեյ Առաքելյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
- Ռուզաննա Հակոբյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի ղեկավար:
- Ժորա Ջհանգիրյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Գլաձոր» համալսարանի ղեկավար:
- Ռուբեն Ավագյան** Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, «Մանց» համալսարանի ղեկավար:
- Արփիմե Հովհաննիսյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս:
- Աշխեն Սողոմոնյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ:
- Ռաֆիկ Գրիգորյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, «Միզմա լո գրուպ» փաստաբանական գրասենյակի կառավարող գործընկեր:
- Գևորգ Բաղդասարյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու:
- Տիգրան Մարկոսյան** Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ Մրցակցության և սպառողների շահերի պաշտպանության հանձնաժողովի անդամ:
- Մուշեղ Բաբայան** Իրավաբանական գիտությունների թեկնածու:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Անի Մութաֆյան	Իրավաբանական գիտությունների թեկնածու, ասիստենտ, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ:
Օտարերկրյա անդամներ	
Հայկ Կուպեյանց	Իրավաբանական գիտությունների թեկնածու, Լոնդոնի թագավորական քոլեջի դասախոս:
Անդրեյ Սկիբա	Ռուսաստանի Դաշնության պատիժների իրականացման դաշնային ծառայության իրավունքի և կառավարման ակադեմիայի իրավաբանական ֆակուլտետի քրեակատարողական իրավունքի ամբիոնի պետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ, ներքին ծառայության մայոր:
Եվգենի Բարաշ	Ուկրաինայի ներքին գործերի ազգային ակադեմիայի քրեակատարողական ծառայության ինստիտուտի պետ, ներքին ծառայության գեներալ-մայոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ:
Հենրիկ Լինդերբորգ	Ֆինլանդիայի արդարադատության նախարարության քրեական պատիժների վարչության ավագ գիտաշխատող, սոցիալական գիտությունների դոկտոր:
Նիկիտա Իվանով	Համառուսական արդարադատության պետական համալսարանի քրեական իրավունքի և կրիմինալոգիայի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
Սերգեյ Չերնյավսկի	Ուկրաինայի ներքին գործերի Ազգային ակադեմիայի պրոռեկտոր, Ուկրաինայի գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ, ոստիկանության գնդապետ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:
Վադիմ Վինոգրադով	Բարձրագույն տնտեսագիտական դպրոցի իրավունքի ֆակուլտետի ղեկան, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

- 5 **ՄԱՐԹԱ ՄԵԼԻՔՄԵԹՅԱՆ**
Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմի սուբյեկտիվ տարրերի բնութագիրը
- 13 **ՁԱՎԵՆ ՍՄԲԱՏՅԱՆ**
Ձանցանքը ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարելը որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք
- 24 **ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
Դատական անկախությունը և անաչառությունն արհեստական բանականության դարաշրջանում
- 37 **ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**
Արհեստական բանականության ազդեցությունը դատական պաշտպանության իրավունքի իրացման հարցում
- 48 **ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**
Աղմուկը որպես անձնական կյանքի միջամտություն
- 59 **ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**
Շրջակա միջավայրի պահպանությունը որպես ազգային անվտանգության բաղադրիչ
- 74 **ՄԵՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**
Վարչական բողոքի իրավական բնույթը և կառուցվածքային տարրերը
- 81 **ՄԵՐԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**
Պատշաճ վարչարարության իրավունքը վարչական բողոքարկման վարույթում
- 89 **ԳՈՀԱՐ ԱԳՈՆՅ**
Անմեղության կանխավարկածի խախտման իրավական հետևանքները հայաստանի հանրապետության քրեադատավարական իրավունքում
- 103 **ՄՀԵՐ ԲԱՂԳԱՍԱՐՅԱՆ**
Իշխանությունների բաժանման սկզբունքի կատարելագործման հիմնախնդիրները սահմանադրական բարեփոխումների համատեքստում
- 111 **ՄՀԵՐ ԲԱՂԳԱՍԱՐՅԱՆ**
Իշխանությունը յուրացնելու հանցագործության տարատեսակ մոտեցումները, արտասահմանյան փորձը և սահմանադրական կարգի հիմունքները

ՄԱՐԹԱ ՄԵԼԻԸՍԵԹՅԱՆ

«Ռուս-հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության ռեկտորի կազմակերպչական հարցերով խորհրդական, քրեական իրավունքի և քրեական դատավարության ամբիոնի դասախոս, ՀՀ ՆԳՆ կենսաթոշակառու, ոստիկանության փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների թեկնածու

ԵՐԵՒԱՅԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԽՆԱՍՔԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԿԱՍՈՉ ՊԱՏՇԱԾ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՆՑԱԿԱԶՄԻ ՍՈՒԲՅԵԿՏԻՎ ՏԱՐԲԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ընտանիքի և երեխայի շահերի կենսագործման կարևորագույն երաշխիքներից մեկը՝ դրանց քրեաիրավական պաշտպանությունն է: Հարկ է նշել, որ աշխարհի բազմաթիվ պետությունների քրեական օրենսգրքերում առկա են կոնկրետ քրեաիրավական նորմեր, որոնք միտված են այդ շահերի պաշտպանությանը: ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար: Սույն հոդվածում ներկայացված է քննարկվող հանցակազմի սուբյեկտիվ տարրերի բնութագիրը, դրանց ուսումնասիրության վերաբերյալ եզրահանգումներն ու օրենսդրական առաջարկությունները:

Հիմնաբառեր - երեխա, դաստիարակություն, խնամք, ծնող, պարտականություն:

ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի կամ անուղղակի դիտավորությամբ:

Հանցակազմի սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշը դիտավորությունն է կամ անզգուշությունը: Բոլոր հանցակազմերում դիտավորությունը կամ անզգուշությունը նկարագրվում են, կամ դիտավորության առկայությունը ենթադրվում է:

ՀՀ քրեական օրենսգրքում տրվում է դիտավորության ընդհանուր բնութագիրը և ամրագրվում է այն դրույթը, որ դիտավորության առկայության համար անհարաժեշտ է, որ անձը գիտակցի իր արարքի փաստական հանգամանքները, ընդ որում՝ այն փաստական հանգամանքները, որոնք հանցակազմի հատկանիշ են: Սա շատ կարևոր է դիտավորությամբ կատարվող հանցագործությունների ճիշտ որակման համար: Բանն այն է, որ հանցակազմի հատկանիշ կարող են լինել բազմաթիվ օբյեկտիվ հանգամանքներ՝ հանցագործության եղանակը, տեղը, ժամանակը, հանցագործության առարկան, հետևանքները: Եթե նշված փաստական հանգամանքները հանցակազմի հատկանիշ են, ապա դրանք կարող են մեղսագրվել անձին միայն այն դեպքում, երբ նա գիտակցել է դրանց առկայությունը: Հակառակ դեպքում արարքը չի կարող որակվել այն հոդվածով, որով նախատեսված է տվյալ հանցակազմը: Եթե անձը չի գիտակցել իր

արարքի այն փաստական հանգամանքները, որոնք օրենքով նախատեսված են որպես տվյալ հանցակազմի հատկանիշ, ապա արարքը կարող է որակվել մեկ այլ հոդվածով կամ հոդվածի մեկ այլ մասով, որում նախատեսված հանցակազմի հատկանիշները նրա արարքում առկա են և նա գիտակցել է դրանք, կամ կարող է պատասխանատվության ենթարկվել անզգուշությամբ հանցանք կատարելու համար, եթե դրա համար օրենքով պատասխանատվություն է նախատեսված, կամ ընդհանրապես կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից: Կարևոր է փաստել նաև, որ արարքի հակաիրավականության գիտակցումը կամ դա գիտակցելու կարողությունը չի մտնում դիտավորության բովանդակության մեջ. այն կազմում է մեղքի բովանդակությունը:

Ուսումնասիրելով երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սուբյեկտիվ կողմի վերաբերյալ տարբեր հեղինակների դատողությունները, պետք է նշել, որ հեղինակների մեծամասնության կարծիքով այն կատարվում է ուղղակի դիտավորությամբ: Ընդ որում հեղինակների մի մասը պնդում է, որ քննարկվող հանցագործությունը կարող է կատարվել անուղղակի դիտավորությամբ: Այսպես, Ա.Ն.Իզմատովը նշում է, որ ուղղակի դիտավորության դեպքում սուբյեկտը ոչ միայն գիտակցում է, որ չի կատարում կամ ոչ պատ-

շաճ է կատարում երեխային դաստիարակելու և խնամելու պարտականությունը, այլ նաև կարող է երեխայի նկատմամբ դաժան վերաբերմունք դրսևորել: Անուղղակի դիտավորության դեպքում անձը, գիտակցելով, որ չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը, պատշաճ հսկողություն և խնամք չի իրականացնում, անպատասխանատու և անփույթ է վերաբերվում իր ծնողական պարտականություններին, սակայն այդ հանգամանքին անտարբեր մոտեցում է ցուցաբերում:

Մյուս հեղինակների կարծիքով, երեխայի առողջության համար վտանգավոր հետևանքների նկատմամբ վերաբերմունքը կարող է նաև անզգուշությամբ դրսևորվել:

ՀՀ քրեական օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցանքի սուբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել դիտավորությամբ կամ անզգուշությամբ: Սա նշանակում է, որ յուրաքանչյուր կոնկրետ հանցանքում պարտադիր պետք է առկա լինի կամ դիտավորությունը, կամ անզգուշությունը:

Երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելու հանցակազմը նյութական է, նման պայմաններում հաշվի առնելով, որ օրենքը հանցագործության ավարտը կապում է վտանգավոր հետևանքների առաջացման հետ, ապա հանցանքը համարվում է ուղղակի դիտավորությամբ կատարված, եթե այդ հետևանքների առաջացումն անձի նպատակն է եղել կամ նպատակին հասնելու միջոց, կամ նա նախատեսել է դրանց առաջացման անխուսափելիությունը: Եթե օրենքը հանցագործության ավարտը կապում է վտանգավոր հետևանքների առաջացման հետ, ապա հանցանքը համարվում է անուղղակի դիտավորությամբ կատարված, եթե այդ հետևանքների առաջացումն անձի նպատակը չի եղել, սակայն նա նախատեսել է դրանց առաջացման իրական հնարավորությունը, և նրա համար միևնույն է եղել՝ դրանք կառաջանան, թե ոչ:

Պետք է նշել, որ քննարկվող հանցագործության դեպքում հանցակազմի պարտադիր հատկանիշ են համարվում վտանգավոր հետևանքները, ուստի հանցավորի գիտակցական և կամային վերաբերմունքը դրսևորվում է նաև դրանց նկատմամբ: Պահպանելով որդեգրված տրամաբանությունը՝ քրեական նոր օրենսգիրքը նյութական հանցակազմով հանցագործության ժամանակ դրսևորվող ուղղակի դիտավորությունը բնորոշում է «նպատակ» հասկացությամբ:

Ուղղակի դիտավորությունն այս հանցագործություններում կարող է դրսևորվել երեք ձևով՝

ա) վտանգավոր հետևանքներն անձի նպատակն են,

բ) վտանգավոր հետևանքները նպատակին հասնելու միջոց են,

գ) անձը նախատեսել է վտանգավոր հետևանքների առաջացման անխուսափելիությունը:

Առաջին երկու դրսևորումների կապակցությամբ օրենքը հատուկ չի շեշտում հետևանքները նախատեսելու մասին, քանի որ նպատակի մասին նշումն արդեն իսկ բավարար է հավաստելու, որ դրանք նախատեսվում են անձի կողմից:

Կարծում ենք, քննարկվող հանցակազմի բնույթը ենթադրում է հանցավորի կողմից երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սոցիալական նշանակությունը, ավելին՝ գիտակցում է, որ իր գործողությամբ կամ անգործությամբ էական վնաս է պատճառում երեխային, վատթարացնում երեխայի առողջությունը, կամ այն կարող է վերածվել դաժան վերաբերմունքի, կամ անզգուշությամբ առաջացնել երեխայի մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանք:

Ինչ վերաբերում է տվյալ դեպքում անուղղակի դիտավորության դրսևորմանը, ապա, ի տարբերություն ուղղակի դիտավորության, անուղղակի դիտավորության դեպքում վտանգավոր հետևանքները անձի ոչ նպատակն են, ոչ նպատակին հասնելու միջոց են, ոչ էլ անխուսափելի են:

ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 1-ին մասի և 2-րդ մասի 1-ին կետի ձևակերպումը նախատեսում է ուղղակի կամ անուղղակի դիտավորություն, իսկ 2-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը նախատեսում է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու արդյունքում անզգուշությամբ երեխայի մահ կամ առողջությանը ծանր կամ միջին ծանրության վնասի պատճառում կամ այլ ծանր հետևանքի առաջացումը:

Անուղղակի դիտավորությունը բնորոշելիս օրենքը հստակ նշում է այդ դեպքում վտանգավոր հետևանքների առաջացման իրական հնարավորությունը նախատեսելու մասին: Մրանով անուղղակի դիտավորությունը տարբերվում է հանցավոր ինքնավստահությունից: Հանցավոր ինքնավստահության բնորոշման մեջ նույնպես նշվում է վտանգավոր հետևանքները նախատեսելու հնարավորության մասին, սակայն առանց «իրական» բառն օգտագործելու: Բանն այն է, որ անուղղակի դիտավորության դեպքում անձը գիտակցում է, որ եթե վտանգավոր հետևանքներն առաջանան, ապա դրա պատճառը կոնկրետ իր արարքն է լինելու, իսկ հանցավոր ինքնավստահության դեպքում անձը նախատեսում է վտանգավոր հետևանքների առաջացման ոչ թե իրական, այլ վերացական հնարավորությունը, այսինքն՝ անձը գիտակցում է, որ իր

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

արարքի նման արարքներից վտանգավոր հետևանքներ կարող են առաջանալ, սակայն կոնկրետ իր արարքից տվյալ իրադրությունում դրանք չեն առաջանալու: Անուղղակի դիտավորության որոշ դեպքերում անձը կարող է հույս ունենալ, որ իր արարքից վտանգավոր հետևանքներ չեն առաջանա, սակայն հույսը դնում է պատահականության վրա:

Այսպիսով, մեր դիտարկմամբ երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հանցավորը գիտակցում է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը կատարելու իրավական պարտականությունը, սակայն չի ցանկանում կատարել այն, դրանով իսկ վնաս պատճառելով երեխայի դաստիարակության կամ խնամքի իրավունքը պաշտպանող հասարակական հարաբերություններին:

Հանցագործության շարժառիթը, նպատակը և հույզերը, բնութագրելով անձի մոտ հանցագործության հետ կապված և դրան ուղեկցող հոգեբանական գործընթացը՝ հանդիսանում են հանցակազմի սուբյեկտիվ կողմի ֆակտուրաներ, որոնք որոշակի իրավաբանական նշանակություն ունեն:

Հաճախ իրավապահ մարմինները և մասնավորապես՝ դատարանը արժանի ուշադրություն չեն դարձնում հանցագործության իրական շարժառիթների և նպատակների բացահայտմանը: Մինչդեռ դա շատ կարևոր է ոչ միայն հանցագործությունները ճիշտ որակելու, այլև քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման համար:

Հանցագործությունների շարժառիթների ճիշտ բացահայտումը, դրանց ճիշտ գնահատումը կարևոր նշանակություն ունեն ոչ միայն հանցագործությունների որակման, քրեական պատասխանատվության և պատժի անհատականացման, այլև դատապարտյալին ուղղելու, նրա նկատմամբ ուղղիչ աշխատանքային մեթոդներից ճիշտ մեթոդներ ու եղանակներ ընտրելու համար:

Հանցագործության նպատակը և հանրորեն վտանգավոր հետևանքները կարող են հարաբերակցվել հետևյալ ձևերով.

- Հանրորեն վտանգավոր հետևանքները արարքի նպատակն են: Այսպիսի իրավիճակը բնութագրական է ուղղակի դիտավորությամբ կատարվող հանցանքներին:

- Հանրորեն վտանգավոր հետևանքները վերջնական նպատակին հասնելու միջոց են, միջանկյալ նպատակ: Այս իրավիճակը նույնպես բնութագրական է ուղղակի դիտավորությամբ կատարվող հանցանքներին:

- Հանրորեն վտանգավոր հետևանքները ոչ արարքի նպատակն են, ոչ էլ վերջնական նպատա-

կին հասնելու միջոց, բայց անխուսափելի են: Մա նույնպես բնութագրական է ուղղակի դիտավորությամբ:

- Հանրորեն վտանգավոր հետևանքները ոչ արարքի նպատակն են, ոչ էլ վերջնական նպատակին հասնելու միջոց և անխուսափելի չեն: Այսպիսի իրավիճակը, նշված հանգամանքների նկատմամբ անձի դրսևորած գիտակցական և կամային վերաբերմունքի առանձնահատկությունների հետ կապված, բնութագրական է ուղղակի դիտավորությամբ կամ անզգուշությամբ:

Անձի արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով որակելու համար, հանցագործության շարժառիթի և նպատակի որոշումը որևէ նշանակություն չունի, սակայն գործի հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ ուսումնասիրության, ինչպես նաև արդարացի պատժի նշանակման համար դրանց սահմանումը անհրաժեշտ է: Բացի այդ, առանձին հետազոտողներ նշում են, որ «մարդու գիտակցային դիտավորյալ գործողությունը չի կարող չունենալ շարժառիթ»:

Հեղինակի ծառայողական պրակտիկայի վերլուծությունը թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ ծնողների և նրանց փոխարինող անձանց կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարումը պայմանավորված է հետևյալ շարժառիթներով՝

1. Դաստիարակելու մեթոդ,
2. Անչափահասի նկատմամբ հակակրանքը, անչափահասին ֆիզիկական և հոգեկան տառապանք պատճառելու ցանկությունը:

Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի՝ քրեական պատասխանատվության ենթակա է մեղսունակ ֆիզիկական անձը, որի 16 տարին լրացած է եղել հանցանքը կատարելու պահին, ինչպես նաև իրավաբանական անձը:

Հանցագործության հատուկ սուբյեկտը հանցանք կատարած այն անձն է, որը, բացի ընդհանուր սուբյեկտի հատկանիշներից, օժտված է ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով սահմանված լրացուցիչ հատկանիշներով, որոնք հիմք են տալիս նրան քրեական պատասխանատվության ենթարկելու ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված համապատասխան հանցագործության համար:

Նորմի դիպլոմատիայում հատուկ սուբյեկտի հատկանիշների մատնանշումը նշանակում է, որ հասարակությանը վնաս պատճառած ցանկացած ֆիզիկական, մեղսունակ, օրենքում նշված տարիքը լրացած անձ չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել:

Քրեական օրենքը երբեմն սահմանափակում է այն անձանց շրջանակը, որոնք կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել սուբյեկտի առանձնահատուկ, որոշակի հատկանիշների

մատնանշմամբ:

Նորմի դիպրոկից հայում հատուկ սուբյեկտի հատկանիշների ընդգրկումը սահմանափակում է քրեական պատասխանատվության հնարավորությունը հանցագործության ընդհանուր սուբյեկտի հատկանիշներով, քանի որ դրանց կատարման համար քրեական պատասխանատվությունը վրա է հասնում այն դեպքում, երբ սուբյեկտը օժտված է հատուկ հատկություններով: Եվ սա ամենևին չի նշանակում, որ հատուկ հատկությունների առկայությունը կապված է քրեական պատասխանատվության խստացման հետ:

Հատուկ սուբյեկտի հատկանիշները իրենց բովանդակությամբ տարաբնույթ են: ՀՀ քրեական օրենսգրքում բազմաթիվ են հատուկ սուբյեկտով հանցակազմերը:

Հատուկ սուբյեկտի հատկանիշները կարող են վերաբերվել հանցագործի անձի տարբեր բնութագրերին՝ քաղաքացիությանը, տարիքին, զբաղեցրած պաշտոնին, մասնագիտությանը, ազգակցական կապին, տուժողի և հանցագործի միջև եղած կապի բնույթին և այլն:

Սուբյեկտի ընդհանուր հատկանիշները չեն նշվում ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմերի դիպրոկից հայում, դրանք օրենսդիրի կողմից դուրս են բերված Ընդհանուր մաս որպես ընդհանուր սկզբունքային դրույթներ: Ի տարբերություն նախկին քրեական օրենսդրության, որտեղ Ընդհանուր մասում բացակայում էր հատուկ սուբյեկտի հասկացության սահմանումը, գործող օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված է թե հատուկ սուբյեկտի սահմանումը, թե հատուկ սուբյեկտի կողմից կատարված հանցանքի որակման առանձնահատկությունները:

Հատուկ սուբյեկտի հատկանիշները՝ տվյալ հանցագործության սուբյեկտի կոնկրետ առանձնահատկություններն են, որոնք դուրս են գալիս այլ հանցագործությունների սուբյեկտներին ներկայացվող ընդհանուր պահանջների շրջանակներից դուրս: Դրանք բնութագրում են սուբյեկտի հատկությունների տարաբնույթ շրջանակ:

ՀՀ քրեական նոր օրենսգրքի նորամուծությունն այն է, որ կարգավորվել է հանցագործության հատուկ սուբյեկտի հարցը: Նշվել է հատուկ սուբյեկտի հասկացությունը: Օրենքում հատուկ սուբյեկտը բնորոշվել է հետևյալ կերպ. հանցագործության հատուկ սուբյեկտը հանցանք կատարած այն անձն է, որը, բացի ընդհանուր սուբյեկտի հատկանիշներից, օժտված է քրեական օրենսգրքի Հատուկ մասով սահմանված լրացուցիչ հատկանիշներով, որոնք հիմք են տալիս նրան քրեական պատասխանատվության ենթարկելու քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված համապատասխան հանցագործության համար:

Հանցագործությունների որակման համար հատուկ սուբյեկտի հատկանիշների սահմանումը անհրաժեշտ է նույնքան, ինչքան հանցագործության ընդհանուր սուբյեկտի հատկանիշների սահմանումը: Միայն բոլոր հատկանիշների սահմանումը թույլ է տալիս որոշել ընդունակ է արդյոք անձը հանրորեն վտանգավոր արարքի կատարման համար ենթարկվել քրեական պատասխանատվության, թե ոչ:

Հատուկ սուբյեկտը կարող է հանդես գալ որպես որակյալ հատկանիշ, որը կազմում է ծանրացնող և մեղմացնող հանգամանքներով հանցակազմը:

ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված հանցագործության սուբյեկտը՝ հատուկ է, մասնավորապես՝

- ծնողը (խորթ ծնող, որդեգրող, խնամատար ծնող) կամ
- այլ օրինական ներկայացուցիչը, ում վրա դրված է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը կամ
- անձը, ում վրա դրված է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը (խնամակալ):

Պետք է նշել, որ նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 170-րդ հոդվածը որպես սուբյեկտ նախատեսում էր նաև մանկավարժին, ուսումնական, բուժական կամ դաստիարակչական հաստատության այլ աշխատողներին: Ներկայումս կատարված փոփոխություններով հիշյալ անձինք փոխարինվել են այլ օրինական ներկայացուցիչներով:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 30-րդ կետի՝ օրինական ներկայացուցիչ են է համարվում անչափահաս, անգործունակ կամ հոգեկան առողջության խնդիր ունեցող մեղադրյալի, տուժողի կամ վկայի ծնողը, որդեգրողը, խնամակալը կամ հոգաբարձուն, իր իրավասության սահմաններում՝ խնամակալության և հոգաբարձության մարմնի աշխատակիցը, մահացած մեղադրյալի կամ ենթադրյալ հանցանք կատարած և մահացած անձի մերձավոր ազգականը, ինչպես նաև տուժող կամ գույքային պատասխանող իրավաբանական անձի ղեկավարը:

Արձանագրենք, որ ՀՀ-ում օրինական ներկայացուցիչների ինստիտուտը սահմանող իրավական ակտերը կատարելագործման անհրաժեշտություն ունեն: Նշենք, որ ՀՀ գործող օրենսդրությունում՝ ՀՀ ընտանեկան օրենսգրքում, ՀՀ քրեական օրենսգրքում, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կամ որևէ այլ իրավական ակտում տրված չէ այլ օրինական ներկայացուցիչ սահմանումը, նշված անձանց սպառիչ ցանկը: Օրինակ, Ուկրաինայի քրեական դատավարության օրենսգրքի դրույթների համաձայն որպես կասկածյալների, մեղադրյալների, տուժողների օրինա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան ներկայացուցիչներ կարող են ներգրավվել ծնողները (որդեգրողները), իսկ վերջիններիս բացակայության դեպքում՝ խնամակալները կամ հոգաբարձուները, ընտանիքի մյուս չափահաս անդամները կամ ազգականներից որևէ մեկը, ինչպես նաև խնամակալության և հոգաբարձության մարմինների, կամ այլ կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնց խնամքին է հանձնված անչափահասը : Ռուսաստանի Դաշնության քրեական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 12-րդ կետի համաձայն՝ օրինական ներկայացուցիչներ կարող են լինել անչափահաս կասկածյալի, մեղադրյալի կամ տուժողի ծնողները, որդեգրողները, խնամակալները կամ հոգաբարձուները, այն կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնց խնամքին է հանձնված անչափահասը : Այսպես, ՌԴ քր. դատ. օր-ը և սահմանում է օրինական ներկայացուցիչների սպառիչ ցանկը:

Արձանագրենք երկու էական տարբերություն չէ քր. դատ. օր-ի և Ուկրաինայի քր. դատ. օր-ի միջև: Առաջինը, որպես օրինական ներկայացուցիչներ կարող են ներգրավվել ընտանիքի մյուս չափահաս անդամները, երկրորդը՝ չափահաս ազգականներից որևէ մեկը: Այս դրույթը էապես ընդլայնում է օրինական ներկայացուցիչների հնարավոր շրջանակը և վարույթ իրականացնող մարմնին անչափահաս իրավախախտի կամ տուժողի համար օրինական ներկայացուցիչ ընտրության հնարավորություններ տալիս: Երբեմն հատուկ սուբյեկտի հատկանիշները չէ քրեական օրենսգրքի Հատուկ մասի կոնկրետ նորմում չեն նշվում, սակայն դրանք կարելի է սահմանել իրավական ակտերի սխտեմատիկ, տրամաբանական մեկնաբանության արդյունքում: Այսպես՝

- չէ ընտանեկան օրենսգրքի 55-րդ հոդվածը սահմանում է այն, որ խորթ ծնողները իրավունք ունեն և պարտավոր են դաստիարակել և խնամել իրենց ամուսնու՝ նախկին ամուսնությունից ծնված և իրենց հետ համատեղ ապրող երեխաներին (խորթ երեխաներին):

- չէ ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդվածը սահմանում է այն, որ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների խնամքը և դաստիարակությունը կազմակերպվում են որդեգրման կամ խնամակալության (հոգաբարձության) միջոցով կամ խնամատար ընտանիքում, իսկ նման հնարավորության բացակայության դեպքում՝ դաստիարակչական, բժշկական հաստատությունում, բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպություններում կամ բնակչության կամ երեխայի սոցիալական պաշտպանության նպատակ հետապնդող այլ կազմակերպություններում:

- չէ ընտանեկան օրենսգրքի 111-րդ հոդվածը սահմանում է այն, որ խնամատարությունը կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երե-

խայի խնամքի և դաստիարակության ժամանակավոր կազմակերպումն է այլ ընտանեկան միջավայրում իրավասու մարմինների կողմից ընտրված, հաշվառված, վերապատրաստված, որակավորված անձի միջոցով մինչև երեխայի ընտանիքում խնամատարության կիրառման հիմք հանդիսացած իրավիճակի վերացումը: Այն անձը, որը խնամքի և դաստիարակության պարտավորություն է ստանձնել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի նկատմամբ, համարվում է խնամատար ծնող: Այն երեխան, որի խնամքը և դաստիարակությունը կազմակերպվում են խնամատար ընտանիքում, համարվում է հոգեզավակ, իսկ խնամատար ծնողից և հոգեզավակից կազմված ընտանիքը՝ խնամատար ընտանիք:

Գործնականում կարող են որոշակի խնդիրներ առաջանալ այն դեպքերում, երբ սուբյեկտը, համատեղ բնակվելով երեխայի հետ, հանդիսանալով նրա կենսաբանական հայրը, չունի իրավաբանական փաստի օրենքով սահմանված կարգով գրանցում, չի կատարում երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը կամ ոչ պատշաճ է դրանք կատարում: Նմանատիպ իրավիճակները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ երեխայի ծնողները հաճախ փոխադարձ համաձայնությամբ չեն գրանցում երեխայի հայրության ճանաչման փաստը, նպատակ ունենալով օգտվել պետության կողմից տրամադրվող սոցիալական ծրագրերից, իսկ պետությունից ստացվող դրամական միջոցները ոչ միշտ են նպատակային օգտագործվում, քանի որ նման իրավիճակները առկա են այնպիսի ընտանիքներում, որտեղ հայրերը հիմնականում տառապում են ակոհողամոլությամբ, թունամոլությամբ և այլն: Այս դեպքերում միանշանակ իրավաբանորեն որպես հայր չգրանցված, բայց կենսաբանական հոր նկատմամբ գործում են չէ ընտանեկան օրենսգրքի 55-րդ հոդվածի դրույթները, այսինքն՝ վերջինս դիտարկվում է որպես խորթ ծնող և հավասարապես կրում է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը: Օրինակ, ի տարբերություն չէ-ի, ՌԴ ընտանեկան օրենսգրքում բացակայում են խորթ ծնողների ընտանիքում ապրող երեխաների նկատմամբ դաստիարակելու պարտականությունների կատարման պահանջները, ուստի նման դեպքերում հիշյալ անձանց չի կարող մեղսագրվել ՌԴ քրեական օրենսգրքի 156-րդ հոդվածով նախատեսված արարքի կատարումը:

Չէ-ում բավականին նոր է խնամատարության ինստիտուտը: Խնամատար ընտանիք ծրագրի հիմնական նպատակը առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին հաստատություններից ընտանիք վերադարձնելն է և նրանց խնամքն ընտանիքում ապահովելն է: Խնամատար ընտանիքի ինստիտուտի ներդրման առաջին փորձերն արվել

են դեռևս 1999թ, երբ Ֆրանսիայի Քրեթեյ քաղաքի քաղաքապետարանի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև կնքվել էր համագործակցության համաձայնագիր, որի շրջանակներում ՀՀ մանկատներում խնամվող 9 երեխաների խնամքը կազմակերպվել էր ընտանիքներում, ովքեր ամսական գումար էին ստանում երեխաների խնամքը իրականացնելու համար: Սակայն դասական խնամատուր դա խնամատարություն չէր, քանի որ չկար իրավական դաշտ, որը կկարգավորեր պետության, խնամատար ծնողների և երեխաների միջև իրավահարաբերությունները:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը Հայաստանում սկսեց խնամատար ընտանիքի փորձնական ծրագիրը, որը հիմնված էր միջազգային փորձի վրա և նպատակ ուներ Հայաստանում զարգացնել երեխաների այլընտրանքային խնամքի կազմակերպման լավագույն ձևերից մեկը: Խնամատարության ինստիտուտի ներդրումը հետապնդում էր հետևյալ նպատակները.

- ապահովել առանց ծնողական խնամքի մնացած երեխաների՝ ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ ընտանեկան օրենսգրքով և այլ իրավական ակտերով նախատեսված իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն

- երեխաների խնամքի ու պաշտպանության հաստատություններում գտնվող այն երեխաների խնամքի ու դաստիարակության կազմակերպման այլ ընտրանքային ձև, ովքեր չունեն կենսաբանական (հարազատ) ընտանիք կամ տարբեր պատճառներով հնարավոր չէ նրանց վերադարձնել ընտանիք, կամ անհնար է ապահովել ազգականների ընտանիքներում նրանց խնամքի կազմակերպումը:

Ուշագրավ է այն, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքը սահմանում է այն, որ երեխայի ծնողն իրավունք ունի մասնակցելու իր երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու գործընթացին, եթե դա չի հակասում երեխայի շահերին: Երեխայի խնամքը և դաստիարակությունը խնամատար ընտանիքում կազմակերպելու դեպքում երեխայի ծնողներն իրավունք ունեն և պարտավոր են կապ պահպանել երեխայի հետ, եթե նրանք դատական կարգով չեն զրկվել ծնողական իրավունքներից, և եթե այդ կայի պահպանումը բխում է երեխայի շահերից:

Նման պայմաններում գործնականում ևս կարող են բարդություններ առաջանալ ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածը կիրառելիս, մասնավորապես՝ երեխայի դաստիարակությունն ու խնամքը հանձնելով խնամատար ընտանիքին օրենսդիր մարմինը վերջինիս օժտում է ծնողի պարտականություններով, միաժամանակ նախատեսելով կենսաբանական ծնողի մասնակցությունը երեխայի դաստիարակության գործընթացին:

Կարծում ենք, խնամատար ծնողի կողմից

խնամատարության պայմանագրով, որով սահմանվում են երեխայի խնամքի, դաստիարակության և կրթության պայմանները, կողմերի իրավունքներն ու պարտականությունը, ինչպես նաև այդ պայմանագրի ժամկետի երկարաձգման, դադարման հիմքերն ու հետևանքները, ստանձնած երեխային դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում քննարկվող հոդվածով քրեական պատասխանատվության է ենթակա խնամատար ծնողը:

Այլ օրինական ներկայացուցիչների թվին, ում վրա դրված է երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը, պատկանում է նաև խնամակալը, որն ի տարբերություն խնամատար ծնողի երեխայի դաստիարակությունն իրականացնում է այնհատույց: Նշենք, որ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում է այն երեխաների նկատմամբ, ովքեր մնացել են առանց ծնողական խնամքի՝ նրանց պահելու, դաստիարակելու և կրթություն տալու, ինչպես նաև նրանց իրավունքները և շահերը պաշտպանելու նպատակներով: Խնամակալությունը սահմանվում է համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի որոշմամբ:

Խնդրահարույց են նաև այն դեպքերը, երբ երեխաների փաստացի դաստիարակությունն ու խնամքը ժամանակավորապես իրականացնում են հարազատները՝ տատիկներն ու պապիկները, ավագ քույրերն ու եղբայրները, ծնողների քույրերն ու եղբայրները առանց խնամակալության ձևակերպման և անկախ այն հանգամանքից, որ վերջիններիս վրա օրենսդրական մակարդակով երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը դրված չեն: Ընտանեկան իրավունքի գիտությունում մման անձանց դասում են փաստացի դաստիարակողների շարքին¹²:

ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի ձևակերպումից ակնհայտ է, որ թվարկված անձինք չեն կարող հանդես գալ որպես քննարկվող հանցակազմի սուբյեկտներ, վերջիններիս կողմից երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականություններն օրենքով ամրագրված չլինելու հիմնավորմամբ: Այստեղից ետևում է, որ փաստացի դաստիարակողի իրավական անորոշակիությունը գրեթե անհնարին է դարձնում նման ընտանիքներում երեխայի դաստիարակության պարտականությունների կատարման նկատմամբ հսկողությունը: Սույն աշխատանքի երրորդ գլխում մանրամասն կքննարկվեն իրավասու պետական մարմինների կողմից օրենքով նախատեսված մշտադիտարկման իրականացման վերաբերյալ մեր նկատառումները, որոնց մեխանիզմները թերի են և կատարելագործման կարիք ունեն:

Ամփոփելով վերոշարադրյալը, առաջարկում

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ենք երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սուբյեկտների ցանկը ընդլայնել, ամրագրելով փաստացի դաստիարակողին որպես քննարկվող հանցակազմի սուբյեկտ:

Այսպիսով, երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու սուբյեկտ է հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածով նախատեսված, պատժի սպառնալիքով արգելված, մեղավորությամբ կատարված արարք կատարող ծնողը, այլ օրինական ներկայացուցիչը կամ այլ անձը, որի վրա երեխայի դաստիարակության կամ խնամքի պարտականություն է դրված:

Ամփոփելով վերոշարադրյալը, առաջարկվում է՝

- ՀՀ քրեական օրենսգրքի 3-րդ հոդվածի 18-րդ կետում կատարել փոփոխություններ, այն շարադրել հետևյալ բովանդակությամբ՝ մերձավոր ազգական՝ անկախ համատեղ բնակության հանգամանքից՝ ամուսինը, նախկին ամուսինը, ծնողը,

այդ թվում՝ խորթ ծնողը, որդեգրող ծնողը, խնամատար ծնողը, երեխան (այդ թվում՝ որդեգրված, խորթ, հոգեգավակ), եղբայրը, քույրը (այդ թվում՝ խորթ), պապը, տատը, թոռը, որդեգրող ծնողի կամ խնամատար ծնողի ամուսինը կամ նախկին ամուսինը, ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողը, ինչպես նաև ամուսնու կամ նախկին ամուսնու ծնողի համար՝ փեսան կամ հարսը, ինչպես նաև համատեղ բնակվող փաստացի խնամք իրականացնող անձը: Ամուսին կամ նախկին ամուսին է համարվում նաև փաստական ամուսնական հարաբերությունների մեջ գտնվող կամ գտնված անձը:

- Միաժամանակ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 84-րդ հոդվածը համալրել 4-րդ կետով, նախատեսելով երեխայի փաստացի խնամք իրականացնող անձի հասկացությունը, դրանում ներառելով այն անձանց շրջանակը, ովքեր երեխայի խնամքն ու դաստիարակությունը օրենքի ուժով չեն իրականացրել:

¹ Տե՛ս, ՀՀ քրեական իրավունք, Գ.Գրիգորյան, Գ.Թումասյան, Ընդհանուր մաս, Երևան 2022. էջ 145:

² Տե՛ս, Уголовное право. Общая часть: учебник / отв. ред. И.Я. Козаченко. 4-е изд., перераб. и доп. М., 2008. էջ 269:

³ Տե՛ս, Նույն տեղում, էջ 269:

⁴ Տե՛ս, Игнатов А.Н., Красиков Ю.А. Курс российского уголовного права: в 2 т. Т. 2: Особенная часть. М., 2002. էջ 192.

⁵ Տե՛ս, Уголовное право. Особенная часть / Под ред. А.И. Рагога. М., 2005. С. 166; Комментарий к Уголовному кодексу Российской Федерации / Отв. ред. В.М. Лебедев. 12-е изд., перераб. и доп. М., 2012. էջ 378:

⁶ Տե՛ս, Уголовное право России. Части Общая и Особенная учебник / под ред. А.И. Рагога... էջ 106:

⁷ Տե՛ս, Викторов Б.А. Цель и мотив в тяжких преступлениях. М., 1963. էջ 15:

⁸ Տե՛ս, ՀՀ քրեական օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մաս:

⁹ Տե՛ս, Уголовное право России. Общая часть / Под ред. Б.В. Здравомыслова. М., 2001, էջ 102:

¹⁰ Տե՛ս, Ուկրաինայի քրեական դատավարության օրեսգիրք, հոդ.44 2-րդ մաս:

¹¹ Տե՛ս, Ռուսաստանի Գաշնության քրեական դատավարության օրեսգիրք, հոդ.5, 12-րդ կետ:

¹² Տե՛ս, Кравцова Л.Н. Семейное право: учебник. Ростов н/Д., 2008. էջ 11:

Марта Меликсетян

Советник по организационным вопросам ректора
межгосударственной образовательной организации
высшего образования «Российско-армянский университет»,
преподаватель кафедры уголовного права и уголовного процесса,
кандидат юридических наук, подполковник в отставке

РЕЗЮМЕ

*Характеристика субъективных признаков неисполнения или ненадлежащего
исполнения обязанности по воспитанию или уходу за ребенком*

Одной из важнейших гарантий реализации интересов семьи и ребенка является их уголовно-правовая защита. Следует отметить, что в уголовных кодексах многих стран мира существуют специальные уголовно-правовые нормы, направленные на защиту этих интересов. Статья 247 Уголовного кодекса Республики Армения предусматривает уголовную ответственность за неисполнение или ненадлежащее исполнение обязанности по воспитанию или уходу за ребенком. В данной статье представлены характеристики субъективных признаков рассматриваемого преступления, выводы и законодательные предложения.

Ключевые слова: ребенок, воспитание, забота, родитель, обязанность

Marta Meliksetyan

Councilor on organizational issues of the rector of the interstate
educational organization of higher education “Russian-Armenian University”,
Lecturer of the Department of Criminal Law and Criminal Procedure,
PhD in Law, Lieutenant Colonel

SUMMARY

*Characteristics of the subjective elements of non-performance or improper
performance of the duty to care for or raise a child*

One of the most important guarantees for protecting the interests of the family and the child is their criminal law protection. It should be noted that the criminal codes of many countries worldwide feature special criminal law provisions aimed at safeguarding these interests. Article 247 of the Criminal Code of the Republic of Armenia establishes criminal liability for the failure to perform or the improper performance of duties regarding the upbringing or care of a child. This article presents an analysis of the subjective elements of the crime in question, along with conclusions and legislative proposals.

Key words: child, upbringing, care, parent, responsibility

Բնագիրը ներկայացվել է 25.05.2026թ.
Ընդունվել է տպագրության 02.06.26թ.

ԶԱՎԵՆ ՍՄԲԱՏՅԱՆ

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
իրավաբանական վարչության վարչական
իրավախախտումների վերաբերյալ գործերի
քննության բաժնի պետ,
Հայաստանի եվրոպական համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի դասախոս,
իրավաբանական գիտությունների թեկնածու

**ԶԱՆՅԱՆՔԸ ԾԱՅՐԱՀԵՂ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼԸ ՈՐՊԵՍ ՎԱՐՉԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՅԱՌՈՂ ՀԱՆԳԱՍԱՆՔ**

Սույն գիտական հոդվածում հեղինակն անդրադարձել է անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտներին՝ որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքների: Վերլուծվել են դրանց իրավական բնույթը, կիրառման պայմանները և դրա շրջանակներում համաչափության սկզբունքի հետ առաջ եկող զուգակցումները: Հոդվածում այս երկու ինստիտուտները դիտարկվում են որպես ինքնապաշտպանության իրավական մեխանիզմներ, որոնք ապահովում են իրավական արժեքների հավասարակշռություն և թույլ են տալիս բացառել վարչական պատասխանատվությունն այն դեպքերում, երբ անձի գործողությունները միտված են եղել ավելի բարձր իրավական բարիքի պաշտպանությանը:

Միաժամանակ ընդգծվում է, որ նշված ինստիտուտները չեն սահմանափակվում միայն պատասխանատվությունը բացառող ձևական հիմքերով, այլ հանդես են գալիս որպես իրավական համակարգի ներսում գործող արժեքահետ կարգավորման գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել վարքագիծը ոչ միայն դրա արտաքին իրավախախտական դրսևորման, այլ նաև իրավիճակային անհրաժեշտության և սոցիալական արդարացվածության տեսանկյունից:

Հիմնարարներ - վարչական պատասխանատվություն, անհրաժեշտ պաշտպանություն, ծայրահեղ անհրաժեշտություն, զանցանք, համաչափություն, ինքնապաշտպանություն:

Ներածություն

Վարչական պատասխանատվության ինստիտուտը ժամանակակից իրավական համակարգում հանդես է գալիս որպես պետական հարկադրանքի կարևոր և արդյունավետ միջոց, որի միջոցով պետությունն ապահովում է իրավական կարգուկանոնն ու հասարակական հարաբերությունների կայունությունը: Միևնույն ժամանակ այն չի կրում բացարձակ բնույթ և ենթակա է իրավական սահմանափակումների, որոնք բխում են ինչպես մարդու իրավունքների պաշտպանության պահանջներից, այնպես էլ իրավական պետության հիմնարար սկզբունքներից: Նշված սահմանափակումներն առավել հստակ և գործնականորեն արտահայտվում են անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտների շրջանակներում, որոնք իրավական համակարգում ունեն բացառող բնույթ և թույլ են տալիս բացառել վարչական պատասխանատվությունն այն դեպքերում, երբ անձի վարքագիծը պայմանավորված է ավելի բարձր իրավական բարիքի, իրավական արժեքի կամ պաշտպանվող շահի պահպանման անհրաժեշտու-

թյամբ:

Հաշվի առնելով վարչական իրավունքի զարգացման ժամանակակից միտումները, իրավական համակարգերի մարդակենտրոն ուղղվածության ամրապնդումը, ինչպես նաև իրավական պետության գաղափարի խորացումը՝ նշված ինստիտուտների ուսումնասիրությունը ձեռք է բերում ընդգծված արդիականություն: Այն պայմանավորված է ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակությամբ, քանի որ ուղղակիորեն առնչվում է իրավական համաչափության սկզբունքի իրացմանը, պետական հարկադրանքի սահմանների հստակեցմանը, անհատի ինքնապաշտպանության իրավունքի երաշխավորմանը, ինչպես նաև հանրային և անհատական շահերի միջև հավասարակշռության ապահովման բարդ և բազմաշերտ խնդիրներին:

Հոդվածի գիտական նորույթը դրսևորվում է անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտների համալիր վերլուծության միջոցով՝ վարչական պատասխանատվության բացառման համատեքստում, ինչպես նաև դրանց կապի բացահայտմամբ համաչափության

սկզբունքի և իրավական արժեքների հիերարխիայի հետ: Հոդվածում փորձ է արվում ցույց տալ, որ նշված ինստիտուտները ոչ միայն իրավական բացառություններ են, այլև իրավունքի արժեքահեն բնույթի դրսևորումներ և ինքնասահմանափակման գործիքներ:

Հոդվածի նպատակն է ձևավորել առավել ընդհանուր գիտական մոտեցում անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտների իրավական բովանդակության, դրանց կիրառման հիմքերի, ինչպես նաև վարչական պատասխանատվության համակարգում դրանց բացառող նշանակության վերաբերյալ՝ միաժամանակ բացահայտելով նշված ինստիտուտների կապը համաչափության սկզբունքի և իրավական արժեքների հավասարակշռման մեխանիզմների հետ:

Հոդվածը կառուցված է մի քանի փոխկապակցված մասերից: Առաջին մասում ներկայացվում են վարչական պատասխանատվության ընդհանուր բնույթը և դրա սահմանափակման հիմքերը: Երկրորդ մասում մանրամասն վերլուծվում է անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտը, դրա պայմանները և իրավական հետևանքները: Երրորդ մասում ուսումնասիրվում է ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը, դրա կիրառման հիմքերը և գործնական դրսևորումները: Վերջին մասում կատարվում է համապարփակ գնահատում՝ ընդգծելով համաչափության սկզբունքի և իրավական արժեքների հավասարակշռության նշանակությունը նշված ինստիտուտների համակարգում:

Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն հետազոտության ընթացքում կիրառվել են մի շարք իրավագիտական և ընդհանուր գիտական մեթոդներ՝ ուղղված անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտների համակողմանի ուսումնասիրությանը վարչական պատասխանատվության համակարգում:

Հիմնական մեթոդաբանական հիմքը կազմել է դոկտրինալ (նորմատիվ-իրավական) մեթոդը, որի միջոցով իրականացվել է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի համապատասխան նորմերի ուսումնասիրություն և վերլուծություն՝ բացահայտելով դրանց բովանդակությունը, կիրառման պայմանները և իրավական հետևանքները: Տվյալների հիմնական աղբյուր են հանդիսացել ՀՀ օրենսդրական ակտերը, մասնավորապես՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, ինչպես նաև համապատասխան դատական պրակտիկան:

Հետազոտության ընթացքում կիրառվել է համեմատական-իրավական մեթոդը, որի միջոցով ու-

սումնասիրվել են անհրաժեշտ պաշտպանության և ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտների դրսևորումները նաև քրեական իրավունքի համատեքստում՝ հնարավորություն տալով բացահայտել դրանց ընդհանրություններն ու առանձնահատկությունները տարբեր իրավական ճյուղերում:

Վերլուծության գործընթացում կիրառվել է տրամաբանական և համակարգային մեթոդ, որոնց միջոցով ուսումնասիրված տվյալները՝ օրենսդրական կարգավորումները, դատական մոտեցումները և գիտական գրականությունը, համադրվել և մեկնաբանվել են որպես միասնական իրավական համակարգի տարրեր: Դատական պրակտիկան օգտագործվել է հատկապես անհրաժեշտ պաշտպանության սահմանների և ծայրահեղ անհրաժեշտության կիրառման գործնական դրսևորումների պարզաբանման համար:

Տվյալների վերլուծությունը իրականացվել է համեմատական-վերլուծական մոտեցմամբ՝ ապահովելով նորմերի փոխկապակցվածության բացահայտումը, դրանց գործառնության նշանակության գնահատումը և համաչափության սկզբունքի համատեքստում իրավական հետևությունների ձևավորումը:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Վարչական պատասխանատվությունը, որպես պետական հարկադրանքի միջոց և պետության կողմից գործող հակազդման լծակ, բացարձակ չէ և կարող է ենթարկվել որոշակի իրավական սահմանափակումների: Այս սահմանափակումները բխում են ինչպես արարքի հանրային վտանգավորության աստիճանից, այնպես էլ դրա առերևույթ բացակայությունից կամ օբյեկտիվ իրականության մեջ այնպիսի փաստական հանգամանքի առկայությունից, որը հավասարակշռություն է ապահովում՝ մի կողմից պետական շահի, մյուս կողմից՝ անձի պատասխանատվության արդյունքում սահմանափակվող իրավունքի և կատարված արարքի համաչափության միջև:

Հատկանշական է, որ վարչական իրավունքում սահմանափակումների գաղափարը չի կրում տեխնիկական բնույթ, այլ ձևավորում է իրավունքի ներքին ինքնակարգավորման մեխանիզմ: Այս մեխանիզմը թույլ է տալիս իրավական համակարգին խուսափել ձևական մոտեցումից, որտեղ իրավախախտման փաստը ինքնին բավարար կլիներ պատասխանատվության համար՝ անկախ դրա արժեքային և իրավիճակային բովանդակությունից:

Հենց այս հարթության մեջ վարչական պատասխանատվության միջոցի կիրառման իրավահարաբերությունների շրջանակում առաջ են գալիս այսպես կոչված երկու իրավական հարթություններ, որոնցից մեկում բացառվում է վարչական պա-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տասխանատվության միջոցի կիրառումը, իսկ մյուսում վարչական մարմինն անձին ազատում է վարչական պատասխանատվության անբարենպաստ փաստական հետևանքները կրելուց:

Սույն հոդվածի շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանքներից մեկին՝ զանցանքը ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարելուն:

Անհրաժեշտ պաշտպանությունն ու ծայրահեղ անհրաժեշտությունը չեն կարող դիտարկվել միայն որպես ֆորմալ իրավաչափության բացառություններ: Դրանք արտահայտում են իրավունքի գնահատողական բնույթը, որտեղ իրավական որակավորումը կախված է ոչ միայն արարքի արտաքին հատկանիշներից, այլ նաև իրավիճակային և արժեքային վերլուծությունից: Այս համատեքստում վարչական իրավունքը հանդես է գալիս որպես ոչ միայն կարգավորող, այլ նաև հավասարակշռող համակարգ, որը թույլ է տալիս վերահիմաստավորել նույն վարքագիծը տարբեր փաստական հանգամանքներում:

Այս մոտեցման խորքային իմաստը կայանում է նրանում, որ իրավունքն այստեղ դադարում է լինել միայն արգելքի ու թույլտվության երկբևեռ համակարգ և վերածվում է բազմաշերտ գնահատման դաշտի, որտեղ իրավաչափությունը ձևավորվում է ոչ թե նորմի մեխանիկական կիրառմամբ, այլ արժեքների համադրման միջոցով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը վարչական պատասխանատվություն նախատեսող արարքը ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարելը դիտում է որպես վարչական պատասխանատվությունը բացառող հանգամանք:

Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսված վարույթը ենթակա է կարճման, եթե զանցանքի սուբյեկտը վարչական պատասխանատվություն նախատեսող արարքը կատարել է ծայրահեղ անհրաժեշտության կամ անհրաժեշտ պաշտպանության վիճակում:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 17-րդ և 18-րդ հոդվածներով նախատեսվում են ծայրահեղ անհրաժեշտության և անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտները վարչական իրավախախտման վարույթի շրջանակներում:

Այս երկու ինստիտուտներն իրենցից ենթադրում են ինքնապաշտպանության դրսևորում:

Իրական կյանքի պայմաններում հենց ինքնապաշտպանությունն է հաճախ դառնում այն հիմնական գործոնը, որը կարող է կարճ ժամանակում վերականգնել խախտված իրավունքներն ու ազա-

տությունները¹:

Չնայած այն հանգամանքին, որ պետության պարտականությունների մեջ է մտնում անհատի իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովումը, յուրաքանչյուր մարդ իրավունք ունի ինքնուրույն պաշտպանել դրանք օրենքով չարգելված բոլոր միջոցներով:

Անդրադառնանք դրանց առանձին՝

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը սահմանում է, որ վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը, թեև կատարել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով կամ վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող այլ նորմատիվ ակտերով նախատեսված գործողություն, սակայն գործել է անհրաժեշտ պաշտպանության վիճակում, այսինքն՝ հակաիրավական ոտնձգությունից պաշտպանելիս եղել է պետական կամ հասարակական կարգը, սոցիալական սեփականությունը, քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև կառավարման սահմանված կարգը՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով, եթե թույլ չի տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում:

Թեև վարչական պատասխանատվության բնագավառում այս ինստիտուտը քիչ է ուսումնասիրված թե՛ վարչական, թե՛ դատական մակարդակներում, դրա իրավական տրամաբանությունը գրեթե նույնական է քրեական իրավունքում հայտնի անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտին:

ՀՀ վճռաբեկ դատարանը, անդրադառնալով անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության սահմաններին, ընդգծել է, որ օրենքով ամրագրված են որոշակի պայմաններ, որոնց առկայության դեպքում է միայն պաշտպանությունն իրավաչափ և, հետևաբար, արարքի հանցավորությունը բացառող: Այսպես, անհրաժեշտ պաշտպանության իրավաչափության պայմաններն են՝

- ա) ոտնձգության հանրային վտանգավորությունը,
- բ) ոտնձգության առկայությունը,
- գ) ոտնձգության իրական լինելը,
- դ) վտանգի սպառնալի անձի, հասարակության կամ պետության շահերին,
- ե) վնաս հասցնելը միայն ոտնձգողին,
- զ) պաշտպանության համարժեքությունը ոտնձգությանը:

Առաջին պայմանից հետևում է, որ ոտնձգությունն օժտված է հանրային վտանգավորությամբ, եթե այն կարող է էական վնաս հասցնել անձի, հասարակության կամ պետության շահերին:

Երկրորդ պայմանի համաձայն՝ ոտնձգությունը համարվում է առկա այն դեպքում, երբ այն ար-

www.aradaradutyjournal.com

դեն սկսվել է, ընթացքի մեջ է և չի ավարտվել, ինչպես նաև այն դեպքում, երբ առկա է ոտնձգությունը սկսելու իրական, անմիջական սպառնալիք: Ոտնձգության առկայության պայմանը ենթադրում է, որ անհրաժեշտ պաշտպանությունն անթույլատրելի է արդեն ավարտված ոտնձգության դեպքում, բացառությամբ այն դեպքի, երբ վնաս պատճառողը չի գիտակցել ոտնձգության ավարտման փաստը: Վերջինիս դեպքում, ոտնձգությունից առաջացած հուզմունքի պատճառով պաշտպանվողին կարող է թվալ, թե ոտնձգությունը դեռևս չի ավարտվել և անհրաժեշտ է պաշտպանվել: Նման դեպքերում թեև պաշտպանությունն անժամանակ է (ուշացած), այն այնուամենայնիվ, իրավաչափ է²:

Անդրադառնալով անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման հարցին՝ ՀՀ վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ անհրաժեշտ պաշտպանության սահմանազանցման հատկանիշների առկայության կամ բացակայության հարցի քննարկման համար առաջին հերթին պետք է պարզել անհրաժեշտ պաշտպանության վիճակի առկայությունը: Այլ կերպ՝ անհրաժեշտ է առաջին հերթին պարզել ոտնձգության և պաշտպանության առկայությունը, ապա նոր միայն դրանց արդյունքում պատճառված վնասների համապատասխանության հարցը³:

Եվեյգերը նշել է, որ իրավունքի որոշակի ճյուղում պաշտպանության ուղղակիորեն սահմանված ինստիտուտի բացակայությունը չպետք է հիմք հանդիսանա այն անձանց իրավունքները նվազեցնելու համար, ովքեր ստիպված են պաշտպանել իրենց շահերը՝ վնաս պատճառելով հանցագործին, և առավել ևս՝ պաշտպանական գործողություններն անօրինական ճանաչելու համար⁴:

Կան հեղինակներ, որոնք կարծում են, որ անհրաժեշտ պաշտպանությունը կարող է դրսևորվել միայն գործողությամբ կատարվող ոտնձգության դեմ⁵: Կան նաև հեղինակներ, որ ընդգծում են, որ սոցիալապես վտանգավոր ոտնձգությունն ու հարձակումը նույն հասկացություններն են և քանի որ հարձակումն ակտիվ գործողություն է, պաշտպանությունը հնարավոր է միայն ակտիվ վարքագծի դեմ⁶:

Մեր կարծիքով՝ ոտնձգություն և հարձակում հասկացությունները նույնացնելը սխալ կլինի: Իրոք, օրենքը սոցիալապես վտանգավոր ոտնձգությունը ճանաչում է որպես անհրաժեշտ պաշտպանության հիմք: Հարձակում հասկացությունն իմաստով շատ մոտ է ոտնձգություն հասկացությանը: Սակայն ոտնձգություն հասկացությունն ավելի լայն է, քան հարձակում հասկացությունը այն պարզ ճշմարտության հաշվառմամբ, որ բոլոր ոտնձգությունները հարձակում չեն, սակայն բոլոր հարձակումները ոտնձգություն են:
Անհրաժեշտ պաշտպանությունը բացահայ-

տում է իրավունքի մեկ այլ հիմնարար շերտ՝ ինքնապաշտպանության բնական իրավունքը: Իրավակարգը ոչ միայն թույլ է տալիս, այլև փաստացի լեգիտիմացնում է այն գաղափարը, որ անձը կարող է անմիջապես արձագանքել ոտնձգությանը՝ առանց պետական մարմինների միջամտությանը սպասելու: Իրական կյանքում պետությունը միշտ չէ, որ կարող է ապահովել օպերատիվ պաշտպանություն: Հետևաբար, անհրաժեշտ պաշտպանությունը բռնության կիրառման ոլորտում պետական մենաշնորհի սահմանափակում է՝ հօգուտ անհատի:

Ասվածի տրամաբանության շրջանակում և անհրաժեշտ պաշտպանության հասկացության սահմանման տարրերը բացահայտելու նպատակով հարկավոր է առանձնացնել անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտի կենսագործման հետևյալ նախապայմանները՝

1. Կատարված արարքը պետք է նախատեսված լինի որպես վարչական իրավախախտում, և դրա կատարման համար գործող օրենսդրությամբ պետք է սահմանված լինի վարչական պատասխանատվություն: Նշված դատողության տրամաբանությունից բխում է, որ եթե արարքը հատուկ ընթացակարգով պետության կողմից սահմանված չէ որպես հակաիրավական, ապա չի կարող քննարկվել նաև վարչական պատասխանատվության, հետևաբար նաև վարչական պատասխանատվության կիրառումը բացառող հանգամանքի հարցը, քանի որ վարչական պատասխանատվությունը կարող է կիրառվել միայն համապատասխան նորմատիվ հիմքի առկայության դեպքում:

2. Պետք է առկա լինի ոտնձգություն, որն ուղղված է պետական կամ հասարակական կարգի, սոցիալական սեփականության, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների կամ կառավարման սահմանված կարգի դեմ: Այս դատողության տրամաբանությունը հանգում է այն եզրակացությանը, որ պետությունը լեգիտիմացնում է անձի կողմից դրսևորված հակազդման միջոցը միայն այն դեպքում, երբ ոտնձգությունն ուղղված է կոնկրետ տեսակի բարիքների դեմ: Հակառակ դեպքում անհրաժեշտ պաշտպանության հարցը չի կարող քննարկվել:

3. Կատարված գործողությունը պետք է ուղղված լինի կոնկրետ ոտնձգությունից պաշտպանվելուն, այդ թվում՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով: Այս դատողության տրամաբանությունը հանգում է նրան, որ գործողությունը չի կարող կատարվել թվացյալ կամ անորոշ վտանգներից պաշտպանվելու նպատակով: Հակազդման միջոցը պետք է ուղղված լինի կոնկրետ ոտնձգությունից պաշտպանվելուն և չի կարող ուղղված լինել այնպիսի արժեքի դեմ, որը չի հանդիսանում ոտնձգության իրական բաղադրիչ:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

4. ՀՀ գործող իրավակարգը երաշխավորում է բոլոր բարիքների պաշտպանությունը՝ պայմանով, որ պաշտպանությանն ուղղված գործողությունները լինեն չափավոր և համարժեք: Սակայն վերոնշյալ բոլոր պայմանները կորցնում են իրենց իրավական նշանակությունը, եթե թույլ է տրվել անհրաժեշտ պաշտպանության սահմանների անցում, այսինքն՝ եթե պաշտպանության միջոցի և ոտնձգության հարաբերակցության արդյունքում ձեռնարկված միջոցներն ակնհայտորեն գերազանցել են ոտնձգության վտանգավորության աստիճանը: Այս դատողությունը կարևորում է համաչափության սկզբունքի կիրառելիությունը, քանի որ, եթե խոսքը համաչափ արձագանքի մասին չէ, ապա գործ ունենք ոչ թե անհրաժեշտ պաշտպանության, այլ կամայական վարքագծի հետ:

Խոսելով ծայրահեղ անհրաժեշտության մասին՝ կարևոր է արձանագրել, որ գործող կարգավորման համաձայն վարչական պատասխանատվության ենթակա չէ այն անձը, որը, թեև կատարել է սույն օրենսգրքով կամ վարչական իրավախախտումների համար վարչական պատասխանատվություն սահմանող այլ նորմատիվ ակտերով նախատեսված գործողություն, սակայն գործել է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում, այսինքն՝ պետական կամ հասարակական կարգին, սոցիալական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին կամ կառավարման սահմանված կարգին սպառնացող վտանգը վերացնելու նպատակով, եթե տվյալ հանգամանքներում այդ վտանգը հնարավոր չէր վերացնել այլ միջոցներով, և եթե հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ ունեցել է ավելի նվազ կարևորություն:

Դուկտրինալ տեսանկյունից ծայրահեղ անհրաժեշտությունը կարելի է դիտարկել որպես իրավական կոնֆլիկտի առավել բարձր մակարդակի կարգավորման մեխանիզմ, որտեղ իրավունքը թույլ է տալիս ոչ թե խախտման արդարացում, այլ վնասի ռացիոնալ բաշխում: Այստեղ իրավական համակարգը փաստացի ընդունում է, որ որոշ իրավիճակներում վնասի ամբողջական բացառումն անհնար է, և հետևաբար ընտրությունը կատարվում է նվազագույն վնասի տրամաբանությամբ: Այս մոտեցումը ձևավորում է վարչական իրավունքի ներքին հավասարակշռության առանցքը՝ ապահովելով, որ իրավական պատասխանատվությունը չդառնա ինքնանպատակ պատժիչ մեխանիզմ, այլ պահպանի իր սոցիալ և արդարացի ուղղվածությունը:

Ծայրահեղ անհրաժեշտությունը հասկացվում է որպես իրավական վիճակ, որը պայմանավորված է օրենքով պաշտպանվող և սուր իրավական հակամարտության մեջ գտնվող մի քանի իրավական շահերի (արժեքների) միջև կոշտ ընտրության անհ-

րաժեշտությամբ: Ինչպես նշում են Ս. Գ. Մալուկովը և Օ. Ն. Ապանասենկոն, ծայրահեղ անհրաժեշտության վիճակը ծագում է վտանգավոր կամ ծայրահեղ իրավիճակներում, և անձն օրենքով պահպանվող մի իրավահարաբերությունը փրկելու համար վնաս է հասցնում մյուսին:

Վտանգի աղբյուրների շարքում, որոնց դեպքում կարող է ծայրահեղ անհրաժեշտություն առաջանալ, կարելի է նշել, օրինակ՝ ծայրահեղ իրավիճակները, անսարք տեխնիկան, գազանների հարձակումը, այն անձը, ով վնասում է օրենքով պաշտպանվող շահերին և այլն:

Ինչպես նշում է Ա.Վ. Նաումովը ծայրահեղ անհրաժեշտությունը ստեղծում է երկու շահերի բախում: Այս իրավիճակից ելքն այն է, որ թույլ չտան, որ իրավական երկու շահերից որևէ մեկին վնաս հասցվի, սակայն դա կարելի է անել միայն իրավապահ մյուս Շահին վնասելով:

Առաջացած վտանգի պայմաններում վնաս պատճառելը սոցիալապես ընդունելի և օրինական գործողություն է: Սոցիալական թույլատրելիությունն այս դեպքում հիմնված է հանրային շահի վրա այն գործողություններում, որոնք կանխում են ավելի մեծ հավանական վնասը, որը պարունակվում է սպառնացող վտանգի մեջ, քան իրականում պատճառված վնասը:

Այսպիսով, ծայրահեղ անհրաժեշտությունը, որպես վարչական իրավունքի ինքնապաշտպանության ինստիտուտ, իրականացնում է կարևոր գործառույթ և կիրառվում է այն դեպքում, երբ իրական վտանգ է սպառնում քաղաքացիների օրինական իրավունքներին և շահերին: Գործնականում առավել տարածված են ծայրահեղ անհրաժեշտության վիճակում ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքերը:

Բերենք մի օրինակ՝ Դադստանի Հանրապետության Կիզլյարսկի շրջանային դատարանը քննել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործը՝ քաղաքացու բողոքի հիման վրա՝ Ռուսաստանի Դաշնության ներքին գործերի նախարարության կողմից կայացված որոշման դեմ, համաձայն որի՝ անձը մեղավոր է ճանաչվել և նշանակվել տուգանք: Դատարանը պարզել է, որ վերջինս իր ճանապարհային գոտիով երթևեկել է 70–80 կմ/ժ արագությամբ, նրա դիմաց շարժվել է «Լադա» մակնիշի ավտոմեքենա, աջ կողմում՝ կողնակին, կանգնած է եղել «Գ-ազել» մակնիշի ավտոմեքենա: «Լադան» անցնելուց հետո «Գ-ազելի» վարորդը, չմիացնելով շրջադարձի լուսային ազդանշանը, դուրս է եկել երթևեկելի գոտի՝ չզիջելով իր երթևեկելի գոտին, և նա, բախումից խուսափելու համար, համոզվելով, որ խոչընդոտներ չի ստեղծում, դուրս է եկել հանդիպակաց երթևեկելի գոտի: Սակայն «Գ-ազելի» վարորդը բախում է թույլ տվել ճանապարհի շրջադարձի պատճառով: Դատարանը եզրակացրեց, որ քա-

www.aradaradutyjournal.com

դաքացու գործողությունները պետք է համարվեն ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարված, և դրանք վերաբերում են այն հանգամանքներին, որոնք բացառում են վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը¹¹ :

Քննարկվող կանոնակարգումների առկայությամբ պետությունը ճանաչում է, որ երբեմն անհնար է միաժամանակ պահպանել բոլոր արժեքները, և թույլ է տալիս զոհաբերել նվազ արժեքավորը՝ առավել կարևորի պահպանման համար: Այս գաղափարը հատկապես տեսանելի է այն պայմանում, որ հասցված վնասը պետք է լինի ավելի փոքր, քան կանխված վնասը: Տվյալ չափանիշը իրավական արդարացման առանցքն է:

Ինչպես նշում էր Կռամնիկը շնորհիվ այն բանի, որ ծայրահեղ անհրաժեշտության պայմաններում վնաս է հասցվում օրենքով պաշտպանված շահերին, պահանջվում է պահպանել երկու տեսակի պայմաններ, որպեսզի այն ճանաչվի թույլատրելի: Նման պայմանների առաջին խումբը բնութագրում է վտանգը, որի առաջացումը ստեղծում է ծայրահեղ անհրաժեշտության վիճակ, երկրորդը բնութագրում է ծայրահեղ անհրաժեշտության վիճակում գործողությունների օրինականությունը¹² :

Ըստ Պուգաչևսկի վերը նշված վտանգը բնութագրող պայմանները հետևյալն են.

1. Անձի իրավապահ շահերին, տվյալ անձի կամ այլ անձանց իրավունքներին և օրինական շահերին, հասարակության կամ պետության շահերին վնաս հասցնելու վտանգի առկայությունը: Վտանգը հասկացվում է որպես նշված վնաս պատճառելու սպառնալիքի առկայություն: Նման սպառնալիքի աղբյուրները կարող են լինել.

1.1. Բնության տարրական ուժեր: Սրանք ջրհեղեղներն են, տորնադոները, փոթորիկները, հրդեհները և այլն:

1.2. Կենդանիների հարձակումը, պայմանով, որ հարձակումն իրականացվում է առանց մարդու օժանդակության: Հակառակ դեպքում կարող են գործել անհրաժեշտ պաշտպանության կանոնները:

1.3. Մարդկանց ոչ իրավաչափ գործողությունները: Օրինակ՝ փողոցը սխալ տեղում հատելը վարորդին ստիպում է վրաբերից խուսափելու համար միջոցներ ձեռնարկել, որոնք հանգեցնում են մեքենայի վնասմանը:

1.4. Մարդու մարմնում ֆիզիոլոգիական և պաթոլոգիական պրոցեսները, օրինակ՝ քաղցը, ծարավը, հիվանդությունները: Չի կարող վարչական իրավախախտում համարվել այն անձի կողմից, ով իր մոտ չունի վարելու իրավունքը հաստատող փաստաթուղթ՝ կյանքին վտանգ սպառնացող անձին հիվանդանոց տեղափոխելու նպատակով տրանսպորտային միջոց վարելը:

1.5. Այլ աղբյուրներ:

2. Վտանգը պետք է լինի իրական, այլ ոչ ենթադրյալ: Վտանգի առկայությունը նշանակում է, որ այն արդեն սկսվել է, գոյություն ունի, պռկա է, և դրանից վնաս հասցնելն անխուսափելի է¹³ :

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, թեև հարցը քննարկել է իրավապահ մարմինների կողմից զենքի գործադրման ծայրահեղ անհրաժեշտության վերաբերյալ, այնուամենայնիվ կատարել է կարևոր դիտարկումներ առերևույթ ինստիտուտի կիրառման և հետագա զարգացման առնչությամբ: Մասնավորապես դատարանը նշել է, որ ուժի կիրառումը պետք է կրի բացառիկ բնույթ, չնայած այն ենթադրում է, որ իրավապահ մարմինների պաշտոնատար անձինք կարող են իրավասու լինել կիրառել այնպիսի ուժ, որը ողջամտորեն անհրաժեշտ է տվյալ հանգամանքներում՝ հանցագործության կանխարգելման նպատակով կամ իրավախախտների կամ կասկածյալ իրավախախտների իրավաչափ ձերբակալման ժամանակ, կամ մման ձերբակալման ժամանակ օգնություն ցուցաբերելիս, սակայն չի կարող կիրառվել այդ նպատակների համար անհրաժեշտ սահմանները գերազանցող ուժ:

Ազգային օրենսդրությունը, որպես կանոն, սահմանափակում է իրավակարգի պահպանման համար պաշտոնատար անձանց կողմից ուժի կիրառումը համաչափության սկզբունքով: Սա պետք է հասկանալ այնպես, որ այս դրույթը մեկնաբանելիս պետք է հարզվեն համաչափության սկզբունքները: Այս դրույթը ոչ մի դեպքում չի մեկնաբանվում այնպես, թե լիազորում է կիրառել այնպիսի ուժ, որն անհամաչափ է այն օրինական նպատակին, որին պետք է հասնել :

Ասվածի տրամաբանության շրջանակում և ծայրահեղ անհրաժեշտության հասկացության սահմանման տարրերը բացահայտելու նպատակով հարկավոր է առանձնացնել ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտի կենսագործման հետևյալ նախապայմանները՝

1. Կատարված արարքը պետք է նախատեսված լինի որպես վարչական իրավախախտում, և դրա կատարման համար գործող օրենսդրությամբ պետք է սահմանված լինի վարչական պատասխանատվություն: Նշված դատողության տրամաբանությունից բխում է, որ եթե արարքը հատուկ ընթացակարգով պետության կողմից սահմանված չէ որպես հակաիրավական, ապա չի կարող քննարկվել նաև վարչական պատասխանատվության, հետևաբար նաև վարչական պատասխանատվության կիրառումը բացառող հանգամանքի հարցը, քանի որ վարչական պատասխանատվությունը կարող է կիրառվել միայն համապատասխան նորմատիվ հիմքի առկայության դեպքում:

2. Պետք է առկա լինի վտանգ, որը սպառնում է պետական կամ հասարակական կարգին, սոցիա-

լական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին կամ կառավարման սահմանված կարգին: Այս դատողության տրամաբանությունը հանգում է այն եզրակացությանը, որ պետությունը լեգիտիմացնում է անձի կողմից դրսևորված հակազդման միջոցը միայն այն դեպքում, երբ վտանգն ուղղված է կոնկրետ տեսակի բարիքների դեմ: Հակառակ դեպքում ծայրահեղ անհրաժեշտության հարցը չի կարող քննարկվել:

3. Կատարված գործողությունը պետք է ուղղված լինի կոնկրետ վտանգի վերացմանը: Այս դատողության տրամաբանությունը հանգում է նրան, որ գործողությունը չի կարող կատարվել թվացյալ կամ անորոշ վտանգներից պաշտպանվելու նպատակով: Հակազդման միջոցը պետք է ուղղված լինի կոնկրետ վտանգի վերացմանը և չի կարող ուղղված լինել այնպիսի արժեքի դեմ, որը չի հանդիսանում վտանգի իրական բաղադրիչ:

4. Վտանգը տվյալ հանգամանքներում չի կարող վերացվել այլ միջոցներով: Այս դատողության տրամաբանությունից բխում է, որ հակաիրավական արարք կատարած անձը պետք է գրկված լինի իրավական այլընտրանքից: Այսինքն՝ եթե վտանգը հնարավոր է եղել վերացնել իրավաչափ միջոցով, սակայն անձն ընտրել է իրավախախտում կատարելու տարբերակը, ապա ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը կիրառելի լինել չի կարող:

5. Հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ պետք է ունենա ավելի նվազ կարևորություն: Այս դատողության տրամաբանությունից բխում է, որ նույնիսկ այն դեպքում, երբ գործողությունը կատարվել է իրական վտանգը վերացնելու նպատակով, վնասված բարիքը չի կարող ավելի արժեքավոր լինել, քան փրկված բարիքը: Այսինքն՝ ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտը չի կարող գործել, եթե պատճառված վնասից բխող բացասական հետևանքներն ավելի էական են, քան կանխված վնասից ստացվող օգուտը:

Թվարկված տարրերի միաժամանակյա առկայության պայմաններում միայն կարելի է խոսել ծայրահեղ անհրաժեշտության իրավաչափ միջոցի կիրառման մասին, որի բացակայությունը հանգեցնում է վարչական պատասխանատվության միջոցի անարգել կիրառման:

Ամփոփելով նշված դատողությունները՝ կարող ենք բանաձևել, որ անհրաժեշտ պաշտպանությունը և ծայրահեղ անհրաժեշտությունը վարչական իրավունքում պարզապես արդարացնող հանգամանքներ չեն, այլ՝ ավելի խորքային իրավական երևույթներ, որոնք կապված են իրավունքի հիմնարար արժեքների բախման և դրանց լուծման հետ:

Այս ինստիտուտներն արտացոլում են իրավունքի արժեքահեն բնույթը: Այստեղ իրավունքը չի գործում մեխանիկական կերպով՝ «կա արարք՝ կա

պատասխանատվություն» սկզբունքով, այլ գնահատվում է իրավիճակը կոնկրետ համատեքստում:

Այս ինստիտուտների առկայությունը վկայում է, որ կան իրավիճակներ, որտեղ ձևականորեն իրավախախտում հանդիսացող վարքագիծն իրականում ծառայում է ավելի բարձր արժեքի պաշտպանությանը: Այս իմաստով անհրաժեշտ պաշտպանությունն ու ծայրահեղ անհրաժեշտությունը հանդես են գալիս որպես իրավունքի ինքնասահմանափակման մեխանիզմներ:

Միաժամանակ կարևոր է ընդգծել, որ այս ինստիտուտների հիմքում ընկած է իրավական բարիքների հիերարխիայի գաղափարը: Զննարկվող երկու ինստիտուտների պարագայում անձը փաստացի ընտրություն է կատարում երկու վնասների միջև՝ նախապատվություն տալով ավելի կարևոր բարիքին: Իրավունքի տեսության մեջ այս դատողությունը կարելի է բնորոշել որպես բախվող շահերի հավասարակշռում:

Երկու ինստիտուտներն էլ աներկբա անհրաժեշտ է դիտել նաև համաչափության սկզբունքի տրամաբանության ներքո, որը միավորում է դրանք: Անհրաժեշտ պաշտպանության դեպքում այն դրսևորվում է որպես պաշտպանության և ոտնձգության համապատասխանություն, իսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ պատճառված և կանխված վնասների հարաբերակցություն: Իրավունքն այստեղ պահանջում է ոչ թե պարզապես արձագանք, այլ կշռադատված և համաչափ արձագանք: Ասվածն ընդգծում է, որ նույնիսկ արտակարգ իրավիճակներում իրավունքը չի կորցնում իր ռացիոնալ հիմքը:

Անհրաժեշտ պաշտպանությունն ու ծայրահեղ անհրաժեշտությունը հանդիսանում են իրավունքի այն կետերը, որտեղ իրավական նորմը հանդիպում է իրական կյանքի անկանխատեսելիությանը: Դրանք ցույց են տալիս, որ իրավունքը չի կարող ամբողջությամբ կանխատեսել իրականությունը, և այդ պատճառով ստեղծում է ճկունության մեխանիզմներ, որոնք թույլ են տալիս արդար լուծումներ գտնել նույնիսկ նորմերի սահմաններից դուրս թվացող իրավիճակներում:

Ասվածի հաշվառմամբ՝ դոկտրինալ մակարդակում կարելի է բանաձևել, որ վարչական պատասխանատվության համակարգը կառուցված է ոչ միայն խախտման և պատժի վրա, այլ նաև սուբյեկտային հատուկ ռեժիմների, իրավական անհնարինության իրավիճակների և համաչափության վրա հիմնված ազատման մեխանիզմների փոխադրեցության վրա:

Այս ամբողջ կառուցվածքը ցույց է տալիս, որ վարչական իրավունքը իրականում ոչ թե կոշտ պատժիչ համակարգ է, այլ ճկուն իրավական կարգավորման մոդել, որտեղ նույն վարքագիծը կարող է ունենալ տարբեր իրավական հետևանքներ՝ կախ

ված սուբյեկտից, հանգամանքներից և պետության գնահատականից:

Եզրակացություն

Ամփոփելով հոդվածի արդյունքները և կարևորելով ինստիտուտի միասնական իրավական ընկալումը՝ նպատակահարմար է արձանագրել հետևյալ եզրահանգումները.

1. Ծայրահեղ անհրաժեշտության ինստիտուտն ունի կենսագործման հետևյալ նախապայմանները, որոնցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է արարքը որպես ծայրահեղ անհրաժեշտության վիճակում կատարված լինելու փաստի հաստատման անհնարինության՝

ա) կատարված արարքը պետք է նախատեսված լինի որպես վարչական իրավախախտում, և դրա կատարման համար գործող օրենսդրությամբ պետք է սահմանված լինի վարչական պատասխանատվություն, բ) պետք է առկա լինի վտանգ, որը սպառնում է պետական կամ հասարակական կարգին, սոցիալական սեփականությանը, քաղաքացիների իրավունքներին ու ազատություններին կամ կառավարման սահմանված կարգին, գ) կատարված գործողությունը պետք է ուղղված լինի կոնկրետ վտանգի վերացմանը, դ) տվյալ հանգամանքներում վտանգը չի կարող վերացվել այլ միջոցներով, ե) հասցված վնասը կանխված վնասի համեմատությամբ պետք է ունենա ավելի նվազ կարևորություն:

2. Անհրաժեշտ պաշտպանության ինստիտուտն ունի կենսագործման հետևյալ նախապայմանները, որոնցից յուրաքանչյուրի բացակայությունը հանգեցնում է արարքը որպես անհրաժեշտ պաշտպանության վիճակում կատարված լինելու փաստի հաստատման անհնարինության՝ ա) կատարված արարքը պետք է նախատեսված լինի որպես վարչական իրավախախտում, և դրա կատարման համար գործող օրենսդրությամբ պետք է սահմանված լինի վարչական պատասխանատվություն, բ) պետք է առկա լինի ոտնձգություն, որն ուղղված է պետական կամ հասարակական կարգի, սոցիալական սեփականության, քաղաքացիների իրավունքների ու ազատությունների կամ կառավարման սահմանված կարգի դեմ, գ) կատարված գործողությունը պետք է ուղղված լինի կոնկրետ ոտնձգությունից պաշտպանվելուն, այդ թվում՝ ոտնձգություն կատարողին վնաս պատճառելու միջոցով, դ) պաշտպանությանն ուղղված գործողությունները պետք է լինեն չափավոր, համաչափ և համարժեք:

3. Անհրաժեշտ պաշտպանությունը և ծայրահեղ անհրաժեշտությունը վարչական իրավունքում պարզապես արդարացնող հանգամանքներ չեն, այլ՝ ավելի խորքային իրավական երևույթներ, որոնք կապված են իրավունքի հիմնարար արժեք-

ների բախման և դրանց լուծման հետ: Ինստիտուտների հիմքում ընկած է իրավական բարիքների հիերարխիայի գաղափարը: Անձը փաստացի ընտրություն է կատարում երկու վնասների միջև՝ նախապատվություն տալով ավելի կարևոր բարիքին: Ասվածը կարելի է ընկալել որպես բախվող շահերի հավասարակշռում: Քննարկվող կանոնակարգումների առկայությամբ պետությունը ճանաչում է, որ երբեմն անհնար է միաժամանակ պահպանել բոլոր արժեքները և թույլ է տալիս զոհաբերել նվազ արժեքավորը՝ առավել կարևորի պահպանման համար: Այս գաղափարը հատկապես տեսանելի է այն պայմանում, որ հասցված վնասը պետք է լինի ավելի փոքր, քան կանխված վնասը: Տվյալ չափանիշը իրավական արդարացման առանցքն է:

4. Անհրաժեշտ պաշտպանությունը բացահայտում է իրավունքի մեկ այլ հիմնարար շերտ՝ ինքնապաշտպանության բնական իրավունքը: Իրավակարգը ոչ միայն թույլ է տալիս, այլև փաստացի լեգիտիմացնում է այն գաղափարը, որ անձը կարող է անմիջապես արձագանքել ոտնձգությանը՝ առանց պետական մարմինների միջամտությանը սպասելու: Անհրաժեշտ պաշտպանության դեպքում այն դրսևորվում է որպես պաշտպանության և ոտնձգության համապատասխանություն, իսկ ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ պատճառված և կանխված վնասների հարաբերակցություն: Իրավունքն այստեղ պահանջում է ոչ թե պարզապես արձագանք, այլ չափավոր, համաչափ և համարժեք արձագանք:

www.aradaradutyjournal.com

- ¹ Տե՛ս, Жданова Н.Р. Самозащита прав и свобод в административных правоотношениях ДЕРЖАВИНСКИЙ ФОРУМ № 5 2018 Тамбов 2018 С. 10 https://journals.tsutmb.ru/a8/upload/2018-03/%D0%A0%E2%80%9D%D0%A0%C2%B5%D0%A1%D0%82%D0%A0%C2%B6%20%D0%A1%E2%80%9E%D0%A0%D1%95%D0%A1%D0%82%D0%A1%D1%93%D0%A0%D1%98%205_2018.pdf 9-17
- ² Տե՛ս, Թիվ ԵԿԴ/0149/01/09 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.08.2010 թվականի որոշումը:
- ³ Տե՛ս, Թիվ ԵԿԴ/0118/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2012 թվականի որոշումը:
- ⁴ Տե՛ս, Швейгер А.О. Проблемы реализации необходимой обороны от административных правонарушений // Сибирский юридический вестник. 2022. № 4 с 30
- ⁵ Տե՛ս, Слуцкий, И. И. Необходимая оборона и крайняя необходимость в советском уголовном праве / И. И. Слуцкий // Ученые записки Ленинградского университета. – 1951. – № 199. – С. 192
- ⁶ Տե՛ս, Кириченко, В. Ф. Основные вопросы учения о необходимой обороне в советском уголовном праве / В. Ф. Кириченко; Акад. наук СССР. – М.; Ленинград: Изд-во Акад. наук СССР, 1948. с 26-27
- ⁷ Տե՛ս, Апанасенко О.Н., Малюков С.Г. Самозащита в административном праве: новое в законодательстве // Евразийский союз ученых. 2015. № 4-9 (13). С. 31-32.
- ⁸ Տե՛ս, Керамова С.Н. Крайняя необходимость как институт самозащиты в административном праве // Юридический вестник Дагестанского государственного университета. 2020. №3. С. 67-68
- ⁹ Տե՛ս, Наумов А.В. Российское уголовное право. Общая часть: курс лекций. М.: БЕК, 1996. С. 347.
- ¹⁰ Տե՛ս, Хаметдинова Г.Ф. Уголовно-правовая характеристика крайней необходимости: монография. Тюмень: Тюменский институт повышения квалификации сотрудников МВД России, 2015. 156 с. 10
- ¹¹ Տե՛ս, Решение № 12-39/2019 Кизлярского районного суда (Республика Дагестан) от 10.09.2019 г. по делу № 12-39/2019. URL: <https://sudact.ru/regular/doc/WGKfHR7XzKVx/> (дата обращения: 22.04.2023).
- ¹² Տե՛ս, Крамник А.Н. Административно-деликтное право. Общая часть: Пособие для студентов вузов / А.Н. Крамник. – Мн.: Тесей, 2004. 184
- ¹³ Տե՛ս, Административное право : учеб.-метод. комплекс для студ. спец. 1-24 01 02 «Правоведение». В 4 ч. Ч. 2 / Т. И. Пугачева. – Новополюк : ПГУ, 2007. с 72
- ¹⁴ Տե՛ս, Soares and Others v. Romania, judgment of the European Court of Human Rights of 22.02.2011, paragraph 103.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը՝ ընդունված 06.12.1985 թվականին:
2. Թիվ ԵԿԴ/0149/01/09 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 27.08.2010 թվականի որոշումը:
3. Թիվ ԵԿԴ/0118/01/11 քրեական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.03.2012 թվականի որոշումը:
4. Judgment of the European Court of Human Rights of 22.02.2011 in the case of Soares and Others v. Romania
5. Решение № 12-39/2019 Кизлярского районного суда (Республика Дагестан) от 10.09.2019 г. по делу № 12-39/2019. URL: <https://sudact.ru/regular/doc/WGKfHR7XzKVx/> (дата обращения: 22.04.2023).
6. Керамова С.Н. Крайняя необходимость как институт самозащиты в административном праве // Юридический вестник Дагестанского государственного университета. 2020. №3. С. 67-70.
7. Наумов А.В. Российское уголовное право. Общая часть: курс лекций. М.: БЕК, 1996. 560 с.
8. Хаметдинова Г.Ф. Уголовно-правовая характеристика крайней необходимости: монография. Тюмень: Тюменский институт повышения квалификации сотрудников МВД России, 2015. 156 с.
9. Крамник А.Н. Административно-деликтное право. Общая часть: Пособие для студентов вузов / А.Н. Крамник. – Мн.: Тесей, 2004. 288 с.
10. Швейгер А.О. Проблемы реализации необходимой обороны от административных правонарушений // Сибирский юридический вестник. 2022. № 4 29-35
11. Слуцкий, И. И. Необходимая оборона и крайняя необходимость в советском уголовном праве // Ученые записки Ленинградского университета. – 1951. – № 199. – С. 161-235.
12. Кириченко, В. Ф. Основные вопросы учения о необходимой обороне в советском уголовном праве Акад. наук СССР. – М.; Ленинград: Изд-во Акад. наук СССР, 1948. – 107с.
13. Пугачева, Т.И. Административное право: учеб.-метод. комплекс для студ. спец. 1-24 01 02 «Правоведение». В 4 ч. Ч. 2 / Т. И. Пугачева. – Новополюк: ПГУ, 2007. – 272 с.
14. Жданова Н.Р. Самозащита прав и свобод в административных правоотношениях ДЕРЖАВИНСКИЙ ФОРУМ № 5 2018 Тамбов 2018 https://journals.tsutmb.ru/a8/upload/2018-03/%D0%A0%E2%80%9D%D0%A0%C2%B5%D0%A1%D0%82%D0%A0%C2%B6%20%D0%A1%E2%80%9E%D0%A0%D1%95%D0%A1%D0%82%D0%A1%D1%93%D0%A0%D1%98%205_2018.pdf с. 9-17.
15. Апанасенко О.Н., Малюков С.Г. Самозащита в административном праве: новое в законодательстве // Евразийский союз ученых. 2015. № 4-9 (13). С. 31-32.

References

1. Varchakan iravakhakhtumneri veraberyal HH orensirgq, yndunvac 06.12.1985 t. (In Armenian)

2. T'iv EKD/0149/01/09 qreakan gortsov HH vch'rabek datarani 27.08.2010 t. oroshum. (In Armenian)
3. T'iv EKD/0118/01/11 qreakan gortsov HH vch'rabek datarani 30.03.2012 t. oroshum. (In Armenian)
4. Judgment of the European Court of Human Rights of 22.02.2011 in the case of Soares and Others v. Romania.
5. Resheniye № 12-39/2019 Kizlyarskogo rayonnogo suda (Respublika Dagestan) ot 10.09.2019 g. po delu № 12-39/2019. (In Russian)
6. Keramova S. N. Krainnyaya neobkhodimost' kak institut samozashchity v administrativnom prave. Yuridicheskiy vestnik Dagestanskogo gosudarstvennogo universiteta, 2020, no. 3, pp. 67–70. (In Russian)
7. Naumov A. V. Rossiyskoye ugolovnoye pravo. Obshchaya chast': kurs lektsiy. Moscow: BEK, 1996. 560 p. (In Russian)
8. Khametdinova G. F. Ugolovno-pravovaya kharakteristika krainey neobkhodimosti: monografiya. Tyumen: Tyumenskiy institut povysheniya kvalifikatsii sotrudnikov MVD Rossii, 2015. 156 p. (In Russian)
9. Krannik A. N. Administrativno-deliktnoye pravo. Obshchaya chast': posobiye dlya studentov vuzov. Minsk: Tesei, 2004. 288 p. (In Russian)
10. Shveyger A. O. Problemy realizatsii neobkhodimoy oborony ot administrativnykh pravonarusheniy. Sibirskiy yuridicheskiy vestnik, 2022, no. 4, pp. 29–35. (In Russian)
11. Slutsky I. I. Neobkhodimaya oborona i krainnyaya neobkhodimost' v sovetskom ugolovnom prave. Uchenyye zapiski Leningradskogo universiteta, 1951, no. 199, pp. 161–235. (In Russian)
12. Kirichenko V. F. Osnovnyye voprosy ucheniya o neobkhodimoy oborone v sovetskom ugolovnom prave. Moscow–Leningrad: Izdatel'stvo Akademii nauk SSSR, 1948. 107 p. (In Russian)
13. Pugacheva T. I. Administrativnoye pravo: uchebno-metodicheskiy kompleks dlya studentov spetsial'nosti 1-24 01 02 "Pravovedeniye". Part 2. Novopolotsk: PGU, 2007. 272 p. (In Russian)
14. Zhdanova N. R. Samozashchita prav i svobod v administrativnykh pravootnosheniyakh. Derzhavinskiy forum, 2018, no. 5, pp. 9–17. (In Russian)
15. Apanasenko O. N., Malyukov S. G. Samozashchita v administrativnom prave: novoye v zakonodatel'stve. Evraziyskiy soyuz uchenykov, 2015, no. 4–9 (13), pp. 31–32. (In Russian)

Завен Смбагян

Начальник отдела по расследованию дел об административных правонарушениях юридического управления аппарата мэрии Еревана, преподаватель юридического факультета Европейского университета Армении, кандидат юридических наук

РЕЗЮМЕ

Совершение правонарушения в состоянии крайней необходимости или необходимой обороны как обстоятельство, исключающее административную ответственность

В данной научной статье автор рассматривает институты необходимой защиты и крайней необходимости как обстоятельства, исключающие административную ответственность. Проанализированы их правовая природа, условия применения и возникающие в их рамках сочетания с принципом соразмерности. В статье эти два института рассматриваются как правовые механизмы самозащиты, обеспечивающие баланс правовых ценностей и позволяющие исключить административную ответственность в случаях, когда действия лица были направлены на защиту высшего правового блага.

Одновременно подчеркивается, что указанные институты не ограничиваются лишь формальными основаниями, исключающими ответственность, а выступают как ценностно-ориентированные регулятивные механизмы внутри правовой системы, которые позволяют оценивать поведение не только с точки зрения его внешнего противоправного проявления, но и с учетом ситуационной необходимости и социальной оправданности.

Ключевые слова: административная ответственность, необходимая защита, крайняя необходимость, правонарушение, соразмерность, самооборона.

Zaven Smbatyan

Head of the Department for Investigation of Cases of Administrative Offenses
of the Legal Department of the Yerevan Municipality,
Lecturer at the Faculty of Law of the European University of Armenia,
PhD in Law

SUMMARY***The commission of an offense in a state of extreme necessity or necessary defense as a circumstance excluding administrative liability***

In this scientific article, the author considers the institutions of necessary protection and extreme necessity as circumstances that exclude administrative responsibility. Their legal nature, conditions of application and combinations arising within their framework with the principle of proportionality are analyzed. In the article, these two institutions are considered as legal mechanisms of self-defense, providing a balance of legal values and allowing to exclude administrative responsibility in cases when the actions of a person were aimed at protecting the highest legal good.

At the same time, it is emphasized that the aforementioned institutions are not limited to merely formal grounds excluding liability, but function as value-oriented regulatory mechanisms within the legal system, which allow for the assessment of conduct not only in terms of its external unlawful manifestation, but also in light of situational necessity and social justification.

Key words: administrative responsibility, necessary protection, extreme necessity, violation, proportionality, self-defense.

Բնագիրը ներկայացվել է 13.05.2026թ.

Ընդունվել է տպագրության 27.05.26թ.

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի հայցորդ

ԴԱՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆԱՀԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՁԱՆՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է արդարադատության համակարգում արհեստական բանականության կիրառման ազդեցության ուսումնասիրությանը՝ դատական անկախության և անաչառության սկզբունքների տեսանկյունից: Հետազոտության հիմքում դրված է այն դրույթը, որ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված անկախ և անաչառ դատարանի իրավունքը տեխնոլոգիական միջավայրում բախվում է նոր, հաճախ անտեսանելի սպառնալիքների: Հոդվածում վերլուծվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից ձևավորված չափանիշները՝ կապված դատական անկախության, «օրենքով ստեղծված դատարանի», ինչպես նաև անաչառության սուբյեկտիվ և օբյեկտիվ թեստերի հետ: Հատուկ ուշադրություն է դարձվում այն հանգամանքին, որ արհեստական բանականության համակարգերը կարող են ազդել ոչ միայն դատական ակտերի պատրաստման, փաստաթղթերի մշակման և ռիսկերի գնահատման, այլև դատավորների գնահատման, առաջխաղացման և մասնագիտական վարքագծի վրա: Հոդվածում հիմնավորվում է, որ արհեստական բանականությունը չի կարող դիտարկվել որպես չեզոք տեխնիկական գործիք, քանի որ այն ստեղծում է տեխնոլոգիական կախվածության, մասնավոր մատակարարներից կախման, ալգորիթմային կողմնակալության, թափանցիկության պակասի և դատական դատողության վրա անտեսանելի ներգործության ռիսկեր: Եզրակացվում է, որ արդարադատության ոլորտում արհեստական բանականության համակարգերի կիրառումը պահանջում է հստակ նորմատիվ կարգավորում, մարդ դատավորների կողմից որոշումների կայացման ապահովում, ինչպես նաև թափանցիկության և արդյունավետ վերահսկողության մեխանիզմներ:

Հիմնարաներ- Արհեստական բանականություն, արդարադատություն, դատական անկախություն, թափանցիկություն, ալգորիթմային կողմնակալություն, արդարադատության թվայնացում, անաչառություն, մարդու իրավունքներ, տեխնոլոգիական կախվածություն:

Ներածություն

Արհեստական բանականության արագ զարգացումն ու դրա աստիճանական ներթափանցումը հանրային կառավարման տարբեր ոլորտներ արդիականացրել են նաև արդարադատության համակարգում դրանց կիրառման իրավական սահմանների և հետևանքների հարցը: Եթե սկզբնական փուլում արհեստական բանականությունը հիմնականում դիտարկվում էր որպես տեխնիկական և վարչարարական արդյունավետության բարձրացման միջոց, ապա այսօր ակնհայտ է, որ դրա ներգրավումը դատական գործունեության մեջ կարող է առնչվել արդար դատաքննության իրավունքի առանցքային տարրերին, մասնավորապես՝ դատարանի անկախությանը և անաչառությանը: Այս առումով թեման ունի ոչ միայն տեսական, այլև անմիջական գործնական նշանակություն, քանի որ արդարադատության թվայնացումը այլևս ապագայի հեռանկար չէ, այլ գործող իրականություն:

Հոդվածի գիտական նորույթը պայմանավորված է նրանով, որ արհեստական բանականության կիրառման խնդիրը քննվում է ոչ թե միայն որպես տեխնոլոգիական կամ վարչարարական բարեփոխման հարց, այլ նախ և առաջ որպես դատա-

կան անկախության և անաչառության ինստիտուցիոնալ երաշխիքների վերաիմաստավորման խնդիր: Հոդվածում հիմնավորվում է, որ Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) 6-րդ հոդվածի շրջանակում ձևավորված դատական անկախության և անաչառության դասական չափանիշները, որոնք կառուցվել են տեսանելի դերակատարների, պաշտոնական հարաբերությունների և բացահայտ ինստիտուցիոնալ կապերի շուրջ, արհեստական բանականության պայմաններում բախվում են նոր, հաճախ անտեսանելի և տեխնոլոգիապես միջնորդավորված ռիսկերի: Այդ պատճառով առաջանում է նշված սկզբունքների բովանդակության ընդլայնման և նոր իրավական երաշխիքների ձևավորման անհրաժեշտություն:

Աշխատանքի նպատակն է արհեստական բանականության կիրառման համատեքստում դատական անկախության և անաչառության պահպանման հիմնախնդիրների վերլուծությունն է, բացահայտելով այն նոր վտանգները, որոնք առաջանում են տեխնոլոգիական միջավայրում, ինչպես նաև ուրվագծելով այն նորմատիվ և գործնական մոտեցումները, որոնք կարող են ապահովել արդարա-

www.aradaradatiyinjurnal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դատության հիմնարար արժեքների պահպանումը: Այդ նպատակի իրագործման համար հողվածում ուսումնասիրվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԴ) նախադեպային իրավունքում ձևավորված անկախության և անաչառության չափանիշները, արհեստական բանականության կիրառման հնարավոր ձևերը դատական համակարգում, դրանց ազդեցությունը դատավորի դատողության, առաջխաղացման, գնահատման և որոշում կայացնելու գործընթացի վրա, ինչպես նաև մարդու դատավորի անհրաժեշտության հարցը արդարադատության փիլիսոփայական և իրավական հիմքերի տեսանկյունից:

Հողվածի կառուցվածքը բխում է հետազոտության ներքին տրամաբանությունից: Ներկայացվում է դատական անկախության և անաչառության իրավական բովանդակությունը՝ ՄԻԵԴ-ի 6-րդ հոդվածի և ՄԻԵԴ-ի ձևավորված չափանիշների լույսի ներքո: Այնուհետև քննարկվում են արհեստական բանականության կիրառման հիմնական ձևաչափերը դատական համակարգում և դրանցից բխող ռիսկերը՝ կապված տեխնոլոգիական կախվածության, մասնավոր մատակարարների ազդեցության, ալգորիթմական կողմնակալության, թափանցիկության պակասի և դատավորի ներքին դատողության վրա անտեսանելի ներգործության հետ: Այնուհետև հողվածում անդրադարձ է կատարվում մարդ դատավորի անհրաժեշտության հիմնավորմանը՝ արդարության հայեցակարգի փիլիսոփայական և իրավական մեկնաբանությունների համատեքստում: Վերջում ձևակերպվում են այն հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները, որոնք վերաբերում են դատական համակարգում արհեստական բանականության կիրառման թույլատրելի սահմաններին և դրա նկատմամբ անհրաժեշտ նորմատիվ վերահսկողությանը:

Մեթոդաբանություն

Սույն հետազոտության հիմքում դրվել է դոկտրինալ իրավական մեթոդը, որի միջոցով ուսումնասիրվել են դատական անկախության և անաչառության վերաբերյալ միջազգային և եվրոպական իրավական չափանիշները, մասնավորապես՝ ՄԻԵԴ-ի 6-րդ հոդվածը, ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքը, ինչպես նաև արդարադատության ոլորտում արհեստական բանականության կիրառության վերաբերյալ Եվրոպայի խորհրդի և այլ միջազգային կառույցների փաստաթղթերը: Դոկտրինալ մեթոդի կիրառումը հնարավորություն է տվել պարզելու դատական անկախության և անաչառության բովանդակությունը, դրանց փոխկապակցվածությունը, ինչպես նաև գնահատելու, թե ինչ նոր խնդիրներ են առաջանում այդ սկզբունքների իրացման ընթացքում արհեստական բանականու-

թյան կիրառման պայմաններում:

Հետազոտության ընթացքում կիրառվել է նաև համեմատական-իրավական մեթոդը, որի միջոցով համադրվել են դատական անկախության և անաչառության վերաբերյալ ձևավորված դասական չափանիշները և արդարադատության թվայնացման պայմաններում ի հայտ եկող նոր ռիսկերը: Այս մեթոդը թույլ է տվել ցույց տալ, որ ավանդական մոտեցումները հիմնականում կառուցվել են տեսանելի դերակատարների, պաշտոնական հարաբերությունների և բացահայտ ինստիտուցիոնալ կապերի շուրջ, մինչդեռ արհեստական բանականության համակարգերը ստեղծում են ազդեցության նոր, հաճախ անտեսանելի և տեխնոլոգիապես միջնորդավորված ձևեր: Համեմատական դիտարկումը կիրառվել է նաև արհեստական բանականության տարբեր կիրառական ձևաչափերի՝ ֆորմալ և ոչ ֆորմալ օգտագործման, ինչպես նաև օժանդակ և բովանդակային ներգործություն ունեցող գործառույթների տարբերակման համար:

Հետազոտության մեջ օգտագործվել է նաև պատմական մեթոդը, քանի որ թեմայի ամբողջական բացահայտման համար անհրաժեշտ է եղել դիտարկել արդարադատության, արդարության, դատական անկախության և անաչառության գաղափարների ձևավորման զարգացումը: Պատմական և փիլիսոփայական աղբյուրների ներգրավմամբ վերլուծվել են արդարության հայեցակարգի դասական մեկնաբանությունները և դրանց ազդեցությունը արդի արդար դատաքննության ընկալման վրա: Այս մոտեցումը հնարավորություն է տվել բացահայտելու, որ մարդ դատավորի անհրաժեշտության հարցը միայն տեխնոլոգիական կամ գործնական խնդիր չէ, այլ ունի արժեքային և փիլիսոփայական հիմք:

Տվյալների հավաքագրման հիմնական աղբյուրներ են միջազգային իրավական ակտերը, ՄԻԵԴ-ի վճիռները և փաստաթղթերը, արդարադատության ոլորտում արհեստական բանականության կիրառման վերաբերյալ միջազգային կազմակերպությունների ուղեցույցներն ու չափանիշները, ինչպես նաև թեմային վերաբերող գիտական գրականությունը: Հավաքված նյութերը վերլուծվել են բովանդակային և համակարգային եղանակով՝ բացահայտելու համար, թե ինչպես են դասական իրավական սկզբունքները գործում տեխնոլոգիական նոր միջավայրում, որտեղ դատական որոշումների ձևավորման վրա կարող են ազդել ալգորիթմական համակարգերը, մասնավոր տեխնոլոգիական դերակատարները և ոչ թափանցիկ տվյալահեն մեխանիզմները:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

ՄԻԵԴ-ի 6-րդ հոդվածը հստակ սահմանում է անկախ և անաչառ դատարանի կողմից գործի քննության իրավունքը [1]: Սույն բաժնի համար

կարևոր է նաև հստակեցնել, որ ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով ամրագրված անկախ և անաչառ դատարանի պահանջը ՄԻԵԿ-ի պրակտիկայում ընկալվում է ոչ միայն որպես ընթացակարգային երաշխիք, այլ նաև որպես իրավական պետության ինստիտուցիոնալ նախապայման: Դատական իշխանությունը պետք է կառուցված լինի այնպիսի հիմքի վրա, որը բացառում է արտաքին ազդեցության ողջամիտ ռիսկը [2]:

Դատական անկախությունը վերաբերում է պետական իշխանության համակարգում դատարանի ինստիտուցիոնալ և կառուցվածքային դիրքին: Այն ենթադրում է դրա կազմակերպչական, գործառնական և որոշում կայացնելու ինքնավարությունը գործադիր և օրենսդրական իշխանություններից, ինչպես նաև դրա պաշտպանվածությունը արտաքին ցանկացած ճնշումից [3]: Դատական իշխանությունն ապահովում է ոչ միայն իրավական կայունությունն ու արդարադատության պատշաճ իրականացումը, այլ նաև ծառայում է որպես կարևոր հակակշիռ և զսպող մեխանիզմ՝ գործադիր և օրենսդիր իշխանությունների նկատմամբ [4]: Այս համատեքստում անկախությունը կարող է ընկալվել կամ որպես դատարանների որոշումների կայացման ինքնուրույնություն, կամ որպես դատական համակարգի ամբողջական կառուցվածքային մեկուսացում:

Դատական համակարգի լիարժեք մեկուսացումը կնշանակի, որ գործադիր և օրենսդիր իշխանությունները որևէ գործառույթ դատական իշխանության նկատմամբ իրականացնել չեն կարող: Սա ավելի հիփոթետիկ խնդիր է քանի որ պետությունների մեծ մասը չեն օգտագործում դատական համակարգի անկախության մասն կառուցակարգ: Ավելին ՄԻԵԿ-ի պահանջը նրանում չէ, որ գործադիր և օրենսդիր մարմինները առնչություն չունենան դատական համակարգին: Այն պահանջում է օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայություն՝ դատական անկախության ապահովման համար [5]: Սույն համատեքստում անհրաժեշտ է հստակ տարբերակել անկախ դատական իշխանությունը այնպիսի դատական համակարգից, որը մեկուսացված է հանրային հաշվետվողականությունից: Ակադեմիական գրականությունում դատական անկախության և հաշվետվողականության եզրույթները հաճախ դրսևորում են «կոնֆլիկտային» փոխհարաբերակցություն [6]: Սակայն այս լարվածությունը հիմնականում բխում է «անկախություն» հասկացության կառուցվածքային մեկնաբանությունից, այլ ոչ թե դրա ֆունկցիոնալ կամ իրավապաշտպան նշանակությունից: Կարևոր է նկատել, որ մինչ գործադիր և օրենսդիր իշխանությունների ներկայացուցիչները առավել հաճախ ընտրվում են ժողովրդավարական ընտրությունների միջոցով, դատական իշխանությունը

շատ երկրներում շարունակում է մնալ համեմատաբար փակ համակարգ, որտեղ դատավորները, դատախազները և այլ իրավաբանական մասնագետներ նշանակվում կամ ընտրվում են ներքին ընթացակարգերով՝ առանց արտաքին վերահսկողության: Նման փակ միջավայրում կարող է ձևավորվել «գործընկերային միջավայր», որը, իր հերթին, կարող է խոչընդոտել դատական համակարգի ներսում գործող մարմինների կարողությունը կամ պատրաստականությունը՝ պատասխանատվության ենթարկելու իրենց գործընկերներին ոչ պատշաճ վարքագծի համար: Այլ կերպ ասած՝ սա կարող է հանգեցնել կողմնակալ մշակույթի ձևավորմանը, ինչի հետևանքով թուլանում են օրենսդիր իշխանության կողմից սահմանված վերահսկողական և կարգապահական մեխանիզմները, որոնք կոչված են ապահովելու դատական իշխանության հաշվետվողականությունը: Բացի այդ, անկախությունը, երբ այն վերածում է ինստիտուցիոնալ մեկուսացման, կարող է բացասաբար անդրադառնալ դատական համակարգի թափանցիկության վրա: Երբ դատական իշխանությունը չափազանց կտրված է արտաքին վերահսկողությունից, հատկապես ժողովրդավարական ճանապարհով ընտրված մարմինների կողմից, վերջինիս որոշումների կայացման գործընթացը կարող է դառնալ անհասկանալի, իսկ ներքին ընթացակարգերը՝ դիմադրություն ցուցաբերել փոփոխությունների կամ հաշվետվողականության նկատմամբ: Նման պայմաններում օրենսդիր իշխանության համար զգալիորեն դժվարանում է համակարգում առկա բացերի բացահայտումը և համապատասխան բարեփոխումների իրականացումը, ինչը կարող է հանգեցնել ինստիտուցիոնալ կանգի: Այդ պատճառով դատական անկախության ժամանակակից ըմբռնումը պետք է տարանջատվի ինստիտուցիոնալ մեկուսացումից: ՄԻԵԿ-ի մոտեցումը չի պահանջում դատական իշխանության նկատմամբ վերահսկողության բացառում, այլ պահանջում է այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնք չեն վերածվում քաղաքական կամ վարչական ճնշման գործիքի [7]: Այս պարզաբանումը կարևոր է, որպեսզի հստակ պատկերացում ձևավորվի առ այն, թե ինչ է ենթադրում դատական անկախության եզրույթը: ՄԻԵԿ-ը այս առնչությամբ ձևավորել է զգալի նախադեպային հենք, որի հիման վրա պետությունները կարող են կառուցել դատական իշխանության վերաբերյալ ներքին քաղաքականությունը:

Դատական անկախության առնչությամբ ՄԻԵԿ-ի կարևորագույն նախադեպերից է Luka v. Romania (2009) գործը, որտեղ Դատարանը սահմանեց դատական անկախության գնահատման չորս հիմնական չափորոշիչներ՝ (ա) դատավորների նշանակման գործընթացը, (բ) պաշտոնավարման ժամկետը և դրա կայունությունը, (գ) արտաքին

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ճնշումներից պաշտպանվածության երաշխիքները, և (դ) անկախության արտաքին ընկալումը (appearance of independence) [8]: Այս մոտեցումը ցույց է տալիս, որ անկախությունը ՄԻԵԳ-ի համար ոչ միայն ֆորմալ, այլև գործառնական կարգավիճակ է, որտեղ կարևոր է թե՛ դատարանի իրական ազատությունը, թե՛ այն, թե ինչպես է այդ ազատությունը ընկալվում ողջամիտ արտաքին դիտորդի կողմից: «Արտաքին ընկալման» առնչությամբ ՄԻԵԳ-ը շեշտում է, որ անգամ անկախության խաթարման վերաբերյալ ապացույցի բացակայության դեպքում ինստիտուցիոնալ կախվածության տպավորությունն արդեն կարող է բավարար լինել վստահության խաթարման համար [9]: Մինչ անաչառությունը վերաբերում է այդ անկախ միջավայրում անհատական գործի նկատմամբ դատավորի կամ դատական կազմի չեզոք դիրքին [9]: Կողմնակալ դատարանը չի կարող լինել անկախ: Այն կախված է դատավարության մասնակիցներից, արտաքին ազդեցություններից կամ սեփական կանխավարկածներից: Այսպիսով անկախությունը ստեղծում է այն կառուցվածքային հիմքը, որի վրա հնարավոր է անաչառ արդարադատությունը, իսկ անաչառությունը, իր հերթին, հանդիսանում է անկախության գործնական դրսևորում կոնկրետ դատավարության շրջանակում: Հենց այս պատճառով ՄԻԵԳ-ը շատ դեպքերում երկու պահանջները դիտարկում է գուճահեռ, քանի որ նույն փաստական հանգամանքը կարող է միաժամանակ կասկածի տակ դնել և՛ դատարանի անկախությունը, և՛ նրա անաչառությունը [10]:

Գասական իմաստով անկախության և անաչառության սկզբունքները կառուցվել են տեսանելի դերակատարների, պաշտոնական հարաբերությունների և բացահայտ ինստիտուցիոնալ կապերի շուրջ: Արդարադատության թվայնացումը և, մասնավորապես, արհեստական բանականության (այսուհետ նաև՝ ԱԲ) համակարգերի կիրառումը, վտանգում է այս արժեհամակարգը: Օրինակ՝ դասական մոտեցմամբ անկախության վտանգներն առավելապես կապվում էին գործադիր կամ օրենսդիր իշխանությունների ուղղակի կամ անուղղակի ազդեցության հետ, ինչի պատճառով դատական անկախության ապահովման գործում առանձնահատուկ դեր է վերապահվում դատական ինքնակառավարման մարմիններին, մասնավորապես՝ դատական խորհուրդներին [11]: Արտաքին ճնշումների վերաբերյալ ՄԻԵԳ-ի պրակտիկան ներառում է և ուղղակի քաղաքական միջամտությունները, և ներգործության «թաքնված» ինստիտուցիոնալ մեխանիզմները [12]: ԱԲ գործիքները թաքնված մեխանիզմների մաս են կազմում և ստեղծում են ազդեցության ուղիներ՝ տեխնոլոգիական կախվածության, ուժային կենտրոնացման և անտեսանելի միջամտության միջոցով [13]: Այս փոփոխությունն ու-

նի հատկապես կարևոր գործնական նշանակություն, քանի որ անկախության գնահատման ավանդական չափանիշները՝ նշանակման կարգը, պաշտոնավարման կայունությունը, արտաքին ճնշումներից պաշտպանվածությունը, կարող են նորմատիվորեն պաշտպանված մնալ, մինչդեռ որոշումների կայացման իրական էկոհամակարգում ձևավորվում են նոր ուժային կենտրոններ, որոնց նկատմամբ դատական իշխանությունը կարող է չունենալ բավարար վերահսկողություն: Ստեղծված իրավիճակում անխուսափելիորեն ծագում է հիմնարար հարցը. ը՞վ է ձևավորում այն միջավայրը, որտեղ դատավորն իրականացնում է արդարադատություն:

ԱԲ գործիքները կարող են կիրառվել երկու հիմնական ձևաչափով: Առաջինը՝ դատական մարմնի մակարդակով ընդունված ու կանոնակարգված քաղաքականության շրջանակում (ֆորմալ կիրառում), երկրորդը՝ անհատ դատավորների կողմից՝ չկանոնակարգված ձևով (ոչ ֆորմալ կիրառում): Երկու դեպքում էլ ԱԲ-ի կիրառման հիմնական ոլորտները համընկնում են: Դրանք ներառում են վկայությունների և ապացույցների ամփոփումը, գործերի ու նախադեպերի որոնումն ու համեմատական վերլուծությունը, ռիսկի գնահատումը, ստանդարտ որոշումների ու կարգերի նախնական նախագծերի մշակումը, ինչպես նաև դատական ակտերի ոճաբանական խմբագրումն ու ուղղագրական ստուգումը [14]: Սակայն ԱԲ գործիքների ներդրումն ի սկզբանե ենթադրում է իշխանության կենտրոնացում ու դրա փոխանցում մասնավոր դերակատարների: ԱԲ համակարգերի մշակումն ու սպասարկումը պահանջում են լայնածավալ տվյալների բազաներ, հաշվողական հսկայական կարողություններ, բարդ տեխնոլոգիական ենթակառուցվածք և մատակարարման ընդլայնված շղթաներ, որոնք գործնականում կենտրոնացված են մի քանի պետությունների և սահմանափակ թվով խոշոր մասնավոր ընկերությունների ձեռքում [14]: Արդյունքում ԱԲ գործիքների վրա ազդեցությունը կարող է դառնալ թիրախ գործադիր կամ օրենսդիր մարմինների համար, որոնք ձգտում են ենթարկել դատական համակարգը քաղաքական շահերին [15]: Մասնավոր ոլորտի դերակատարների ներգրավվածությունն առաջացնում է առանձնահատուկ մտահոգություններ: Տեխնոլոգիական ոլորտի մենաշնորհային բնույթը սահմանափակում է ԱԲ գործիքներ մատակարարող ընկերությունների շրջանակը, ստեղծելով մատակարարներից կախվածության ռիսկ և հանրային ծառայությունների փաստացի «մասնավորեցում» [16]: Ընդ որում, դատական համակարգի մարմինները հաճախ գրկված են լինում ԱԲ գործիքների մշակման, ուսուցման ու ալգորիթմական ճարտարապետության վերաբերյալ տեղեկատվություն ստանալու հնարավոր-

րությունից, քանի որ մասնավոր կազմակերպությունները առևտրային գաղտնիքի ներքո կարող են չբացահայտել ալգորիթմների գործելակերպի վերաբերյալ տվյալները [17]:

Առավել բարդ խնդիր է ԱԲ գործիքների անտեսանելի ազդեցությունը դատավորի ներքին դատողության ու կայացրած որոշումների վրա: Ալգորիթմները ստեղծում են կանխատեսումներ ու առաջարկություններ, որոնց հիմքում ընկած տրամաբանությունը ո՛չ դատավորի, ո՛չ կողմերի, ո՛չ բողոքարկման աստիճանի համար ըստ էության ստուգելի չէ [18]: Սա առաջացնում է խնդիրներ ոչ միայն դատական անկախության և անաչառության, այլ նաև դատական ակտերի պատճառաբանվածության տեսանկյունից: Ավելին, ԱԲ գործիքների նման օգտագործման պայմաններում առաջանում է հարց, թե ով է կայացնում դատական ակտերը՝ արդարադատություն իրականացնող մարմինը, «ստվերային անձիք», թե պետական կառավարման ոլորտի այլ մարմիններ: Ելնելով ԱԲ գործիքների առանձնահատկություններից այս հարցի պատասխանը չեն կարող տալ անգամ դրա ստեղծողները: Միաժամանակ, հանրամատչելի ԱԲ համակարգերը հիմնված են ոչ միայն ծրագրավորման ժամանակ ներբեռնված տվյալների, այլ նաև այլ օգտատերերի մուտքագրված տեղեկատվության վրա [19]: Սա նշանակում է, որ դատավորների կողմից հանրամատչելի ԱԲ գործիքների կիրառումը կարող է հանգեցնել էլ ավելի մեծ վտանգների՝ դատական անկախության և անաչառության տեսանկյունից:

ԱԲ գործիքների կիրառումը դատական համակարգում կարող է նաև ձևափոխել դատավորների գնահատման և հետևաբար նաև առաջխաղացման գործընթացները: Դատավորների նշանակման և պաշտոնավարման հարցը ՄԻԵԿ-ի պրակտիկայում դիտարկվում է որպես դատական անկախության կառուցվածքային հիմք: Դատարանը հետևողականորեն ընդգծում է, որ ինքնին գործադիր կամ օրենսդիր իշխանության ներգրավվածությունը նշանակման գործընթացում չի հակասում ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածին [20]: Սակայն որոշիչ է այն, թե նշանակվելուց հետո դատավորը պաշտպանված է արդյոք կամայական հեռացումից, քաղաքական ազդեցությունից կամ ինստիտուցիոնալ կախվածությունից [5]: Այս համատեքստում մեծ նշանակություն ունեն անժամկետ կամ «բավարար» երկար պաշտոնավարման ժամկետները, հեռացման խիստ սահմանափակ հիմքերը, ինչպես նաև դատավորների առաջխաղացման կանխատեսելի և մրցույթային ընթացակարգերը [21]: Միաժամանակ ՄԻԵԿ-ը հրաժարվում է պարտադրել դատավորների նշանակման միասնական մոդել: Պետություններին տրվում է հայեցողության լայն շրջանակ՝ հաշվի առնելով նրանց սահմանադրական առանձնահատկությունները և կառավարման

համակարգերը [22]: Սակայն այդ հայեցողությունը սահմանափակվում է պետության իսկ կողմից սահմանված սահմանադրական և օրենսդրական կանոնների պարտադիր պահպանմամբ: Այլ կերպ ասած, պետությունը կարող է սահմանել դատավորների ընտրության ընթացակարգերը իր հայեցողությամբ, սակայն պարտավոր է խստորեն հետևել այդ ընթացակարգերի պահպանմանը: Սա ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով ամրագրված «Օրենքով ստեղծված դատարան» եզրույթի էությունն է [20, §§ 226-234]: Այս եզրույթը ստացավ իր համակարգված մեկնաբանությունը Ástráðsson v. Iceland գործով, որտեղ Դատարանը մշակեց եռաստիճան թեստ՝ պարզելու համար, թե արդյոք նշանակման գործընթացում առկա խախտումները կարող են հանգեցնել «օրենքով ստեղծված դատարանի» պահանջի խախտման: Նախ՝ գնահատվում է, արդյոք առկա է ներքին իրավունքի ակնհայտ և ծանր խախտում: Երկրորդ՝ այդ խախտումը վերլուծվում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի նպատակների լույսի ներքո՝ անկախության, իշխանությունների տարանջատման և իրավական պետության պաշտպանության տեսանկյունից: Երրորդ՝ գնահատվում են այդ խախտման կոնկրետ հետևանքները դիմողի իրավունքների վրա [20, §§ 243-252.]: Այս մոտեցման էությունն այն է, որ ոչ ամեն ընթացակարգային շեղում է հանգեցնում խախտման, բայց այն դեպքերում, երբ խախտվում է դատավորների նշանակման այնպիսի հիմնարար կանոն, որը կոչված էր սահմանափակելու քաղաքական կամ այլ ոչ պատշաճ ազդեցությունը, վտանգվում է ոչ միայն տվյալ դատավորի կարգավիճակը, այլև ողջ դատարանի լեգիտիմությունը: Այդպիսով, ՄԻԵԿ-ը դատական անկախությունը կապում է ոչ միայն վերջնական որոշման բովանդակության, այլև այն ինստիտուցիոնալ ճանապարհի օրինականության հետ, որով դատավորը հասել է իր պաշտոնին:

ԱԲ գործիքների ներդրման պայմաններում վերոնշյալ մոտեցումը ստանում է նոր բովանդակություն, քանի որ դատավորների նշանակման, գնահատման և առաջխաղացման ընթացակարգերի նկատմամբ ռիսկերը կարող են առաջանալ ոչ միայն բաց քաղաքական կամ վարչական միջամտության, այլև տվյալահեն և ալգորիթմական համակարգերի միջոցով: Եթե դատավորների թեկնածուների կամ գործող դատավորների գնահատումը կառուցվում է այնպիսի թվային ցուցանիշների վրա, ինչպիսիք են գործերի քննության արագությունը, բեկանման տոկոսը, որոշումների «համահունչությունը» նախկին պրակտիկային կամ այլ քանակական չափորոշիչներ, ապա նույնիսկ ձևականորեն օրինական ընթացակարգերի պարագայում կարող է ստեղծվել անուղղակի ճնշման միջավայր: Այդպիսի պայմաններում դատավորը կարող է իր գործունեությունը կողմնորոշել ոչ թե միայն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օրենքի, ներքին համոզմունքի և գործի առանձնահատկությունների հիման վրա, այլ նաև այն մտավախությամբ, որ ալգորիթմական գնահատումը բացասաբար կանդրադառնա իր վարկանիշի, առաջխաղացման կամ պաշտոնավարման կայունության վրա: Այսպիսով, ԱԲ-ն կարող է ազդել դատական անկախության վրա ոչ թե հրահանգի կամ պարտադրանքի միջոցով, այլ վարքագծի կառուցվածքային ուղղորդման ճանապարհով [23]: Դատավորները կարող են զգուշանալ ԱԲ գործիքներով հաստատված իրավական լուծումներից և որոշումներից շեղվելուց այն մտավախության հիմքով, որ ծրագիրը կխախտի իրենց վարկանիշը [24]: Ծրագրային լուծումներից այսպիսի կախվածությունը կարող է հանգեցնել նաև իրավական ոլորտի մասնագետների կարողությունների նվազեցման, այսպիսով փոխարինելով մարդկային դատողությունը ալգորիթմական լուծումներով:

Ավելին, դատարանը պետք է գտնվի այնպիսի ինստիտուցիոնալ և գործառնական դիրքում, որը բացառում է որևէ կապ կամ փոխկախվածություն կողմերի հետ, որն ինքնին կարող է ստեղծել կողմնակալության կամ կողմնակալ լինելու տպավորություն: Այստեղ վճռորոշ է ոչ միայն փաստացի ազդեցության առկայությունը, այլ նաև այն, թե արդյոք տվյալ հարաբերությունը կարող է օբյեկտիվորեն ընկալվել որպես վտանգ անաչառության համար: ՄԻԵԴ-ը այս մոտեցումը համակարգված ձևով զարգացրել է Piersack v. Belgium (1982) գործով, որտեղ հստակ տարանջատվեցին դատական անաչառության սուբյեկտիվ և օբյեկտիվ թեստերը: Սուբյեկտիվ անաչառությունը վերաբերում է կոնկրետ դատավորի ներքին համոզմունքներին և վերաբերմունքին տվյալ գործի շրջանակում: Սուբյեկտիվ թեստի դեպքում պահպանվում է դատավորի բարեխղճության կանխավարկածը, և սուբյեկտիվ կողմնակալությունը պետք է ապացուցվի կոնկրետ փաստերով: Սակայն սուբյեկտիվ անաչառության ապացուցման բարդությունը հանգեցրել է նրան, որ ՄԻԵԴ-ի պրակտիկայում առաջնային նշանակություն է տրվել օբյեկտիվ չափանիշին: Օբյեկտիվ չափանիշի պարագայում բավարար է կողմնակալության վերաբերյալ ողջամիտ կասկածի առկայությունը: Այս մոտեցման առանցքում ոչ թե դատավորի ներքին համոզմունքներն են, այլ արտաքին դիտորդի տեսանկյունից ձևավորվող գնահատականը [25]: Այս համատեքստում կարևոր է հիշյալ սկզբունքը. «արդարությունը պետք է ոչ միայն իրականացվի, այլ դրա իրականացումը պետք է տեսանելի լինի» (justice must not only be done, it must also be seen to be done) [26]: Piersack գործով վճռորոշ հանգամանքը այն էր, որ դատավորը նախկինում նույն գործով հանդես էր եկել որպես դատախազ: Թեև որևէ ապացույց չկար նրա անձնական կողմնակալության վերաբերյալ, Դատարանը գտավ, որ

այդպիսի կապը կարող է անկողմնակալ դիտորդի մոտ առաջացնել ողջամիտ կասկած դատավորի անաչառության վերաբերյալ: Այդ առումով ԱԲ-ն անաչառության համար ստեղծում է որակապես նոր մարտահրավեր: Եթե դատարանը օգտագործում է համակարգեր փաստաթղթերի ամփոփման, նախադեպերի որոնման, ռիսկերի գնահատման կամ դատական ակտերի նախագծման համար, ապա նույնիսկ այն դեպքում, երբ վերջնական որոշումը կայացնում է մարդ դատավորը, կարող է առաջանալ հարց, թե որքանով է այդ որոշման ձևավորման ընթացքը կախված անտեսանելի տեխնոլոգիական ազդեցությունից: Առանձնապես զգալուն են այն իրավիճակները, երբ կիրառվող համակարգերը գործում են «սև արկղի» սկզբունքով, երբ դրանց տրամադրած արդյունքները չեն կարող բացատրվել կամ վերարտադրվել, կամ երբ դրանց ուսուցման տվյալները կարող են արտացոլել նախկին կողմնակալ պրակտիկաներ [27]: Այս պարագայում անաչառության օբյեկտիվ թեստը ստանում է նոր բովանդակություն: Անհրաժեշտ է գնահատել ոչ միայն դատավորի դիրքը, այլ նաև այն, թե արդյոք դատավարական արդյունքի վրա ազդած տեխնոլոգիական շերտը կարող էր ողջամիտ կերպով ընկալվել որպես կողմնակալության կամ անհավասար վերաբերմունքի վտանգ:

Մարդու իրավունքների եվրոպական չափանիշների զարգացումը, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի նոր փաստաթղթերը, թույլ են տալիս պնդել, որ ԱԲ-ի կիրառման պայմաններում անաչառության ապահովումը պահանջում է առնվազն թափանցիկություն, հետազոտելիություն, մարդկային իրական վերահսկողություն և գործարկման ընթացքում խտրականությունը բացառող երաշխիքներ: «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության մասին» Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիան պետություններից պահանջում է ապահովել թափանցիկության և վերահսկողության բավարար միջոցներ, ինչպես նաև հաշվետվողականություն և պատասխանատվություն այն դեպքերում, երբ ԱԲ համակարգերը կարող են ազդել մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավական պետության վրա [28]: Իսկ CEPEJ-ի գեներատիվ ԱԲ-ի վերաբերյալ ուղեցույցները շեշտում են, որ նման համակարգերի օգտագործումը դատավորների կողմից պետք է կրի օժանդակող բնույթ, ոչ պարտադիր, բացատրելի և մշտապես ենթակա մարդկային վերահսկողության [29]: Այս պահանջները հենց անաչառության պահպանման տրամաբանության շարունակությունն են, քանի որ առանց դրանց դատավարության կողմերը չեն կարող վստահ լինել, որ գործը քննվել է ոչ միայն անկախ, այլ նաև անկողմնակալ կերպով: Այս միջավայրը կարող է նաև խաթարել դատական

համակարգի նկատմամբ հանրային վստահությունը: Հետևաբար, ԱԲ-ի դարաշրջանում ՄԻԵԳ-ի կողմից մշակված սուբյեկտիվ և օբյեկտիվ անաչառության թեստերը չեն կորցնում իրենց նշանակությունը, բայց դրանց կիրառությունը պետք է ընդլայնվի: Եթե նախկինում օբյեկտիվ անաչառությունը հիմնականում ստուգում էր դատավորի և կողմերի միջև տեսանելի կապերը, ապա այժմ այն պետք է ներառի նաև դատավորի դատողության վրա ազդեցություն ունեցող տեխնոլոգիական միջավայրի գնահատումը: Այլ կերպ ասած, արդարադատության տեսանելիության պահանջը տեխնոլոգիական պայմաններում վերածվում է նաև ազդեցությունների տեսանելիության պահանջի: Կողմերը պետք է կարողանան հասկանալ, թե արդյոք և ինչ ծավալով է ԱԲ-ն ներգործել գործի քննության վրա, որպեսզի հնարավոր լինի արդյունավետորեն պաշտպանել անաչառ դատարանի իրավունքից բխող երաշխիքները:

Վերոգրյալից ծագում է նաև առավել խորքային մի հարց՝ արդյոք արդարադատությունը կարող է պահպանել իր բուն էությունը, եթե դատական որոշման ձևավորման գործընթացում մարդու դերը աստիճանաբար փոխարինվում է ալգորիթմական միջնորդավորմամբ: Եթե դատական անկախությունն ու անաչառությունը արդար դատաքննության իրավունքի հիմնական ինստիտուցիոնալ երաշխիքներն են, ապա դրանց նպատակն է վերջո միայն արտաքին չեզոքությունը չէ, այլ արդարության իրականացումը որպես մարդկային գործունեություն: Այդ պատճառով ԱԲ-ի շուրջ վեճը հանգում է ոչ միայն արդյունավետության, արագության կամ տեխնիկական ճշգրտության հարցին, այլ նաև այն հիմնարար խնդրին, թե ով պետք է կրի արդարադատության բարոյական և իրավական պատասխանատվությունը: Այս տեսանկյունից մարդու դատավորի անհրաժեշտության հարցը ձեռք է բերում ոչ թե վերացական կամ փիլիսոփայական, այլ անմիջական իրավական նշանակություն:

Մարդ դատավորների անհրաժեշտության խնդրի վերաբերյալ վեճերը մարդկության պատմության ընթացքում աննախադեպ են: Մի քանի տասնամյակ առաջ հնարավոր չէր պատկերացնել այնպիսի գործիքների լայնածավալ ներդրումը, որը կարող է ուղղակի կամ անուղղակի կերպով հանգեցնել արդարադատության ոլորտում մարդկային դատողության փոխարինմանը: Արդարադատության հայեցակարգը ի սկզբանե ձևավորվել է որպես մարդկային գոյության հիմնարար արժեք, որը հիմնված է մարդկային արժանապատվության, կարեկցանքի և փորձի վրա: Արդարադատության հիմնական տարրը հենց արդարությունն է, որը հազարամյակներ եղել է մտավոր գործիչների մտքումների կենտրոնում: Ժամանակակից աշխարհում, հատկապես իրավական գիտությունների ոլոր-

տից դուրս իրավունքը և օրենքը հաճախ նույնացվում են արդարության հետ, սակայն, այդ հասկացությունները միշտ չէ, որ համընկնում են: Արդարությունը այն գերագույն նպատակն է, կատարելության այն դրսևորումը, որին և միտված են իրավունքի և օրենքի ողջ փիլիսոփայությունը, ինչպես նաև օրենսդրական և իրավական ոլորտի բոլոր նախաձեռնությունները: Այն հանգամանքը, որ հասարակության մտքում օրենքը հաճախ նույնացվում է արդարության ապահովման անհրաժեշտության հետ, հիմք է այն եզրահանգման համար, որ արդարությունը ունի արմատական փիլիսոփայական և նաև հոգեբանական նշանակություն մարդկության և անհատի կյանքում:

Փիլիսոփայության ոլորտում առանձնացվում են չորս հիմնական առաքինություններ՝ խոհեմություն (prudence), արդարություն (justice), տոկոնություն (fortitude) և զսպվածություն (temperance)? Դրանք համարվում են հիմնական, քանի որ բոլոր այլ առաքինությունները հիմնված են կամ բխում են դրանցից: Այս առաքինությունների կարևորությունը ձևավորվել է դեռևս հին աշխարհում և ժամանակի ընթացքում տեղ է գտել նաև քրիստոնեության մեջ: Անգամ այն չորս առաքինությունների շարքում արդարությունը առանձնանում է հատուկ կարևորությամբ [30]: Նշանակալի է, որ չորս առաքինություններից արդարությունը միակն է, որն ունի արտաքին ուղղվածություն: Այլ կերպ ասած այն միտված է արտաքին աշխարհի և այլ անհատների շահերի պաշտպանությանը: «Արդարություն» տերմինը (justice) իր արմատում պարունակում է լատիներեն *juis* տերմինը, որը նշանակում է «ճիշտ» [31]: Հարկ է շեշտել, որ այսպիսի կարևոր և բազմաշերտ տերմինը չի կարող ունենալ մեկ ընդհանրական նշանակություն: Տարբեր ժամանակաշրջաններում փիլիսոփաները տարբեր կերպ են մեկնաբանել այս տերմինը: Դասական մտածողության մեջ արդեն իսկ տեսանելի է արդարության երկակի բնույթը: Մի կողմից՝ այն բարոյական առաքինություն է, որը բնութագրում է անհատի վարքագիծը՝ իր սովորույթների, որոշումների և ընտրությունների մակարդակում: Մյուս կողմից՝ արդարությունը սոցիալական կարգի սկզբունք է, որը ներթափանցում է ինստիտուտների կառուցվածքն ու գործառույթը: Երբ իրավաբաններն այսօր խոսում են «արդար դատավարության» մասին, նրանք, թեև հաճախ գիտակցաբար չեն հղվում այս դասական ձևակերպումներին, իրականում շարժվում են հենց այն նույն տրամաբանությամբ, ըստ որի՝ դատավորի առաքինությունն ու ինստիտուցիոնալ կառուցվածքի որակը փոխկապակցված են:

Արիստոտելն արդարության խնդիրը ևս ավելի մանրամասն է մշակում: «Նիկոմաքոսյան էթիկա» աշխատության V-րդ գրքում նա արդարությունը բնորոշում է որպես լիարժեք առաքինություն», որը

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վերաբերում է մարդու հարաբերություններին այլոց հետ [32]: Արիստոտելյան դասակարգումը թույլ է տալիս տարբերակել ընդհանուր արդարությունն ու մասնավոր արդարությունը: Ընդհանուր արդարությունը մոտ է արդի «օրենքի գերակայության» գաղափարին, քանի որ ենթադրում է քաղաքացիական առաքինությունների ամբողջություն և օրենքներին համապատասխան վարքագիծ հանուն հասարակական ընդհանուր բարիքի: Մասնավոր արդարությունն արդեն վերաբերում է բարիքների բաշխմանն ու անհատների փոխհարաբերություններին և ներառվում է բաշխողական և ուղղիչ արդարության ձևերում: Բաշխողական արդարությունը սկսում է քննարկել այն հարցը, թե ինչպես պետք է բաշխվեն պաշտոնները, բարիքները կամ հարկային ծանրությունները տարբեր անձանց միջև, որպեսզի պահպանվի համաչափությունը: Ուղղիչ արդարությունը արդեն վերաբերում է վնասների, խախտումների, անհամաչափությունների վերացմանը՝ հատուցման, վերադարձի կամ այլ իրավական միջոցներով: Արիստոտելի «միջինի» մասին ուսմունքը առանձնահատուկ ազդեցություն է ունեցել հատկապես քրեական քաղաքականության և դատական հայեցողության վերաբերյալ ժամանակակից մտեցումների վրա [33]: Արդարությունը ըստ նրա կայանում է չափավորության մեջ: Այլ կերպ ասած Արիստոտելի պատկերացմամբ արդարությունը ծայրահեղությունների միջև «միջին» կետն է: Արդար որոշումը, պետ է լինի ոչ ավել ոչ պակաս, քան պահանջում են կոնկրետ հանգամանքները: Այս պատկերացումը հետագայում ներթափանցեց պատժի անհատականացման, համաչափության և դատարանի հայեցողության սահմանների մասին դոկտրինայի մեջ և այսօր ուղղակի կապ ունի արդար դատաքննության տարրերի հետ:

Միջնադարում, մասնավորապես միջնադարյան Եվրոպայում արդարության հայեցակարգը դիտվում էր քրիստոնեական մտքի համատեքստում: Այս դարաշրջանում հատուկ կարևորության էին արժանանում բնական իրավունքի և աստվածային օրենքի հայեցակարգերը և արդարությունը հետևաբար դիտվում էր այս հասկացությունների համատեքստում: Թովմա Աքվինացու մոտ պատկերացումն այն է, որ աշխարհիկ օրենքը լեզիտիմ է այնքանով, որքանով այն արտացոլում է կամ առնվազն չի խախտում բնական և աստվածային օրենքի հիմնարար սկզբունքները [34]: Օրենքը, որը կոպտորեն հակասում է արդարությանը, կորցնում է իր իրավական հեղինակությունը և դառնում է «անարդար օրենք»: Աքվինացին ասում է, որ անարդար օրենքը իրականում օրենք չէ («lex iniusta non est lex»), քանի որ այն շեղվում է բնական օրենքից և արդարությունից: Հետագայում այս միտքը կծառայի որպես իրավունքի և բարոյականության փոխհարաբերության վերաբերյալ վեճե-

րում բնական իրավունքի դոկտրինայի առանցքային արտահայտումներից մեկը:

Չոն Լոկքի համար արդարությունն առաջին հերթին բնական իրավունքների պաշտպանությունն է՝ կյանքի, ազատության և սեփականության անձեռնմխելիության տեսքով [35]: Պետությունն արդար է այնքանով, որքանով այն ապահովում է այս իրավունքների համընդհանուր և անաչառ պաշտպանությունը՝ անկախ անձանց սոցիալական կամ քաղաքական դիրքից: Հենց այստեղ է, որ ի հայտ է գալիս «անկողմնակալ արբիտրի» գաղափարը, որը հետագայում կվերածնակերպվի որպես անկախ դատարան և արդար դատաքննության ինստիտուտ [35, §125]:

Վերոգրյալ փիլիսոփայական մեջբերումները կարևոր են, քանի որ դրանք վերլուծում են արդարադատության բուն էությունը որի վրա հիմնված է արդար դատաքննության ժամանակակից հայեցակարգը: Ավելին, մարդկության փորձը ցույց է տալիս, որ օրենքը միշտ չէ, որ արդար է: Արդարությունը պահանջում է, որ յուրաքանչյուր գործ դիտվի իր առանձնահատուկ հանգամանքների շրջանակում՝ արդարությունն ապահովելու նպատակով: ԱԲ գործիքները, որոնք հիմնված են բացառապես ֆորմալ տվյալների վրա, չեն կարող ցուցաբերել այն արդարամտությունը, կարեկցանքը և խորիմաստությունը, որը բնորոշ է մարդ էակին և ձեռք է բերվում մարդկային փորձի և ապրումների հետևանքով: Պատմությունը լի է օրինակներով, որտեղ օրենքը պահազգում էր գործի հստակ ելք, բայց արդարությունը թելադրում էր այլ մոտեցում: The Earl of Oxford գործը (1615) անգլիական իրավունքում այն հիմնարար նախադեպերից է, որտեղ օրենքը և արդարությունը հայտնվել էին ընդհարման մեջ: Օքսֆորդի կոմսը սեփականության իրավունքը ձեռք էր բերել օրենքի բոլոր պահանջներին համապատասխանող ընթացակարգերով և փորձում էր հեռացնել այդ հողատարածքներում բնակվող անձանց: Լորդ քաղաքապետը (Lord Chancellor), արքա Ջեյմս I-ի հովանավորությամբ միջամտեց, թույլ չտալով բնակիչների դուռն բերումը Օքսֆորդի կոմսին պատկանող հողատարածքներից, այն պատճառաբանությամբ որ այդ իրավիճակում դա կլինի անարդար [36]: Այսպիսով, անգլիական իրավական համակարգում սահմանվեց արդարության գերակայությունը օրենքի նկատմամբ՝ գաղափար, որը դարեր շարունակ մնում է այդ համակարգի հիմնասյուններից մեկը? R v Dudley and Stephens (1884) գործը արդարության գերակայության ևս մեկ օրինակ է: Այս գործը վերաբերում էր նավաբեկության ենթարկված մավաստիներ, ովքեր մնացել էրն ծովում՝ առանց սննդի: Մի քանի օր սովամահ լինելուց հետո երկուսը սպանեցին և կերան երրորդ տղային, ով արդեն մահամերձ էր՝ գոյատևելու համար: Դատարանը մեղմացրեց օրենքով սահմանված պա-

տիժը, որը նախատեսված էր սպանության համար՝ ելնելով այն հանգամանքից, որ լիարժեք պատասխանատվությունը կլիներ անարդար տվյալ բացառիկ պայմաններում [37]: Անգամ Նյուրեմբերգյան դատավարությունները հիմնված էին այն գաղափարախոսության վրա, որ որոշ գործողություններ այնքան անարդար են, որ դրանց օրենքով սահմանված լինելու փաստը էական չէ [38]: Այս բոլոր գործերը ապացուցում են մի փաստ. Արդարադատությունը պետք է իրականացվի մարդկանց կողմից, այլ ոչ թե հաշվարկային տրամաբանությամբ առաջնորդվող մեքենաների:

Հետևաբար, եթե արդարադատությունը պետք է պահպանվի որպես մարդկային պատասխանատվությամբ, տեսանելի և վիճարկելի իրավական գործունեություն, ապա այս ոլորտում անհրաժեշտ է հստակ նորմատիվ շրջանակ, որը նախ՝ կսահմանի, թե դատական գործունեության որ փուլերում է ԱԲ-ի կիրառումը թույլատրելի, և որ փուլերում այն պետք է բացառվի կամ ենթարկվի առավել խիստ սահմանափակումների, և ապա՝ կապահովի, որ ցանկացած նման կիրառում մնա մարդկային վերահսկողության ներքո, լինի թափանցիկ և հաշվետու: «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության մասին» Եվրոպայի խորհրդի շրջանակային կոմիտեիցիան պետություններից պահանջում է ապահովել բավարար թափանցիկություն և վերահսկողություն, ինչպես նաև հաշվետվողականություն և պատասխանատվություն այն դեպքերում, երբ ԱԲ համակարգերը կարող են ազդել մարդու իրավունքների, ժողովրդավարության և իրավական պետության վրա: Սրանից բխում է, որ առաջին հերթին օրենսդրորեն պետք է ամրագրվի մարդ դատավորի վերջնական և իրական որոշող դերը: Խոսքը միայն դատական ակտի ստորագրման մասին չէ: Պետք է բացառվի այնպիսի իրավիճակը, երբ որոշման էական տրամաբանությունը, փաստերի ընտրությունը, ռիսկերի կշռադատումը կամ իրավական լուծման ուղղությունը փաստացի ձևավորվում է ալգորիթմի կողմից, իսկ դատավորը սահմանափակվում է ձևական հաստատողի դերով: Այս պահանջը համահունչ է նաև ԵՄ «AI Act»-ի տրամաբանությանը, որը բարձր ռիսկային համակարգերի համար առանձնացնում է թափանցիկության, տեղեկատվության տրամադրման և մարդկային վերահսկողության պահանջները, ինչպես նաև Եվրոպայի խորհրդի չափանիշներին, որոնք ԱԲ-ի կիրառման դեպքում պահանջում են մարդու արժանապատվության, ինքնավարության և իրավական պաշտպանության պահպանում [38]:

Երկրորդ, անհրաժեշտ է հստակ տարբերակել դատական ոլորտում ԱԲ-ի թույլատրելի և անթույլատրելի գործառնությունները: Օժանդակ օգտագործումը, օրինակ՝ մեծածավալ նյութերի տեխնիկա-

կան դասակարգումը, տեքստերի լեզվական մշակումն ու ոչ որոշիչ վարչական գործառնությունները, կարող են թույլատրվել համապատասխան երաշխիքների առկայության դեպքում, մինչդեռ այն կիրառությունները, որոնք ուղղակիորեն ազդում են ապացույցների գնահատման, իրավական որակավորման, պատժի անհատականացման, վստահելիության որոշման կամ դատական ակտի բովանդակային լուծման վրա, կամ պետք է ենթարկվեն հատուկ կարգավորման, կամ արգելվեն: CEPEJ-ի վերջին ուղեցույցները հատուկ ընդգծում են, որ գեներատիվ ԱԲ-ի օգտագործումը դատական փաստարկման ու որոշումների մշակման մեջ պարունակում է դատական անկախության, տվյալների պաշտպանության և վարույթի ամբողջականության համար առանձնահատուկ ռիսկեր, իսկ ոչ պաշտոնական կոմերցիոն գործիքների օգտագործումը դատական մասնագետների կողմից գնահատվում է որպես խիստ վտանգավոր [29]:

Երրորդ, դատական համակարգում կիրառվող ցանկացած ԱԲ համակարգ պետք է ենթարկվի նախնական և պարբերական գնահատման: Սա գործնականում նշանակում է, որ մինչև նման գործիքը ներդրվի դատարաններում, պետք է գնահատվեն դրա տվյալային հիմքը, խտրականության հնարավոր ռիսկերը, բացատրելիության աստիճանը, սխալների հավանականությունը, մարդու իրավունքների վրա ազդեցությունը և այն հարցը, թե արդյոք համակարգը կարող է իրականում վիճարկվել և վերահսկվել: «Արհեստական բանականության և մարդու իրավունքների, ժողովրդավարության և օրենքի գերակայության մասին» Եվրոպայի խորհրդի շրջանակային կոմիտեիցիան պահանջում է ընդունել միջոցներ հավասարության և խտրականության արգելքի պահպանման, անձնական տվյալների պաշտպանության, հուսալիության և անվտանգ նորարարության ապահովման համար, իսկ ԵՄ «AI Act»-ը բարձր ռիսկային համակարգերի համար նախատեսում է ռիսկերի կառավարման, տվյալների կառավարման, տեխնիկական փաստաթղթավորման, գրանցամատյանների և մարդկային վերահսկողության պահանջներ: Դատական համակարգի համատեքստում սրանք պետք է վերածվեն պարտադիր նախնական աուդիտի և շարունակական վերահսկողության մեխանիզմների [38]:

Առանձնահատուկ զգուշություն է պահանջվում դատավորների գնահատման, նշանակման և առաջխաղացման ոլորտում ԱԲ-ի օգտագործման հարցում: Եթե նման գործընթացներում կիրառվեն ալգորիթմական գնահատման գործիքներ, դրանք չպետք է ունենան որոշիչ ուժ և չպետք է վերածվեն դատավորի վարքագիծը ձևավորող անուղղակի ճնշման աղբյուրի: Այստեղ անհրաժեշտ է ոչ միայն թափանցիկություն, այլ նաև այնպիսի իրավական

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կանոն, որի համաձայն ալգորիթմական ցուցանիշները չեն կարող ինքնուրույն հիմք ծառայել բացասական գնահատման, կարգապահական հետևանքի կամ առաջխաղացման մերժման համար: Հակառակ դեպքում դատավորի անկախությունը կթուլանա ոչ թե բաց հրահանգի, այլ վարկանիշային ճարտարապետության միջոցով: CEPEJ-ի փաստաթղթերը հենց այս պատճառով կապում են գեներատիվ և այլ ԱԲ համակարգերի օգտագործումը դատական անկախության հետ և շեշտում, որ այդ գործիքները չպետք է դառնան դատական հայեցողության փոխարինող [29]:

Եզրակացություն

Սույն հետազոտությունը ցույց է տալիս, որ արդարադատության ոլորտում արհեստական բանականության կիրառումը չի կարող դիտարկվել որպես զուտ տեխնիկական արդիականացում կամ վարչարարական արդյունավետության միջոց: ԱԲ համակարգերի ներգրավումը դատական գործունեության մեջ ուղղակիորեն առնչվում է ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածով պաշտպանվող այնպիսի հիմնարար երաշխիքների, ինչպիսիք են դատարանի անկախությունը, անաչառությունը, դատական ակտերի պատճառաբանվածությունը, դատավարության թափանցիկությունը և արդյունավետ բողոքարկման հնարավորությունը: Հետազոտության արդյունքներից բխում է, որ դատական անկախության և անաչառության դասական չափանիշները, որոնք ձևավորվել են տեսանելի դերակատարների, պաշտոնական հարաբերությունների և բացահայտ ինստիտուցիոնալ կապերի շուրջ, ԱԲ-ի պայմաններում այլևս բավարար չեն: Տեխնոլոգիական միջավայրը ստեղծում է ներգործության նոր, հաճախ անտեսանելի ձևեր, որոնք կարող են ազդել դատավորի դատողության, դատական ակտի բովանդակության, ինչպես նաև դատական համակարգի նկատմամբ հանրային վստահության վրա:

Հոդվածի շրջանակում նշվել է, որ ԱԲ գործիքները կարող են վտանգել դատական անկախությունը միաժամանակ մի քանի մակարդակներում: Նախ, դրանք կարող են ձևավորել նոր կախվածություններ մասնավոր մատակարարներից և ոչ թափանցիկ տեխնոլոգիական ենթակառուցվածքներից, որոնց նկատմամբ դատական իշխանությունը հաճախ չունի բավարար վերահսկողություն: Բացի այդ, ԱԲ-ն կարող է ներգործել դատավորների գնահատման, առաջխաղացման և մասնագիտական վարքագծի վրա՝ ստեղծելով անուղղակի ճնշման միջավայր, որտեղ դատավորը սկսում է կողմնորոշվել ոչ միայն օրենքով և ներքին համոզմունքով, այլ նաև ալգորիթմական գնահատման հնարավոր հետևանքներով: Միաժամանակ անաչառության ոլորտում ԱԲ-ն առաջացնում է օբյեկտիվ նոր ռիսկեր, քանի որ դատավարության արդյունքի վրա

կարող են ազդել այնպիսի տեխնոլոգիական համակարգեր, որոնց տրամաբանությունը, տվյալային հիմքը և կողմնակալության աղբյուրները հասկանալի կամ ստուգելի չեն դատավարության մասնակիցների համար: Այսպիսով, արդարադատության տեսանելիության ավանդական պահանջը տեխնոլոգիական պայմաններում վերածվում է նաև ազդեցությունների տեսանելիության պահանջի:

Հետազոտության առանցքային եզրահանգումներից մեկն այն է, որ արդարադատությունը, նույնիսկ բարձր տեխնոլոգիական միջավայրում, պետք է շարունակի մնալ մարդկային պատասխանատվությամբ իրականացվող գործունեություն: Մարդ դատավորը չի կարող վերածվել ալգորիթմական արդյունքի ձևական հաստատողի: Դատական իշխանության լեգիտիմությունը կապված է ոչ միայն վերջնական որոշման ընդունման պահի, այլ նաև այդ որոշման ձևավորման ողջ ընթացքի հետ, այդ թվում՝ փաստերի ընտրության, իրավական գնահատման, համաչափության պահպանման և պատասխանատվության կրման մակարդակներում: Ուստի ԱԲ-ն կարող է հանդես գալ միայն որպես օժանդակ գործիք, բայց ոչ որպես դատական հայեցողության կամ արդարադատության էության փոխարինող:

Գործնական և տեսական առումով հետազոտությունից բխում է, որ անհրաժեշտ է ձևավորել հստակ նորմատիվ շրջանակ դատական համակարգում ԱԲ-ի կիրառման համար: Այդ շրջանակը պետք է, առնվազն, ամրագրի մարդ դատավորի վերջնական և իրական որոշող դերը, սահմանի ԱԲ-ի թույլատրելի և անթույլատրելի կիրառության սահմանները, ապահովի կիրառվող համակարգերի թափանցիկությունը, բացատրելիությունը, հետազոտելիությունը և մարդկային վերահսկողությունը, ինչպես նաև արգելի այնպիսի օգտագործումը, որը կարող է ուղղակիորեն կամ անուղղակիորեն փոխարինել ապացույցների գնահատմանը, իրավական որակավորմանը կամ դատական ակտի բովանդակային ձևավորմանը: Առանձնահատուկ կարևորություն ունի նաև դատական համակարգում կիրառվող ԱԲ գործիքների նախնական և պարբերական աուդիտի, տվյալների պաշտպանության, ոչ խտրական գործարկման, ինչպես նաև դատավարական բացահայտման պարտականության ամրագրումը: Դատավորների նշանակման, գնահատման և առաջխաղացման ոլորտում ալգորիթմական գործիքների օգտագործումը չպետք է ունենա որոշիչ ուժ և չպետք է վերածվի դատավորի անկախությունը սահմանափակող վարկանիշային ճարտարապետության:

Տվյալ խնդրի շուրջ հետագա հետազոտությունները կարող են շարունակվել մի քանի ուղղություններով: Առաջին հերթին անհրաժեշտ է առան-

ձին ուսումնասիրել, թե ինչպիսի օրենսդրական մոդելներով կարող է ազգային իրավակարգը կարգավորել դատական ոլորտում ԱԲ-ի կիրառումը՝ առանց խաթարելու արդար դատաքննության բուն էությունը: Երկրորդ, հետագա վերլուծության կարիք ունի դատական թվային հարթակների և այսպես կոչված digital court մոդելի համատեղելիությունը անկախության, անաշառության և դատավարական հավասարության սկզբունքների հետ: Երրորդ, ինքնուրույն հետազոտական նշանակություն ունեն ԱԲ-ի կիրառման դեպքում պատասխանատվության վերագրման, ապացույցների ստուգե-

լիության, դատավարական վիճարկելիության և բողոքարկման արդյունավետ միջոցների հարցերը: Վերջապես, անհրաժեշտ է նաև խորացնել ուսումնասիրությունը այն մասին, թե ինչ չափով կարող են միջազգային և եվրոպական չափանիշները վերածվել ազգային դատավարական կոնկրետ երաշխիքների, հատկապես այն պետություններում, որտեղ արդարադատության թվայնացման գործընթացը դեռևս գտնվում է ձևավորման փուլում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Council of Europe. European Convention on Human Rights, Article 6. հասանելի է՝ https://www.echr.coe.int/documents/convention_eng.pdf, ընդունման ամսաթիվը՝ 1950թ. նոյեմբերի 4, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 14:
2. European Court of Human Rights. Factsheet – Independence of the justice system. հասանելի է՝ https://www.echr.coe.int/documents/d/echr/fs_independence_justice_eng, հրատարակման ամսաթիվը՝ 2021թ. հունիսի 28, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
3. OHCHR, Human Rights in the Administration of Justice: Manual on Human Rights for Judges, Prosecutors and Lawyers, Professional Training Series No. 9, New York and Geneva, 2003, pp. 113-158:
4. Office of the United Nations High Commissioner for Human Rights. Special Rapporteur on the independence of judges and lawyers, Ms. Gabriela Knaul, Preliminary observations on the official visit to the Republic of El Salvador. հասանելի է՝ <https://www.ohchr.org/en/statements-and-speeches/2012/11/special-rapporteur-independence-judges-and-lawyers-ms-gabriela>, հրատարակման ամսաթիվը՝ 2012թ. նոյեմբերի 26, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
5. European Court of Human Rights. Protection of the judiciary. հասանելի է՝ <https://ks.echr.coe.int/documents/d/echr-ks/protection-of-the-judiciary?>, հրատարակման ամսաթիվը՝ 2025թ. օգոստոսի 31, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
6. Alfini, James J., Shailey Gupta-Brietzke, and James McMartin IV. “Dealing with Judicial Misconduct in the States: Judicial Independence, Accountability and Reform.” South Texas Law Review 48 (2007): 889–909.
7. European Court of Human Rights. Baka v. Hungary [GC] (press release). հասանելի է՝ <https://hudoc.echr.coe.int/eng#%7B%22itemid%22:%5B%22002-11088%22%5D%7D>, հրատարակման ամսաթիվը՝ 2016թ. հունիսի 23, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
8. Luka v. Romania, no. 34197/02, European Court of Human Rights, judgment of 21 July 2009.
9. Findlay v. the United Kingdom, no. 22107/93, 25 February 1997, § 73
10. Sacilor-Lormines v. France, no. 65411/01, 9 November 2006, § 62.
11. European Commission for Democracy through Law (Venice Commission). Report on the Independence of the Judicial System Part I: The Independence of Judges. հասանելի է՝ <https://rm.coe.int/1680700a63>, ընդունման ամսաթիվը՝ 2010թ. մարտի 12-13, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
12. European Court of Human Rights. Article 6 § 1 (civil limb) Protection of the judiciary. հասանելի է՝ <https://ks.echr.coe.int/documents/d/echr-ks/protection-of-the-judiciary?>, հրատարակման ամսաթիվը՝ 2025թ. օգոստոսի 31, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
13. Eltis K. Judicial Independence and the Corporate ‘Custodians’ of Digital Tools: A Call to Scrutinize Reliance on Private Platforms as ‘Essential Infrastructure’. հասանելի է՝ https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=4599274, հրատարակման տարեթիվը՝ 2023թ., վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
14. United Nations General Assembly, Artificial Intelligence in Judicial Systems: Promises and Pitfalls, Report of the Special Rapporteur on the Independence of Judges and Lawyers, Margaret Satterthwaite, U.N. Doc. A/80/169 (2025), 3.
15. Rachel. E. Stern and others, “Automating fairness? Artificial intelligence in the Chinese courts”, Columbia Journal of Transnational Law, vol. 59 (2021).
16. United Nations Human Rights Council, Artificial Intelligence Procurement and Deployment: Ensuring Alignment with

- the Guiding Principles on Business and Human Rights, Report of the Working Group on the Issue of Human Rights and Transnational Corporations and Other Business Enterprises, U.N. Doc. A/HRC/59/53 (2025), para. 28.
17. Stanley Greenstein, “Preserving the rule of law in the era of artificial intelligence (AI)”, *Artificial Intelligence and Law*, vol. 30 (17 July 2021).
 18. United Nations General Assembly, Human Rights in the Administration of Justice, Report of the Secretary-General, U.N. Doc. A/79/296 (2024), 3.
 19. OpenAI. How your data is used to improve model performance. հասանելի է՝ <https://openai.com/policies/how-your-data-is-used-to-improve-model-performance/>, հրատարակման ամսաթիվը՝ 2026թ. մարտի 13, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15.
 20. Guðmundur Andri Ástráðsson v. Iceland [GC], no. 26374/18, 1 December 2020, § 207
 21. Council of Europe, Committee of Ministers. Recommendation CM/Rec(2010)12 on judges: independence, efficiency and responsibilities. հասանելի է՝ <https://rm.coe.int/cmrec-2010-12-on-independence-efficiency-responsibilites-of-judges/16809f007d>, ընդունման ամսաթիվը՝ 2010թ. նոյեմբերի 17, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15.
 22. Tsanova-Gecheva v. Bulgaria, no. 43800/12, 15 September 2015, §§ 100-104.
 23. Consultative Council of European Judges (CCJE). Opinion No. 26 (2023): Moving forward: the use of assistive technology in the judiciary. հասանելի է՝ <https://rm.coe.int/ccje-opinion-no-26-2023-final/1680adade7>, հրատարակման ամսաթիվը՝ 2023թ. դեկտեմբերի 1, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
 24. Banks I. Judges-in-the-loop? Judicial involvement in human oversight of high-risk decision support systems under the EU AI Act. *International Journal of Law and Information Technology*, vol. 34, 2026. հասանելի է՝ <https://academic.oup.com/ijlit/article/doi/10.1093/ijlit/eaag001/8475419?9>, հրատարակման ամսաթիվը՝ 2026թ. փետրվարի 12, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
 25. Piersack v. Belgium, no. 8692/79, 1 October 1982, Series A no. 53.
 26. R v Sussex Justices, ex parte McCarthy [1924] 1 KB 256, 259.
 27. European Commission for the Efficiency of Justice (CEPEJ). European Ethical Charter on the use of Artificial Intelligence in judicial systems and their environment. հասանելի է՝ <https://rm.coe.int/ethical-charter-en-for-publication-4-december-2018/16808f699c?>, հրատարակման ամսաթիվը՝ 2018թ. դեկտեմբերի 4, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
 28. Council of Europe. Framework Convention on Artificial Intelligence, Human Rights, Democracy and the Rule of Law. հասանելի է՝ <https://rm.coe.int/1680afae3c>, ընդունման ամսաթիվը՝ 2024թ. մայիսի 17, վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
 29. European Commission for the Efficiency of Justice (CEPEJ). Guidelines on the use of generative artificial intelligence in judicial systems. հասանելի է՝ <https://rm.coe.int/cepej-2025-18final-en-draft-guidelines-on-the-use-of-generative-ai-for/48802a4ad1>, հրատարակման ամսաթիվը՝ 2024թ., վերջին այցելություն՝ 2026թ. ապրիլի 15:
 30. Stephen J. Pope, *The Ethics of Aquinas*, (Georgetown University press, 2002), p.272
 31. McBrien, R. P. (1994). *Catholicism* (New Edition). New York: HarperCollins Publishers, p. 943
 32. Aristotle. *Nicomachean Ethics*. Translated by Terence Irwin. Indianapolis: Hackett Publishing, 1999, Book V.
 33. Aristotle. *Nicomachean Ethics*. Translated by Terence Irwin. Indianapolis: Hackett Publishing, 1999, II.1106a–1109b.
 34. Thomas Aquinas, *Summa Theologiae*, I–II (Prima Secundae), Question 95, Article 2.
 35. John Locke, *Two Treatises of Government*, ed. Peter Laslett (Cambridge: Cambridge University Press, 1988), Second Treatise, ch. 2–3; ch. 9.
 36. *The Earl of Oxford’s Case* (1615) 21 Eng. Rep. 485 (Ch.).
 37. *R v. Dudley and Stephens* (1884) 14 QBD 273 (QB).
 38. Regulation (EU) 2024/1689 of the European Parliament and of the Council of 13 June 2024 laying down harmonised rules on artificial intelligence (Artificial Intelligence Act), OJ L 2024/1689.

Անահիտ Աբրահամյան

Соискатель ученой степени кандидата юридических наук
факультета права Евразийского международного университета

РЕЗЮМЕ

Судебная независимость и беспристрастность в эпоху искусственного интеллекта

Настоящая статья посвящена исследованию влияния применения искусственного интеллекта в системе правосудия с точки зрения принципов судебной независимости и беспристрастности. В основу исследования положено положение о том, что право на рассмотрение дела независимым и беспристрастным судом, закрепленное статьей 6 Конвенции о защите прав человека и основных свобод, в технологической среде сталкивается с новыми, зачастую невидимыми угрозами. В статье анализируются стандарты, сформированные Европейским судом по правам человека в связи с судебной независимостью, понятием «суд, созданный на основании закона», а также субъективным и объективным тестами беспристрастности. Особое внимание уделяется тому, что системы искусственного интеллекта могут влиять не только на подготовку судебных актов, обработку документов и оценку рисков, но и на оценивание судей, их продвижение по службе и профессиональное поведение. В статье обосновывается, что искусственный интеллект не может рассматриваться как нейтральный технический инструмент, поскольку он создает риски технологической зависимости, зависимости от частных поставщиков, алгоритмической предвзятости, недостатка прозрачности и невидимого воздействия на судебное усмотрение. Делается вывод, что использование систем искусственного интеллекта в сфере правосудия требует четкого нормативного регулирования, обеспечения принятия решений судьями людьми, а также механизмов прозрачности и эффективного контроля.

Ключевые слова: искусственный интеллект, правосудие, судебная независимость, прозрачность, алгоритмическая предвзятость, цифровизация правосудия, беспристрастность, права человека, технологическая зависимость.

Anahit Abrahamyan

PHD Candidate of the Law Faculty of Eurasia International University

SUMMARY

Judicial independence and impartiality in the age of artificial intelligence

This article examines the impact of the use of artificial intelligence in the justice system from the perspective of the principles of judicial independence and impartiality. The study is based on the premise that the right to a hearing by an independent and impartial tribunal, guaranteed by Article 6 of the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, faces new and often invisible threats in a technological environment. The article analyzes the standards developed by the European Court of Human Rights in relation to judicial independence, the notion of a “tribunal established by law,” as well as the subjective and objective tests of impartiality. Particular attention is paid to the fact that artificial intelligence systems may affect not only the drafting of judicial decisions, document processing, and risk assessment, but also the evaluation of judges, their promotion, and their professional conduct. The article argues that artificial intelligence cannot be regarded as a neutral technical tool, since it creates risks of technological dependence, dependence on private vendors, algorithmic bias, lack of transparency, and invisible influence on judicial reasoning. It concludes that the use of artificial intelligence systems in the field of justice requires clear normative regulation, guarantees that decisions are made by human judges, as well as mechanisms for transparency and effective oversight.

Key words: artificial intelligence, justice, judicial independence, transparency, algorithmic bias, digitalization of justice, impartiality, human rights, technological dependence.

ԱՆԱՀԻՏ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Եվրասիա միջազգային համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի հայցորդ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՅՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է արհեստական բանականության ազդեցությանը ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման վրա: Հոդվածում ուսումնասիրվում են անձամբ պաշտպանվելու և իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքների բովանդակությունը՝ ՄԻԵԿ-ի նախադեպային իրավունքի և ժամանակակից գիտական գրականության համատեքստում: Հատուկ ուշադրություն է դարձվում այն հարցին, թե արդյոք արհեստական բանականության գործիքները կարող են աջակցել իրավական տեղեկատվության հասանելիությանը և իրավաբանական օգնության համակարգերին՝ միաժամանակ չփոխարինելով որակավորված պաշտպանին: Վերլուծվում են արհեստական բանականության կիրառման ռիսկերը՝ իրավական օգնության պատրանքի ստեղծումը, սխալ կամ հորինված իրավական աղբյուրների օգտագործումը, գաղտնիության կորուստը, մասնագիտական կոմպետենտության և պատասխանատվության խնդիրները: Հոդվածում հիմնավորվում է, որ արհեստական բանականությունը կարող է լինել միայն օժանդակող գործիք, որի կիրառումը պետք է ուղեկցվի հստակ երաշխիքներով, մասնագիտական վերահսկողությամբ և վստահորդի իրավունքների արդյունավետ պաշտպանությամբ:

Հիմնարարներ- Արհեստական բանականություն, արդարադատություն, արդար դատաքննություն, դատական պաշտպանության իրավունք, փաստաբանական գաղտնիք:

Ներածություն

Արհեստական բանականության արագ զարգացումը նոր հարցեր է առաջադրում Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման համար: Եթե դասական ընկալմամբ այս իրավունքը կենտրոնացած էր անձի՝ անձամբ պաշտպանվելու, իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու կամ արդարադատության շահերից ելնելով անվճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորության վրա, ապա արհեստական բանականության պայմաններում առաջանում է նոր խնդիր. արդյո՞ք իրավական տեղեկատվության տեխնոլոգիական հասանելիությունը կարող է համարվել իրական իրավական օգնություն, և ի՞նչ սահմաններում կարող է Արհեստական բանականությունն օգտագործվել առանց դատավարական պաշտպանության երաշխիքները թուլացնելու:

Հոդվածի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ արհեստական բանականության գործիքներն արդեն օգտագործվում են իրավական տեղեկատվություն ստանալու, փաստաթղթեր կազմելու, դատավարական նյութեր վերլուծելու և փաստաբանների աշխատանքին օժանդակելու նպատակով: Դրանք կարող են բարձրացնել իրավական գրագիտությունը, աջակցել ինքնաներկայացվող անձանց և թեթևացնել ծանրաբեռնված իրա-

վաբանական օգնության համակարգերը: Միննույն ժամանակ, արհեստական բանականության գործիքները կարող են ստեղծել «պաշտպանության պատրանք»՝ այնպիսի իրավիճակ, երբ անձը կարծես թե ստանում է իրավական աջակցություն, սակայն փաստացի զրկված է մասնագիտական, գաղտնի և պատասխանատվությամբ ապահովված իրավական օգնությունից: Նման ռիսկերը հատկապես սուր են քրեական վարույթում, որտեղ սխալ իրավական խորհուրդը, հորինված նախադեպերը, գաղտնի տվյալների փոխանցումը կամ պաշտպանի դերի տեխնոլոգիական փոխարինումը կարող են ազդել վարույթի արդարության վրա:

Մեթոդաբանություն

Հետազոտությունը իրականացվել է դոկտրինալ և համեմատական-իրավական մեթոդների կիրառմամբ: Դոկտրինալ մեթոդի միջոցով վերլուծվել են ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի բովանդակությունը, Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարանի (այսուհետ նաև՝ ՄԻԵԿ) համապատասխան նախադեպային իրավունքը և իրավաբանական օգնության արդյունավետության վերաբերյալ ձևավորված չափանիշները: Համեմատական-իրավական մեթոդը կիրառվել է արհեստական բանականության գործիքների օգտագործման վերաբերյալ օտարերկրյա դատական պրակտիկայի և գիտական գրականության ուսումնասիրության համար: Հետազոտության աղբյուրներն են ՄԻԵԿ-ը, ՄԻԵԿ-ի վճիռները, գիտական հոդված-

ները, ինչպես նաև այն դատական գործերը, որտեղ արհեստական բանականության օգտագործումը հանգեցրել է սխալ կամ կեղծ իրավական տեղեկատվության ներկայացման: Հավաքված նյութը վերլուծվել է այն հարցի շուրջ, թե արհեստական բանականության կիրառումը որ դեպքերում կարող է ուժեղացնել իրավական օգնությունը, և որ դեպքերում կարող է վտանգել դրա արդյունավետ, գաղտնի և մասնագիտական բնույթը:

Հիմնական Հետազոտություն

ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետի համաձայն՝ անձը իրավունք ունի «պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա է պահանջում արդարադատության շահը»: Pakelli v Germany գործով ՄԻԵԿ-ը ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետը մեկնաբանեց որպես երեք փոխկապակցված երաշխիքների ամբողջություն՝ անձամբ պաշտպանվելու իրավունք, իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունք և որոշ պայմանների առկայության դեպքում անվճար իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Սույն դրույթից կարելի է նկատել, որ այս կարգավորման հիմքում դրված է դատական պաշտպանության եղանակի ազատ ընտրության տրամաբանությունը: Այս դրույթը, սակայն, չի սահմանափակում ներկայացուցչի ներգրավումը պահանջելու կամ անձի նախընտրած ներկայացուցչի ներգրավումը չթույլատրելու դատարանի իրավասությունը, երբ դա է պահանջում արդարադատության շահը: Անձամբ պաշտպանվելու իրավունքը, որքան էլ կարևոր լինի մեղադրյալի դատավարական ինքնավարության համար, ենթադրում է նաև որոշակի նվազագույն երաշխիքներ: Այն գործում է դատաքննության արդարության ընդհանուր տրամաբանության ներքո և ենթադրում է, որ անձի ընտրությունը պետք է լինի իրական, գիտակցված և դատավարական առումով անվտանգ: Անձը պետք է գիտակցի իր ընտրության հետևանքները, հասկանա իրավաբանական օգնությունից հրաժարվելու ռիսկերը և ունենա իրական հնարավորություն արդյունավետ մասնակցելու դատավարությանը: Սակայն նույն տրամաբանությունից բխում է նաև հակառակ եզրակացությունը. եթե գործի հանգամանքները, անձի վիճակը կամ դատավարության բարդությունը պահանջում են մասնագիտական պաշտպանություն, անձամբ պաշտպանվելու իրավունքը չի կարող մեխանիկորեն գերակայել արդյունավետ պաշտպանության անհրաժեշտության և գործընթացի արդարությունն ապահովելու պահանջի նկատմամբ: Անձամբ պաշտպանվելու իրավունքի նկատմամբ ՄԻԵԿ-ի

այս մոտեցումը գիտական գրականության մեջ հակասական քննարկումների առարկա է դարձել: Քրիստոֆեր Գրեյը, օրինակ, այն դիտարկում է որպես անձամբ պաշտպանվելու իրավունքի սահմանափակման վիճելի օրինակ՝ ընդգծելով, որ նման մոտեցումը կարող է չափազանց մեծ հայեցողություն տալ պետությանը անձի դատական ինքնավարության հարցում: Մյուս կողմից, Բասսեթի⁷ և Չավոլիի⁸ վերլուծությունները ցույց են տալիս, որ ինքնապաշտպանությունը, թեև կարևոր է մեղադրյալի ինքնավարության համար, կարող է սահմանափակվել այն դեպքում, երբ այն վտանգում է դատավարության պատշաճ ընթացքը կամ հենց մեղադրյալի շահերը: Այս քննարկման համար կարևոր է հասկանալ, որ անձամբ պաշտպանվելու հնարավորությունը ունի միանշանակ դրական կողմեր: Մասնավորապես, պետք է համաձայնել Ջորգայի այն դիրքորոշմանը, որ հաճախ դատարանում անձամբ ներկայանալու իրավունքը օգտագործվում է այն անձանց կողմից, ովքեր չունեն ֆինանսական բավարար ռեսուրսներ ներկայացուցչի ծառայություններից օգտվելու համար: Հենց այս համատեքստում արհեստական բանականությունը կարող է ունենալ կարևոր դրական նշանակություն: Այն կարող է որոշ չափով մեղմել այն գործնական խոչընդոտները, որոնց բախվում են այն անձինք, ովքեր չունեն իրավաբանական խորհրդատվության կամ ներկայացուցչության հասանելիություն: Արհեստական բանականության գործիքները կարող են պարզ լեզվով բացատրել դատավարական իրավունքները, օգնել հասկանալ դատական փաստաթղթերի բովանդակությունը, կազմել փաստերի ժամանակագրություն, նախապատրաստել հարցեր, ուղղորդել անձին դեպի համապատասխան իրավական ընթացակարգեր և ընդհանուր պատկերացում տալ կիրառելի իրավական նորմերի մասին: Գրականության մեջ արհեստական բանականության այս ազդեցությունը կարելի է կապել արդարադատության հասանելիության ավելի լայն քննարկումների հետ: Քոլլին Չիենի և Միրիամ Կիմի աշխատանքը¹⁰, ինչպես նաև հանրային պաշտպանների փորձառության վերաբերյալ Չոնգի և համահեղինակների¹¹ ուսումնասիրությունը ցույց են տալիս, որ գեներատիվ արհեստական բանականության գործիքները կարող են ընդլայնել իրավական տեղեկատվության հասանելիությունը, նվազեցնել պարզ իրավական գործողությունների արժեքը և աջակցել ծանրաբեռնված իրավաբանական ծառայություններին: Այս մոտեցումը հնարավոր չէ հերքել: Իրավական համակարգի լեզուն շատ անձանց համար անհասկանալի է, իսկ փաստաբանական օգնությունը հաճախ թանկ և անհասանելի: Արհեստական բանականությունը կարող է օգնել անձին հասկանալ իր իրավունքները, կազմել փաստերի ժամանակագրություն, պատրաստել

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հարցեր փաստաբանի հետ հանդիպման համար, գտնել համապատասխան պետական մարմինը կամ նախնական պատկերացում կազմել դատավարական ընթացակարգերի մասին: Այստեղ արհեստական բանականության դրական կողմը ակնհայտ է: Այն կարող է բարձրացնել իրավական գրագիտությունը, հատկապես ինքնապաշտպանվող անձանց համար: Այս իմաստով արհեստական բանականությունը կարող է լինել իրավական կողմնորոշման գործիք, որը նվազեցնում է դատավարության հանդեպ վախը և բարձրացնում անձի մասնակցության որակը:

Միևնույն ժամանակ, այս դրական ներուժը պետք է գնահատվի զգուշությամբ: Արհեստական բանականության տրամադրած աջակցությունը կարող է օգտակար լինել որպես նախնական կողմնորոշման, իրավական տեղեկատվության պարզեցման և փաստաթղթերի կազմակերպման միջոց, սակայն այն չի կարող նույնացվել մասնագիտական իրավաբանական ներկայացուցչության հետ: Իրավական խորհրդատվությունը ենթադրում է ոչ միայն նորմերի կամ ընթացակարգերի բացատրություն, այլև կոնկրետ գործի փաստերի գնահատում, ապացույցների վերլուծություն, դատավարական ռիսկերի կանխատեսում և ռազմավարական որոշում: Մեղադրյալին օրենքի տեքստը բացատրելը դեռ չի նշանակում ապահովել նրա պաշտպանությունը: Անգամ եթե արհեստական բանականության համակարգերը կարողանան անձին ապահովել դատավարական նշանակության ողջ տեղեկատվությամբ և փաստաթղթերով, անձի կողմից դրանց պատշաճ կիրառումը երաշխավորված չէ: Հատկապես նախաքննության փուլում իրավական խորհրդատվության բացակայությունը կարող է հանգեցնել անդառնալի սխալների¹²: Չունենալով բավարար գիտելիքներ, անձը կարող է չիմանալ անգամ ինչ հարց ուղղել արհեստական բանականության համակարգին, ընթացակարգային խնդիրները և իրավունքների ռոնահարումները վերհանելու նպատակով: Ավելին արհեստական բանականության համակարգերը կարող են ներկայացնել գոյություն չունեցող նախադեպեր, հնացած իրավական նորմեր, այլ պետության օրենսդրության վրա հիմնված խորհուրդներ կամ սխալ դատավարական քայլեր¹³: Արդյունքում անձը կարող է բաց թողնել ժամկետ, սխալ ձևակերպել միջնորդություն, չվիճարկել կարևոր ապացույց կամ ընդունել իր համար վնասակար ռազմավարություն: Այս հարցում հատուկ նշանակություն ունի իրավաբանական օգնությունից հրաժարվելու ՄԻԵԴ-ի չափանիշը: Հրաժարումը պետք է լինի կամավոր, հստակ, տեղեկացված և ուղեկցվի նվազագույն երաշխիքներով: Այլ կերպ ասած՝ անձը ոչ միայն պետք է ասի, որ չի ցանկանում պաշտպան ներգրավել, այլ պետք է հասկանա, թե ինչից է հրաժարվում և ինչ

հետևանքներ կարող է ունենալ այդ որոշումը: Արհեստական բանականության համակարգերի տարածման պայմաններում, այս երաշխիքները պետք է ընդլայնվեն: Դատարանը պետք է ունենա պարտավորություն տեղեկացնելու անձանց նման համակարգերի վտանգների և թերությունների մասին, ներկայացնելով որ դրանք չեն նույնանում որակավորված փաստաբանի կողմից պաշտպանությանը: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ թերի ներկայացուցչության կամ ներկայացուցչի կողմից լուրջ սխալների դեպքում անձը ունի նորմատիվորեն ապահովված պաշտպանության և վնասների հատուցման միջոցներ: Արհեստական բանականության պարագայում, այս պաշտպանությունը հասանելի չէ¹⁴: Pishchalnikov-ի և Ibrahim-ի տրամաբանությունից բխում է, որ դատարանը պետք է պարզի՝ արդյոք անձը հասկանում է, որ արհեստական բանականությունը փաստաբան չէ, չի կրում մասնագիտական պատասխանատվություն, կարող է սխալվել, չի ապահովում փաստաբանական գաղտնիության նույն մակարդակը և չի կարող ներկայացնել նրան դատարանում:

Արհեստական բանականության համակարգերի օգնությամբ սեփական պաշտպանությունը նախապատրաստելը վտանգավոր է նաև հաղորդակցության գաղտնիության ապահովման տեսանկյունից: ՄԻԵԴ-ի դիրքորոշման համաձայն՝ մեղադրյալի՝ իր պաշտպանի հետ գաղտնիության պայմաններում շփվելու իրավունքը ժողովրդավարական հասարակությունում արդար դատավարության հիմնական պահանջներից մեկն է և բխում է ՄԻԵԴ-ի 6-րդ հոդվածի 3-րդ կետի (գ) ենթակետից: Եթե փաստաբանը չկարողանա խորհրդակցել իր հաճախորդի հետ և նրանից գաղտնի հրահանգներ ստանալ առանց կողմնակի հսկողության, նրա օգնությունը կկորցնի իր օգտակարության մեծ մասը, մինչդեռ ՄԻԵԴ-ը միտված է երաշխավորել իրավունքների գործնական և արդյունավետ պաշտպանությունը¹⁵: Արհեստական բանականության համակարգի օգնությամբ պաշտպանության նախապատրաստման համար անձը պետք է համակարգ ներբեռնի դատավարության համար նշանակություն ունեցող բոլոր տվյալները և փաստաթղթերը ներառյալ՝ գործի նյութեր, մեղադրանքի վերաբերյալ տվյալներ, վկաների անուններ, բժշկական կամ ֆինանսական տեղեկություններ, անձնական նամակագրություն կամ խոստովանական բնույթի տվյալներ: Եթե այդ տեղեկությունը մուտքագրվում է արտաքին համակարգ, կարող են առաջանալ տվյալների պահպանման, վերօգտագործման, երրորդ անձանց հասանելիության ռիսկեր: Հատկանշական է United States v Heppner 2026 գործը, որտեղ մեղադրյալը օգտագործել էր Անտրոպիկի Կոդ համակարգը քրեական հետաքննության ընթացքում և պաշտպանությունը վերաբերող նյութեր պատրաս-

տելու նպատակով: Դատարանը որոշեց, որ արհեստական բանականության հաղորդակցությունները չեն պաշտպանվում փաստաբան-հաճախորդ գաղտնիության դեղատրիմով, քանի որ Կլոդը փաստաբան չէ, հաղորդակցությունները գաղտնի չեն, և Կլոդի/Անտրոպիկի հետ տեղեկատվության փոխանակումը դիտվում էր որպես այն երրորդ կողմին կամավոր բացահայտելը¹⁶: Reuters-ի իրավական վերլուծությունը մեջբերում է հիմնական կետը «նույնիսկ եթե Կլոդին մուտքագրված որոշ տեղեկություններ սկզբնապես գաղտնի էին, մեղադրյալը հրաժարվել է գաղտնիությունից՝ այն կիսելով Կլոդի և Անտրոպիկի հետ «ճիշտ այնպես, ինչպես եթե նա այն կիսեր որևէ այլ երրորդ կողմի հետ»¹⁷: Թեև այս գործը քննվել է ԱՄՆ-ում և չի արտահայտում ՄԻԵԳ-ի դիրքորոշումը, այնուամենայնիվ այն ցուցադրում է ոլորտում առկա այն մոտեցումը, որ արհեստական բանականության համակարգերը չեն դիտարկվում փաստաբան-հաճախորդ հարաբերությունների տրամաբանությամբ, անգամ եթե դրանք օգտագործվում են դատական պաշտպանության նպատակով:

Ստեֆան Տրեշելը, վերլուծելով ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) կետը, ցույց է տալիս, որ անձամբ պաշտպանվելու իրավունքը պետք է դիտարկել պաշտպանի օգնության իրավունքի ընդհանուր համակարգում, այլ ոչ թե որպես դրա այլընտրանք¹⁸: Օմկար Սիդհուն ևս նշում է, որ անձամբ պաշտպանվելու ընտրությունը ենթադրում է որոշակի դատավարական պատասխանատվություն¹⁹: Իրավական համակարգը բարդ է, քրեական դատավարությունը ունի խիստ կանոններ, ժամկետներ և ապացուցողական մեխանիզմներ, և ոչ մասնագետ անձը կարող է չհասկանալ իր որոշումների հետևանքները: Անձամբ պաշտպանվելու իրավունքը պետք է հարգվի, բայց այն չպետք է վերածվի անձին անպաշտպան թողնելու մեխանիզմի: Դատարանները և պետական մարմինները չպետք է օգտագործեն արհեստական բանականության համակարգերի առկայության փաստը, անձանց հասանելի իրավաբանական օգնությունը մերժելու համար: Այս գործիքները կարող են օգտակար լինել այն անձանց համար, ովքեր փաստացի գրկված են իրավական օգնությունից, սակայն դրա կիրառումը չպետք է ստեղծի այն տպավորությունը, թե անձը ստացել է այնպիսի պաշտպանություն, որը համարժեք է որակավորված պաշտպանի օգնությանը:

ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով երաշխավորված իր ընտրած պաշտպանի միջոցով պաշտպանվելու իրավունքի տեսակետից նույնպես արհեստական բանականության համակարգերը կարող են լինել խնդրահարույց: Պաշտպանի իրավունքը ձևական չէ և ենթադրում է մասնագիտական, անկախ, գաղտնի իրավական օգնություն²⁰:

Այստեղ «պաշտպան» հասկացությունը նշանակում է ոչ թե պարզապես այն անձը կամ համակարգը, որը կարող է իրավական բնույթի պատասխան տալ, այլ այն մասնագիտական կարգավիճակ ունեցող անձը, որը լիազորված է իրականացնել ներկայացուցչություն, ենթարկվում է որակավորման, էթիկայի, գաղտնիության, շահերի բախման բացառման և կարգապահական պատասխանատվության կանոններին²¹: «Artico v Italy» գործով ՄԻԵԳ-ը շեշտել է, որ Կոնվենցիան երաշխավորում է ոչ թե պաշտպանի գույտ նշանակումը, այլ նրա իրական «օգնությունը»²²: Պաշտպանի ձևական առկայությունը դեռևս բավարար չէ, եթե նա փաստացի չի իրականացնում վստահորդի շահերի պաշտպանություն: Այս մոտեցումը առանձնահատուկ նշանակություն ունի արհեստական բանականության համատեքստում, քանի որ այն թույլ է տալիս տարբերակել իրավական օգնության արտաքին տեսքը և դրա իրական բովանդակությունը: Իրավաբանական օգնության որակի թերությունները կարող են հանգեցնել ՄԻԵԿ-ի 6-րդ հոդվածի 3-րդ մասի (գ) ենթակետի ոտնահարմանը²³: Պետությունը կամ դատարանը չեն կարող բավարարվել նրանով, որ անձը պաշտպան ունի: Պետք է գնահատվի՝ արդյոք այդ պաշտպանի գործողությունները կամ անգործությունը չեն հանգեցրել իրավաբանական օգնության անարդյունավետության: Արհեստական բանականության գործիքների կիրառումը փաստաբանների կողմից առաջ է բերում պատշաճ ներկայացուցչություն ապահովելու պարտավորության վտանգ: Այս վտանգը գործնականում առավել տեսանելի դարձավ Mata v Avianca Inc և Park v Kim գործերով: Mata v Avianca Inc գործով փաստաբանները դատարան էին ներկայացրել դատավարական փաստաթուղթ, որը պարունակում էր ChatGPT-ի միջոցով ստեղծված գոյություն չունեցող դատական ակտեր և դրանցից ենթադրյալ մեջբերումներ: Դատարանը արձանագրեց, որ փաստաբանները հիմնվել էին գոյություն չունեցող նախադեպերի վրա և նրանց նկատմամբ կիրառեց սանկցիաներ՝ ընդգծելով, որ արհեստական բանականության գործիքի օգտագործումը չի վերացնում փաստաբանի պարտականությունը ստուգելու դատարան ներկայացվող իրավական աղբյուրների իսկությունը²⁴: Նմանատիպ խնդիր առաջացավ նաև Park v Kim գործով, որտեղ դատարանը նշեց, որ փաստաբանը հղում էր կատարել ChatGPT-ի կողմից ստեղծված գոյություն չունեցող նահանգային դատական ակտի և չէր ստուգել դրա իրական լինելը: Դատարանը նման վարքագիծը գնահատեց որպես փաստաբանական ցածր մակարդակի գործողություն և հիմնական պարտականությունների խախտում և հարցը փոխանցեց Դատարանի կարգապահական հանձնաժողովին²⁵:

Ընտրված պաշտպանի իրավունքը կապված է

www.aradaradatiyujournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

վատահույսան, տեղեկացված ընտրության և պաշտպանական հարաբերության իրական բնույթի հետ²⁶ : Անձը պետք է ունենա հնարավորություն վատահետու այն մասնագետին, որը ներկայացնում է իր շահերը: Արհեստական բանականության օգտագործման պայմաններում առաջանում է հետևյալ հիմնահարցը. եթե անձը ընտրել է պաշտպան, բայց այդ պաշտպանը իր աշխատանքի զգալի մասը հանձնում է արհեստական բանականության համակարգին, արդյոք վատահորողը շարունակում է ստանալ իր ընտրած պաշտպանի անձնական, մասնագիտական և պատասխանատու օգնությունը: Այս հարցը հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ վատահորողը տեղյակ չէ, որ իր գործի նյութերը կամ պաշտպանական փաստաթղթերը մշակվել են արհեստական բանականության գործիքի միջոցով:

Ընդհանուր առմամբ, դատական պաշտպանության համատեքստում արհեստական բանականության օգտագործման հարցի շուրջ ձևավորված են մի շարք գիտական մտտեցումներ և կարծիքներ: Բանավեճի մի կողմը արհեստական բանականությունը դիտարկում է որպես օգտակար գործիք՝ իրավաբանական աշխատանքը լրացնելու, արդյունավետությունը բարելավելու և իրավաբանական ծառայություններին հասանելիությունը ընդլայնելու համար: Մյուս կողմը շեշտում է, որ արհեստական բանականությունը կարող է խաթարել իրավաբանական ներկայացուցչության հիմնական էությունը՝ կոմպետենտությունը, գաղտնիությունը, մասնագիտական դատողությունը, հաշվետվողականությունը և հաճախորդի նկատմամբ հավատարմությունը:

Ավելի լավատեսական մտտեցումը զարգացնում են Արմուրն, Պարնհամը և Սակոն՝ «augmented lawyering» հասկացության միջոցով: Նրանց հիմնական պնդումն այն է, որ արհեստական բանականությունը ոչ թե փոխարինում է իրավաբանին, այլ վերափոխում է իրավաբանական աշխատանքի կազմակերպման եղանակը՝ ազդելով իրական հետազոտության, փաստաթղթերի ուսումնասիրության, նախագծերի կազմման և տեղեկատվության կառավարման վրա²⁷ : Այս մտտեցումը համոզիչ է, քանի որ իրավական ներկայացուցչությունն արդեն իսկ ներառում է տեղեկատվության լայնածավալ մշակում, որը կարող է տեխնոլոգիայի միջոցով դառնալ ավելի արագ, համակարգված և արդյունավետ:

Սասկինդը զարգացնում է ավելի լայն կառուցվածքային մտտեցում: Նա պնդում է, որ ավանդական իրավաբանական ծառայությունները հաճախ չափազանց թանկ են, դանդաղ և դժվար հասանելի, իսկ տեխնոլոգիան կարող է իրավաբանական օգնությունը դարձնել ավելի հասանելի²⁸ : Նրա աշխատանքը հատկապես կարևոր է ծանրաբեռնված

իրավաբանական օգնության համակարգերի տեսանկյունից, որտեղ արհեստական բանականության համակարգերը կարող են նվազեցնել կրկնվող և տեխնիկական բնույթի աշխատանքը՝ թույլ տալով իրավաբաններին կենտրոնանալ ավելի բարդ խնդիրների վրա: Այնուամենայնիվ, նրա փաստարկն ավելի համոզիչ է իրավաբանական ծառայությունների մատուցման ընդհանուր համակարգի, քան կոնկրետ քրեական պաշտպանության համատեքստում: ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի շրջանակում ծառայությունների հասանելիությունը ինքնին բավարար չէ: Որոշիչ հարցն այն է, թե արդյոք տրամադրվող օգնությունը մնում է արդյունավետ և զաղտնի:

Սուրդենի աշխատանքն ավելի զուսպ է մեկնաբանում արհեստական բանականության օգտակարությունը: Նա բացատրում է, որ մեքենայական ուսուցման համակարգերը արդյունավետ են օրինաչափությունների ճանաչման, դասակարգման և կանխատեսման մեջ, բայց չպետք է շփոթել մարդկային իրավական դատողության հետ: Արհեստական բանականությունը կարող է օգնել փաստաբաններին համապատասխան նյութերը նույնականացնելու կամ տեղեկատվությունը կազմակերպելու հարցում, բայց այն մասնագիտական իմաստով իրավական դատողություն չի իրականացնում²⁹ : Հետևաբար, Սուրդենի վերլուծությունը հաստատում է այն տեսակետը, որ արհեստական բանականությունը կարող է բարելավել իրավաբանական աշխատանքի որոշ մասեր՝ առանց փաստաբանի փոխարինող դառնալու: Ռեմուսը և Լևին նույնպես դեմ են այն չափազանցված պնդումներին, որ փաստաբաններին կփոխարինի ավտոմատացումը: Նրանք պնդում են, որ շատ իրավական խնդիրներ հեշտությամբ չեն կարող վերածվել ավտոմատացման, քանի որ իրավաբանական աշխատանքը ներառում է միջանձնային դատողություն, փաստական գնահատում, բանակցություններ, ռազմավարություն և էթիկական պատասխանատվություն³⁰ : Նրանց փաստարկը հատկապես օգտակար է 6(3)(գ) հոդվածի համար, քանի որ քրեական պաշտպանությունը միայն իրավական հետազոտության տեխնիկական գործողություն չէ: Այն պահանջում է, որ փաստաբանը հասկանա հաճախորդի դիրքորոշումը, գնահատի ռիսկերը, որոշի ռազմավարություն և արձագանքի ընթացակարգային զարգացումներին: Արհեստական բանականությունը կարող է օգնել առանձին առաջադրանքների հետ, բայց այն չի կարող վերաբարձրել փաստաբանի ամբողջ մասնագիտական գործառույթը: Բրեշիան զարգացնում է այս կետը՝ հարցնելով, թե ինչու են կայանում փաստաբանների կարևորությունը, երբ տեխնոլոգիան կարող է կատարել իրավական առաջադրանքներ: Նա, ինչպես նախորդիվ մեջբերված հեղինակները, պնդում է, որ փաստա-

բանի արժեքը գնալով ավելի շատ կայանում է դատողության, ռազմավարության, էթիկական պատասխանատվության, հաճախորդի հետ հաղորդակցման և բարդ մարդկային խնդիրները կառավարելու ունակության մեջ³¹: Այս դիրքորոշումը հատկապես համոզիչ է մեր վերոգրյալ այն դիրքորոշման համար որ արհեստական բանականությունը չի փոխարինում փաստաբաններին և այդ տարբերությունները պետք է հստակ ներկայացվեն այն անձանց, ովքեր այս հիմքով ցանկանում են հրաժարվել ներկայացուցչի ներգրավվածից:

Չիենը և Կիմը ներկայացնում են ամենակարևոր փորձարարական փաստարկներից մեկը՝ ի պաշտպանություն իրավաբանական օգնության ոլորտում արհեստական բանականության դրական դերի: Նրանց ուսումնասիրությունը պարզել է, որ գեներատիվ արհեստական բանականությունը կարող է օժանդակել իրավաբանական օգնության մասնագետներին ամփոփման, նախագծման, բարգձմանության, գաղափարների փոխանակման, փաստաթղթերի կազմակերպման և հաճախորդների հետ առօրյա աշխատանքի հարցում³²: Նրանց ներդրումը կարևոր է, քանի որ այն արհեստական բանականությունը անմիջականորեն կապում է արդարադատության հասանելիության հետ: Հոդված 6(3)(գ)-ի համատեքստում սա հաստատում է այն փաստարկը, որ արհեստական բանականությունը կարող է բարելավել իրավաբանական օգնության որակը և մատչելիությունը, որտեղ փաստաբանները մնում են պատասխանատու դրա արդյունքների վերանայման և կիրառման համար: Միաժամանակ Չոյի, Մոնահանի և Շվարցի աշխատանքը ցույց է տալիս այս համակարգերի թուլությունները: Համաձայն նրանց ուսումնասիրությանը՝ արհեստական բանականությունը կարող է զգալիորեն բարելավել փաստաբանների աշխատանքի արագությունը, մինչդեռ որակի բարելավումները ավելի սահմանափակ և անհավասար են³³: Այս եզրակացությունը շատ կարևոր է: Այն ցույց է տալիս, որ արհեստական բանականությունը կարող է իրավաբանական աշխատանքն ավելի արագ դարձնել, բայց ոչ պարտադիր կերպով ավելի լավ: Հոդված 6(3)(գ)-ի համար արագությունը արժեքավոր է միայն այն դեպքում, եթե այն չի վտանգում ճշգրտությունը, գաղտնիությունը կամ մասնագիտական դատողությունը: Հետևաբար, փորձարարական ապացույցները հաստատում են արհեստական բանականության օգտագործումը որպես արդյունավետության գործիք, բայց ոչ որպես ապացույց, որ արհեստական բանականության կողմից ստեղծված աշխատանքը համարժեք է փաստաբանի կողմից տրամադրված օգնությանը:

Գիտական այս քննարկման հակառակ կողմի չի ժխտում արհեստական բանականության օգտակարությունը, սակայն պնդում է, որ դրա օգտագոր-

ծումը փաստաբանների կողմից լուրջ ռիսկեր է ստեղծում իրավական էթիկայի և մասնագիտական պատասխանատվության համար: Թերզիդուի աշխատանքը այս առումով ամենաարդիականներից մեկն է: Նա ուսումնասիրում է, թե ինչպես է գեներատիվ արհեստական բանականությունը ազդում փաստաբանների կոմպետենտության և գաղտնիության պարտականությունների վրա, և հստակորեն զգուշացնում է, որ հաճախորդի տեղեկատվության մշակումը գեներատիվ արհեստական բանականության համակարգերի միջոցով կարող է վտանգել գաղտնիությունը, եթե այդ տեղեկատվությունը բացահայտվի երրորդ կողմերին, այդ թվում՝ արհեստական բանականության մատակարարներին³⁴: Նրա դիրքորոշումը հատկապես համոզիչ է, քանի որ այն արհեստական բանականության ռիսկը կապում է իրավաբանական ներկայացուցչության հիմնական պարտականությունների հետ: Հոդված 6(3)(գ)-ի տեսանկյունից սա նշանակում է, որ արհեստական բանականության օգտագործումը խնդրահարույց է դառնում, երբ այն սպառնում է հաճախորդի գաղտնի, կոմպետենտ և մասնագիտորեն վերահսկվող իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությանը: Քոնլիի աշխատանքն ավելի ուղղակիորեն է կենտրոնանում կոմպետենտության պարտականության վրա: Նա հարցնում է, թե ինչ է նշանակում փաստաբանի կողմից գեներատիվ արհեստական բանականության ընդունելի կիրառումը և ինչքանով փաստաբանը պետք է տիրապետի սույն տեխնոլոգիայի առանձնահատկություններին նախքան այն օգտագործելը³⁵: Իրավաբանը առնվազն պետք է հասկանա, որ գեներատիվ արհեստական բանականությունը կարող է ստեղծել կեղծ մեջբերումներ, հնացած իրավական առաջարկներ, սխալ իրավասությունների վերլուծություն կամ մոլորեցնող ռազմավարական առաջարկներ: Հետևաբար, Քոնլիի աշխատանքը հաստատում է այն փաստարկը, որ ժամանակակից փաստաբանական հմտությունները ներառում է տեխնոլոգիների տիրապետումը:

Գարոնը նույնպես գեներատիվ արհեստական բանականությունը դիտարկում է որպես փաստաբանի պատասխանատվության հարց: Նա շեշտը դնում է գաղտնիության, կիբերանվտանգության, տեխնոլոգիական կոմպետենտության, նոր գործիքների օգտագործման զգուշության և հաճախորդի հետ պատշաճ հաղորդակցության վրա: Սա կարևոր է, քանի որ այն արհեստական բանականությունը տեղադրում է առկա մասնագիտական պարտավորությունների շրջանակներում: Իրավաբանը մնում է մասնագիտական գործող անձ, նույնիսկ երբ մեքենան նպաստում է աշխատանքային արդյունքին³⁶: Այս առումով Գարոնի դիրքորոշումը աջակցում է այն սկզբունքին, որ արհեստական բանականությունը չի ընդհատում մասնագիտա-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան պատասխանատվության շրթան: Եթե փաստաբանը արհեստական բանականություն է օգտագործում հաճախորդի գործում, ապա փաստաբանը մնում է պատասխանատու այդ օգտագործումը վերահսկելու, ստուգելու և բացատրելու համար:

Ուերը առաջարկում է ավելի տեսական և էթիկական քննադատություն: Նա պնդում է, որ ներկայիս գեներատիվ արհեստական բանականությունը էթիկապես անհամատեղելի է փաստաբանական գործունեության հետ՝ կոմպետենտության, ազնվության և էթիկական չափանիշներին համապատասխանության հետ կապված մտահոգությունների պատճառով: Նա վերհանում է մի խնդիր, որը հաճախ դուրս է մնում գիտական վեճերի շրջանակից: Մասնավորապես՝ փաստաբանությունը ներառում է գործնական իմաստություն, ազնվություն և իրավիճակային դատողություն: Այն խորապես հիմնված է էթիկական կանոնների վրա: Հենց այս պատճառով է, որ շատ երկրներում փաստաբանների որակը գնահատվում է նրանց վարքագծի հիման վրա: Արհեստական բանականությունը ներկայումս չի գործում այս տրամաբանությամբ՝:

Հետևաբար առավել հիմնավոր մոտեցումն ոչ թե դատական պաշտպանության հարցում արհեստական բանականության կիրառումը բացառելն է, այլ դրա՝ պաշտպանի փոխարինման գաղափարը մերժելը: Արհեստական բանականության միջոցով իրավաբանական աշխատանքի կատարելագործման վերաբերյալ գրականությունը համոզիչ է այնքանով, որքանով ցույց է տալիս, որ արհեստական բանականությունը կարող է բարելավել իրավաբանական ծառայությունների մատուցումը՝ արագացնելով իրավական հետազոտությունը, աջակցելով փաստաթղթերի նախագծմանը, մեծածավալ նյութերի կազմակերպմանը, իրավաբանական օգնության համակարգերին և իրավական գիտելիքի հասանելիության ընդլայնմանը, երբ այն կիրառվում է կոմպետենտ իրավաբանի կողմից՝ որպես օժանդակ գործիք և գտնվում է վերջինիս վերահսկման ներքո:

Վերոգրյալ վերլուծությունը ցույց է տալիս, որ անհրաժեշտ է ապահովել, որ արհեստական բանականության գործիքների կիրառումը ուղեկցվի պարտադիր, տեսանելի և պարզ լեզվով ձևակերպված նախագրույացումներով, որոնք հստակ կարձանագրեն, որ տվյալ համակարգը փաստաբան չէ, չի ներկայացնում անձին դատարանում, կարող է սխալվել, չի ապահովում փաստաբանական գաղտնիության լիարժեք երաշխիքներ և չի փոխարինում իրավաբանական օգնությանը: Այդ նախագրույացումները չպետք է թաքնված լինեն օգտագործման պայմանների երկար և դժվարամատչելի տեքստում, այլ պետք է հայտնվեն հենց այն պահին, երբ անձը ցանկանում է մուտքագրել գործի զգայուն տվյալներ կամ ստանալ դատավարական

որոշման վերաբերյալ ուղղորդում: Նման մոտեցումը անհրաժեշտ է, քանի որ արհեստական բանականության գործիքների օգտագործումը կարող է ստեղծել իրավական օգնության տպավորություն, իսկ անձի տեղեկացված ընտրությունը հնարավոր է միայն այն դեպքում, երբ նա հասկանում է ոչ միայն իր դատավարական իրավունքները, այլ նաև այն տեխնոլոգիական գործիքի սահմանափակումները, որի վրա հիմնվում է: Միաժամանակ անհրաժեշտ է նաև սահմանել բարձր ռիսկային իրավիճակների շրջանակ, որտեղ արհեստական բանականության գործիքների կողմից պատրաստված պաշտպանությունը չի կարող համարվել բավարար: Այդպիսի իրավիճակներ կարող են լինել ծանր մեղադրանքները, ազատագրկման իրական ռիսկը, անչափահաս մեղադրյալի մասնակցությունը, հոգեկան կամ ճանաչողական դժվարությունները, լեզվական խոչընդոտները, բարդ ապացուցողական հարցերը և այլն: Այս դեպքերում դատարանը պետք է գնահատի ՄԻԵԴ-ի կողմից սահմանված չափանիշների և ներպետական օրենսդրության համաձայն՝ թե արդյոք արդարադատության շահը չի պահանջում պաշտպանի պարտադիր ներգրավում:

Եզրակացություն

Ամփոփելով՝ անհրաժեշտ է արձանագրել, որ արհեստական բանականության ազդեցությունը ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի վրա ունի երկակի բնույթ: Մի կողմից՝ արհեստական բանականությունը կարող է բարձրացնել իրավական տեղեկատվության հասանելիությունը, աջակցել անձամբ պաշտպանվող անձանց, արագացնել իրավական հետազոտությունը, փաստաթղթերի մշակումը և ծանրաբեռնված իրավաբանական օգնության համակարգերի աշխատանքը: Մյուս կողմից՝ այն կարող է ստեղծել իրավական օգնության «տպավորություն», եթե անձը կամ նույնիսկ պաշտպանը արհեստական բանականության արդյունքները ընկալում են որպես մասնագիտական իրավական ներկայացուցչությանը համարժեք աջակցություն: Հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ արհեստական բանականությունը չի կարող համարվել պաշտպանի համարժեք գործիք ՄԻԵԿ 6-րդ հոդվածի 3-րդ մասի «գ» կետի իմաստով, քանի որ չունի մասնագիտական որակավորում, անկախություն, գաղտնիության պարտականություն, հավատարմություն և պատասխանատվություն: Ուստի առավել հիմնավոր մոտեցումն այն է, որ արհեստական բանականությունը պետք է դիտարկվի որպես օժանդակ գործիք, որը կարող է ուժեղացնել դատական պաշտպանությունը միայն այն դեպքում, երբ դրա կիրառումը ենթարկվում է մարդու մասնագիտական վերահսկո-

www.aradatuynjournal.com

դությանը, ուղեկցվում է արդյունքների պարտադիր ստուգմամբ, վստահորդի գաղտնիության պաշտպանությամբ, ռիսկերի վերաբերյալ հստակ տեղեկացմամբ և բարձր ռիսկային իրավիճակներում պաշտպանի պարտադիր ներգրավման գնահատմամբ: Այսպիսով, արհեստական բանականության կիրառման կարգավորումը պետք է ուղղված լինի ոչ թե տեխնոլոգիայի բացառմանը, այլ այնպիսի

երաշխիքների ձևավորմանը, որոնք թույլ կտան օգտվել դրա դրական հնարավորություններից՝ չթուլացնելով իրավական օգնության գործնական, արդյունավետ, գաղտնի և մասնագիտական պատասխանատվությամբ ապահովված բնույթը:

¹ Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Article 6 § 3(c), Rome, 4 November 1950, as amended by Protocols Nos. 11, 14 and 15, հասանելի է՝ https://www.echr.coe.int/documents/d/echr/convention_ENG? վերջին մուտք՝ 2026թ. ապրիլի 27:

² Pakelli v Germany, no. 8398/78, judgment of 25 April 1983, § 31.

³ Correia de Matos v Portugal [GC], no. 56402/12, judgment of 4 April 2018, § 122.

⁴ Pishchalnikov v Russia, no. 7025/04, judgment of 24 September 2009, § 77.

⁵ Correia de Matos v Portugal [GC], no. 56402/12, judgment of 4 April 2018.

⁶ Gray C. The right to defend oneself in person in criminal proceedings: Correia de Matos v Portugal. *European Human Rights Law Review*, 2018, No. 4, pp. 393-396.

⁷ Bassett P. The right to self-representation before International Criminal Tribunals, while not absolute, should only be denied in limited circumstances. *Northern Ireland Legal Quarterly*, 2011, Vol. 62, No. 3, pp. 235-247.

⁸ Zavoli I. The right to self-representation in international criminal Justice: Between Legal Fairness and Judicial Effectiveness. *Diritto Penale Contemporaneo*, 17 July 2014. Available at:

https://archivioldpc.dirittopenaleuomo.org/upload/1405525080ZAVOLI_2014.pdf, վերջին մուտք՝ 2026թ. Մայիսի 3:

⁹ Zorza R. The Disconnect Between the Requirements of Judicial Neutrality and Those of the Appearance of Neutrality When Parties Appear Pro Se: Causes, Solutions, Recommendations, and Implications. *Georgetown Journal of Legal Ethics*, 2004, Vol. 17, p. 423.

¹⁰ Chien C. V., Kim M. Generative AI and Legal Aid: Results from a Field Study and 100 Use Cases to Bridge the Access to Justice Gap. *Loyola of Los Angeles Law Review*, 2025, Vol. 57, No. 4.

¹¹ Irene Cheong et al., “How Can AI Augment Access to Justice? Public Defenders’ Perspectives on AI Adoption”, arXiv, 2026.

¹² Graham L. Case Comment: *Beuze v Belgium* (Application No. 71409/10). Available at: <https://www.repository.cam.ac.uk/handle/1810/289806>, վերջին մուտք՝ 2026թ. Մայիսի 3:

¹³ Villasenor J. Generative Artificial Intelligence and the Practice of Law: Impact, Opportunities, and Risks. *Minnesota Journal of Law, Science & Technology*, 2024, Vol. 25, p. 25.

¹⁴ *Artico v Italy* App no 6694/74 (ECtHR, 13 May 1980) § 33; *Daud v Portugal* App no 22600/93 (ECtHR, 21 April 1998) § 38; *Czekalla v Portugal* App no 38830/97 (ECtHR, 10 October 2002) §§ 59-71; Anelli Soo, ‘An Individual’s Right to the Effective Assistance of Counsel versus the Independence of Counsel: What Can the Estonian Courts Do in Case of Ineffective Assistance of Counsel in Criminal Proceedings?’ (2010) 17 *Juridica International* 252, 258-259; Benjamin K Brimo, ‘How Should Legal Ethics Rules Apply When Artificial Intelligence Assists Pro Se Litigants?’ (2022) 35 *Georgetown Journal of Legal Ethics* 225; Addison D Vyas, ‘Against an AI Privilege’ (2025) *Harvard Journal of Law & Technology Digest*.

¹⁵ *S v Switzerland*, no. 12629/87, judgment of 28 November 1991, § 48.

¹⁶ *United States v. Heppner*, No. 25 CR. 503 (JSR), 2026 WL 436479 (S.D.N.Y. Feb. 17, 2026).

¹⁷ Ravi S., McClure J. Artificial intelligence tools: A third party by any other name? Reuters, 24 March 2026. Available at: <https://www.reuters.com/legal/transactional/artificial-intelligence-tools-third-party-by-any-other-name—pracin-2026-03-24/>, վերջին մուտք՝ 2026թ. Մայիսի 3:

¹⁸ Trechsel S. *Human Rights in Criminal Proceedings*. Oxford University Press, Oxford, 2005. Collected Courses of the Academy of European Law, Vol. XII/3.

¹⁹ Sidhu O. *The Concept of Equality of Arms in Criminal Proceedings under Article 6 of the European Convention on Human Rights*. Intersentia, Cambridge, 2017. DOI: 10.1017/9781780687452.

²⁰ *Artico v Italy*, no. 6694/74, judgment of 13 May 1980, § 33.

www.aradaradutyjournal.com

²¹ Artico v Italy App no 6694/74 (ECtHR, 13 May 1980); Beuze v Belgium App no 71409/10 (ECtHR [GC], 9 November 2018); United Nations, Basic Principles on the Role of Lawyers (1990); CCBE, Charter of Core Principles of the European Legal Profession and Code of Conduct for European Lawyers (2019).

²² Artico v Italy, no. 6694/74, judgment of 13 May 1980, § 33.

²³ Daud v Portugal, no. 22600/93, judgment of 21 April 1998; Czekalla v Portugal, no. 38830/97, judgment of 10 October 2002.

²⁴ Mata v Avianca Inc, 678 F Supp 3d 443 (SDNY 2023)

²⁵ Park v Kim, No 22-2057 (2d Cir, 30 January 2024)

²⁶ Dvorski v Croatia [GC], no. 25703/11, judgment of 20 October 2015, §§ 79-101.

²⁷ Armour J., Parnham R., Sako M. Augmented Lawyering. *University of Illinois Law Review*, 2022, p. 71.

²⁸ Susskind R. *Tomorrow's Lawyers: An Introduction to Your Future*. 3rd edn, Oxford, Oxford University Press, 2023. Online edn, Oxford Law Pro, 14 May 2025. DOI: 10.1093/9780192864727.001.0001.

²⁹ Surden H. *Machine Learning and Law*. *Washington Law Review*, 2014, Vol. 89, p. 87.

³⁰ Remus D., Levy F. Can Robots Be Lawyers? Computers, Lawyers, and the Practice of Law. *Georgetown Journal of Legal Ethics*, 2017, Vol. 30, p. 501.

³¹ Brescia R. H. What's a Lawyer For? Artificial Intelligence and Third-Wave Lawyering. *Florida State University Law Review*, 2024, Vol. 51, No. 3, pp. 543-596.

³² Chien C. V., Kim M. Generative AI and Legal Aid: Results from a Field Study and 100 Use Cases to Bridge the Access to Justice Gap. *Loyola of Los Angeles Law Review*, 2025, Vol. 57, No. 4.

³³ Choi J. H., Monahan A., Schwarcz D. Lawyering in the Age of Artificial Intelligence. *Minnesota Law Review*, 2024, Vol. 109. Minnesota Legal Studies Research Paper No. 23-31. Available at SSRN: <https://ssrn.com/abstract=4626276>. DOI: 10.2139/ssrn.4626276.

³⁴ Terzidou K. Generative AI systems in legal practice offering quality legal services while upholding legal ethics. *International Journal of Law in Context*, 2025, Vol. 21, No. 3, pp. 431-452. DOI: 10.1017/S1744552325000047.

³⁵ Conley A. Understanding the Duty of Competence for Attorneys Using Generative AI. *North Carolina Journal of Law & Technology*, 2025, Vol. 27, p. 65.

³⁶ Garon J. M. Ethics 3.0 - Attorney Responsibility in the Age of Generative AI. *The Business Lawyer*, 2023, Vol. 79, No. 1, pp. 209-220. Available at SSRN: <https://ssrn.com/abstract=4746102>

³⁷ Webb J. Generative Artificial Intelligence in Legal Practice: Epistemic Expertise, Unethical AI, and the Role of Virtue. *Minds and Machines*, 2026, Vol. 36, Article 19. DOI: 10.1007/s11023-026-09771-2.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՆԿ

Գիտական գրականություն

1. Gray C. The right to defend oneself in person in criminal proceedings: *Correia de Matos v Portugal*. *European Human Rights Law Review*, 2018, No. 4, pp. 393-396.
2. Bassett P. The right to self-representation before International Criminal Tribunals, while not absolute, should only be denied in limited circumstances. *Northern Ireland Legal Quarterly*, 2011, Vol. 62, No. 3, pp. 235-247.
3. Zavoli I. The right to self-representation in international criminal Justice: Between Legal Fairness and Judicial Effectiveness. *Diritto Penale Contemporaneo*, 17 July 2014. Available at: https://archiviodpc.dirittopenaleuomo.org/upload/1405525080ZAVOLI_2014.pdf, ինչԳԻ ԿՅՈՒՄ՝ 2026Ա. ՅՍԵՇԳ 3:
4. Zorza R. The Disconnect Between the Requirements of Judicial Neutrality and Those of the Appearance of Neutrality When Parties Appear Pro Se: Causes, Solutions, Recommendations, and Implications. *Georgetown Journal of Legal Ethics*, 2004, Vol. 17, p. 423.
5. Chien C. V., Kim M. Generative AI and Legal Aid: Results from a Field Study and 100 Use Cases to Bridge the Access to Justice Gap. *Loyola of Los Angeles Law Review*, 2025, Vol. 57, No. 4.
6. Irene Cheong et al., "How Can AI Augment Access to Justice? Public Defenders' Perspectives on AI Adoption", arXiv, 2026.
7. Graham L. Case Comment: *Beuze v Belgium* (Application No. 71409/10). Available at: <https://www.repository.cam.ac.uk/handle/1810/289806>, ինչԳԻ ԿՅՈՒՄ՝ 2026Ա. ՅՍԵՇԳ 3:
8. Villasenor J. Generative Artificial Intelligence and the Practice of Law: Impact, Opportunities, and Risks. *Minnesota Journal of Law, Science & Technology*, 2024, Vol. 25, p. 25.
9. Anneli Soo, 'An Individual's Right to the Effective Assistance of Counsel versus the Independence of Counsel: What Can the Estonian Courts Do in Case of Ineffective Assistance of Counsel in Criminal Proceedings?' (2010) 17 *Juridica International* 252, 258-259
10. Benjamin K Brimo, 'How Should Legal Ethics Rules Apply When Artificial Intelligence Assists Pro Se Litigants?' (2022) 35 *Georgetown Journal of Legal Ethics* 225; Addison D Vyas, 'Against an AI Privilege' (2025) *Harvard Journal of Law & Technology Digest*.
11. Ravi S., McClure J. Artificial intelligence tools: A third party by any other name? *Reuters*, 24 March 2026. Available

at: <https://www.reuters.com/legal/transactional/artificial-intelligence-tools-third-party-by-any-other-name—pracin-2026-03-24/>, վերջին նույնը՝ 2026թ. Մայիսի 3:

12. Trechsel S. Human Rights in Criminal Proceedings. Oxford University Press, Oxford, 2005. Collected Courses of the Academy of European Law, Vol. XII/3.
13. Sidhu O. The Concept of Equality of Arms in Criminal Proceedings under Article 6 of the European Convention on Human Rights. Intersentia, Cambridge, 2017. DOI: 10.1017/9781780687452.
14. Armour J., Parnham R., Sako M. Augmented Lawyering. University of Illinois Law Review, 2022, p. 71.
15. Susskind R. Tomorrow's Lawyers: An Introduction to Your Future. 3rd edn, Oxford, Oxford University Press, 2023. Online edn, Oxford Law Pro, 14 May 2025. DOI: 10.1093/9780192864727.001.0001.
16. Surden H. Machine Learning and Law. Washington Law Review, 2014, Vol. 89, p. 87.
17. Remus D., Levy F. Can Robots Be Lawyers? Computers, Lawyers, and the Practice of Law. Georgetown Journal of Legal Ethics, 2017, Vol. 30, p. 501.
18. Brescia R. H. What's a Lawyer For? Artificial Intelligence and Third-Wave Lawyering. Florida State University Law Review, 2024, Vol. 51, No. 3, pp. 543-596.
19. Choi J. H., Monahan A., Schwarcz D. Lawyering in the Age of Artificial Intelligence. Minnesota Law Review, 2024, Vol. 109. Minnesota Legal Studies Research Paper No. 23-31. Available at SSRN: <https://ssrn.com/abstract=4626276>. DOI: 10.2139/ssrn.4626276.
20. Terzidou K. Generative AI systems in legal practice offering quality legal services while upholding legal ethics. International Journal of Law in Context, 2025, Vol. 21, No. 3, pp. 431-452. DOI: 10.1017/S1744552325000047.
21. Conley A. Understanding the Duty of Competence for Attorneys Using Generative AI. North Carolina Journal of Law & Technology, 2025, Vol. 27, p. 65.
22. Garon J. M. Ethics 3.0 - Attorney Responsibility in the Age of Generative AI. The Business Lawyer, 2023, Vol. 79, No. 1, pp. 209-220. Available at SSRN: <https://ssrn.com/abstract=4746102>
23. Webb J. Generative Artificial Intelligence in Legal Practice: Epistemic Expertise, Unethical AI, and the Role of Virtue. Minds and Machines, 2026, Vol. 36, Article 19. DOI: 10.1007/s11023-026-09771-2.

Միջազգային փաստաթղթեր

24. Council of Europe, Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms (adopted 4 November 1950, entered into force 3 September 1953) ETS No 5
25. United Nations, Basic Principles on the Role of Lawyers (1990); CCBE, Charter of Core Principles of the European Legal Profession and Code of Conduct for European Lawyers (2019).

ՄԻԵԴ Նախադեպեր

26. Pakelli v Germany, no. 8398/78, judgment of 25 April 1983.
27. Correia de Matos v Portugal [GC], no. 56402/12, judgment of 4 April 2018.
28. Pishchalnikov v Russia, no. 7025/04, judgment of 24 September 2009.
29. Artico v Italy App no 6694/74 (ECtHR, 13 May 1980)
30. Daud v Portugal App no 22600/93 (ECtHR, 21 April 1998)
31. Czekalla v Portugal App no 38830/97 (ECtHR, 10 October 2002)
32. S v Switzerland, no. 12629/87, judgment of 28 November 1991
33. Beuze v Belgium App no 71409/10 (ECtHR [GC], 9 November 2018);
34. Dvorski v Croatia [GC], no. 25703/11, judgment of 20 October 2015,

Այլ նյութեր

35. United States v. Heppner, No. 25 CR. 503 (JSR), 2026 WL 436479 (S.D.N.Y. Feb. 17, 2026).
36. Mata v Avianca Inc, 678 F Supp 3d 443 (SDNY 2023)
37. Park v Kim, No 22-2057 (2d Cir, 30 January 2024)

Անահիտ Աբրահամյան

Соискатель ученой степени кандидата юридических наук
факультета права Евразийского международного университета

РЕЗЮМЕ

Влияние искусственного интеллекта на реализацию права на судебную защиту

Настоящая статья посвящена влиянию искусственного интеллекта на реализацию права на судебную защиту, гарантированного подпунктом «с» пункта 3 статьи 6 Европейской конвенции по правам человека. В статье исследуется содержание права защищать себя лично и права пользоваться помощью выбранного защитника в контексте практики Европейского суда по правам человека и современной научной литературы. Особое внимание уделяется вопросу о том, могут ли инструменты искусственного интеллекта способствовать доступу к правовой информации и системам юридической помощи, не подменяя при этом квалифицированного защитника. Анализируются риски применения искусственного интеллекта, включая создание иллюзии юридической помощи, использование ошибочных или вымышленных правовых источников, утрату конфиденциальности, а также проблемы профессиональной компетентности и ответственности. В статье обосновывается, что искусственный интеллект может выступать лишь в качестве вспомогательного инструмента, применение которого должно сопровождаться четкими гарантиями, профессиональным контролем и эффективной защитой прав доверителя.

Ключевые слова: искусственный интеллект, правосудие, справедливое судебное разбирательство, право на судебную защиту, адвокатская тайна.

Anahit Abrahamyan

PHD Candidate of the Law Faculty of Eurasia International University

SUMMARY

The impact of artificial intelligence on the exercise of the right to legal defence

This article examines the impact of artificial intelligence on the exercise of the right to legal defence guaranteed under Article 6 § 3(c) of the European Convention on Human Rights. The article analyses the content of the rights to defend oneself in person and to be defended through counsel of one's choosing in light of the case law of the European Court of Human Rights and contemporary academic literature. Particular attention is given to whether artificial intelligence tools can support access to legal information and legal aid systems without replacing qualified counsel. The article analyses the risks associated with the use of artificial intelligence, including the creation of an illusion of legal assistance, the use of incorrect or fabricated legal sources, loss of confidentiality, and issues of professional competence and responsibility. The article argues that artificial intelligence may serve only as an auxiliary tool, the use of which must be accompanied by clear safeguards, professional supervision and effective protection of the client's rights.

Key words: artificial intelligence, justice, fair trial, right to legal defence, lawyer-client confidentiality.

Բնագիրը ներկայացվել է 08.05.2026թ.

Ընդունվել է տպագրության 27.05.26թ.

ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բարձրագույն դատական խորհրդի անդամ

ԱՂՏՈՒԿԸ ՈՐՊԵՍ ԱՆՁՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ
ՄԻՋԱՍՏՈՒԹՅՈՒՆ

Հոդվածը վերաբերում է աղմուկի ազդեցության իրավական գնահատմանը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 8-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25-րդ և 31-րդ հոդվածների շրջանակում: Հոդվածում ուսումնասիրվում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) նախադեպային իրավունքը, մասնավորապես՝ Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain, գանգատ թիվ 4143/02, վճիռ՝ 16 նոյեմբերի 2004 թ.) և Ֆադեյևա ընդդեմ Ռուսաստանի (Fadeyeva v. Russia, գանգատ թիվ 55723/00, վճիռ՝ 9 հունիսի 2005 թ.) գործերը:

Վերլուծության արդյունքում հիմնավորվում է, որ եվրոպական ժամանակակից իրավական մոտեցման համաձայն աղմուկն այլևս չի դիտարկվում միայն որպես կենցաղային կամ տեխնիկական խնդիր, այլ կարող է գնահատվել որպես անձնական կյանքի, բնակարանում անարգել բնակվելու և կյանքի որակի նկատմամբ միջամտություն:

Հոդվածում ցույց է տրվում, որ նման գնահատման համար որոշիչ նշանակություն ունեն աղմուկի ինտենսիվությունը և տևողությունը, բնակարանի բնական օգտագործման խաթարումը, առողջական կամ հոգեբանական ազդեցությունը, պետության արդյունավետ արձագանքի առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև ընթացակարգային երաշխիքների ապահովումը: Եզրակացվում է, որ աղմուկի սահմանափակումը պետության պոզիտիվ պարտավորությունների բաղադրիչ է և հանդես է գալիս որպես մարդու անձնական կյանքի, հոգևոր և ֆիզիկական առողջության, արժանապատվության և մարդու ինքնությունության պաշտպանության իրավական մեխանիզմ:

Հիմնարարներ - աղմուկ, անձնական կյանք, բնակարանի անձեռնմխելիություն, ընտանեկան կյանք, կյանքի որակ, Կոնվենցիայի 8-րդ հոդված, պոզիտիվ պարտավորություններ, Մարդու իրավունքների եվրոպական դատարան, նախադեպային իրավունք, շրջակա միջավայր, առողջության պաշտպանություն, աղմուկի իրավական կարգավորում, մարդու իրավունքներ:

Մեթոդներ. Հետազոտությունը ներառել է սահմանադրական և ներպետական իրավական նորմերի, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և շրջակա միջավայրի քաղաքականությունն ու մարդու իրավունքների պաշտպանությունը կարգավորող փաստաթղթերի վերլուծություն: Օգտագործել են համեմատական-իրավական մեթոդ, համակարգային մոտեցում և նկարագրության ու մեկնաբանության վերլուծական մեթոդներ:

Ներածություն

Անձնական կյանքի և առողջության իրավունքի պաշտպանությունը ժամանակակից եվրոպական իրավակարգում ենթարկվել է էական եվոլյուցիայի: Եվրոպական դատարանը հետևողականորեն շեշտադրում է, որ Կոնվենցիան հանդիսանում է «կենդանի օրգանիզմ», և դրա դրույթները պետք է մեկնաբանվեն ժամանակակից սոցիալական, տեխնոլոգիական և միջավայրային պայմանների համատեքստում:

Այս դիմամիկ մեկնաբանության արդյունքում Կոնվենցիայի 8-րդ հոդվածի կիրառման շրջանակը տարածվել է ոչ միայն պետության ուղղակի միջամտության, այլ նաև շրջակա միջավայրի ազդեցությունների վրա: Աղմուկը, որպես մարդու ֆիզիկական և հոգեբանական առողջության նկատմամբ

ազդեցություն ունեցող գործոն, աստիճանաբար ներառվել է կոնվենցիոն պաշտպանության շրջանակում՝ վերածվելով մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության առարկայի:

Սույն հոդվածի նպատակն է համակարգել եվրոպական դատարանի մոտեցումները և պարզել՝ ինչ իրավական պայմաններում և չափանիշների համաձայն կարող է աղմուկը գնահատվել որպես մարդու անձնական կյանքի միջամտություն: Հետազոտությունը կառուցված է համակարգային վերլուծության վրա և ներառում է ինչպես դոկտրինալ, այնպես էլ նախադեպային իրավունքի մոտեցումներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության իրավակարգի վերլուծություն և միջազգային կազմակերպությունների գնահատականները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25-րդ և 31-րդ հոդվածների նշանակությունը շրջակա միջավայրի պահպանության համատեքստում

Շրջակա միջավայրի աղտոտվածության աճող մակարդակը ժամանակակից հասարակություններում դարձել է մարդու իրավունքների պաշտպանության կարևոր խնդիրներից մեկը: Բնապահպանական ռիսկերը, այդ թվում՝ օդի, ջրի և հողի աղտոտումը, ինչպես նաև աղմուկը և այլ ֆի-

www.aradaradatumjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

զիկական ազդեցությունները, կարող են անմիջականորեն ազդել մարդու առողջության, կյանքի որակի և արժանապատիվ ապրելու պայմանների վրա: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն են ձեռք բերում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության այն դրույթները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ապահովում են մարդու պաշտպանությունը շրջակա միջավայրի վնասակար ազդեցություններից: Այդպիսի դրույթներից են հատկապես Սահմանադրության 25-րդ և 31-րդ հոդվածները, որոնք սահմանում են համապատասխանաբար մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը և բնակարանի անձեռնմխելիության իրավունքը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25-րդ հոդվածը ամրագրում է յուրաքանչյուր մարդու ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը: Այս իրավունքը ենթադրում է, որ պետությունը պարտավոր է ոչ միայն ձեռնպահ մնալ անձի նկատմամբ ապօրինի միջամտություններից, այլև իրականացնել ակտիվ գործողություններ՝ կանխելու այնպիսի իրավիճակները, որոնք կարող են վնասել մարդու առողջությանը կամ հոգեկան բարեկեցությանը:

Շրջակա միջավայրի աղտոտվածությունը կարող է դիտարկվել հենց այդպիսի վտանգների շարքում: Օդի աղտոտվածությունը, արդյունաբերական արտանետումները, տրանսպորտային աղմուկը կամ թունավոր նյութերի ազդեցությունը կարող են առաջացնել ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական առողջական խնդիրներ: Հետևաբար Սահմանադրության 25-րդ հոդվածը շրջակա միջավայրի պաշտպանության համատեքստում պետք է մեկնաբանվի որպես պետության պարտավորություն՝ կանխելու և նվազեցնելու այնպիսի բնապահպանական վտանգները, որոնք կարող են վնասել մարդու առողջությանը:

Այս տեսանկյունից շրջակա միջավայրի պահպանությունը դառնում է ոչ միայն բնապահպանական քաղաքականության հարց, այլև մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության բաղադրիչ: Պետությունը պարտավոր է ստեղծել իրավական և ինստիտուցիոնալ մեխանիզմներ, որոնք կապահովեն շրջակա միջավայրի աղտոտման վերահսկումը, կանխարգելումը և դրա հետևանքների նվազեցումը: Նման մեխանիզմների բացակայությունը կարող է հանգեցնել Սահմանադրությամբ պաշտպանվող ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի խախտման:

Սահմանադրության 31-րդ հոդվածը սահմանում է բնակարանի անձեռնմխելիության իրավունքը՝ ապահովելով յուրաքանչյուր անձի պաշտպանությունը բնակարանի նկատմամբ ապօրինի ներխուժումից կամ միջամտությունից: Թեև այս հոդվածը դասակարգվում է վերաբերում է պետական

մարմինների կամ այլ անձանց կողմից բնակարան մուտք գործելու սահմանափակումներին, ժամանակակից իրավական մեկնաբանությունը այն կապում է նաև բնակարանի անարգել և խաղաղ օգտագործման իրավունքի հետ:

Շրջակա միջավայրի աղտոտվածության պայմաններում այս իրավունքը կարող է ձեռք բերել ավելի լայն բովանդակություն: Օրինակ՝ մշտական աղմուկը, օդի աղտոտվածությունը կամ արդյունաբերական արտանետումները կարող են ստեղծել այնպիսի իրավիճակ, երբ անձը չի կարող լիարժեք օգտագործել իր բնակարանը որպես հանգստի և անձնական կյանքի իրականացման տարածք: Նման պայմաններում բնակարանի անձեռնմխելիությունը կարող է դիտարկվել ոչ միայն ֆիզիկական ներխուժումից պաշտպանություն, այլ նաև բնակարանի բնական և անվտանգ օգտագործման երաշխիք:

Այս մոտեցումը համահունչ է նաև միջազգային իրավական զարգացումներին, մասնավորապես եվրոպական իրավական պրակտիկային, որտեղ շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունները դիտարկվում են որպես մասնավոր կյանքի և բնակարանի իրավունքի միջամտություն, եթե դրանք էականորեն խաթարում են անձի կյանքի բնական պայմանները: Եվրոպական մարդու իրավունքների դատարանը բազմիցս արձանագրել է, որ արդյունաբերական աղտոտումը, աղմուկը կամ այլ էկոլոգիական գործոններ կարող են ընկնել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի պաշտպանության շրջանակում²:

Սահմանադրության 25-րդ և 31-րդ հոդվածները շրջակա միջավայրի պահպանության համատեքստում պետք է մեկնաբանվեն համակարգային և փոխկապակցված ձևով: Նման մոտեցումը բխում է ժամանակակից սահմանադրական իրավունքի այն սկզբունքից, ըստ որի մարդու հիմնարար իրավունքները գործում են փոխկապակցված համակարգում և չեն կարող մեկնաբանվել մեկուսացված կերպով³: Այս հոդվածների համատեղ կիրառումը հնարավորություն է տալիս ձևավորել իրավական այնպիսի մոտեցում, որի համաձայն շրջակա միջավայրի աղտոտվածությունը կարող է դիտարկվել որպես մարդու առողջության և բնակարանի անվտանգ օգտագործման իրավունքի սահմանափակում:

Այսպիսի մեկնաբանությունը հատկապես կարևոր է այն դեպքերում, երբ բնապահպանական վնասները անմիջապես չեն առաջացնում ակնհայտ առողջական վնաս, սակայն երկարաժամկետ ազդեցության արդյունքում կարող են էականորեն վատթարացնել կյանքի պայմանները: Միջազգային իրավական և գիտական գրականության մեջ ընդգծվում է, որ նույնիսկ ցածր ինտենսիվության, բայց շարունակական ազդեցությունները կարող են

www.aradaradatuynjournal.com

ունենալ լուրջ ազդեցություն մարդու կյանքի որակի վրա^{4,5} :

Այս պայմաններում պետությունը պետք է իրականացնի կանխարգելիչ և համակարգային քաղաքականություն՝ ուղղված շրջակա միջավայրի աղտոտման նվազեցմանը և բնակչության առողջության պաշտպանությանը: Այս մոտեցումը համահունչ է նաև միջազգային բնապահպանական իրավունքի հիմնարար սկզբունքներին, մասնավորապես նախազգուշության սկզբունքին, որը ամրագրված է Ռիոյի հռչակագրում⁶: Այդ քաղաքականությունը ներառում է ինչպես իրավական կարգավորումների մշակումը, այնպես էլ մոնիթորինգի, վերահսկողության և պատասխանատվության արդյունավետ մեխանիզմների ստեղծումը:

Սահմանադրական իրավունքների ժամանակակից մեկնաբանությունը ենթադրում է, որ պետության պարտավորությունները չեն սահմանափակվում միայն իրավունքների խախտումից ձեռնպահմանով: Եվրոպական մարդու իրավունքների դատարանի պրակտիկան և իրավաբանական դոկտրինը հաստատում են, որ պետությունը պարտավոր է նաև իրականացնել ակտիվ միջոցառումներ՝ ապահովելու այդ իրավունքների արդյունավետ իրականացումը^{7,8} :

Շրջակա միջավայրի աղտոտվածության պայմաններում մասն ազդիտիվ պարտավորությունները կարող են ներառել՝

- շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելման և վերահսկման արդյունավետ համակարգի ստեղծումը,
- աղտոտման մակարդակների շարունակական մոնիթորինգի իրականացումը,
- բնակչության առողջության պաշտպանությանն ուղղված կանխարգելիչ միջոցառումների իրականացումը,
- շրջակա միջավայրի աղտոտման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման իրավական մեխանիզմների ապահովումը:

Այսպիսով, պետության պարտավորությունները չեն սահմանափակվում միայն իրավական նորմերի սահմանմամբ, այլ ներառում են նաև դրանց արդյունավետ և հետևողական իրականացումը, ինչը բխում է մարդու իրավունքների իրական և արդյունավետ պաշտպանության սկզբունքից⁹ :

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 25-րդ և 31-րդ հոդվածները թեև այդ ուղղակիորեն չեն վերաբերում շրջակա միջավայրի իրավունքին, դրանց համակարգային մեկնաբանությունը հնարավորություն է տալիս շրջակա միջավայրի աղտոտվածությունը դիտարկել որպես մարդու առողջության և բնակարանի անվտանգ օգտագործման իրավունքի հնարավոր խախտման աղբյուր:

Այս համատեքստում շրջակա միջավայրի

արդյունավետ պաշտպանությունը դառնում է ոչ միայն բնապահպանական քաղաքականության խնդիր, այլ նաև մարդու հիմնարար իրավունքների ապահովման կարևոր բաղադրիչ: Հետևաբար պետությունը պարտավոր է իրականացնել համապարփակ և հետևողական քաղաքականություն՝ ուղղված շրջակա միջավայրի աղտոտման կանխարգելմանը, վերահսկմանը և դրա բացասական հետևանքների նվազեցմանը՝ ապահովելով Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների իրական և արդյունավետ պաշտպանությունը:

Աղմուկից պաշտպանության նորմատիվային կարգավորումները Հայաստանի Հանրապետությունում

Հայաստանի Հանրապետությունում աղմուկից պաշտպանության իրավական և նորմատիվային կարգավորումը իրականացվում է մի շարք ենթօրենսդրական ակտերի միջոցով, որոնց հիմնական նպատակն է ապահովել բնակչության առողջության պաշտպանությունը, բնակավայրերում բարենպաստ ձայնագիտական միջավայրի ձևավորումը և շենքերի նախագծման ու շահագործման ընթացքում աղմուկի ազդեցության նվազեցումը:

Ներկայումս աղմուկից պաշտպանության հիմնական նորմատիվային հիմքը կազմում են երկու առանցքային փաստաթղթեր՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 79-Ն հրաման «ՀՀԸՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու մասին» (այսուհետ՝ «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմեր)¹⁰ և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2002 թվականի մարտի 6-ի N 138 հրաման «N 2-III- սանիտարական նորմերը հաստատելու մասին» (այսուհետ՝ Սանիտարական նորմեր)¹¹ :

Այս փաստաթղթերը փոխլրացնող բնույթ ունեն և կարգավորում են ինչպես աղմուկի տեխնիկական և շինարարական սահմանափակումները, այնպես էլ բնակչության առողջության պահպանման նպատակով թույլատրելի աղմուկի մակարդակները:

«Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը սահմանում են պարտադիր պահանջներ, որոնք կիրառվում են տարբեր նշանակության շենքերի և շինությունների նախագծման, շինարարության և շահագործման, ինչպես նաև բնակավայրերի հատակագծման և կառուցապատման գործընթացներում:

Նորմերի հիմնական նպատակը ձայնագիտական միջավայրի այնպիսի պայմանների ապահովումն է, որոնք թույլ կտան նվազեցնել աղմուկի բացասական ազդեցությունը մարդու առողջության և կյանքի որակի վրա: Նշված նորմերը կարգավորում

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

են մի շարք կարևոր հարցեր, մասնավորապես՝ արտադրական, բնակելի և հասարակական շենքերում ձայնագիտական միջավայրի նորմատիվ պարամետրերի ապահովումը, բնակելի կառուցապատման տարածքներում աղմուկի թույլատրելի մակարդակների պահպանումը, աղմուկից պաշտպանության շինարարաձայնագիտական միջոցառումների նախագծումը և կիրառումը:

Աղմուկից պաշտպանություն շինարարական նորմերը նախատեսում են աղմուկից պաշտպանության մի շարք տեխնիկական և քաղաքաշինական միջոցառումներ՝ կախված աղմուկի աղբյուրից և տարածքի գործառնական նշանակությունից:

Բնակելի և հասարակական շենքերում աղմուկից պաշտպանությունը իրականացվում է շենքի պատող կոնստրուկցիաների համապատասխան ձայնամեկուսացման ապահովման միջոցով: Աղմուկից պաշտպանության կարևոր միջոցներից են նաև քաղաքաշինական լուծումները: Նորմերը նախատեսում են սանիտարապաշտպանիչ գոտիների ստեղծում, աղմկապաշտպանիչ շենքերի և էկրանների կիրառություն, ինչպես նաև կանաչապատման գոտիների ձևավորում, որոնք նպաստում են աղմուկի տարածման նվազեցմանը:

Աղմուկի թույլատրելի մակարդակները սահմանվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից հաստատված սանիտարական նորմերով, որոնք ուղղված են բնակչության առողջության պահպանմանը: Նորմերը տարբերակում են թույլատրելի աղմուկի մակարդակները՝ կախված գործունեության բնույթից և տարածքի գործառնական նշանակությունից:

Աղմուկի թույլատրելի մակարդակները սահմանվում են հաշվի առնելով տարածքի գործառույթը և գործունեության բնույթը: Աշխատատեղերում դրանք տատանվում են՝ ստեղծագործական գործունեության համար մինչև 50 դԲԱ, բարձր կենտրոնացում պահանջող աշխատանքների դեպքում՝ 60–65 դԲԱ, իսկ արտադրական ոլորտում՝ մինչև 80 դԲԱ: Բնակելի և հասարակական տարածքներում սահմանվում են ավելի խիստ չափանիշներ. բնակարաններում՝ 40 դԲԱ ցերեկային և 30 դԲԱ գիշերային ժամերին, հիվանդանոցներում՝ համապատասխանաբար 35 և 25 դԲԱ, իսկ ուսումնական հաստատություններում՝ 40 դԲԱ: Միաժամանակ շինարարական նորմերը նախատեսում են շենքերի ձայնամեկուսացման պահանջներ՝ սահմանելով պատող կոնստրուկցիաների ձայնամեկուսացման ինդեքսներ, որոնք ապահովում են աղմուկի փոխանցման սահմանափակում (միջբնակարանային պատերի և միջհարկային ծածկերի համար՝ շուրջ 50–54 դԲ):

Աղմուկից պաշտպանության կարևոր բաղադրիչ է նաև քաղաքաշինական քաղաքականություն:

Աղմուկից պաշտպանություն շինարարական նորմերը հատուկ ուշադրություն են դարձնում բնակավայրերի տարածքային կազմակերպմանը և տարածքների գործառնական գոտիավորմանը: Այս շրջանակում նախատեսվում է արդյունաբերական գոտիների տարանջատում բնակելի տարածքներից, մայրուղային ճանապարհների տեղակայման օպտիմալացում, աղմկապաշտպանիչ շենքերի կառուցում փողոցների առաջին շարքում և ճանապարհամերձ աղմկապաշտպանիչ էկրանների տեղադրում:

Նման միջոցառումները նպատակ ունեն կանխել աղմուկի անմիջական ազդեցությունը բնակելի կառուցապատման վրա և ապահովել ավելի բարենպաստ բնակելի միջավայր:

Միջազգային գնահատականները Հայաստանի Հանրապետության վերաբերյալ

Վերջին տասնամյակում միջազգային կազմակերպությունների և գիտական համայնքի հրապարակումները աղմուկը դիտարկում են որպես շրջակա միջավայրի աղտոտման եղանակ, որը էական ազդեցություն ունի մարդու առողջության, կյանքի որակի և մարդու իրավունքների իրականացման վրա: Ժամանակակից տեսական գրականությունը ցույց է տալիս, որ աղմուկը կարող է առաջացնել ոչ միայն լսողական վնասներ, այլև մի շարք ոչ լսողական հետևանքներ՝ քնի խանգարումներ, հոգեբանական լարվածություն, սթրես, աշխատունակության նվազում և սրտանոթային հիվանդությունների ռիսկի աճ^{12,13,14,15}:

Այս մոտեցումը արտացոլված է նաև Առողջապահության համաշխարհային կազմակերպության (World Health Organization - WHO) կողմից հրապարակված «Եվրոպական տարածաշրջանի համար աղմուկի վերաբերյալ ուղեցույցներում» (Environmental Noise Guidelines for the European Region)¹⁶, որտեղ նշվում է, որ տրանսպորտային աղմուկը Եվրոպայում առողջության համար ամենակարևոր շրջակա միջավայրային ռիսկային գործոններից մեկն է:

Միջազգային այս ընդհանուր գնահատականների համատեքստում Հայաստանի վերաբերյալ վերջին տարիների զեկույցներում առանձնացվում են մի քանի հիմնական խնդիրներ:

Նախ՝ միջազգային կազմակերպությունները նշում են, որ աղմուկը հատկապես քաղաքային միջավայրում հանդիսանում է աճող բնապահպանական խնդիր: Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (United Nations Economic Commission for Europe - UNECE) հարթակում ներկայացված Հայաստանի կամավոր ազգային պարտավորությունների փաստաթղթում նշվում է, որ խոշոր քաղաքներում օդի և աղմուկի աղտոտումը շարունակում է մնալ էական

www.aradadatuynjournal.com

բնապահպանական խնդիր, իսկ դրանց մակարդակները հաճախ գերազանցում են թույլատրելի սահմանները: Նույն փաստաթուղթը մատնանշում է, որ աղմուկի հիմնական աղբյուրը քաղաքներում ճանապարհային երթևեկությունն է, ինչը համահունչ է միջազգային գիտական գրականության եզրահանգումներին¹⁷:

Երկրորդ՝ կարևոր դիտարկումը վերաբերում է աղմուկի վերաբերյալ տվյալների հավաքագրման և մոնիթորինգի համակարգի սահմանափակումներին: Առողջապահության համաշխարհային կազմակերպության կողմից Հայաստանի հանրային առողջապահական համակարգի կարողությունների գնահատման տեխնիկական զեկույցում նշվում է, որ երկրում գոյություն ունեն աղմուկի սահմանային չափորոշիչներ, սակայն շրջակա միջավայրի մոնիթորինգի համակարգը լիարժեք զարգացած չէ, իսկ աղմուկի վերաբերյալ տվյալների ամբողջականությունը սահմանափակ է¹⁸:

Նույն կազմակերպության Եվրոպական տարածաշրջանի տվյալների հարթակում Հայաստանի վերաբերյալ աղմուկի ազդեցության որոշ ցուցանիշների մասով արձանագրվում է տվյալների բացակայություն, մասնավորապես քաղաքային բնակչության գիշերային աղմուկի ազդեցության մակարդակների վերաբերյալ: Տվյալների նման պակասը դժվարացնում է աղմուկի տարածքային գնահատումը, առողջական ազդեցությունների վերլուծությունը և համապատասխան քաղաքականությունների մշակումը¹⁹:

Երրորդ՝ դիտարկումը վերաբերում է տեղական մակարդակում աղմուկի դիտարկման մեխանիզմներին: Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի «Ելացի և կայուն քաղաքներ» նախաձեռնության շրջանակում պատրաստված Գորիս քաղաքի քաղաքային պրոֆիլում նշվում է, որ քաղաքում աղմուկի մշտական մոնիթորինգ չի իրականացվում: Այնուամենայնիվ, ընտրանքային չափումների արդյունքները ցույց են տալիս, որ քաղաքային բնակչության մոտավորապես 40 տոկոսը ենթարկվում է աղմուկի՝ 55 դեցիբելից (decibel – dB) բարձր մակարդակով, ինչը կարող է բացասաբար ազդել կյանքի որակի վրա: Նույն փաստաթուղթը շեշտում է նաև, որ աղմուկի հիմնական աղբյուրներից մեկը քաղաքով անցնող միջպետական ճանապարհներն են:

Միջազգային զեկույցների այս գնահատականները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության դեպքում հիմնական խնդիրը ոչ միայն աղմուկի առկայությունն է, այլ նաև դրա համակարգային գնահատման և վերահսկման մեխանիզմների սահմանափակ զարգացումը: Այս հանգամանքը կարևոր նշանակություն ունի նաև մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից, քանի որ տվյալների պակասը կարող է խոչըն-

դոտել պետության կողմից արդյունավետ պոզիտիվ պարտավորությունների իրականացումը²⁰:

Անձնական կյանքի հասկացությունը ըստ Եվրոպական դատարանի

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը ձևավորել է «անձնական կյանքի» հասկացության լայն և դինամիկ մեկնաբանություն: Ի տարբերություն դասական մոտեցումների, որոնք անձնական կյանքը սահմանափակում էին գաղտնիության և ինտիմ ոլորտի շրջանակներով, ժամանակակից իրավաբանությունը այն դիտարկում է որպես բազմաչափ իրավական կատեգորիա²¹:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունից բխում է, որ անձնական կյանքը ներառում է ֆիզիկական և հոգեբանական ամբողջականությունը, բնակարանի անարգել և արդյունավետ օգտագործումը, ընտանեկան կյանքի անխոչընդոտ իրականացումը, ինչպես նաև կյանքի արժանապատիվ և անվտանգ պայմանների ապահովումը: Այս մոտեցումը հատկապես զարգացվել է այն գործերով, որտեղ շրջակա միջավայրի ազդեցությունները դիտարկվել են որպես մարդու իրավունքների խախտման աղբյուր²²:

Գիտական հետազոտությունները հաստատում են, որ բարձր ձայնը, հատկապես շարունակական և ինտենսիվ բնույթի դեպքում, ուղղակիորեն ազդում է մարդու ֆիզիկական և հոգեկան վիճակի վրա: Աղմուկի ազդեցությունը մարդու առողջության վրա կարող է առաջացնել մի շարք բացասական հետևանքներ, որոնցից գիտականորեն ապացուցված են քնի խանգարումները, սթրեսային վիճակները, արյան ճնշման բարձրացումը և նյարդային համակարգի լարվածությունը²³:

Եվրոպական դատարանի մոտեցման համաձայն, Կոնվենցիայի (European Convention on Human Rights) 8-րդ հոդվածի կիրառման համար պարտադիր չէ ապացուցել ծանր կամ անշրջելի առողջական վնաս. բավարար է, որ միջամտությունը լրջորեն ազդի անձի բարեկեցության և հոգեբանական կայունության վրա: Այս մոտեցումը աղմուկի արգելքը վերածում է ոչ միայն ֆիզիկական առողջության, այլ նաև հոգեբանական հավասարակշռության պաշտպանության գործիքի²⁴:

Եվրոպական դատարանի մեկնաբանության համաձայն՝ «բնակարան» հասկացությունը պաշտպանվում է ոչ միայն որպես ֆիզիկական տարածք, այլ որպես անձնական ինքնավարության կենտրոն: Եթե աղմուկը այնքան ուժեղ է, որ խանգարում է անձին հանգիստ ապրել իր բնակարանում՝ քնել, հանգստանալ կամ վարել ընտանեկան կյանք, ապա այն կարող է դիտարկվել որպես միջամտություն²⁵:

Այս մոտեցումը հիմնավորում է կարևոր իրավական սկզբունք՝ բարձր ձայնի արգելքը բխում է ոչ

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թե միայն սանիտարական կամ քաղաքաշինական կարգավորումներից, այլ հենց անձնական կյանքի պաշտպանության պարտավորությունից, որի շրջանակում պետությունը պարտավոր է ապահովել բնակարանի անվտանգ և հանգիստ միջավայր²⁶ :

Աղմուկը կարող է խաթարել մարդու ընտանեկան հարաբերությունների բնական ընթացքը՝ սահմանափակելով հաղորդակցությունը, հանգիստ ժամանակ անցկացնելու հնարավորությունը կամ երեխաների բնականոն զարգացման պայմանները: Այս համատեքստում բարձր ձայնի արգելքը ծառայում է ընտանեկան կյանքի կայունության ապահովմանը²⁷ :

Դատարանի իրավական դատողության համաձայն՝ ընտանեկան կյանքը ներառում է ոչ միայն հարաբերությունների իրավական ճանաչումը, այլ նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը: Հետևաբար, եթե աղմուկը ստեղծում է մշտական լարվածություն կամ անհանգստություն, այն կարող է դիտարկվել որպես ընտանեկան կյանքի միջամտություն²⁸ :

Անձնական կյանքի հասկացության ընդլայնումը հանգեցրել է նրան, որ շրջակա միջավայրի գործոնները այլևս չեն դիտարկվում միայն որպես տեխնիկական կամ վարչական կարգավորման հարցեր: Աղմուկը դադարել է լինել պարզապես քաղաքաշինական կամ լիցենզավորման խնդիր՝ վերածվելով մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության ոլորտի²⁹ :

Այս փոփոխությունը իրավական մտածողության մեջ ունի սկզբունքային նշանակություն. բարձր ձայնի սահմանափակումը դառնում է ոչ միայն վարչական քաղաքականության հարց, այլ պետության կոնվենցիոն պարտավորություն: Եթե պետությունը չի ապահովում արդյունավետ աղմուկային կարգավորում, ապա խնդիրը վերածվում է մարդու իրավունքների խախտման հարցի:

«Աղմուկը որպես նյութական միջամտություն» խնդիրը մանրամասն վերլուծվել է Եվրոպական դատարանի Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի գործում (Moreno Gómez v. Spain, 2004), որտեղ դատարանը առաջին անգամ հստակ սահմանեց այն իրավական չափանիշները, որոնց առկայության դեպքում աղմուկը կարող է վերածվել անձնական կյանքի և բնակարանի հարգման իրավունքի խախտման: Դիմումատուն բողոքում էր, որ իր բնակարանի մոտակայքում գործող գիշերային սրճարանների և ակումբների աղմուկը խաթարում էր իր կյանքի բնական պայմանները և կյանքի որակը: Դատարանը հաստատեց, որ աղմուկը կարող է դիտվել որպես Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակում միջամտություն, եթե այն հասնում է բավարար լրջության աստիճանի: Սակայն այդ լրջության գնահատումը չի սահմանափակվում միայն դեցիբելային ցուցանիշներով. այն ունի համալիր

բնույթ և ներառում է մի շարք փոխկապակցված հանգամանքներ³⁰ :

Աղմուկի ինտենսիվությունը հանդիսանում է միջամտության գնահատման կարևոր նախապայման: Սակայն Եվրոպական դատարանի մոտեցումը չի հիմնվում միայն քանակական կամ դեցիբելային ցուցանիշների վրա: Իրավական գնահատումը իրականացվում է համատեքստային վերլուծության³¹ միջոցով՝ հաշվի առնելով մի շարք գործոններ³² :

Դրանց շարքին են պատկանում աղմուկի մակարդակի գերազանցումը օրենքով սահմանված թույլատրելի շեմերից, աղմուկի բնույթի համադրումը տվյալ տարածքի սոցիալական և գործառնական հատկանիշների հետ (բնակելի, արդյունաբերական կամ առևտրային տարածք), ինչպես նաև աղմուկի ազդեցության օբյեկտիվորեն հաստատելի մակարդակը: Այս գործոնների համակցված գնահատումը թույլ է տալիս պարզել՝ արդյոք տվյալ աղմուկային ազդեցությունը հասնում է այնպիսի աստիճանի, որը կարող է դիտարկվել որպես անձնական կյանքի և բնակարանի հարգման իրավունքի նկատմամբ միջամտություն³² :

Այսպիսով, աղմուկի արգելքը իրավական տեսանկյունից ուղղված է ոչ միայն սանիտարական նորմերի պահպանմանը, այլ անձի կենսատարածքի պաշտպանությանը՝ որպես Կոնվենցիայի 8-րդ հոդվածով երաշխավորված իրավունք³³ : Դատարանը կարևորում է նաև աղմուկի տևական բնույթը. կարճաժամկետ կամ պատահական աղմուկը սովորաբար չի դիտարկվում որպես խախտում, մինչդեռ շարունակական և ինտենսիվ ազդեցությունը կարող է վերածվել մարդու անձնական ինքնավարության խաթարման:

Տևական աղմուկը վերացնում է բնակարանի պաշտպանական գործառույթը՝ այն դադարեցնում է լինել ապահով և հանգիստ տարածք: Այդ իրավիճակում բարձր ձայնի սահմանափակումը դառնում է ոչ թե վարչական քաղաքականության հարց, այլ մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության գործիք: Մարդկանց քնի խանգարումը դատարանի իրավաբանության մեջ ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ քումը հանդիսանում է ֆիզիկական և հոգեբանական առողջության պահպանման հիմնական պայման: Եթե աղմուկը խաթարում է գիշերային հանգիստը, ապա այն ուղղակիորեն միջամտում է մարդու ֆիզիկական և հոգեբանական ամբողջականությանը³⁴ :

Այս առումով աղմուկի արգելքը դիտարկվում է որպես անձի առողջության կանխարգելիչ պաշտպանության միջոց, իսկ պետության պարտավորությունն ունի ակտիվ (պոզիտիվ) բնույթ՝ ուղղված նման խախտումների կանխմանը: Մասնավորապես, Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain) գործում դատարանը ընդգծել է, որ

www.aradaradatuynjournal.com

խախտումը կարող է պայմանավորված լինել ոչ թե պետության անմիջական գործողությամբ, այլ նրա անգործությամբ՝ երրորդ անձանց գործունեության նկատմամբ արդյունավետ վերահսկողություն չապահովելու հետևանքով :

Այս մոտեցումը ձևակերպում է կարևոր իրավական սկզբունք, համաձայն որի աղմուկից պաշտպանության ապահովումը հանդիսանում է պետության պոզիտիվ պարտավորությունների բաղադրիչ Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակում: Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ պետությունը պարտավոր է ոչ միայն ձեռնարկել մնալ անձնական կյանքի և բնակարանի նկատմամբ անմիջական միջամտություններից, այլև ստեղծել այնպիսի իրավական և վարչական համակարգ, որը կպաշտպանի անձանց ման միջամտություններից, այդ թվում? աղմուկի վնասակար ազդեցությունից:

Եզրակացություն և առաջարկություններ

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի վերլուծությունը ցույց է տալիս, որ աղմուկը կարող է դիտարկվել որպես Կոնվենցիայի 8-րդ հոդվածով պաշտպանվող անձնական կյանքի և բնակարանի հարգման իրավունքի նկատմամբ միջամտություն, եթե այն էականորեն խաթարում է կյանքի բնական պայմանները կամ բնակարանի բնական օգտագործումը: Դատարանի իրավաբանությունը հաստատում է, որ մնան միջամտության հաստատման համար պարտադիր չէ ապացուցել ծանր առողջական վնաս. բավարար է, որ աղմուկի ազդեցությունը հանգեցնի կյանքի որակի գզալի վատթարացման:

Այս մոտեցումը ձևավորվել է մի շարք գործերի հիման վրա, մասնավորապես՝ *Moreno Gómez v. Spain* (զանգաստ թիվ 4143/02, վճիռ՝ 16 նոյեմբերի 2004 թ.) և *Fadeyeva v. Russia* (զանգաստ թիվ 55723/00 [13], վճիռ՝ 9 հունիսի 2005 թ.), որոնցում դատարանը հաստատեց, որ շրջակա միջավայրի վնասակար ազդեցությունները, այդ թվում՝ աղմուկը, կարող են խաթարել անձնական կյանքի իրականացումը: Միաժամանակ *Greenpeace Nordic and Others v. Norway* (զանգաստ թիվ 34068/21 [14], որոշում՝ 20 հունիսի 2023 թ.) գործում դատարանը ընդգծեց, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը ներառում է նաև ընթացակարգային բաղադրիչ՝ պահանջելով պետությունից կանխարգելիչ միջոցների և ազդեցության գնահատման արդյունավետ մեխանիզմների ապահովում:

Նախադեպային իրավունքի համադրական վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել աղմուկի իրավական գնահատման հիմնական չափանիշները: Դրանց թվում են աղմուկի ինտենսիվությունն ու տևողությունը, բնակարանի բնական օգտագործման խաթարումը, առողջական կամ հոգե-

բանական ազդեցությունը, ինչպես նաև պետության կողմից արդյունավետ կարգավորման և վերահսկողության ապահովումը: Բացի այդ, դատարանը կարևորում է նաև ընթացակարգային երաշխիքների առկայությունը՝ գիտականորեն հիմնավորված ազդեցության գնահատումը, հանրային մասնակցության ապահովումը և որոշումների ընդունման գործընթացի թափանցիկությունը:

Այսպիսով, ժամանակակից իրավական մոտեցման մեջ աղմուկի սահմանափակումը դիտարկվում է որպես պետության դրական պարտավորությունների համալիր համակարգ: Այդ համակարգը ներառում է նորմատիվ կարգավորում, վերահսկողական մեխանիզմներ և կանխարգելիչ ընթացակարգային երաշխիքներ: Եթե այս տարրերից որևէ մեկը բացակայում է կամ չի գործում արդյունավետ կերպով, ապա աղմուկի շարունակական ազդեցությունը կարող է դիտարկվել որպես անձնական կյանքի նկատմամբ միջամտություն և հանգեցնել Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտման:

Առաջարկություններ

Հոդվածում իրականացված իրավական և տեսական վերլուծության հիման վրա հնարավոր է ձևակերպել մի շարք գիտական և գործնական առաջարկություններ, որոնք ուղղված են աղմուկի ազդեցության արդյունավետ կարգավորմանը և մարդու իրավունքների պաշտպանության ամրապնդմանը:

1. **Օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ:** Առաջին հերթին անհրաժեշտ է կատարել աղմուկի կարգավորման օրենսդրական հստակեցում: Օրենսդրությամբ նպատակահարմար է սահմանել աղմուկի ազդեցության գնահատման հստակ չափանիշներ՝ դրանք կապելով մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափորոշիչների հետ: Սա հնարավորություն կտա աղմուկի խնդիրը դիտարկել ոչ միայն որպես տեխնիկական կամ սանիտարական հարց, այլ նաև որպես անձնական կյանքի պաշտպանության իրավական խնդիր:

Միաժամանակ անհրաժեշտ է զարգացնել կանխարգելիչ կարգավորման մեխանիզմները: Քաղաքաշինական նախագծերի, արդյունաբերական գործունեության և գիշերային ժամերին իրականացվող տնտեսական գործունեության դեպքում պետք է պարտադիր իրականացվի շրջակա միջավայրի ազդեցության գնահատում՝ ներառելով նաև աղմուկի հնարավոր ազդեցության վերլուծությունը:

Կարևոր է նաև հանրային մասնակցության և թափանցիկության մեխանիզմների ամրապնդումը: Աղմուկ առաջացնող ծրագրերի կամ վարչական որոշումների ընդունումից առաջ պետք է իրականացվեն հանրային քննարկումներ, իսկ որոշումներ-

www.aradaradutyjournal.com

րի հիմքում պետք է դրվեն գիտական տվյալները և փորձագիտական գնահատումները:

2. Դատական պաշտպանության արդյունավետության բարձրացում

Դատարան դիմելու իրավական շահագրգռվածության պահանջների հստակեցման առաջարկ:

Ադմուկի ազդեցության դեպքերում նպատակահարմար է վերանայել դատարան դիմելու իրավական շահագրգռվածության չափանիշները՝ ապահովելու համար դատական պաշտպանության առավել արդյունավետ և կանխարգելիչ մեխանիզմներ: Գործող պրակտիկայում հաճախ պահանջվում է ներկայացնել առողջական վնասի կամ կյանքի պայմանների խաթարման արդեն իսկ ձևավորված և փաստաթղթավորված արդյունքները, ինչը կարող է սահմանափակել անձանց հնարավորությունը ժամանակին դիմելու դատարան և կանխելու միջավայրային վնասակար ազդեցությունների խորացումը:

Այս կապակցությամբ նպատակահարմար է օրենսդրորեն կամ դատական մեկնաբանության միջոցով ամրագրել, որ ադմուկի հետ կապված վեճերում դատարան դիմելու իրավական շահագրգռվածությունը կարող է հիմնավորվել ոչ միայն արդեն առաջացած առողջական վնասի ապացույցներով, այլ նաև այնպիսի փաստական հանգամանքներով, որոնք վկայում են տվյալ պահին բարձր ճայնի կամ ադմուկի իրական և անմիջական ազդեցության մասին անձի առողջության, հանգստի կամ բնակարանի բնական օգտագործման վրա:

Նման մոտեցումը թույլ կտա ապահովել կանխարգելիչ դատական պաշտպանություն և կնպաստի այն բանին, որ անձինք կարողանան պաշտպանել իրենց իրավունքները դեռ այն փուլում, երբ միջամտությունը ստեղծում է իրական և հիմնավորված վտանգ, սակայն դեռ չի հանգեցրել ծանր կամ անշրջելի հետևանքների: Միաժամանակ դատարանները պետք է առաջնորդվեն մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներով, մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածի մեկնաբանությամբ, համաձայն որի անձնական կյանքի և բնակարանի հարգման իրավունքը ներառում է նաև այնպիսի միջավայրում ապրելու հնարավորությունը, որը գերծ է կյանքի բնական պայմանները էականորեն խաթարող ադմուկային ազդեցություններից:

Այսպիսի կարգավորումը կհամապատասխանի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի տրամաբանությանը, որը շրջակա միջավայրի ազդեցությունների գնահատման դեպքում կարևորում է ոչ միայն արդեն առաջացած վնասը, այլ նաև կյանքի որակի էական վատթարացման և նման վնասի առաջաց-

ման իրական վտանգի առկայությունը:

Ապացուցման բեռի բաշխման հստակեցում:

Նպատակահարմար է ադմուկին վերաբերող գործերով հստակեցնել ապացուցման բեռի բաշխման կանոնները՝ սահմանելով, որ եթե անձը ներկայացնում է ադմուկի իրական ազդեցությունը հաստատող նախնական փաստական տվյալներ, ապա ադմուկի թույլատրելի մակարդակների պահպանման ապացուցման պարտականությունը պետք է դրվի գործունեություն իրականացնող անձի կամ համապատասխան պետական մարմնի վրա:

Անկախ փորձագիտական գնահատման մեխանիզմ:

Ադմուկի վերաբերյալ դատական վեճերում նպատակահարմար է նախատեսել դատարանի կողմից անկախ փորձագիտական գնահատման նշանակման հնարավորություն՝ հատկապես այն դեպքերում, երբ կողմերի ներկայացրած տվյալները հակասական են: Սա կնպաստի ադմուկի մակարդակի և դրա ազդեցության օբյեկտիվ գնահատմանը:

¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, 2015 թ., փոփոխություններով:

² Տե՛ս, Եվրոպական դատարանի կողմից կայացված գործեր՝ *Լոպես Օստրա ընդդեմ Իսպանիայի* (Lopez Ostra v. Spain, Application no. 16798/90, Judgment of 9 December 1994), *Ֆադեյևա ընդդեմ Ռուսաստանի* (Fadeyeva v. Russia, Application no. 55723/00, Judgment of 9 June 2005) և *Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի* (Moreno Gómez v. Spain, Application no. 4143/02, Judgment of 16 November 2004):

³ Տե՛ս, Հարությունյան Գ., Սահմանադրական իրավունքի հիմունքներ, Երևան, 2019:

⁴ Տե՛ս, Շելթոն Գ., Մարդու իրավունքները և շրջակա միջավայրը (Human Rights and the Environment), Cambridge University Press, 2002:

⁵ Տե՛ս, «Շրջակա միջավայրը և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան» (Environment and the European Convention on Human Rights, Factsheet, 2024)

⁶ Տե՛ս, Ռիոյի հռչակագիր շրջակա միջավայրի և զարգացման մասին (Rio Declaration on Environment and Development), 1992, սկզբունք 15 (Principle 15):

⁷ Տե՛ս, Մոուրբեյ Ա., Պոզիտիվ պարտավորությունների զարգացումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի շրջանակում (The Development of Positive Obligations under the European Convention on Human Rights), Hart Publishing, 2004:

⁸ Հաթթոն և այլք ընդդեմ Միացյալ Թագավորության (Hatton and Others v. the United Kingdom), դիմում թիվ 36022/97, Մեծ պալատի վճիռ՝ 8 հուլիսի 2003 թ., §96:

⁹ Տե՛ս, Եվրոպական դատարանի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույց (Guide on Article 8 of the Convention), 2023:

¹⁰ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 79-Ն հրաման «ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու մասին»:

¹¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2002 թվականի մարտի 6-ի N 138 հրաման «N 2-III- սանիտարական նորմերը հաստատելու մասին»

¹² Տե՛ս, Բասներ Մ., Բաբիշ Վ., Գեյվիս Ա., Բրինկ Մ., Բլարկ Է., Յանսեն Մ., Ստանսֆելդ Ս. «Աղմուկի լսողական և ոչ լսողական ազդեցությունները առողջության վրա» (Auditory and Non-Auditory Effects of Noise on Health), *The Lancet*, հատոր (Vol.) 383, համար (No.) 9925, 2014, էջեր (pp.) 1325–1332:

¹³ Տե՛ս, Ստանսֆելդ Ս., Մեթսոն Մ. «Աղմուկային աղտոտում. առողջության վրա ոչ լսողական ազդեցությունները» (Noise Pollution: Non-Auditory Effects on Health), *British Medical Bulletin*, հատոր (Vol.) 68, 2003, էջեր (pp.) 243–257:

¹⁴ Տե՛ս, Բաբիշ Վ. «Աղմուկի ազդեցությունը սրտանոթային համակարգի վրա» (Cardiovascular Effects of Noise), *Noise and Health*, հատոր (Vol.) 13, համար (No.) 52, 2011, էջեր (pp.) 201–204:

¹⁵ Տե՛ս, Գոյնս Լ., Հազլեր Լ. «Աղմուկային աղտոտում՝ որպես ժամանակակից համաճարակ» (Noise Pollution: A Modern Plague), *Southern Medical Journal*, հատոր (Vol.) 100, համար (No.) 3, 2007, էջեր (pp.) 287–294:

¹⁶ Տե՛ս, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (World Health Organization), «Շրջակա միջավայրի աղմուկի ուղեցույցներ Եվրոպական տարածաշրջանի համար» (Environmental Noise Guidelines for the European Region), Կոպենհագեն, 2018:

¹⁷ Տե՛ս, Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողովի (UNECE), Հայաստանի շրջակա միջավայրի գործունեության գնահատում (Environmental Performance Review) (Environmental Performance Review of Armenia), համապատասխան հրատարակություն:

¹⁸ Տե՛ս, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (WHO), Հայաստանի առողջապահական համակարգի արդյունավետության գնահատում (Health System Performance Assessment: Armenia, տեխնիկական զեկույց), վերջին հասանելի հրատարակություն:

¹⁹ Տե՛ս, Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (WHO), Եվրոպական տարածաշրջանի համար շրջակա միջավայրի աղմուկի ուղեցույցներ (Environmental Noise Guidelines for the European Region), 2018:

²⁰ Տե՛ս, Մոուրբեյ Ա., Պոզիտիվ պարտավորությունների զարգացումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի շրջանակում (The Development of Positive Obligations under the European Convention on Human Rights), Hart Publishing, 2004:

²¹ Տե՛ս, Եվրոպական դատարանի, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույց (Guide on Article 8 of the Convention), 2023:

²² Տե՛ս, Նիմից ընդդեմ Գերմանիայի (Niemietz v. Germany), դիմում թիվ 13710/88, վճիռ՝ 16 դեկտեմբերի 1992 թ., §29:

²³ Տե՛ս, Եվրոպական շրջակա միջավայրի գործակալության (EEA), Աղմուկը Եվրոպայում – 2020 թվականի զեկույց (Noise in Europe – 2020 Report), 2020:

²⁴ Տե՛ս, Եվրոպական դատարանի գործերը՝ *Լոպես Օստրա ընդդեմ Իսպանիայի* (López Ostra v. Spain), դիմում թիվ 16798/90, վճիռ՝ 9 դեկտեմբերի 1994 թ., §51, և *Ֆադեյևա ընդդեմ Ռուսաստանի* (Fadeyeva v. Russia), դիմում թիվ 55723/00, վճիռ՝ 9 հունիսի 2005 թ., §69:

²⁵ Տե՛ս, Եվրոպական դատարանի գործը՝ *Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի* (Moreno Gómez v. Spain), դիմում թիվ 4143/02, վճիռ՝ 16 նոյեմբերի 2004 թ., §§53–55:

- ²⁶ Տե՛ս, Եվրոպական դատարանի գործը՝ Հաթթոն և ուրիշներ ընդդեմ Միացյալ Թագավորության (Hatton and Others v. the United Kingdom), դիմում թիվ 36022/97, վճիռ՝ 8 հուլիսի 2003 թ., §96:
- ²⁷ Տե՛ս, Եվրոպական դատարանի գործերը՝ Լոպես Օստրա ընդդեմ Իսպանիայի (López Ostra v. Spain), դիմում թիվ 16798/90, վճիռ՝ 9 դեկտեմբերի 1994 թ., և Ֆադեյեա ընդդեմ Ռուսաստանի (Fadeyeva v. Russia), դիմում թիվ 55723/00, վճիռ՝ 9 հունիսի 2005 թ.:
- ²⁸ Տե՛ս, Եվրոպական դատարանի գործը՝ Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain), դիմում թիվ 4143/02, վճիռ՝ 16 նոյեմբերի 2004 թ.:
- ²⁹ Տե՛ս, Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույց (Guide on Article 8 of the Convention), 2023:
- ³⁰ Տե՛ս, Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain), 2004:
- ³¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 79-Ն հրաման, որով հաստատվել են ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը:
- ³² Տե՛ս, Եվրոպական դատարանի (European Court of Human Rights), «Կլիմայի փոփոխություն» տեղեկագիր (Climate Change. Factsheet), թարմացված՝ 2024:
- ³³ Տե՛ս, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա (European Convention on Human Rights), 1950:
- ³⁴ Տե՛ս, Եվրոպական դատարանի գործը՝ Հաթթոն և ուրիշներ ընդդեմ Միացյալ Թագավորության (Hatton and Others v. the United Kingdom), դիմում թիվ 36022/97, վճիռ՝ 8 հուլիսի 2003 թ.:
- ³⁵ Տե՛ս, Եվրոպական դատարանի գործը՝ Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain), դիմում թիվ 4143/02, վճիռ՝ 16 նոյեմբերի 2004 թ.:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Հայաստանի Հանրապետության օրենսդրություն

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2014 թվականի մարտի 17-ի N 79-Ն հրաման՝ «ՀՀՇՆ 22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմերը հաստատելու մասին»:
3. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2002 թվականի մարտի 6-ի N 138 հրաման՝ «Սանիտարական նորմերը հաստատելու մասին»:

Միջազգային իրավական փաստաթղթեր

4. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիա, 1950:
5. ՄԱԿ-ի Ռիոյի հռչակագիր շրջակա միջավայրի և զարգացման մասին 1992:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունք (Եվրոպական դատարանի գործեր)

6. Լոպես Օստրա ընդդեմ Իսպանիայի (López Ostra v. Spain), դիմում թիվ 16798/90, վճիռ՝ 9 դեկտեմբերի 1994 թ.
7. Ֆադեյեա ընդդեմ Ռուսաստանի (Fadeyeva v. Russia), դիմում թիվ 55723/00, վճիռ՝ 9 հունիսի 2005 թ.
8. Մորենո Գոմես ընդդեմ Իսպանիայի (Moreno Gómez v. Spain), դիմում թիվ 4143/02, վճիռ՝ 16 նոյեմբերի 2004 թ.
9. Հաթթոն և ուրիշներ ընդդեմ Միացյալ Թագավորության (Hatton and Others v. the United Kingdom), դիմում թիվ 36022/97, վճիռ՝ 8 հուլիսի 2003 թ.
10. Գրինփիս Նորդիկը և այլք ընդդեմ Նորվեգիայի (Greenpeace Nordic and Others v. Norway), դիմում թիվ 34068/21, որոշում՝ 20 հունիսի 2023 թ.

Եվրոպական դատարանի ուղեցույցներ և փաստաթղթեր

11. Մարդու իրավունքների եվրոպական դատարան (European Court of Human Rights), «Կոնվենցիայի 8-րդ հոդվածի վերաբերյալ ուղեցույց» (Guide on Article 8 of the Convention), 2023:
12. Մարդու իրավունքների եվրոպական դատարան (European Court of Human Rights), «Շրջակա միջավայրը և Եվրոպական կոնվենցիան» (Environment and the European Convention on Human Rights), տեղեկագիր 2024:

Միջազգային կազմակերպությունների զեկույցներ

13. Առողջապահության համաշխարհային կազմակերպություն (World Health Organization, WHO), «Եվրոպական տարածաշրջանի համար աղմուկի վերաբերյալ ուղեցույցներ» (Environmental Noise Guidelines for the European Region), 2018:
14. Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով (United Nations Economic Commission for Europe, UNECE), «Հայաստանի կամավոր ազգային պարտավորություններ», 2020 թ. (կազմման/ներկայացման ամսաթիվը՝ հուլիս 2020):
15. Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպական տնտեսական հանձնաժողով (United Nations Economic Commission for Europe, UNECE), «Խելացի և կայուն քաղաքներ», Գորիս քաղաքի քաղաքային պրոֆիլ (Goris Smart Sustainable City Profile), 2022 թ. (կազմման/հրատարակման ամսաթիվը՝ դեկտեմբեր 2022):

www.aradaradatumjournal.com

Գիտական և տեսական գրականություն

- 17. Basner M., Babisch W., Davis A., Brink M., Clark C., Janssen S., Stansfeld S., «Աղմուկի լսողական և ոչ լսողական ազդեցությունները մարդու առողջության վրա» (Auditory and non-auditory effects of noise on health), The Lancet, 2014:
- 18. Շրջակա միջավայրի և մարդու իրավունքների փոխկապակցվածության վերաբերյալ ժամանակակից իրավաբանական դոկտրինալ ուսումնասիրություններ:

Карен Туманян

Член Высшего судебного совета

РЕЗЮМЕ

Шум как вмешательство в частную жизнь

Статья посвящена правовой оценке воздействия шума в рамках статьи 8 Европейской конвенции о защите прав человека и основных свобод (далее — Конвенция), а также статей 25 и 31 Конституции Республики Армения. В статье исследуется прецедентное право Европейского суда по правам человека (далее — Европейский суд), в частности дела «Морено Гомес против Испании» (Moreno Gómez v. Spain, жалоба № 4143/02, решение от 16 ноября 2004 г.) и «Фадеева против России» (Fadeyeva v. Russia, жалоба № 55723/00, решение от 9 июня 2005 г.).

В результате анализа обосновывается, что в соответствии с современным европейским правовым подходом шум больше не рассматривается исключительно как бытовая или техническая проблема, а может оцениваться как вмешательство в частную жизнь, право на беспрепятственное пользование жилищем и качество жизни.

В статье показано, что для такой оценки решающее значение имеют интенсивность и продолжительность шума, нарушение нормального использования жилища, наличие вреда для здоровья или психологического состояния, наличие или отсутствие эффективной реакции со стороны государства, а также обеспечение процессуальных гарантий. Делается вывод, что ограничение шума является составной частью позитивных обязательств государства и выступает как правовой механизм защиты частной жизни, психического и физического здоровья, достоинства и автономии личности.

Ключевые слова: шум, частная жизнь, неприкосновенность жилища, семейная жизнь, качество жизни, статья 8 Конвенции, позитивные обязательства, Европейский суд по правам человека, прецедентное право, окружающая среда, защита здоровья, правовое регулирование шума, права человека.

Karen Tumanyan

Member of the Supreme Judicial Council

SUMMARY

Noise as an interference with private life

This article addresses the legal assessment of noise impact within the framework of Article 8 of the European Convention on Human Rights (hereinafter - the Convention), as well as Articles 25 and 31 of the Constitution of the Republic of Armenia. The article examines the case-law of the European Court of Human Rights (hereinafter - the European Court), in particular the cases of Moreno Gómez v. Spain (Application no. 4143/02, judgment of 16 November 2004) and Fadeyeva v. Russia (Application no. 55723/00, judgment of 9 June 2005).

The analysis demonstrates that, according to the modern European legal approach, noise is no longer regarded solely as a domestic or technical issue, but may be assessed as an interference with private life, the right to peaceful enjoyment of one's home, and quality of life.

The article shows that the decisive factors for such an assessment include the intensity and duration of noise, the disturbance of the normal use of the home, the existence of health or psychological effects, the presence or absence of an effective state response, as well as the provision of procedural safeguards. It is concluded that the limitation of noise constitutes a component of the State's positive obligations and functions as a legal mechanism for the protection of private life, physical and mental health, human dignity, and individual autonomy.

Key words: noise, private life, inviolability of the home, family life, quality of life, Article 8 of the Convention, positive obligations, European Court of Human Rights, case-law, environment, health protection, noise regulation, human rights.

Բնագիրը ներկայացվել է 07.05.2026թ.

Ընդունվել է տպագրության 27.05.26թ.

ԿԱՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Բարձրագույն դատական խորհրդի անդամ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲԱՂԱԴՐԻՉ**

Սույն հոդվածը նվիրված է շրջակա միջավայրի պահպանության՝ որպես պետական անվտանգության կառուցվածքային բաղադրիչի սահմանադրաիրավական և տեսական վերլուծությանը: Աշխատանքում դիտարկվում են ազգային անվտանգության հայեցակարգային վերահիմաստավորումը Էկոլոգիական մարտահրավերների պայմաններում, բնապահպանական անվտանգության միջազգային իրավական չափանիշների ձևավորումը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության ինտեգրումը ազգային անվտանգության համակարգում: Հոդվածով հիմնավորվում է այն դիրքորոշումը, համաձայն որի Էկոլոգիական անվտանգությունը ժամանակակից սահմանադրական պետության կայունության և ինքնիշխանության իրացման անհրաժեշտ նախապայման է, ընդ որում շրջակա միջավայրի ազգային անվտանգության բաղադրիչի արդյունավետ ապահովումը պահանջում է նաև ինստիտուցիոնալ երաշխիքներ, մասնավորապես՝ անկախ մասնագիտացված մարմնի (շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհրդի) միջոցով:

Հիմնարարներ - շրջակա միջավայրի պահպանություն, պետական անվտանգություն, Էկոլոգիական անվտանգություն, ազգային անվտանգության հայեցակարգեր, սահմանադրական անվտանգություն, կայուն զարգացում, միջսերնդային պատասխանատվություն, բնապահպանական ռիսկեր:

Ներածություն

Պետական անվտանգության ավանդական հայեցակարգը, որը պատմականորեն կենտրոնացած էր ռազմական, քաղաքական և տարածքային սպառնալիքների վրա, XX դարի վերջից և XXI դարի սկզբից սկսած՝ ենթարկվել է հիմնարար վերահիմաստավորման: Ազգային անվտանգության ընկալումը դուրս է եկել իշխանության ուղղահայաց և ռազմավարական ռիսկերի նեղ շրջանակից՝ ներառելով տնտեսական, տեղեկատվական, պարենային, էներգետիկ և, ոչ պակաս կարևոր, Էկոլոգիական անվտանգության բաղադրիչը^{1,2,3}: Այս գործընթացն արտացոլում է ժամանակակից աշխարհի իրողությունը, որտեղ պետությունների կենսունակությանը սպառնացող վտանգները այլևս չեն սահմանափակվում սահմանների պաշտպանությամբ կամ ռազմական հակամարտություններով:

Շրջակա միջավայրի դեգրադացիան, կլիմայի գլոբալ փոփոխությունը, բնական ռեսուրսների սպառումը և տեխնածին աղետների աճող հավանականությունը ստեղծում են այնպիսի համակարգային ռիսկեր, որոնք ուղղակիորեն սպառում են պետության տարածքային ամբողջականությունը, քաղաքացիների կյանքին ու առողջությանը, տնտեսական կայունությանը և սոցիալական համահունչությանը^{4,5}: Այս իրողությունը շրջակա միջավայրի պահպանությունը վերածում է ոչ թե սոսկ ոլորտային քաղաքականության, այլ ազգային անվտանգության առանցքային բաղադրիչի, որի անտեսումը կարող է հանգեցնել անդառնալի հետևանքների:

Սույն հոդվածի նպատակն է սահմանադրաիրավական և համեմատական իրավաբանության

մեթոդաբանությամբ հիմնավորել շրջակա միջավայրի պահպանության ինստիտուցիոնալ և հայեցակարգային ինտեգրումը պետական անվտանգության համակարգում՝ հաշվի առնելով միջազգային իրավական չափանիշները, առաջատար պետությունների փորձը և Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի առանձնահատկությունները^{6,7}:

Ազգային անվտանգության հայեցակարգի Էկոլոգիական բաղադրիչը

Ազգային անվտանգության դասական հայեցակարգը, որը ձևավորվել էր Վեստֆալյան (ինքնիշխան պետությունների վրա հիմնված) համակարգի շրջանակներում, կենտրոնանում էր պետության ինքնիշխանության և տարածքային ամբողջականության պաշտպանության վրա: Այս մոտեցումը, որը գերակայում էր մինչև XX դարի վերջը, անվտանգությունը նույնացնում էր ռազմաքաղաքական հարթության հետ՝ ռազմական հզորությունը և դաշնակցային հարաբերությունները դիտարկելով որպես անվտանգության ապահովման հիմնական գործիքներ: Սակայն սառը պատերազմի ավարտից հետո միջազգային իրավական և քաղաքագիտական դոկտրինում սկսվեց ձևավորվել «մարդկային անվտանգության» (human security) հայեցակարգը, որը ընդլայնեց անվտանգության առարկայական շրջանակը և կենտրոնը պետությունից տեղափոխեց անհատի ու հասարակության վրա^{8,9}:

Մարդկային անվտանգության հայեցակարգը, որն առաջին անգամ համակարգված ձևակերպվեց ՄԱԿ-ի զարգացման ծրագրի 1994 թվականի գեկույցում, հետագայում ստացել է էական զարգա-

www.aradaradutyjournal.com

www.ardaradutyjournal.com

ցում և ինստիտուցիոնալ ամրապնդում: Մասնավորապես, Մարդկային անվտանգության հանձնաժողովի զեկույցը «Մարդկային անվտանգությունն այժմ» (Human Security Now, 2003), որը պատրաստվել է Ամարտյա Սենի (Amartya Sen) և Սադակո Օգատայի (Sadako Ogata) նախագահությամբ, ընդգծում է, որ անվտանգությունը պետք է դիտարկվի ոչ միայն որպես պետության պաշտպանություն, այլ որպես մարդու հիմնարար ազատությունների և կենսական շահերի համակողմանի պաշտպանություն՝ ներառելով տնտեսական, սոցիալական և շրջակա միջավայրի ռիսկերը: Նույն տրամաբանությունը զարգացվել է ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անանի (Kofi Annan) «Ավելի լայն ազատության մեջ» (In Larger Freedom, 2005) զեկույցում, որտեղ մարդկային անվտանգությունը ներկայացվում է որպես զարգացման, անվտանգության և մարդու իրավունքների փոխկապակցված համակարգ: Վերջապես, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2012 թվականի 66/290 բանաձևով (UN General Assembly Resolution 66/290) տվեց մարդկային անվտանգության պաշտոնական սահմանումը՝ այն բնութագրելով որպես մարդու ազատության և արժանապատվության պաշտպանություն սպառնալիքներից՝ ընդգծելով դրա համապարփակ և միջուրուտային բնույթը^{10,11,12}:

Այս զարգացումները վկայում են, որ ժամանակակից միջազգային իրավական և քաղաքական դիսկուրսում անվտանգությունը այլևս չի սահմանափակվում ռազմական չափումով, այլ ներառում է նաև շրջակա միջավայրի պահպանության հետ կապված ռիսկերը՝ որպես մարդու և պետության կայունության հիմնարար պայման^{13,14}:

Էկոլոգիական անվտանգության հայեցակարգային ձևավորման գործում առանցքային դեր ունեցավ նաև Բրունո Քլանդանի հանձնաժողովի 1987 թվականի «Մեր ընդհանուր ապագան» զեկույցը, որում կայուն զարգացման սկզբունքը ներկայացվեց որպես ներկա սերունդների կարիքների բավարարման եղանակ՝ առանց վտանգելու ապագա սերունդների կարողությունը բավարարելու սեփական կարիքները¹⁵: Այս սկզբունքը, ինտեգրելով տնտեսական զարգացման, սոցիալական արդարության և շրջակա միջավայրի պահպանության բաղադրիչները, ձևավորեց այն հայեցակարգային հիմքը, որի վրա հետագայում կառուցվեց ազգային անվտանգության բնապահպանական չափումը^{16,17}:

Ազգային անվտանգության տեսակետից շրջակա միջավայրը ստանում է երկակի բնույթ: Մի կողմից, այն հանդես է գալիս որպես ինքնուրույն օբյեկտ՝ շրջակա միջավայրի վիճակի պահպանման և վատթարացման կանխարգելման իմաստով: Մյուս կողմից՝ այն հանդիսանում է այլ անվտանգության չափումների ապահովման անհրաժեշտ պայման: Բնական ռեսուրսների սպառումը կամ

անհավասար հասանելիությունը կարող է հանգեցնել ռազմական հակամարտությունների, իսկ էկոլոգիական աղետները՝ մեծամասշտաբ միգրացիոն շարժումների և սոցիալական անկայունության^{18,19}: Այս փոխկապակցվածությունը ցույց է տալիս, որ էկոլոգիական անվտանգությունը անջատ ոլորտ չէ, այլ պետական անվտանգության ամբողջ համակարգի ողնաշարային տարր:

Կլիմայի փոփոխության վերաբերյալ ժամանակակից գիտական դիսկուրսը հիմնվում է Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական փորձագիտական խմբի (Intergovernmental Panel on Climate Change, IPCC) զեկույցների վրա, որոնք ներկայացնում են գլոբալ գիտական կոնսենսուսը տվյալ ոլորտում: IPCC-ի վեցերորդ գնահատման զեկույցը (Sixth Assessment Report, 2021-2023) հաստատում է, որ կլիմայի փոփոխությունը ունի արդեն իսկ դրսևորվող և արագացող ազդեցություններ բնական համակարգերի, մարդկային առողջության, տնտեսական կայունության և սոցիալական ինստիտուտների վրա՝ ձևավորելով բազմաշերտ և համակարգային ռիսկեր: Այս պայմաններում կլիմայական փոփոխության հիմնախնդրի իրավական և սահմանադրաիրավական վերլուծությունը չի կարող համարվել լիարժեք և գիտականորեն հիմնավորված առանց IPCC-ի եզրակացությունների հաշվառման, քանի որ վերջիններս հանդիսանում են ոչ միայն գիտական փաստարկման, այլև պետական քաղաքականությունների և միջազգային իրավական պարտավորությունների ձևավորման առաջնային հիմք²⁰:

Հետևաբար, կլիմայական ռիսկերի գնահատումը և դրանց ազդեցության իրավական արժևորումը պահանջում են հենվել IPCC-ի կողմից ներկայացված գիտական տվյալների վրա՝ ապահովելով ինչպես վերլուծության հավաստիությունը, այնպես էլ դրա համապատասխանությունը միջազգային ընդունված չափանիշներին:

Շրջակա միջավայրի պահպանության՝ որպես պետական անվտանգության բաղադրիչի հիմնավորման համար անհրաժեշտ է վերլուծել, թե ինչպես են ժամանակակից բնապահպանական ռիսկերը ձեռք բերում սպառնալիքային բնույթ: Տեսական գրականության մեջ առանձնացվում են էկոլոգիական սպառնալիքների մի քանի կատեգորիաներ, որոնցից յուրաքանչյուրն ունի անվտանգության յուրահատուկ հետևանքներ²¹:

Առաջին կատեգորիան ներառում է կլիմայի գլոբալ փոփոխությունից բխող սպառնալիքները, որոնք XXI դարում աստիճանաբար ստացել են պետությունների անվտանգության ռազմավարություններում ընդգրկված բնույթ: Կլիմայի փոփոխության և անվտանգության փոխկապակցվածության ինստիտուցիոնալ ճանաչման կարևոր նախադեպ է հանդիսանում այն հանգամանքը, որ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

2007 թվականի ապրիլի 17-ին ՄԱԿ-ի Անվտանգության խորհուրդը 5663-րդ նիստում պաշտոնապես քննարկեց կլիմայի փոփոխության հնարավոր ազդեցությունները միջազգային խաղաղության և անվտանգության վրա՝ ընդգծելով, որ կլիմայական գործընթացները կարող են խորացնել ռեսուրսային սակավությունը, խթանել միգրացիոն հոսքերը և սրել սոցիալ-տնտեսական լարվածությունները: Թեև այդ քննարկումը չի հանգեցրել պարտադիր իրավական ուժ ունեցող որոշման ընդունման, այն հիմք է դրել կլիմայական ռիսկերի՝ որպես համակարգային անվտանգային սպառնալիքների ընկալմանը, ինչը հետագայում արտացոլվել է մի շարք պետությունների և միջազգային կազմակերպությունների քաղաքական փաստաթղթերում. մասնավորապես, Եվրամիությունը, ԱՄՆ-ը, Մեծ Բրիտանիան և այլ երկրներ կլիմայական ռիսկերը ներառել են իրենց ազգային անվտանգության ռազմավարությունների մեջ^{22,23}:

Կլիմայի փոփոխության հետ կապված ռիսկերը ներառում են ծայրահեղ եղանակային երևույթները, ծովի մակարդակի բարձրացումը, ջրային ռեսուրսների պակասը, գյուղատնտեսական արտադրողականության անկումը և, որպես հետևանք՝ պարենային անապահովությունը և զանգվածային տեղահանությունները^{24,25,26}:

Երկրորդ կատեգորիան վերաբերում է տեխնադին բնապահպանական աղետների սպառնալիքներին: Չեռնոբիլյան վթարը (1986)²⁷, Ֆուկուշիմայի ատոմակայանի աղետը (2011)²⁸, Բհուպալի քիմիական արտահոսքը (1984)²⁹ և այլ միջադեպերը ցույց տվեցին, որ արդյունաբերական գործունեության հետ կապված ռիսկերը կարող են խաթարել ոչ միայն կոնկրետ տարածքների էկոլոգիական վիճակը, այլ նաև ունենալ ազգային և միջազգային անվտանգության հետևանքներ: Տեխնադին աղետները վտանգի են ենթարկում մարդկանց կյանքը և առողջությունը, խարխալում տնտեսությունը, հանգեցնում են տարածքների երկարաժամկետ անօգտագործելիության և պահանջում հսկայական պետական ռեսուրսներ հետևանքների վերացման համար:

Երրորդ կատեգորիան կապված է ռեսուրսային սպառումի և դրա հետ կապված ռազմավարական մրցակցության հետ: Ջրի, հողի, անտառների և օգտակար հանածոների աճող պակասը ստեղծում է պայմաններ ոչ միայն ներպետական կոնֆլիկտների, այլև միջպետական լարվածության համար: Տեսական գրականության մեջ այս երևույթը բնորոշվում է որպես «ռեսուրսային կոնֆլիկտներ» (resource conflicts), որոնց դասական օրինակներն են ջրային ռեսուրսների շուրջ ձևավորված լարվածությունները Մերձավոր Արևելքում (օրինակ՝ Հորդանան գետի ավազան, Տիգրիս-Եփրատ համակարգ) և Կենտրոնական Ասիայում (Ամուդարյա և

Սիրդարյա գետերի օգտագործման շուրջ հակասություններ) (Homer-Dixon, 1999; Gleick, 1993; UNEP, 2016)^{30,31}:

Հայաստանի Հանրապետության համար, որը գտնվում է կլիմայական փոփոխությունների նկատմամբ խոցելի տարածաշրջանում և ունի սահմանափակ ջրային ռեսուրսներ, այս ռիսկերը ձեռք են բերում ռազմավարական նշանակություն՝ հատկապես ջրային անվտանգության և պարենային կայունության տեսանկյունից, ինչը հաստատվում է միջազգային կազմակերպությունների գնահատականներով, մասնավորապես՝ Համաշխարհային բանկի (World Bank, 2018) և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի (United Nations Development Programme, UNDP, 2020) համապատասխան գեկույցներում^{32,33,34,35,36}:

Չորրորդ կատեգորիան ներառում է կենսաբազմազանության կորստի և էկոհամակարգերի վատթարացման սպառնալիքները, որոնք, թեև հաճախ դիտվում են որպես ոչ անմիջական ռիսկեր, իրականում ունեն երկարաժամկետ և կուտակային ազդեցություն պետության կայունության վրա³⁷: Էկոհամակարգերի ծառայությունների կորուստը՝ փոշոտման, ջրի մաքրման, հողի բարելավման և այլ գործառնությունների նվազումը՝ ուղղակի ազդեցություն ունի գյուղատնտեսության արտադրողականության և սննդային անվտանգության վրա: Այս ռիսկերի անտեսումը երկարաժամկետ հեռանկարում կարող է հանգեցնել տնտեսական հիմքերի խարխալմանը, ինչը ազգային անվտանգության հիմնարար սպառնալիք է:

Շրջակա միջավայրի պահպանության միջազգային իրավական չափանիշները անվտանգության համատեքստում

Շրջակա միջավայրի պահպանության ինտեգրումը պետական անվտանգության համակարգում հիմնված է միջազգային իրավական չափանիշների լայն համալիրի վրա, որը ձևավորվել է վերջին կես դարի ընթացքում: Այս չափանիշների ձևավորման ելակետային փաստաթուղթ է համարվում ՄԱԿ-ի 1972 թվականի Ստոկհոլմյան հռչակագիրը մարդու շրջակա միջավայրի մասին, որը առաջին անգամ ճանաչեց շրջակա միջավայրը որպես միջազգային իրավունքի ինքնուրույն օբյեկտ: Հռչակագրի 1-ին սկզբունքը հռչակեց մարդու հիմնարար իրավունքն ազատության, հավասարության և բավարար կյանքի պայմանների՝ այնպիսի որակի միջավայրում, որը թույլ է տալիս արժանապատիվ գոյություն և բարեկեցություն³⁸:

1992 թվականի Ռիո դե Ժանեյրոյի համաժողովը և դրա արդյունքում ընդունված «Ռիոյի հռչակագիրը շրջակա միջավայրի և զարգացման մասին» ամրապնդեցին կայուն զարգացման սկզբունքը որպես միջազգային իրավունքի հիմնարար

www.aradaradatuynjournal.com

նորմ: Հռչակագրի 1-ին սկզբունքը սահմանում է, որ մարդիկ գտնվում են մտահոգությունների կենտրոնում և ունեն բնության հետ ներդաշնակ առողջ ու արտադրական կյանքի իրավունք: Այս փաստաթղթի 25-րդ սկզբունքը հատկապես նշանակալի է անվտանգության համատեքստում, քանի որ այն ուղղակիորեն ամրագրում է խաղաղության, զարգացման և շրջակա միջավայրի պահպանության փոխկապակցվածությունն ու անբաժանելիությունը³⁹:

Միջազգային իրավունքում էկոլոգիական անվտանգության համար առանձնահատուկ նշանակություն ունեն 1992 թվականի ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիան, 1997 թվականի Կիոտոյի արձանագրությունը և 2015 թվականի Փարիզյան համաձայնագիրը, որոնք ձևավորում են գլոբալ կլիմայական քաղաքականության իրավական հիմքը^{40,41,42}: Այս փաստաթղթերը կարևոր են ոչ միայն բնապահպանական, այլ նաև անվտանգության տեսանկյունից, քանի որ դրանք սահմանում են պետությունների պարտավորությունները՝ նվազեցնելու կլիմայական ռիսկերը, որոնք կարող են դառնալ ինչպես ազգային, այնպես էլ միջազգային անվտանգության սպառնալիք⁴³:

1998 թվականին ընդունված Օրիուսի կոնվենցիան «Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» ձևավորում է այն ընթացակարգային երաշխիքների համակարգը, առանց որոնց շրջակա միջավայրի պահպանությունը չի կարող արդյունավետորեն գործել որպես անվտանգության բաղադրիչ: Հայաստանի Հանրապետությունը, 2001 թվականին վավերացնելով Օրիուսի կոնվենցիան, ստանձնել է հանրային մասնակցության ապահովման, տեղեկատվության մատչելիության և իրավական պաշտպանության իրավունքի երաշխավորման միջազգային պարտավորություններ⁴⁴:

Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքը, թեև ուղղակիորեն չի օգտագործում «ազգային անվտանգության» եզրույթը, փաստացիորեն զարգացրել է այնպիսի մոտեցում, որի համաձայն շրջակա միջավայրի հետ կապված համակարգային ռիսկերը դիտարկվում են որպես պետության կողմից կառավարման և կանխարգելման ենթակա սպառնալիքներ: Հատկապես Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland գործով դատարանը հաստատեց, որ պետությունները պարտավոր են ապահովել արդյունավետ պաշտպանություն կլիմայական փոփոխության լուրջ ազդեցություններից, ինչը բնույթով համընկնում է ազգային անվտանգության⁴⁵ ապահովման դասական գործառնությունների հետ :

Եվրոպական միության իրավական համակարգում շրջակա միջավայրի պահպանության և անվտանգության ինտեգրումը դրսևորվել է «Եվրոպական կանաչ գործարքի» (European Green Deal, 2019) շրջանակներում, որը, սակայն, հանդիսանում է ավելի լայն նորմատիվ և ռազմավարական համակարգի միայն մեկ բաղադրիչ: Շրջակա միջավայրի պաշտպանության և անվտանգության փոխկապակցվածության իրավական հիմքերը ամրագրված են նաև Եվրոպական միության հիմնադիր պայմանագրերում և հիմնարար իրավական ակտերում. մասնավորապես, Եվրոպական միության մասին պայմանագրի 3-րդ հոդվածը (Treaty on European Union, Article 3) շրջակա միջավայրի բարձր մակարդակի պաշտպանությունը և դրա որակի բարելավումը սահմանում է որպես միության հիմնարար նպատակներից մեկը՝ այն ներառելով կայուն զարգացման սկզբունքի շրջանակում, իսկ Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիայի 37-րդ հոդվածը (Charter of Fundamental Rights of the European Union, Article 37) պարտադրում է ապահովել շրջակա միջավայրի պաշտպանության բարձր մակարդակ և դրա ինտեգրում միության քաղաքականություններում՝ այն կապելով մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության հետ^{46,47}:

Միաժամանակ, Եվրոպական միության ռազմավարական փաստաթղթերը, մասնավորապես՝ «Եվրոպական ռազմավարական կոմպասը» (EU Strategic Compass, 2022), կլիմայական և բնապահպանական ռիսկերը դիտարկում են որպես անվտանգային միջավայրի վրա ազդող գործոններ՝ ընդգծելով դրանց ազդեցությունը ռեսուրսային սակավության, հակամարտությունների և սոցիալ-տնտեսական անկայունության վրա⁴⁸:

Այս համակցված մոտեցումը ունի ուղղակի իրավաքաղաքական նշանակություն նաև Հայաստանի Հանրապետության համար, որը Եվրոպական միության հետ հարաբերությունները կարգավորում է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի՝ Comprehensive and Enhanced Partnership Agreement շրջանակներում: Սույն համաձայնագիրը նախատեսում է շրջակա միջավայրի ոլորտում իրավական մոտարկում (approximation of legislation) և կայուն զարգացման սկզբունքների ներդրում, ինչը ներառում է ոչ միայն ոլորտային բնապահպանական նորմերի ընդունում, այլև շրջակա միջավայրի պաշտպանության ինտեգրում տնտեսական, էներգետիկ և անվտանգային քաղաքականություններում: Հետևաբար, Եվրոպական միության իրավական մոդելը Հայաստանի համար հանդես է գալիս որպես պարտավորեցնող և ուղղորդիչ հիմք, որի շրջանակներում շրջակա միջավայրի պահպանությունը պետք է դիտարկվի ոչ միայն որպես առանձին ոլորտային քա-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դաքականություն, այլև որպես ազգային անվտանգության և ռազմավարական կառավարման համակարգի անբաժանելի բաղադրիչ^{49,50} :

Շրջակա միջավայրի պահպանության սահմանադրականացման համեմատական վերլուծությունը որպես անվտանգության երաշխիք

Ժամանակակից սահմանադրական զարգացումները ցույց են տալիս, որ շրջակա միջավայրի պահպանությունը դարձել է սահմանադրական կարգի կարևոր տարր: Սա նշանակում է, որ էկոլոգիական պաշտպանությունը կարևոր է նաև պետական անվտանգության և հասարակության բարօրության համար: Ուստի նոր սահմանադրությամբ այն պետք է ոչ թե պարզապես կրկին նշվի, այլ զարգացվի և ամրապնդվի՝ ինչպես ընդունված է զարգացած ժողովրդավարական պետությունների սահմանադրություններում, որպես արդեն ամրագրված արժեքի արդյունավետ երաշխիք^{51,52,53} :

Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքի 20a հոդվածը, որն ընդունվել է 1994 թվականին և փոփոխվել 2002 թվականին, ամրագրում է պետության պարտավորությունը պաշտպանելու բնական կենսամիջավայրը և կենդանիներին՝ նաև ապագա սերունդների նկատմամբ պատասխանատվության շրջանակում⁵⁴ :

Գերմանական Դաշնային Սահմանադրական դատարանի 2021 թվականի կլիմայի որոշումը այս սկզբունքին տվեց նոր իրավական բովանդակություն: Սահմանադրական դատարանն են դիմել մի շարք անհատներ (հիմնականում երիտասարդներ) և բնապահպանական կազմակերպություններ՝ վիճարկելով Գերմանիայի 2019 թ. «Կլիմայի պաշտպանության մասին օրենքը»:

Դիմումատուները պնդել են, որ օրենքի դրույթները հակասում են հիմնական օրենքով երաշխավորված կյանքի և առողջության պաշտպանության (հոդվ. 2) և ապագա սերունդների նկատմամբ պետական պատասխանատվության (հոդվ. 20a) պահանջներին, քանի որ սահմանում են արտանետումների կրճատման պարտավորություններ միայն մինչև 2030 թ.՝ թողնելով հետագա ժամանակահատվածը անորոշ և արդյունքում անհամաչափ բեռ փոխանցելով ապագա սերունդներին՝ ստեղծելով կլիմայական փոփոխություններից բխող իրական և աճող ռիսկեր նրանց իրավունքների համար:

Սահմանադրական դատարանը արձանագրեց, որ պետությունն ունի սահմանադրական պոզիտիվ պարտավորություն՝ պաշտպանելու հիմնարար իրավունքները նաև կլիմայական փոփոխություններից բխող երկարաժամկետ ռիսկերից՝ կիրառելով կանխարգելիչ մոտեցում: Դատարանը հատուկ ընդգծեց միջսերնդային արդարության սկզբունքը՝ նշելով, որ արտանետումների կրճատման բեռը չի կարող անհամաչափորեն տեղափոխվել

ապագա սերունդների վրա, քանի որ դա կարող է էականորեն սահմանափակել նրանց հիմնարար իրավունքների իրացումը: Դատարանը եզրակացրեց, որ օրենքը հակասահմանադրական է այնքանով, որքանով այն չի նախատեսում բավարար հստակ և կանխատեսելի կարգավորում 2030 թվականից հետո ընկած ժամանակահատվածի համար՝ վտանգելով հիմնարար իրավունքների արդյունավետ պաշտպանությունը:

Այս որոշումը կարևոր նշանակություն ունի էկոլոգիական անվտանգության սահմանադրականացման գործընթացում, քանի որ ցույց է տալիս, որ դատական վերահսկողությունը կարող է ապահովել բնապահպանական պարտավորությունների իրական կատարումը:

Ֆրանսիայի Հանրապետության 2005 թվականի Շրջակա միջավայրի սահմանադրական խարտիան, որը դարձավ սահմանադրական բլոկի մաս, ներառում է այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են կանխարգելման, նախազգուշության և աղտոտողի կողմից վճարման սկզբունքները: Ֆրանսիական Սահմանադրական խորհուրդը իր նախադեպային իրավունքում շրջակա միջավայրի պահպանությունը ճանաչել է որպես «մարդկության ընդհանուր ժառանգության» մաս, ինչը իրավաբանորեն ամրապնդում է այս արժեքի անվտանգության հարթություն:

Շվեյցարիայի Դաշնային Սահմանադրության 2-րդ հոդվածը, որը սահմանում է Դաշնության նպատակները, հստակ ներառում է բնական հիմքերի պահպանությունը որպես պետական անվտանգության ինստիտուցիոնալ նպատակներից մեկը՝ ազատության, բարեկեցության և երկրի անկախության հետ միասին: Այս ձևակերպումը բացահայտ ցույց է տալիս էկոլոգիական պաշտպանության և պետական անվտանգության սահմանադրափակական անբաժանելիությունը:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում Էկվադորի Հանրապետության 2008 թվականի Սահմանադրությունը, որն առաջին անգամ աշխարհում սահմանադրորեն ճանաչեց բնության իրավունքները: Այս էկոցենտրիկ մոտեցումը, որ բխում է բնիկ ժողովուրդների ավանդական աշխարհայացքից (Pachamama հասկացությունից), ամրագրում է, որ բնությունը չի կարող դիտվել բացառապես որպես մարդու համար ռեսուրս, այլ ունի ինքնուրույն իրավասություններ⁵⁵ : Այս մոդելը, չնայած որ ունի իրավակիրառական դժվարություններ, ներկայացնում է էկոլոգիական անվտանգության սահմանադրականացման ամենախիստ ձևերից մեկը:

Ներկայացված սահմանադրական մոդելների համադրական վերլուծությունը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի պահպանության սահմանադրականացման արդյունավետությունը կախված է

www.aradaradatuynjournal.com

www.ardaradutyjournal.com

ոչ միայն նորմատիվ ամրագրման ձևից, այլև դրա գործնական կիրառելիությունից և ինստիտուցիոնալ ապահովումից: Գերմանիայի մոդելը, որտեղ շրջակա միջավայրի պաշտպանությունը ամրագրված է որպես պետության օբյեկտիվ պարտականություն (Հիմնական օրենքի 20ա հոդված), առավելապես բնութագրվում է իր ինստիտուցիոնալ կայունությամբ և իրավական կանխատեսելիությամբ՝ ապահովելով քաղաքականությունների շարունակականություն և վարչական համակարգի համաչափ գործունեություն:

Սակայն այն ունի սահմանափակումներ՝ կապված անհատական սուբյեկտիվ իրավունքի բացակայության հետ, ինչը նվազեցնում է քաղաքացիների անմիջական դատական պաշտպանության հնարավորությունները: Հակառակ դրան՝ Էկվադորի մոդելը, որը ճանաչում է բնության իրավունքները, ստեղծում է առավել առաջադեմ և նորմատիվորեն համարձակ կառուցվածք, սակայն դրա արդյունավետությունը հաճախ կախված է դատական պրակտիկայի և ինստիտուցիոնալ կարողությունների մակարդակից, ինչը կարող է հանգեցնել կիրառման անկայունության: Ֆրանսիայի մոդելը գտնվում է միջանկյալ դիրքում՝ համադրելով սահմանադրական արժեքների մակարդակում շրջակա միջավայրի պաշտպանությունը և դատական վերահսկողության մեխանիզմները, մինչդեռ Շվեյցարիայի մոտեցումը առավելապես ինտեգրում է այն պետական նպատակների համակարգում՝ ապահովելով քաղաքական-ծրագրային հետևողականություն: Այս համատեքստում կարելի է եզրակացնել, որ Հայաստանի Հանրապետության համար առավել նպատակահարմար է համակցված մոդելը, որը միավորում է գերմանական ինստիտուցիոնալ կայունությունը և ֆրանսիական-Էկվադորյան մոդելների իրավակենտրոն բաղադրիչները՝ միաժամանակ ապահովելով ինչպես պետության հստակ դրական պարտավորությունների ամրագրում, այնպես էլ շրջակա միջավայրի պաշտպանության՝ որպես անմիջական կիրառելի սուբյեկտիվ իրավունքի ճանաչում: Այսպիսի մոտեցումը հնարավորություն կտա հաղթահարել զուտ դեկլարատիվ սահմանադրականացման ռիսկը և ձևավորել իրավական ու ինստիտուցիոնալ մեխանիզմների համակարգ, որը արդյունավետորեն կապահովի շրջակա միջավայրի պաշտպանությունը՝ որպես ազգային անվտանգության և մարդու հիմնարար իրավունքների բաղադրիչ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածը, որը սահմանում է, որ պետությունը նպաստում է շրջակա միջավայրի պահպանությանը, բարելավմանը և վերականգնմանը, բնական պաշարների ողջամիտ օգտագործմանը՝ ղեկավարվելով կայուն զարգացման սկզբունքով և հաշվի առնելով պատասխանատվությունը ապա-

գա սերունդների առջև, ինտեգրում է Էկոլոգիական պաշտպանության արդյունավետ սահմանադրաիրավական մեխանիզմները⁵⁶: Սակայն, չնայած սահմանադրական մակարդակում այս դրույթի առկայությանը, շրջակա միջավայրի պահպանության ինտեգրումը ազգային անվտանգության համակարգում դեռևս պահանջում է ինստիտուցիոնալ ամրապնդում և հայեցակարգային զարգացում⁵⁷:

Շրջակա միջավայրի պահպանությունը Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգում

Հայաստանի Հանրապետության համար շրջակա միջավայրի պահպանության ինտեգրումը պետական անվտանգության համակարգում ունի առանձնահատուկ նշանակություն, որը պայմանավորված է երկրի աշխարհագրական դիրքով, տնտեսական կառուցվածքով, ռեսուրսային սահմանափակումներով և տարածաշրջանային սպառնալիքներով: Հայաստանը, լինելով լեռնային երկիր՝ սահմանափակ ջրային ռեսուրսներով և զգալուն էկոհամակարգերով, առանձնահատուկ խոցելի է կլիմայի փոփոխության, երաշտների և արդյունաբերական գործունեության բացասական էկոլոգիական հետևանքների նկատմամբ⁵⁸:

Հայաստանի Հանրապետության 2020 թվականին ընդունված Ազգային անվտանգության ռազմավարությունը շրջակա միջավայրի պահպանությունը դիտարկում է որպես ազգային անվտանգության կարևոր տարր: Ռազմավարությունում ընդգծվում են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են ջրային ռեսուրսների կառավարումը, Սևանա լճի էկոհամակարգի և անտառների պահպանությունը, կլիմայի փոփոխությանը հարմարվելը և հանքարդյունաբերության բնապահպանական ռիսկերի կառավարումը: Այս հիմնախնդիրներից յուրաքանչյուրը ունի ոչ միայն բնապահպանական, այլ նաև անվտանգության արտահայտված հարթություն:

Սևանա լճի հիմնահարցը հայկական բնապահպանական անվտանգության խորհրդանշական կատեգորիա է ներկայացնում: Որպես Անդրկովկասի ամենախոշոր քաղցրահամ ջրային մարմին, Սևանա լիճը ունի ոչ միայն էկոլոգիական, այլ նաև ռազմավարական նշանակություն՝ որպես խմելու ջրի, ոռոգման և ձկնային ռեսուրսների աղբյուր: Լճի մակարդակի անկումը, Էվտրոֆիկացիան և էկոհամակարգի վատթարացումը համակարգային սպառնալիք են ազգային պարենային և ջրային անվտանգությանը: Հայաստանի Հանրապետության «Սևանա լճի մասին» 2001 թվականի օրենքը և հետագա օրենսդրական ակտերը ձևավորում են այս հիմնախնդրի իրավական կարգավորման շրջանակը, սակայն դրանց իրականացումը պահանջում է ինստիտուցիոնալ ամրապնդում և միջոլոր-

տային համակարգում^{59,60} :

Հանքարդյունաբերության ոլորտը Հայաստանի համար կազմում է անվտանգության և էկոլոգիական պաշտպանության հակադրման առավել բարդ դաշտերից մեկը: Մի կողմից, հանքարդյունաբերությունը կարևոր դեր ունի պետության տնտեսական անվտանգության ապահովման գործում, մյուս կողմից՝ այն կարող է առաջացնել երկարաժամկետ էկոլոգիական վնաս, որը խարխուլում է տեղական համայնքների առողջությունը, ջրային ռեսուրսների որակը և տարածքների մշտական բնակելիությունը: Ամուլսարի հանքավայրի շուրջ ձևավորված հանրային և իրավական հակասությունները ցույց են տալիս, որ առանց համապարփակ բնապահպանական ազդեցության գնահատման և հանրային մասնակցության իրական ապահովման՝ հանքարդյունաբերության որոշումները կարող են դառնալ ոչ միայն իրավական, այլ նաև սոցիալական անկայունության և անվտանգության սպառնալիքի աղբյուր^{61,62} :

Կլիմայի փոփոխության հարմարման ուղղությամբ Հայաստանը 1993 թվականին վավերացրեց ՄԱԿ-ի կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիան, իսկ 2017 թվականին՝ Փարիզյան համաձայնագիրը^{63,64} : 2021 թվականին ընդունված Հայաստանի Հանրապետության ազգային որոշմամբ սահմանված ներդրումը (Nationally Determined Contribution) 2030 թվականին նախատեսում է ջերմոցային գազերի արտանետումների 40 տոկոսով նվազեցում 1990 թվականի մակարդակի համեմատ: Այս պարտավորությունների կատարումը պահանջում է ազգային անվտանգության ռազմավարության, տնտեսական քաղաքականության և բնապահպանական իրավունքի համակցված զարգացում:

Շրջակա միջավայրի պահպանության ինստիտուցիոնալ մեխանիզմները անվտանգության ապահովման համակարգում

Շրջակա միջավայրի պահպանության՝ որպես պետական անվտանգության բաղադրիչի արդյունավետ իրացումը պահանջում է համապատասխան ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորում, որոնք ապահովում են միջոլորտային համակարգում, կանխարգելիչ գործողությունների հնարավորությունը և ռիսկերի իրական ժամանակում կառավարումը: Այս մեխանիզմները կարող են խմբավորվել երեք հիմնական կատեգորիաների մեջ՝ կանխարգելիչ, մոնիթորինգային և արձագանքային^{65,66} :

Կանխարգելիչ մեխանիզմները ներառում են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) ընթացակարգերը, ռազմավարական բնապահպանական գնահատումը (Ռ-ԲԳ), տեխնածին ռիսկերի գնահատման համակարգերը, ինչ-

պես նաև հանրային մասնակցության մեխանիզմները⁶⁷ : Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի օրենքը ձևավորում է այս մեխանիզմների իրավական հիմքը, սակայն դրանց գործնական կիրառումը հաճախ հանդիպում է ֆորմալացման և հանրային մասնակցության սահմանափակման խնդիրներին: Արդյունավետ կանխարգելման համար անհրաժեշտ է ոչ միայն ընթացակարգային պահանջների պահպանում, այլ նաև գիտական հիմնավորված ռիսկի գնահատում և որոշումների կայացման գործընթացի թափանցիկություն:

Մոնիթորինգային մեխանիզմները ներառում են շրջակա միջավայրի վիճակի պարբերական բաղադրիչը, էկոլոգիական տվյալների հավաքագրումը, վերլուծությունը և հանրային մատչելիության ապահովումը: Այս ոլորտում Հայաստանում գործում է «Հայիդրոմետ» ծառայության և Շրջակա միջավայրի վրա ներազդեցության մոնիթորինգի կենտրոնը: Սակայն համակարգը արդիականացնելու համար անհրաժեշտ է կիրառել ժամանակակից թվային տեխնոլոգիաներ, արբանյակային մոնիթորինգի համակարգեր և կապ հաստատել միջազգային տվյալների բազաների հետ: Մոնիթորինգային համակարգի էֆեկտիվությունը ուղղակիորեն կախված է տվյալների որակից, հասանելիությունից և դրանց օգտագործման իրավական հնարավորությունից:

Արձագանքային մեխանիզմները ներառում են էկոլոգիական ռիսկերի և արտակարգ իրավիճակների կառավարման համակարգերը, բնական և տեխնածին աղետների հետևանքների վերացման գործողությունները և իրավական պատասխանատվության մեխանիզմները⁶⁸ : Այս ոլորտում Հայաստանի Արտակարգ իրավիճակների նախարարության և այլ ռազմավարական գործակալությունների գործունեությունը պահանջում է ամրապնդում հատկապես միջոլորտային համակարգման և միջազգային համագործակցության ուղղություններով :

Առանցքային ինստիտուցիոնալ խնդիրներից մեկը շրջակա միջավայրի պահպանության ինտեգրումն է անվտանգության խորհուրդների աշխատանքում: Ժամանակակից պետությունների փորձը ցույց է տալիս, որ էկոլոգիական հարցերը ընդգրկվում են ազգային անվտանգության խորհուրդների օրակարգում այն դեպքերում, երբ դրանք ձեռք են բերում ռազմավարական նշանակություն: Հայաստանի Հանրապետության Անվտանգության խորհրդի աշխատանքում շրջակա միջավայրի պահպանության հիմնախնդիրների համակարգային դիտարկումը կարող է ապահովել այս ոլորտի ռազմավարական ուղղորդումը և միջոլորտային համակարգումը⁶⁹ :

Միջսերնդային պատասխանատվությունը և շրջակա միջավայրի պահպանության պետական անվտանգային չափանիշը

Շրջակա միջավայրի պահպանության՝ որպես պետական անվտանգության բաղադրիչի յուրահատուկ հատկանիշներից մեկը դրա միջսերնդային բնույթն է: Ի տարբերություն ավանդական անվտանգության սպառնալիքների, որոնք հիմնականում ունեն կարճաժամկետ կամ միջնաժամկետ հորիզոն, էկոլոգիական ռիսկերը կարող են դրսևորվել տասնամյակներ և անգամ դարեր անց՝ ազդելով ապագա սերունդների կենսակարողության և գոյության պայմանների վրա^{71,72}:

Միջսերնդային պատասխանատվության սկզբունքը, որը սահմանադրական մակարդակում ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածում, Գերմանիայի Հիմնական օրենքի 20ա հոդվածում և բազմաթիվ այլ պետությունների սահմանադրություններում, պահանջում է, որ պետության գործունեությունը գնահատվի ոչ միայն ներկա ազդեցությունների, այլ նաև ապագա հետևանքների տեսանկյունից^{73,74,75,76,77}: Այս սկզբունքը սահմանափակում է ներկա սերնդի ազատությունը՝ անսահմանափակ սպառելու բնական ռեսուրսները:

Գերմանական Դաշնային Սահմանադրական դատարանի 2021 թվականի կլիմայի որոշումը այս սկզբունքին տվեց նոր իրավական բովանդակություն: Անվտանգության տեսանկյունից միջսերնդային պատասխանատվությունը պահանջում է պետական քաղաքականության երկարաժամկետ պլանավորում և ռազմավարական որոշումների գնահատում այնպիսի հորիզոնում, որը գերազանցում է ընտրական ցիկլերի սահմանները: Այս պահանջը ստեղծում է հատուկ ինստիտուցիոնալ մարտահրավեր ժողովրդավարական պետությունների համար, քանի որ ընտրական քաղաքականության տրամաբանությունը հաճախ ուղղված է կարճաժամկետ արդյունքների և քվեահարթակի տրամադրության բավարարմանը: Էկոլոգիական անվտանգության սահմանադրականացումը, այդ թվում՝ անկախ բնապահպանական մարմինների ստեղծումը, դատական վերահսկողության ընդլայնումը և հանրային մասնակցության երաշխիքների ամրապնդումը, կարող է ապահովել երկարաժամկետ շահերի պաշտպանությունը կարճաժամկետ քաղաքական ճնշումների պայմաններում⁷⁸:

Եզրակացություն

Իրականացված վերլուծությունը թույլ է տալիս ձևակերպել մի շարք հիմնարար եզրակացություններ:

Առաջին, ազգային անվտանգության հայեցակարգի ընդլայնումը ժամանակակից սահմանադրական

րական և միջազգային իրավունքում հանգեցրել է նրան, որ շրջակա միջավայրի պահպանությունը այլևս չի կարող դիտարկվել որպես անվտանգության ոլորտից դուրս գտնվող ոլորտային քաղաքականություն: Էկոլոգիական անվտանգությունը կազմում է պետական անվտանգության ինտեգրալ և ողնաշարային բաղադրիչ, առանց որի հնարավոր չէ ապահովել մարդկային, ինստիտուցիոնալ և տարածքային անվտանգության մյուս բաղադրիչը:

Երկրորդ, բնապահպանական ռիսկերի ժամանակակից բազմաբնույթ բնույթը՝ կլիմայի փոփոխությունից մինչև տեխնոսթիկ աղետներ և ռեսուրսային սպառում, պահանջում է պետական անվտանգության ռազմավարության հայեցակարգային վերաիմաստավորում: Այս ռիսկերի անտեսումը կամ դրանց նկատմամբ սահմանափակ քաղաքականությունը երկարաժամկետ հեռանկարում կարող է հանգեցնել պետական ինստիտուտների կայունության խարխիւմանը և ազգային անվտանգության հիմնարար սպառնալիքների առաջացմանը:

Երրորդ, միջազգային իրավական չափանիշների ձևավորումը՝ Ստոկհոլմյան հռչակագրից մինչև Փարիզյան համաձայնագիր՝ ստեղծում է այն նորմատիվ շրջանակը, որի հիման վրա պետությունները պետք է կառուցեն իրենց ազգային բնապահպանական անվտանգության համակարգերը⁷⁹: Հայաստանի Հանրապետությունը, լինելով այս միջազգային կառույցների մասնակիցը, ունի ինչպես միջազգային պարտավորություններ, այնպես էլ ազգային շահից բխող անհրաժեշտություն՝ ամրապնդելու իր էկոլոգիական անվտանգության մեխանիզմները:

Չորրորդ, համեմատական իրավաբանական փորձը ցույց է տալիս, որ շրջակա միջավայրի պահպանության սահմանադրականացումը և դրա ինտեգրումը անվտանգության հայեցակարգում ձեռք է բերել տարբեր ձևեր՝ պետական պարտավորությունից (Գերմանիա) մինչև անհատական իրավունքներ (Ֆրանսիա) և բնության ինքնուրույն իրավունքներ (Էկվադոր): Յուրաքանչյուր մոդել ունի իր առավելությունները և սահմանափակումները, սակայն դրանք բոլորն արտացոլում են այն ընդհանուր միտումը, համաձայն որի էկոլոգիական պաշտպանությունը պետք է ստանա սահմանադրաիրավական բարձրագույն երաշխիք⁸⁰:

Հինգերորդ, Հայաստանի Հանրապետության համար շրջակա միջավայրի պահպանության ինտեգրումը պետական անվտանգության համակարգում պահանջում է ինստիտուցիոնալ ամրապնդում, ռազմավարական պլանավորման կատարելագործում, հանրային մասնակցության մեխանիզմների զարգացում և միջազգային համագործակցության ընդլայնում: Այս ուղղությունների զարգացումը կապահովի ոչ միայն Հայաստանի բնապահպանական, այլ նաև համընդհանուր ազ-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

գային անվտանգության ամրապնդումը՝ հաշվի առնելով ներկա և ապագա սերունդների շահերը^{81,82} :

Վեցերորդ, միջսերնդային պատասխանատվության սկզբունքի սահմանադրականացումը, որը բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 12-րդ հոդվածից, պետք է դառնա էկոլոգիական անվտանգության ռազմավարության առանցք: Այս սկզբունքի գործնական իրականացումը ենթադրում է ռազմավարական որոշումների երկարաժամկետ գնահատում, գիտականորեն հիմնավորված ռիսկի կառավարում և ապագա սերունդների շահերի հաշվառում՝ որպես սահմանադրահիրավական պարտավորություն:

Այսպիսով, շրջակա միջավայրի պահպանությունը որպես պետական անվտանգության բաղադրիչ ներկայացնում է ոչ թե պետության գործունեության լրացուցիչ ուղղություն, այլ ժամանակակից սահմանադրական պետության ինքնության և կենսունակության հիմնարար տարր: Այս ըմբռնումը պետք է դառնա ազգային անվտանգության ռազմավարության հայեցակարգային առանցք, սահմանադրահիրավական դոկտրինի զարգացման հիմք և իրավակիրառական պրակտիկայի ուղղորդող սկզբունք:

Վերջապես, շրջակա միջավայրի պահպանության՝ որպես պետական անվտանգության բաղադրիչի արդյունավետ ապահովումը պահանջում է ոչ

միայն նորմատիվ և ռազմավարական մակարդակի ամրագրումներ, այլ նաև համապատասխան ինստիտուցիոնալ երաշխիքներ: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում այնպիսի անկախ մարմնի ձևավորումը, ինչպիսին է «Շրջակա միջավայրի պահպանության անկախ խորհուրդը», որը կարող է իրականացնել շրջակա միջավայրի պահպանության ռազմավարությունների նկատմամբ շարունակական, անկախ և մասնագիտական վերահսկողություն: Նման մարմնի գործունեությունը պետական անվտանգության տեսանկյունից ապահովում է բնապահպանական ռիսկերի ժամանակին բացահայտումը, ռազմավարական որոշումների գիտական հիմնավորվածությունը և դրանց իրականացման արդյունավետ մոնիթորինգը՝ նվազեցնելով ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ էկոլոգիական սպառնալիքները: Ուստի շրջակա միջավայրի պահպանության ինստիտուցիոնալ ապահովման մեջ անկախ խորհրդի ներառումը պետք է դիտարկվի ոչ միայն ոլորտային կառավարման բարելավման, այլև պետական անվտանգության համակարգի ամրապնդման կարևորագույն տարր:

¹ Տե՛ս, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (United Nations Development Programme, UNDP) (1994). «Մարդկային զարգացման մասին զեկույց» (Human Development Report):

² Տե՛ս, Եվրոպական հանձնաժողով (European Commission) (2019, 11 դեկտեմբերի).

³ «Եվրոպական կանաչ գործարք» (The European Green Deal)

⁴ Տե՛ս, Դալբի, Ս. (Dalby, S.) (2002). Էկոլոգիական անվտանգություն (Environmental Security), University of Minnesota Press:

⁵ Տե՛ս, Հոմեր-Դիքսոն, Թ. (Homer-Dixon, T.) (1999). Շրջակա միջավայր, սակավություն և բռնություն (Environment, Scarcity, and Violence), Princeton University Press:

⁶ Տե՛ս, Բրաուն, Օ. (Brown, O.), Համիլ, Ա. (Hammill, A.), ՄաքԼեման, Ռ. (McLeman, R.) (2007). «Կլիմայի փոփոխությունը՝ որպես “նոր” անվտանգային սպառնալիք» (Climate Change as the “New” Security Threat), Միջազգային հարաբերություններ (International Affairs), 83(6), էջ 1141–1154:

⁷ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015):

⁸ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն (2020):

⁹ Տե՛ս, Միավորված ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր (United Nations Development Programme, UNDP) (1994). «Մարդկային զարգացման մասին զեկույց» (Human Development Report):

¹⁰ Տե՛ս, Բարնեթ, Ջ. (Barnett, J.) (2001). Շրջակա միջավայրի անվտանգության նշանակությունը. էկոլոգիական քաղաքականություն և քաղաքականություն նոր անվտանգության դարաշրջանում (The Meaning of Environmental Security: Ecological Politics and Policy in the New Security Era), Zed Books:

¹¹ Տե՛ս, Մարդկային անվտանգության հանձնաժողով (Commission on Human Security) (2003). Մարդկային անվտանգությունն այժմ (Human Security Now), Նյու Յորք (New York):

¹¹ Տե՛ս, ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Քոֆի Անան (Kofi Annan) (2005). Ավելի լայն ազատության մեջ. դեպի զարգացում, անվտանգություն և մարդու իրավունքներ բոլորի համար (In Larger Freedom: Towards Development, Security and Human Rights for All), ՄԱԿ (United Nations), Նյու Յորք:

¹² Տե՛ս, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեա (United Nations General Assembly) (2012). Բանաձև 66/290՝ Մարդկային անվտանգություն (Resolution 66/290: Follow-up to paragraph 143 on human security of the 2005 World Summit Outcome), Նյու Յորք:

¹³ Տե՛ս, Հոմեր-Դիքսոն, Թ. (Homer-Dixon, T.) (1999). Շրջակա միջավայր, սակավություն և բռնություն (Environment, Scarcity, and Violence), Princeton University Press:

¹⁴ Տե՛ս, Դալբի, Ս. (Dalby, S.) (2002). Էկոլոգիական անվտանգություն (Environmental Security), University of Minnesota Press:

¹⁵ Տե՛ս, Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողով (World Commission on Environment and Development) (1987). Մեր ընդհանուր ապագան (Our Common Future):

¹⁶ Տե՛ս, Միավորված ազգերի կազմակերպություն (United Nations) (1992). «Ռիոյի հռչակագիր շրջակա միջավայրի և զարգացման մասին» (Rio Declaration on Environment and Development):

¹⁷ Տե՛ս, Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողով (World Commission on Environment and Development) (1987). «Մեր ընդհանուր ապագան» (Our Common Future):

¹⁸ Տե՛ս, Հոմեր-Դիքսոն, Թ. (Homer-Dixon, T.) (1999). Շրջակա միջավայր, սակավություն և բռնություն (Environment, Scarcity, and Violence), Princeton University Press:

¹⁹ Տե՛ս, Դալբի, Ս. (Dalby, S.) (2002). Էկոլոգիական անվտանգություն (Environmental Security), University of Minnesota Press:

²⁰ Տե՛ս, Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական փորձագիտական խումբ (Intergovernmental Panel on Climate Change, IPCC) (2023). Կլիմայի փոփոխություն 2023. համակցված զեկույց (Climate Change 2023: Synthesis Report), Վեցերորդ գնահատման զեկույց (Sixth Assessment Report), Ժնև (Geneva):

²¹ Տե՛ս, Բարնեթ, Ջ. (Barnett, J.) (2001). Շրջակա միջավայրի անվտանգության նշանակությունը. էկոլոգիական քաղաքականություն և քաղաքականություն նոր անվտանգության դարաշրջանում (The Meaning of Environmental Security: Ecological Politics and Policy in the New Security Era), Zed Books:

²² Տե՛ս, ՄԱԿ-ի Անվտանգության խրհուրդ, նիստի արձանագրություն S/PV.5663, 17 ապրիլի 2007 թ.

²³ Տե՛ս, Եվրոպական հանձնաժողովի (European Commission) (2019, 11 դեկտեմբերի). «Եվրոպական կանաչ գործարք» (The European Green Deal), <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:52019DC0640>

²⁴ Տե՛ս, ՄԱԿ-ի (United Nations) (1992). «Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա» (United Nations Framework Convention on Climate Change):

²⁵ Տե՛ս, ՄԱԿ-ի (United Nations) (2015). «Փարիզյան համաձայնագիր» (Paris Agreement):

²⁶ Տե՛ս, Բրաուն, Օ. (Brown, O.), Համիլ, Ա. (Hammill, A.), ՄաքԼեման, Ռ. (McLeman, R.) (2007). «Կլիմայի փոփոխությունը՝ որպես “նոր” անվտանգային սպառնալիք» (Climate Change as the “New” Security Threat), Միջազգային հարաբերություններ (International Affairs), 83(6), էջ 1141–1154:

²⁷ Տե՛ս, Միջազգային ատոմային էներգիայի գործակալություն (International Atomic Energy Agency, IAEA), ՄԱԿ-ի այլ կազմակերպությունների հետ համատեղ (2006). Չեռնոբիլի վթարի շրջակա միջավայրի հետևանքները և դրանց վերականգնումը (Environmental Consequences of the Chernobyl Accident and Their Remediation), IAEA, Vienna:

²⁸ Տե՛ս, Միջազգային ատոմային էներգիայի գործակալություն (International Atomic Energy Agency, IAEA) (2015). Ֆուկուշիմայի ատոմակայանի վթարը՝ զեկույց գլխավոր տնօրենին (The Fukushima Daiichi Accident: Report by the Director General), IAEA, Vienna:

²⁹ Տե՛ս, Հնդկաստանի կառավարություն (Government of India) (1985). Բհոպալի գազային արտահոսքի աղետի մասին պաշտոնական զեկույց (Report on the Bhopal Gas Leak Disaster), Government of India:

³⁰ Տե՛ս, Հոմեր-Դիքսոն, Թ. (Homer-Dixon, T.) (1999). Շրջակա միջավայր, սակավություն և բռնություն (Environment, Scarcity, and Violence), Princeton University Press:

³¹ Տե՛ս, Գլեյք, Փ. (Gleick, P. H.) (1993). «Ջուր և կոնֆլիկտ. քաղցրահամ ջրային ռեսուրսները և միջազգային անվտանգությունը» (Water and Conflict: Fresh Water Resources and International Security), International Security, 18(1), էջ 79–112:

³² Տե՛ս, Հայաստանի Հանրապետություն (Republic of Armenia) (2021). Կլիմայի փոփոխությանը հարմարվելու ազգային գործողությունների ծրագիր և միջոցառումների ցանկ (National Action Programme of Adaptation to Climate Change and List of Measures for 2021–2025), Երևան:

³³ Տե՛ս, Համաշխարհային բանկ (World Bank) (2018). Beyond Scarcity: Water Security in the Middle East and North Africa, World Bank, Washington, DC:

³⁴ Տե՛ս, ՄԱԿ-ի ջրային նախաձեռնություն (UN-Water)՝ ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի (United Nations Environment Programme, UNEP) մասնակցությամբ (2012)...

³⁵ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության օրենքը «Սևանա լճի մասին» (2001):

³⁶ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն (2020):

www.araratjournal.com

- ³⁷ Տե՛ս, Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողով (World Commission on Environment and Development) (1987). «Մեր ընդհանուր ապագան» (Our Common Future):
- ³⁸ Տե՛ս, Միավորված ազգերի կազմակերպություն (United Nations) (1972). «Միավորված ազգերի կազմակերպության մարդու շրջակա միջավայրի հարցերով Ստոկհոլմյան հռչակագիր» (Stockholm Declaration of the United Nations Conference on the Human Environment):
- ³⁹ Տե՛ս, Միավորված ազգերի կազմակերպություն (United Nations) (1992). «Ռիոյի հռչակագիր շրջակա միջավայրի և զարգացման մասին» (Rio Declaration on Environment and Development):
- ⁴⁰ Տե՛ս, ՄԱԿ-ի (United Nations) (1992). «Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա» (United Nations Framework Convention on Climate Change):
- ⁴¹ Տե՛ս, ՄԱԿ-ի (United Nations) (1997). «Կիոտոյի արձանագրություն» (Kyoto Protocol):
- ⁴² Տե՛ս, ՄԱԿ-ի (United Nations) (2015). «Փարիզյան համաձայնագիր» (Paris Agreement):
- ⁴³ Տե՛ս, Բրաուն, Օ. (Brown, O.), Համիլ, Ա. (Hammill, A.), ՄաքԼեման, Ռ. (McLeman, R.) (2007). «Կլիմայի փոփոխությունը՝ որպես “նոր” անվտանգային սպառնալիք» (Climate Change as the “New” Security Threat), Միջազգային հարաբերություններ (International Affairs), 83(6), էջ 1141–1154:
- ⁴⁴ Տե՛ս, «Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա) (Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters, Aarhus Convention) (1998):
- ⁴⁵ Տե՛ս, ՄԻԵԳ-ի Վերեին ԿլիմաՁեռնարկներն Շվայց և այլ ընդդեմ Շվեյցարիայի (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland), գանգատ թիվ 53600/20, 2024 թվականի ապրիլի 9-ի վճիռը (Մեծ պալատ):
- ⁴⁶ Տե՛ս, Եվրոպական միության մասին պայմանագիր (Treaty on European Union) (կոնսոլիդացված տարբերակ) (2012). հոդված 3(3):
- ⁴⁷ Տե՛ս, Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա (Charter of Fundamental Rights of the European Union) (2012). հոդված 37:
- ⁴⁸ Տե՛ս, Եվրոպական միություն (European Union) (2022). Եվրոպական ռազմավարական կոմպաս. անվտանգության և պաշտպանության համար (A Strategic Compass for Security and Defence), Բրյուսել (Brussels):
- ⁴⁹ Տե՛ս, Եվրոպական միություն և Հայաստանի Հանրապետություն (European Union and Republic of Armenia) (2017). Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (Comprehensive and Enhanced Partnership Agreement, CEPA), Բրյուսել:
- ⁵⁰ Տե՛ս, Եվրոպական հանձնաժողով (European Commission) (2019, 11 դեկտեմբերի). «Եվրոպական կանաչ գործարք» (The European Green Deal), <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:52019DC0640>
- ⁵¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015):
- ⁵² Տե՛ս, Ֆրանսիայի Հանրապետության «Շրջակա միջավայրի խարտիա» (Charter for the Environment) (2005):
- ⁵³ Տե՛ս, Շվեյցարիայի Համադաշնության Դաշնային Սահմանադրություն (Federal Constitution of the Swiss Confederation):
- ⁵⁴ Տե՛ս, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենք (Basic Law for the Federal Republic of Germany), հոդված 20ա:
- ⁵⁵ Տե՛ս, Էկվադորի Հանրապետության Սահմանադրություն (Constitution of Ecuador) (2008), բնության իրավունքներին վերաբերող դրույթներ (Rights of Nature / Derechos de la Naturaleza):
- ⁵⁶ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015):
- ⁵⁷ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն (2020):
- ⁵⁸ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության կառավարության N 610-Լ որոշում՝ «Փարիզյան համաձայնագրի ներքո ՀՀ-ի 2021–2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» (2021):
- ⁵⁹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության օրենքը «Սևանա լճի մասին» (2001):
- ⁶⁰ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն (2020):
- ⁶¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության օրենքը «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (2014, նոր խմբագրությամբ՝ 2023):
- ⁶² Տե՛ս, «Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա) (Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters, Aarhus Convention) (1998):
- ⁶³ Տե՛ս, ՄԱԿ-ի (United Nations) (1992). «Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա» (United Nations Framework Convention on Climate Change):
- ⁶⁴ Տե՛ս, ՄԱԿ-ի (United Nations) (2015). «Փարիզյան համաձայնագիր» (Paris Agreement):
- ⁶⁵ Տե՛ս, «Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա

(Օրհուսի կոնվենցիա) (Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters, Aarhus Convention) (1998):

⁶⁶ Տե՛ս, Բարնեթ, Ջ. (Barnett, J.) (2001). Շրջակա միջավայրի անվտանգության նշանակությունը. Էկոլոգիական քաղաքականություն և քաղաքականություն նոր անվտանգության դարաշրջանում (The Meaning of Environmental Security: Ecological Politics and Policy in the New Security Era), Zed Books:

⁶⁷ Տե՛ս, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ 2014 թվականի ցրենքը

⁶⁸ Տե՛ս, Դալբի, Ս. (Dalby, S.) (2002). Էկոլոգիական անվտանգություն (Environmental Security), University of Minnesota Press:

⁶⁹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն (2020):

⁷⁰ Տե՛ս, Բրաուն, Օ. (Brown, O.), Համիլ, Ա. (Hammill, A.), ՄաքԼեման, Ռ. (McLeman, R.) (2007). «Կլիմայի փոփոխությունը՝ որպես “նոր” անվտանգային սպառնալիք» (Climate Change as the “New” Security Threat), Միջազգային հարաբերություններ (International Affairs), 83(6), էջ 1141–1154:

⁷¹ Տե՛ս, Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողով (World Commission on Environment and Development) (1987). «Մեր ընդհանուր ապագան» (Our Common Future):

⁷² Տե՛ս, Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարան (Federal Constitutional Court) (2021). 2021 թվականի մարտի 24-ի կլիմայի վերաբերյալ որոշում (Klimabeschluss / Order of 24 March 2021):

⁷³ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015):

⁷⁴ Տե՛ս, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենք (Basic Law for the Federal Republic of Germany), հոդված 20ա:

⁷⁵ Տե՛ս, Ֆրանսիայի Հանրապետության «Շրջակա միջավայրի խարտիա» (Charter for the Environment) (2005):

⁷⁶ Տե՛ս, Շվեյցարիայի Համադաշնության Դաշնային Սահմանադրություն (Federal Constitution of the Swiss Confederation):

⁷⁷ Տե՛ս, Էկվադորի Հանրապետության Սահմանադրություն (Constitution of Ecuador) (2008), բնության իրավունքներին վերաբերող դրույթներ (Rights of Nature / Derechos de la Naturaleza):

⁷⁸ Տե՛ս, «Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա) (Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters, Aarhus Convention) (1998):

⁷⁹ Տե՛ս, Միավորված ազգերի կազմակերպություն (United Nations) (1972).

«Միավորված ազգերի կազմակերպության մարդու շրջակա միջավայրի հարցերով Ստոկհոլմյան հռչակագիր»-ը (Stockholm Declaration of the United Nations Conference on the Human Environment), Միավորված ազգերի կազմակերպություն (United Nations) (1992).

«Ռիոյի հռչակագիր շրջակա միջավայրի և զարգացման մասին» (Rio Declaration on Environment and Development), ՄԱԿ-ի (United Nations) (1992). «Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա» (United Nations Framework Convention on Climate Change), ՄԱԿ-ի (United Nations) (1997).

«Կիոտոյի արձանագրություն» (Kyoto Protocol), ՄԱԿ-ի (United Nations) (2015). «Փարիզյան համաձայնագիր» (Paris Agreement), «Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա) (Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters, Aarhus Convention) (1998):

⁸⁰ Տե՛ս, Գերմանիայի Դաշնային Հանրապետության Հիմնական օրենքը (Basic Law for the Federal Republic of Germany), հոդված 20ա, Գերմանիայի Դաշնային սահմանադրական դատարան (Federal Constitutional Court) (2021). 2021 թվականի մարտի 24-ի կլիմայի վերաբերյալ որոշումը (Klimabeschluss / Order of 24 March 2021), Ֆրանսիայի Հանրապետության «Շրջակա միջավայրի խարտիա» (Charter for the Environment) (2005), Շվեյցարիայի Համադաշնության Դաշնային Սահմանադրություն (Federal Constitution of the Swiss Confederation), Էկվադորի Հանրապետության Սահմանադրություն (Constitution of Ecuador) (2008), բնության իրավունքներին վերաբերող դրույթներ (Rights of Nature / Derechos de la Naturaleza)

⁸¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015), Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն (2020):

⁸² Տե՛ս, Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողով (World Commission on Environment and Development) (1987). Մեր ընդհանուր ապագան (Our Common Future):

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ներպետական իրավական աղբյուրներ

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (2015):

2. Հայաստանի Հանրապետության օրենք «Սևանա լճի մասին» (2001):

3. Հայաստանի Հանրապետության օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» (2014, նոր խմբագրությամբ՝ 2023):

4. Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն (2020):

5. Հայաստանի Հանրապետության կառավարության N 610-Լ որոշում՝ «Փարիզյան համաձայնագրի ներքո ՀՀ-ի

www.aradaradutyjournal.com

2021–2030 թվականների ազգային մակարդակով սահմանված գործողությունները հաստատելու մասին» (2021):
6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի մայիսի 13-ի N 749-L որոշում՝ «Կլիմայի փոփոխության հարմարվողականության ազգային գործողությունների ծրագիրը և 2021–2025 թվականների միջոցառումների ցանկը հաստատելու մասին»:

- Միջազգային իրավական աղբյուրներ և փաստաթղթեր
7. Միավորված ազգերի կազմակերպություն (United Nations) (1972). Ստոկհոլմյան հռչակագիր մարդու շրջակա միջավայրի մասին (Stockholm Declaration of the United Nations Conference on the Human Environment)
 8. Միավորված ազգերի կազմակերպություն (United Nations) (1992). Ռիոյի հռչակագիր շրջակա միջավայրի և զարգացման մասին (Rio Declaration on Environment and Development):
 9. Միավորված ազգերի կազմակերպություն (United Nations) (1992). Կլիմայի փոփոխության շրջանակային կոնվենցիա (United Nations Framework Convention on Climate Change):
 10. Միավորված ազգերի կազմակերպություն (United Nations) (1997). Կիոտոյի արձանագրություն (Kyoto Protocol):
 11. Միավորված ազգերի կազմակերպություն (United Nations) (2015). Փարիզյան համաձայնագիր (Paris Agreement):
 12. ՄԱԿ-ի (UNDP) (1994). Մարդկային զարգացման մասին զեկույց (Human Development Report):
 13. ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (United Nations Development Programme, UNDP) (2015). Կլիմայի փոփոխության նկատմամբ ազգային հարմարվողականության գործողությունների ծրագիր Հայաստանի համար (National Adaptation Programme of Action to Climate Change, NAPA, Armenia):
 14. Շրջակա միջավայրի հարցերում տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացում հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին կոնվենցիա (Օրհուսի կոնվենցիա) (Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters, Aarhus Convention) (1998):
 15. Միջազգային ատոմային էներգիայի գործակալություն (International Atomic Energy Agency, IAEA) (2006). Չեռնոբիլի վթարի շրջակա միջավայրի հետևանքները և դրանց վերականգնումը (Environmental Consequences of the Chernobyl Accident and Their Remediation):
 16. Միջազգային ատոմային էներգիայի գործակալություն (International Atomic Energy Agency, IAEA) (2015). Ֆուկուշիմա Դայիչի ատոմակայանի վթարը. գլխավոր տնօրենի զեկույց (The Fukushima Daiichi Accident: Report by the Director General):
 17. Հնդկաստանի կառավարություն (Government of India) (1985). Բհոպալի գազային արտահոսքի աղետի մասին զեկույց (Report on the Bhopal Gas Leak Disaster):
 18. Համաշխարհային բանկ (World Bank) (2018). Սակավությունից անդին. ջրային անվտանգությունը Մերձավոր Արևելքում և Հյուսիսային Աֆրիկայում (Beyond Scarcity: Water Security in the Middle East and North Africa):
 19. ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիր (United Nations Environment Programme, UNEP) (2012). Ջրային ռեսուրսների ինտեգրված կառավարման կիրառման վերաբերյալ ջրային զեկույց:
 20. Կլիմայի փոփոխության հարցերով միջկառավարական փորձագիտական խումբ (Intergovernmental Panel on Climate Change, IPCC) (2023). Կլիմայի փոփոխություն 2023. համակցված զեկույց (Climate Change 2023: Synthesis Report), Վեցերորդ գնահատման զեկույց (Sixth Assessment Report), Ժնև (Geneva):

- III. Միջազգային քաղաքական-ծրագրային և հայեցակարգային աղբյուրներ
21. Շրջակա միջավայրի և զարգացման համաշխարհային հանձնաժողով (World Commission on Environment and Development) (1987). Մեր ընդհանուր ապագան (Our Common Future):
 22. Եվրոպական հանձնաժողով (European Commission) (2019). Եվրոպական կանաչ գործարք (The European Green Deal):
 23. ՄԱԿ Անվտանգության խորհուրդ, նիստի արձանագրություն S/PV.5663, 17 ապրիլի 2007 թ.)
 24. Եվրոպական միության մասին պայմանագիր (Treaty on European Union) (կոնսոլիդացված տարբերակ) (2012). հոդված 3(3):
 25. Եվրոպական միության հիմնարար իրավունքների խարտիա (Charter of Fundamental Rights of the European Union) (2012). հոդված 37:
 26. Եվրոպական միություն (European Union) (2022). Եվրոպական ռազմավարական կոմպաս. անվտանգության և պաշտպանության համար (A Strategic Compass for Security and Defence), Բրյուսել (Brussels):
 27. Եվրոպական միություն և Հայաստանի Հանրապետություն (European Union and Republic of Armenia) (2017). Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր (Comprehensive and Enhanced Partnership Agreement, CEPA), Բրյուսել:

- Գիտական և տեսական աղբյուրներ
28. Բարնետ, Ջ. (Barnett, J.) (2001). Շրջակա միջավայրի անվտանգության իմաստը (The Meaning of Environmental Security):
 29. Հոմեր-Դիքսոն, Թ. (Homer-Dixon, T.) (1999). Շրջակա միջավայր, սակավություն և բռնություն (Environment,

Scarcity, and Violence):

- 30. Դալբի, Ս. (Dalby, S.) (2002). Էկոլոգիական անվտանգություն (Environmental Security):
- 31. Բրաուն, Օ., Համիլ, Ա., ՄաքԼեման, Ռ. (Brown, O., Hammill, A., McLeman, R.) (2007). Կլիմայի փոփոխությունը որպես «նոր» անվտանգային սպառնալիք (Climate Change as the “New” Security Threat):
- 32. Գլեյք, Փ. (Gleick, P. H.) (1993). Ջուր և կոնֆլիկտ (Water and Conflict):

Համեմատական սահմանադրական և դատական աղբյուրներ

- 33. Եվրոպական դատարանի Վերին ԿլիմաՁեռնորինեն Եվայց և այլ ընդդեմ Եվեյցարիայի (Verein KlimaSeniorinnen Schweiz and Others v. Switzerland), գանգատ թիվ 53600/20, 2024 թվականի ապրիլի 9-ի վճիռը (Մեծ պալատ): Գերմանիայի Գաշնային Հանրապետության Հիմնական օրենք (Basic Law for the Federal Republic of Germany), հոդված 20ա:
- 34. Գերմանիայի Գաշնային սահմանադրական դատարան (Federal Constitutional Court) (2021). Կլիմայի վերաբերյալ որոշում (2021 թվականի մարտի 24) (Climate Decision of 24 March 2021):
- 35. Ֆրանսիայի Հանրապետության «Շրջակա միջավայրի խարտիա» (Charter for the Environment) (2005):
- 36. Եվեյցարիայի Համադաշնության Գաշնային Սահմանադրություն (Federal Constitution of the Swiss Confederation):
- 37. Էկվադորի Հանրապետության Սահմանադրություն (Constitution of Ecuador) (2008). Բնության իրավունքներ (Rights of Nature):

Карен Туманян
Член Высшего судебного совета

РЕЗЮМЕ

Охрана окружающей среды как составляющая национальной безопасности

Настоящая статья посвящена конституционно-правовому и теоретическому анализу охраны окружающей среды как структурного элемента государственной безопасности. В работе рассматриваются переосмысление концепции национальной безопасности в условиях экологических вызовов, формирование международно-правовых стандартов экологической безопасности, а также интеграция охраны окружающей среды в систему национальной безопасности. Обосновывается позиция, согласно которой экологическая безопасность является необходимым условием устойчивости и реализации суверенитета современного конституционного государства. При этом эффективное обеспечение экологического компонента национальной безопасности требует наличия институциональных гарантий, в частности — посредством создания независимого специализированного органа (независимого совета по охране окружающей среды).

Ключевые слова: охрана окружающей среды, государственная безопасность, экологическая безопасность, концепция национальной безопасности, конституционная безопасность, устойчивое развитие, межпоколенческая ответственность, экологические риски.

Karen Tumanyan
Member of the Supreme Judicial Council

SUMMARY

Environmental protection as a component of national security

This article is devoted to the constitutional-legal and theoretical analysis of environmental protection as a structural component of state security. The study examines the reconceptualization of national security in the context of environmental challenges, the development of international legal standards of environmental security, as well as the integration of environmental protection into the national security system. It substantiates the position that environmental security is a necessary precondition for the stability and the realization of sovereignty of a modern constitutional state. At the same time, the effective обеспечения the environmental component of national security requires

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

institutional guarantees, in particular through the establishment of an independent specialized body (an independent Environmental Protection Council).

Key words: environmental protection, state security, environmental security, concept of national security, constitutional security, sustainable development, intergenerational responsibility, environmental risks.

Բնագիրը ներկայացվել է 07.05.2026թ.
Ընդունվել է տպագրության 01.06.26թ.

ՄԵՐԻ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայաստանի եվրոպական համալսարանի հանրային
և միջազգային իրավունքի ամբիոն հայցորդ

ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԱՅԻՆ ՏԱՐԵՐԸ

Վարչական բողոքի իրավական բնույթը և կառուցվածքային տարրերը բացահայտելու նպատակով ուսումնասիրվել են վարչական բողոքի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ ձևավորված տարբեր մոտեցումները և Հայաստանի Հանրապետության օրենսդրության կարգավորումները, որի արդյունքում սույն հոդվածում բացահայտվել են վարչական բողոքի հիմնական կառուցվածքային տարրերը՝ սուբյեկտը, առարկան, հիմքերը, պահանջը և հասցեատերը: Քննարման առարկա են դարձվել վարչական բողոքարկման վարույթի իրականացման և վարչական կարգով իրավունքների պաշտպանության գործընթացում դրանց նշանակության հետ կապված հարցերը: Կատարված հետազոտության արդյունքում հիմնավորվել և հատուկ ընդգծվել է, որ վարչական բողոքը հանդիսանում է վարչական բողոքարկման վարույթի առանցքային, կարևորագույն կառուցվածքային այն տարրը, որի միջոցով անձինք իրենց իրավունքների պաշտպանության նպատակով նախաձեռնում են վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության վարչական կարգով բողոքարկումը: Այսպիսով, կատարված հետազոտությունները թույլ են տալիս գալ այն եզրահանգման, որ վարչական բողոքը հանդիսանում է վարչական բողոքարկման վարույթ հարուցելու իրավական հիմք, իսկ դրա կառուցվածքային տարրերի փոխկապակցվածությունն ու ամբողջությունն ապահովում են վարչական բողոքարկման վարույթի արդյունավետ իրականացումը և վարչական կարգով իրավունքների պաշտպանությունը:

Հիմնարառեր-վարչական բողոք, վարչական բողոքարկում, վարչական վարույթ, վարչական ակտ, սուբյեկտիվ հանրային իրավունքներ, իրավունքի պաշտպանություն, վարչական վերահսկողություն, վարչաիրավական վեճ, արտադատական կարգ, վարչական արդարադատություն:

Ներածություն

Վարչական բողոքարկման ինստիտուտը, որպես անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմ, վարչական իրավունքի զարգացման ներկա փուլում ունի առանձնահատուկ նշանակություն, քանի որ այն հնարավորություն է տալիս առանց դատական միջամտության ապահովել վարչական մարմինների գործունեության վերահսկողությունը՝ միաժամանակ նպաստելով ՀՀ վարչական դատարանի ծանրաբեռնվածության՝ բեռնաթափմանը:

Այս համատեքստում նախ անհրաժեշտ է անդրադառնալ վարչական ակտերի, ինչպես նաև վարչական մարմնի գործողության կամ անգործության (այսուհետ՝ ակտ) բողոքարկման գործընթացի առանցքային տարրի՝ վարչական բողոքի հասկացությանը: Վարչական բողոքը հենց այն իրավական միջոցն է, որը հնարավորություն է տալիս անձին նախաձեռնել բողոքարկման վարույթը, և հետևաբար, վարչական բողոքի իրավաբանական բնույթի և բովանդակության հստակեցումն անհրաժեշտ է ավելի խորությամբ պատկերացնելու վարչական կարգով բողոքարկման ինստիտուտի կառուցվածքը և այն ներկայացնելու նշանակությունն ու գործառույթը: Բացի այդ, վարչական բողոքի իրավական բնույթի և բովանդակության հստակեցումը հնարավորություն է տալիս հասկանալ դրա դերն ու նշանակությունը անձանց իրավունքների պաշտպանության համակարգում:

Հայաստանի Հանրապետության վարչաիրավական համակարգի համատեքստում վարչական բողոքի էությունը անհրաժեշտ է գնահատել նաև Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքի (Սահմանադրություն, հոդվ. 50)² լույսի ներքո: Տվյալ դեպքում վարչական բողոքը, հանդես գալով որպես վարչական բողոքարկման ինստիտուտի առանցքային կառուցվածքային տարր՝ հնարավորություն է տալիս անձին ապահովել իր իրավունքների պաշտպանությունը, վերականգնումը վարչական համակարգի ներսում: Սա կարևոր է նաև վարչական արդարադատության արդյունավետության տեսանկյունից, քանի որ նպաստում է վարչական վեճերի արագ և համեմատաբար նվազ ծախսատար լուծմանը՝ ուղղակիորեն հանգեցնելով ՀՀ վարչական դատարանի ծանրաբեռնվածության նվազեցմանը:

Վարչական բողոքի իրավական բնույթի վերաբերյալ տեսական մոտեցումների ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրել, որ վարչական բողոքն ունի մի քանի իրավական նշանակություն՝ հանդիսանալով և՛ որպես անձի սուբյեկտիվ հանրային իրավունքի իրացման ձև (դրա միջոցով անձը նախաձեռնում է իր իրավունքների պաշտպանության գործընթացը), և՛ որպես այն վարչական բողոքարկման վարույթ հարուցելու իրավական հիմք, որի շրջանակներում իրականացվում է վարչական վերահսկողություն վարչական ակտերի, վարչական մարմինների գործողությունների կամ

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

անգործության նկատմամբ: Միաժամանակ, վարչական բողոքը հանդես է գալիս որպես վարչաիրավական վեճի արտադատական լուծման գործընթացի առանցքային կառուցվածքային տարր:

Սույն հետազոտության շրջանակներում վարչական բողոքը դիտարկվում է որպես բազմաբովանդակ իրավական երևույթ, որի բովանդակության ամբողջական բացահայտումը ենթադրում է դրա հասկացության և իրավական բնույթի, ինչպես նաև կառուցվածքային տարրերի վերլուծություն:

Հետազոտության մեթոդաբանությունը

Սույն ուսումնասիրության մեթոդական հիմքը ձևավորվում է ֆորմալ-տրամաբանական և ֆորմալ-իրավական, ինչպես նաև համակարգային, կառուցվածքային-գործառնության, համեմատական և իրավական վերլուծության մեթոդների կիրառմամբ, որոնք օգտագործվել են ուսումնասիրության, հասկացությունների և իրավական բովանդակության բացահայտման գործընթացում: Ուսումնասիրվել են վարչական բողոքի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ ձևավորված տարբեր մոտեցումները, Հայաստանի Հանրապետության օրենսդրության կարգավորումները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի կողմից քննվող վարչական գործերի քանակի վերաբերյալ վիճակագրական տվյալները:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Վարչական բողոքի հասկացության և իրավական բնույթի վերաբերյալ իրավաբանական գրականության մեջ առկա մոտեցումները միասնական չեն, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ վարչական բողոքը վարչաիրավական համակարգում ունի բազմաշերտ նշանակություն. այն դիտարկվում է ինչպես սուբյեկտիվ հանրային իրավունքների պաշտպանության իրավական գործիք, այնպես էլ վարչական վերահսկողության և վարչական բողոքարկման վարույթի առանցքային կառուցվածքային տարր: Ուստի և վարչական բողոքի հասկացությունը բացահայտելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել դրա էությունը ոչ միայն ձևական-իրավական, այլ նաև գործառնության և ինստիտուցիոնալ տեսանկյուններից:

Իրավաբանական գրականության մեջ բողոքը դիտարկվում է որպես պահանջ, խնդրանք, միջնորդություն, դիմում և այլն: Օրինակ՝ Դ.Ն. Բախրախի կարծիքով վարչական բողոքն անձի դիմումն է ուղղված իրավասու սուբյեկտին՝ խախտված իրավունքների վերականգնման կամ դրանց խախտումը կանխելու պահանջով:

Ն.Վ. Գրիգորյանի կարծիքով «բողոք ներկայացնելը ցանկացած դեպքում ենթադրում է գործողությունների իրականացում, իսկ բողոքն ինքնին, իր բովանդակությամբ, ներառում է խնդրանք, պա-

հանջ, կոչ պետական մարմնին կամ պաշտոնատար անձին՝ իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանության վերաբերյալ»: Միաժամանակ Ա. Ն. Արտամոնովը գտնում է, որ «բողոք» հասկացությունը պետք է սահմանվի ոչ թե որպես «դիմում», այլ որպես «պահանջ»: Նրա կարծիքով «բողոք ներկայացնելով համապատասխան պետական մարմնին՝ քաղաքացին պարզապես չի ցանկանում մատնանշել իր իրավունքների և օրինական շահերի խախտումը որևէ պաշտոնատար անձի կամ մարմնի կողմից, այլ պահանջում է այդ խախտման վերացում և խախտված իրավունքների վերականգնում»: Ի տարբերություն նշված մոտեցման՝ Վ. Կոբալևսկին բողոքը սահմանում է որպես միջնորդություն և հանդես է գալիս «պահանջ» տերմինի օգտագործման դեմ, քանի որ վարչական բողոքը կարող է նպատակ ունենալ ընդդիմանալ ոչ միայն ապօրինի, այլև իշխանության մարմնի ոչ նպատակահարմար գործողություններին:

Այսպիսով, իրավաբանական գրականության մեջ վարչական բողոքի վերաբերյալ միասնական մոտեցում չի ձևավորվել, ինչը պայմանավորված է վարչական բողոքի իրավական բնույթի առանձնահատկություններով և դրա բազմակողմանի նշանակությամբ: Հեղինակների մի մասը բողոքը դիտարկում է որպես դիմում, մյուսներն այն բնորոշում են որպես պահանջ, միջնորդություն կամ խնդրանք՝ ելնելով այն հանգամանքից, թե բողոքի որ կողմն են առանցքային համարում:

Կատարված ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ անկախ բնորոշումների տարբերություններից՝ հեղինակների մոտեցումները, ըստ էության, հանգում են այն միասնական գաղափարին, ըստ որի՝ վարչական բողոքը հանդիսանում է անձի կողմից իրավասու վարչական մարմնին ուղղված իրավական միջոց, որով անձինք ձգտում են ապահովել իրենց իրավունքների պաշտպանությունը: Եվ այս առումով վարչական բողոքը, ըստ էության, հանդիսանում է վարչական բողոքարկման վարույթի հիմքը և վարչական կարգով իրավական պաշտպանության իրականացման կարևոր միջոց:

Իրավաբանական գրականության մեջ ձևավորված տարբեր մոտեցումները, վատահար, կարևոր նշանակություն ունեն վարչական բողոքի բնույթի բացահայտման համար, սակայն, միաժամանակ վարչական բողոքի էության ամբողջական ընկալման համար անհրաժեշտ է անդրադառնալ նաև դրա իրավական կարգավորմանը և համապատասխան օրենսդրական կարգավորումների ուսումնասիրության արդյունքում պարզել, թե վարչական բողոքն ինչպես է ընկալվում և կարգավորվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ: Այսպիսով, վերոնշյալ տեսական մոտեցումները պետք է դիտարկել Հայաստանի Հանրապետության վարչաիրավական կարգավորումների

www.aradadutyjournal.com

համատեքստում՝ պարզելու համար՝ օրենսդիրը վարչական բողոքը դիտարկում է որպես դիմում, պահանջ, միջնորդություն, իրավունքների պաշտպանության միջոց, թե՞ վարչական բողոքարկման վարույթ հարուցելու իրավական հիմք, ինչը հնարավորություն կտա մեզ գնահատելու վարչական բողոքի տեղն ու նշանակությունը վարչական բողոքարկման համակարգում և դրա դերը անձի իրավունքների պաշտպանության համակարգում:

Թեև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ վարչական բողոքի հասկացության հստակ սահմանումը տրված չէ, սակայն ամրագրված է վարչական բողոք ներկայացնելու՝ անձանց իրավունքը և դրա իրականացման կարգը: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանվել է, որ անձինք իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով իրավունք ունեն բողոքարկելու վարչական ակտերը, այդ թվում՝ գուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաև վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը (այսուհետ՝ ակտ) («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 69) :

Նույն օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ակտը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով: Օրենքով նախատեսված դեպքերում ակտը կարող է բողոքարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց հետո: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական կարգով բողոք կարող է ներկայացվել ակտն ընդունած՝

ա) վարչական մարմին:

բ) վարչական մարմնի վերադաս վարչական մարմին: (...) («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 70, մաս 1, 2):

Միաժամանակ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 72-րդ հոդվածով սահմանվել են բողոքին ներկայացվող պահանջները, որի համաձայն՝ ի թիվս այլնի՝ բողոքը պետք է պարունակի բողոքարկման առարկան և բողոք բերողի պահանջը: («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 72):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 73-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բողոքի հիման վրա իրականացվող վարչական վարույթը հարուցվում է բողոքը վարչական մարմնում մուտքագրելու օրը: («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 73, մաս 1):

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի նշված և դրանց հետ փոխկապակցված մյուս իրավակարգավորումների համակարգային վերլուծությունը մեզ

հնարավորություն է տալիս առանձնացնել վարչական բողոքի հիմնական հատկանիշները և բացահայտել դրա իրավական բնույթը:

Մասնավորապես «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի կարգավորումներից հետևում է, որ վարչական բողոքը կապված է ինչպես վարչական ակտի, այնպես էլ վարչական մարմնի գործողության կամ անգործության վիճարկման, (բողոքարկման) հետ և ներկայացվում է այն դեպքում, երբ անձը գտնում է, որ համապատասխան վարչարարության արդյունքում խախտվել են իր իրավունքները: Նշվածից հետևում է, որ վարչական բողոքն, ինքնին, ենթադրում է իրավական հակասության առկայություն վարչական մարմնի և անձի միջև, և վարչական բողոքի ներկայացման նպատակը հենց այդ հակասության վարչական կարգով վերանայման ապահովումն է:

Օրենսդրական կարգավորումների վերլուծությունից հետևում է, որ վարչական բողոքը չի հանդիսանում պարզապես տեղեկատվական բնույթի դիմում, քանի որ այն ներկայացվում է վարչական ակտն անվավեր ճանաչելու, վարչական մարմնին որոշակի գործողություն կատարելու նպատակով: Այսինքն՝ վարչական բողոքն ուղղված է անձի իրավունքների պաշտպանությանը: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվել է այն մոտեցումը, որի համաձայն՝ անձը կարող է վարչական բողոք ներկայացնել իր իրավունքների պաշտպանության նպատակով: Նշված մոտեցումը թույլ է տալիս ճիշտ ընկալել վարչական բողոքի իրավական բնույթը՝ որպես անձի իրավունքների պաշտպանության անհատական միջոց:

Միաժամանակ վարչական բողոքի ներկայացմամբ հարուցվում է բողոքի հիման վրա իրականացվող վարչական վարույթը, որի շրջանակներում իրավասու վարչական մարմինը ստուգում է վիճարկվող վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության իրավաչափությունը: Հետևաբար վարչական բողոքը համդիսանում է վարչական բողոքարկման վարույթի հարուցման իրավական հիմքը:

Այսպիսով, հաշվի առնելով ինչպես իրավաբանական գրականության մեջ ձևավորված մոտեցումները, այնպես էլ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումները՝ վարչական բողոքը կարող ենք բնորոշել որպես իրավասու վարչական մարմնին ուղղված իրավական պահանջ, որով անձինք նախաձեռնում են վարչական բողոքարկման վարույթ՝ իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով վիճարկելով վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Վարչական բողոքի նման բնորոշումը, ընկալումը հնարավորություն է տալիս վարչական բողոքը դիտարկել ոչ միայն որպես իրավասու վարչական մարմնին ուղղված առանձին պահանջ կամ դիմում, այլ որպես վարչական բողոքարկման ինստիտուտի առանցքային կառուցվածքային տարր, որպիսի մոտեցումը կարծում ենք, առավել ամբողջական է արտահայտում վարչական բողոքի իրավական բնույթը, քանի որ այն միաժամանակ հանդես է գալիս որպես անձի իրավունքների պաշտպանությանն ուղղված իրավական միջոց, վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության վիճարկման ձև և վարչական բողոքարկման վարույթ հարուցելու իրավական հիմք:

Վերոգրյալի հիման վրա պետք է արձանագրել, որ վարչական բողոքի իրավական բնույթը չի կարող ամբողջությամբ բացահայտվել այն միայն որպես դիմում կամ պահանջ դիտարկելով: Վարչական բողոքի էությունը բացահայտվում է վարչական կարգով իրավունքների պաշտպանության և վարչական մարմնների գործունեության իրավաչափության վերանայման գործընթացում դրա գործառնությանն նշանակության միջոցով:

Վարչական բողոքի հասկացության ուսումնասիրությունն առանց դրա կառուցվածքային տարրերի բացահայտման ամբողջական լինել չի կարող: Կառուցվածքային տարրերի միջոցով է հնարավոր առավել հստակ պատկերացնել վարչական բողոքի բովանդակությունը և գործառնական նշանակությունը:

Վարչական բողոքի կառուցվածքային տարրերի շարքում, առաջին հերթին, առանձնանում է վարչական բողոք բերող սուբյեկտը, այսինքն՝ այն անձը, ում իրավունքները խախտվել են: Այսպիսով, այս տարրն ուղղակիորեն արտացոլում է վարչական բողոքի անհատական բնույթը, քանի որ վարչական բողոքը պայմանավորված է կոնկրետ անձի իրավունքների խախտմամբ և ուղղված է դրանց պաշտպանությանը: Հենց բողոք բերող սուբյեկտի առկայությունն է վարչական բողոքը տարբերակում հանրային կամ ընդհանուր վարչական վերահսկողությունից՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ վարչական բողոքարկման հիմքում ընկած է անձի սուբյեկտիվ հանրային իրավունքի իրացումը: Այսինքն՝ վարչական բողոքի միջոցով անձը վարչական կարգով արձագանքում է իր իրավունքներին միջամտող գործունեությանը՝ վարչարարությանը, և նախաձեռնում այդ իրավունքների պաշտպանությանն ուղղված համապատասխան վարչական վարույթ:

Հաջորդ տարրը վարչական բողոքի առարկան է, որը ներառում է այն վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը, որոնք բողոքարկվում են: Առարկայով է պայմանավորված վարչական վեճի նյութական հիմքը և բողոքարկման սահմանները, քանի որ հենց դրա միջոցով է որոշվում, թե վարչական մարմնի ո՞ր ակտը, գործողությունը կամ անգործությունն է վիճարկվում և ի՞նչ ծավալով պետք է իրականացվի վարչական բողոքարկման վարույթը: Այն սահմանում է նաև վերանայման շրջանակները, քանի որ իրավասու մարմինը բողոքի քննության ընթացքում գնահատում է միայն բողոքարկման առարկա հանդիսացող վարչարարության իրավաչափությունը: Ավելին, բողոքի առարկայով են պայմանավորված վարչական վեճի բովանդակությունը, փաստական և իրավական շրջանակները, ինչպես նաև բողոքարկման արդյունքում կայացվող վարչական ակտի հնարավոր սահմանները:

Երրորդ տարրը վարչական բողոքի հիմքերն են, որոնք հանդիսանում են վարչական ակտի կամ վարչական մարմնի վարքագծի ոչ իրավաչափ լինելու, անձի իրավունքների խախտման հետ կապված իրավական և փաստական հիմնավորումները: Հենց հիմքերի առկայությամբ են պայմանավորված բողոքի հիմնավորվածությունը և դրա քննության անհրաժեշտությունը, քանի որ դրանց միջոցով է բողոք բերող անձը ցույց գալիս վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության ենթադրյալ ոչ իրավաչափությունը և հիմնավորում իր իրավունքների խախտման փաստը: Բողոքի հիմքերով են պայմանավորված իրավասու վարչական մարմնի կողմից իրականացվող վերանայման ծավալն ու ուղղվածությունը: Բողոքի հիմքերը կարևոր նշանակություն ունեն նաև վարչական բողոքարկման վարույթի արդյունավետության տեսանկյունից, քանի որ դրանց հստակ ձևակերպումը հնարավորություն է տալիս բողոքը քննող վարչական մարմնին լիարժեք գնահատելու վիճարկվող վարչարարության իրավաչափությունը:

Բողոքի կառուցվածքային տարրերից է նաև պահանջը, որով բողոք բերող անձը ձևակերպում է իրավասու վարչական մարմնից իր ակնկալվող իրավական արդյունքը: Այն կարող է ուղղված լինել վարչական ակտի անվավեր ճանաչմանը, գործողության դադարեցմանը, գործողություններ կատարելուց ձեռնպահ մնալուն և այլն:

Պահանջն առանձնահատուկ նշանակություն ունի վարչական բողոքի բովանդակության տեսանկյունից. դրա միջոցով է հստակեցվում բողոք բերող անձի կամարտահայտությունը և բողոքարկման նպատակը: Պահանջով են պայմանավորվում նաև բողոքի քննության շրջանակները և բողոքարկման վարույթի արդյունքում իրավասու վարչական մարմնի կողմից կայացվելիք որոշման հնարավոր սահմանները, այդ որոշման տեսակը, քանի որ վարչական մարմինը, որպես կանոն, կաշկանդված է ներկայացված պահանջի առարկայով և բովանդակությամբ:

Անհրաժեշտ է նշել, որ պահանջը սերտորեն փոխկապակցված է նաև բողոքի առարկայի և հիմն

www.aradaradutyjournal.com

քերի հետ և պետք է բխի վիճարկվող վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության բնույթից և հիմնավորվի բողոքում ներկայացված փաստերով և համապատասխան իրավական նորմերով: Նշվածով հիմնավորվում է, որ պահանջը ապահովվում է վարչական բողոքի ներքին կառուցվածքային ամբողջականությունը:

Որպես վարչական բողոքի կառուցվածքային տարր կարող է դիտարկվել նաև բողոքի հասցեատերը՝ այն իրավասու վարչական մարմինը որին օրենսդրությամբ վերապահված է համապատասխան վարչական բողոքի քննությունը և լուծումը: Վարչական բողոքը կարող է քննվել ինչպես ակտն ընդունած վարչական մարմնի, այնպես էլ վերահաս վարչական մարմնի կողմից՝ կախված օրենսդրական համապատասխան կարգավորումներից: Ուստիև տարբեր կարող են լինել նաև բողոքի քննության արդյունքում կայացվող որոշումների բովանդակությունն ու իրավական հետևանքները, քանի որ յուրաքանչյուր վարչական մարմին գործում է իր իրավասության շրջանակներում: Մասնավորապես, եթե բողոքը քննվում է բողոքարկվող ակտն ընդունած վարչական մարմնի կողմից, ապա վերջինս իրավասու է անվավեր կամ առ ոչինչ ճանաչել իր իսկ ընդունած վարչական ակտը, ընդունել նոր վարչական ակտ, դադարեցնել ոչ իրավաչափ գործողությունը կամ կատարել հայցվող գործողությունը: Մինչդեռ, վերահաս վարչական մարմինը բացի նշված որոշումներից իրավասու է նաև բեկանել գրավոր վարչական ակտը և հանձնարարել վարչական ակտն ընդունած ստորադաս վարչական մարմնին՝ ընդունելու նոր վարչական ակտ կամ դադարեցնել ոչ իրավաչափ գործողությունը կամ կատարել հայցվող գործողությունը:

Այսպիսով, վարչական բողոքի կառուցվածքային տարրերի ուսումնասիրությունը մեզ թույլ է տալիս արձանագրել, որ վարչական բողոքը հանդիսանում է բարդ և բազմակողմանի վարչաիրավական երևույթ, որի յուրաքանչյուր տարրն ունի ինքնուրույն նշանակություն, սակայն դրանք գործում են փոխկապակցված՝ միասին ձևավորելով վարչական բողոքի ամբողջական կառուցվածքը:

Վարչական բողոքի տարրերի համակցությունը հնարավորություն է տալիս ապահովել վարչական բողոքարկման վարույթի որոշակիությունն ու կանխատեսելիությունը, բողոքի պատշաճ քննությունը և վարչական վեճի արագ և արդյունավետ լուծումը: Հետևաբար, կարելի է փաստել, որ վարչական բողոքի կառուցվածքային տարրերը ոչ միայն ձևավորում են բողոքի ներքին կառուցվածքը, այլ նաև պայմանավորում են վարչական կարգով անձանց իրավունքների պաշտպանության արդյունավետ իրականացումը:

Եզրակացություն

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ

վարչական բողոքը հանդիսանում է վարչական իրավունքի կարևորագույն կառուցվածքային տարրերից մեկը, ինչի միջոցով ապահովվում է անձանց սուբյեկտիվ հանրային իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Այն հնարավորություն է տալիս նախաձեռնել վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության արտադատական կարգով բողոքարկման վարույթ, որի շնորհիվ հնարավոր է դառնում առանց դատական միջամտության վերահսկել վարչական մարմինների գործունեության օրինականությունն ու հիմնավորվածությունը՝ միաժամանակ նպաստելով վարչական արդարադատության համակարգի արդյունավետությանը:

Միաժամանակ իրավաբանական գրականության մեջ վարչական բողոքի վերաբերյալ բազմազան մոտեցումները վկայում են այն մասին, որ վարչական բողոքն ունի բարդ և բազմաբովանդակ իրավական բնույթ: Հետազոտության արդյունքները թույլ են տալիս եզրահանգել, որ բողոքը չի կարող դիտարկվել միայն որպես դիմում կամ պահանջ. այն պետք է դիտարկվի որպես համալիր իրավական երևույթ, որը միաժամանակ ներառում է և՛ ընթացակարգային, և՛ նյութական բաղադրիչներ: Վարչական բողոքը պետք է դիտարկվել որպես վարչական բողոքարկման վարույթի առանցքային կառուցվածքային տարր, որի բովանդակությունը բացահայտվում է դրա կառուցվածքային տարրերի՝ սուբյեկտի, առարկայի, պահանջի, հիմքերի և հասցեատիրոջ, համակարգային վերլուծության միջոցով, ինչը թույլ է տալիս առավել հստակ ընկալել վարչական բողոքի իրավաբանական էությունը և դրա գործառական նշանակությունը: Ընդ որում, վարչական բողոքի կառուցվածքային տարրերի համակցությունն ապահովում է վարչական բողոքարկման վարույթի որոշակիությունն ու կանխատեսելիությունը, բողոքի պատշաճ քննությունը և վարչական վեճի արդյունավետ լուծումը:

Կատարված հետազոտության արդյունքում կարելի է փաստել, որ վարչական բողոքը հանդիսանում է վարչական կարգով իրավունքների պաշտպանության իրականացման կարևոր իրավական ձև, որով անձինք նախաձեռնում են վարչական բողոքարկման վարույթ՝ իրենց իրավունքները պաշտպանելու նպատակով վիճարկելով վարչական ակտը, վարչական մարմնի գործողությունը կամ անգործությունը:

¹ Վիճակագրական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին տարիներին ՀՀ վարչական դատարանում ստացված գործերի քանակն էականորեն աճել է: Մասնավորապես, 2015 թվականին դատարանն մուտք է եղել 8853, 2016 թվականին՝ 12011, 2017 թվականին՝ 16661, 2018 թվականին՝ 13909, 2019 թվականին՝ 12629, 2020 թվականին՝ 12622, 2021 թվականին՝ 15431, 2022 թվականին՝ 9886, 2023 թվականին՝ 13305, 2024 թվականին՝ 21329, իսկ 2025 թվականին՝ 25954 գործ (Տե՛ս դատարանների 2015-2025թթ. գործունեության վերաբերյալ հաշվետվությունները, <https://court.am/hy/statistic?>, 25.04.2026):

² Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՀՀՊՏ 201.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, 26.04.2026թ., <https://www.arlis.am/hy/acts/102510>:

³ Տե՛ս, օրինակ, Бахрах Д. Н. Административное право России. - М.: НОРМА, 2000. - С. 357–359, Зеленцов А. Б. Административно-правовой спор: вопросы теории. - М.: РУДН, 2005. - С. 47–53, Загряцков М. Д. Административная юстиция и право жалобы в теории и законодательстве. - М., 1925. - С. 19–24.

⁴ Տե՛ս, Артамонов А. Н. Обжалование действий и решений органов расследования в досудебных стадиях российского уголовного процесса: дис. ... канд. юрид. наук: 12.00.09. - Омск, 2003. - 215 с. С 25.

⁵ Տե՛ս, Защита гражданских прав (суд, милиция, прокуратура): практическое пособие. Екатеринбург, 1999. С. 5.

⁶ Տե՛ս, Килясханов И.Ш. Институт обжалования в административной деятельности органов внутренних дел: дис. ... канд. юрид. наук. М., 1984. С. 182.

⁷ Տե՛ս, Загряцков М.Д. Административная юстиция и право жалобы в теории и законодательстве / М.Д. Загряцков. М.: Издательство «Право и жизнь», 1925. 95 с.

⁸ Տե՛ս, Бахрах Д.Н., Семенов А.В. Понятие “административная жалоба” / Административное право на рубеже веков: Межвузовский сборник научных трудов / Д.Н. Бахрах, С.Д. Хазанов. Екатеринбург: Изд-во Урал. Ун-та, 2003. - С. 121

⁹ Տե՛ս, Григорьева Н. В. Обжалование как форма правовой защиты прав и законных интересов участников уголовного процесса в досудебном производстве: дис. ... канд. юрид. наук: 12.00.09. - Москва, 2000. -230 с. С 14.

¹⁰ Տե՛ս, Артамонов А. Н. Обжалование действий и решений органов расследования в досудебных стадиях российского уголовного процесса: дис. ... канд. юрид. наук: 12.00.09. - Омск, 2003. - 215 с. С 25.

¹¹ Տե՛ս, Кобалевский В. Советское административное право // Административная юстиция: конец XIX – начало XX века: хрестоматия. – Воронеж, 2004. - Ч. 2. С. 195, 197.

¹² «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ. 413, հոդվ. 69, 26.04.2026թ., <https://www.arlis.am/hy/acts/220987>:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Артамонов А. Н. Обжалование действий и решений органов расследования в досудебных стадиях российского уголовного процесса: дис. ... канд. юрид. наук: 12.00.09. - Омск, 2003. - 215 с.
2. Артамонов А. Н. Обжалование действий и решений органов расследования в досудебных стадиях российского уголовного процесса: дис. ... канд. юрид. наук: 12.00.09. - Омск, 2003. - 215 с.
3. Бахрах Д. Н. Административное право России. - М.: НОРМА, 2000.
4. Бахрах Д.Н., Семенов А.В. Понятие «административная жалоба» / Административное право на рубеже веков: Межвузовский сборник научных трудов / Д.Н. Бахрах, С.Д. Хазанов. Екатеринбург: Изд-во Урал. Ун-та, 2003.
5. Григорьева Н. В. Обжалование как форма правовой защиты прав и законных интересов участников уголовного процесса в досудебном производстве: дис. ... канд. юрид. наук: 12.00.09. - Москва, 2000. - 230 с.
6. Зеленцов А. Б. Административно-правовой спор: вопросы теории. - М.: РУДН, 2005. - С. 3. Загряцков М. Д. Административная юстиция и право жалобы в теории и законодательстве. - М., 1925.
7. Защита гражданских прав (суд, милиция, прокуратура): практическое пособие. Екатеринбург, 1999. Килясханов И.Ш. Институт обжалования в административной деятельности органов внутренних дел: дис. ... канд. юрид. наук. М., 1984. С. 182.
8. Загряцков М.Д. Административная юстиция и право жалобы в теории и законодательстве / М.Д. Загряцков. М.: Издательство «Право и жизнь», 1925 95 с.
9. Кобалевский В. Советское административное право // Административная юстиция: конец XIX – начало XX века: хрестоматия. - Воронеж, 2004. – Ч. 2.
10. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ. 413, հոդվ. 69, 26.04.2026թ., <https://www.arlis.am/hy/acts/220987>:
11. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՀՀՊՏ 201.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, 26.04.2026թ., <https://www.arlis.am/hy/acts/102510>:

Мери Амбарцумян

Соискатель кафедры публичного и международного
права Европейского университета Армении

РЕЗЮМЕ

Правовая природа и структурные элементы административной жалобы

В целях раскрытия правовой природы и структурных элементов административной жалобы нами были исследованы различные подходы, сформировавшиеся в юридической литературе относительно административной жалобы, а также соответствующие положения законодательства Республики Армения. В результате в настоящей статье были выявлены основные структурные элементы административной жалобы — субъект, предмет, основания, требование и адресат, а также рассмотрены вопросы, связанные с их значением в процессе осуществления административного обжалования и защиты прав в административном порядке. В результате проведенного исследования было обосновано и особо подчеркнуто, что административная жалоба является ключевым и важнейшим структурным элементом производства по административному обжалованию, посредством которого лица в целях защиты своих прав инициируют административное обжалование административного акта, действия или бездействия административного органа. Таким образом, проведенное исследование позволяет прийти к выводу о том, что административная жалоба представляет собой правовое основание для возбуждения производства по административному обжалованию, а взаимосвязанность и целостность ее структурных элементов обеспечивают эффективное осуществление производства по административному обжалованию и надлежащую защиту прав в административном порядке.

Ключевые слова: административная жалоба, административное обжалование, административное производство, административный акт, субъективные публичные права, защита прав, административный контроль, административно-правовой спор, внесудебный порядок, административная юстиция.

Meri Hambarzumyan

PHD Candidate at the Chair of Public and International Law,
European University of Armenia

SUMMARY

The legal nature and structural elements of an administrative complaint

For the purpose of revealing the legal nature and structural elements of the administrative complaint, we have studied various approaches formed in legal literature regarding the administrative complaint, as well as the regulations of the legislation of the Republic of Armenia, as a result of which the main structural elements of the administrative complaint — the subject, object, grounds, claim, and addressee — have been revealed in the present article, and issues related to their significance in the process of the implementation of administrative appeal proceedings and the protection of rights through administrative procedures have been examined. As a result of the conducted research, it has been substantiated and particularly emphasized that the administrative complaint constitutes the key and most important structural element of administrative appeal proceedings through which individuals, for the purpose of protecting their rights, initiate the administrative appeal of an administrative act or the action or inaction of an administrative body.

The conducted research allows us to arrive at the conclusion that the administrative complaint constitutes the legal basis for initiating administrative appeal proceedings, while the interrelatedness and integrity of its structural elements ensure the effective implementation of administrative appeal proceedings and the proper protection of rights through administrative procedures.

Key words: administrative complaint, administrative appeal, administrative proceedings, administrative act, subjective public rights, protection of rights, administrative control, administrative dispute, extrajudicial procedure, administrative justice.

Բնագիրը ներկայացվել է 22.05.2026թ.
Ընդունվել է տպագրության 27.05.26թ.

ՄԵՐԻ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ

Հայաստանի եվրոպական համալսարանի հանրային
և միջազգային իրավունքի ամբիոն հայցորդ

ՊԱՏՇԱՆՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՎԱՐՈՒՅԹՈՒՄ

Վարչական բողոքարկման վարույթի պատշաճ և արդյունավետ իրականացումը կարևոր նշանակություն ունի անձի իրավունքների պաշտպանության, Վարչական դատարանի բեռնաթափման և հանրային իշխանության մարմինների նկատմամբ վստահության ձևավորման տեսանկյունից: Իսկ վարչական բողոքարկման վարույթի արդյունավետությունը պայմանավորված է ոչ միայն բողոքը քննող մարմնի կողմից ընթացակարգային պահանջների պահպանմամբ, այլ նաև բողոքի իրական և բովանդակային քննությանը, գործի փաստական հանգամանքների բազմակողմանի գնահատմամբ, որոշումների պատշաճ պատճառաբանվածությամբ և բողոքը քննող մարմնի անաչառությամբ: Հետազոտության շրջանակներում անդրադարձ է կատարվել վարչական բողոքարկման վարույթում պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման հիմնախնդիրներին, և առանձնացվել են վարչական բողոքարկման վարույթում վարչարարության որակի գնահատման հիմնական չափանիշները:

Հիմնաբառեր - պատշաճ վարչարարության իրավունք, վարչական բողոքարկման վարույթ, վարչական բողոք, վարչարարության նյութական իրավաչափություն, վարչարարության որակ, վարչական վարույթ, բողոքի բովանդակային քննություն, վարչական մարմնի անաչառություն, որոշումների պատճառաբանվածություն, արտադատական պաշտպանություն:

Ներածություն

Վարչարարության իրավաչափությունն ու արդյունավետությունը պայմանավորված են ինչպես վարչական մարմինների կողմից ընդունվող վարչական ակտերի բովանդակային իրավաչափությամբ, այնպես էլ այն հանգամանքով, թե որքանով է վարչարարության իրականացման և դրա վերանայման ընթացքում ապահովվում անձի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ պաշտպանությունը: Եվ այս համատեքստում, անշուշտ, առանձնահատուկ նշանակություն ունի ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պատշաճ վարչարարության իրավունքը, որի նպատակն է ապահովել հանրային իշխանության գործունեության իրավաչափությունը, սահմանափակել վարչական մարմինների կամայականությունը և երաշխավորել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը վարչարարության ողջ ընթացքում:

Պատշաճ վարչարարության իրավունքը սահմանված է ՀՀ Սահմանադրության 50-րդ հոդվածով, որն ամրագրում է անձին առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, լաված լինելու իրավունքը, ինչպես նաև անձի՝ իրեն վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը: Նշված սահմանադրաիրավական երաշխիքները տարածվում են նաև վարչական բողոքարկման վարույթի նկատմամբ, քանի որ վարչական բողոքարկումը վարչական վարույթի ինքնուրույն տեսակ է, որի շրջանակներում վարչական մարմինը պարտավոր է ապահովել անձի՝ պատշաճ վարչարարության իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացումը:

Վարչական բողոքարկման վարույթը հանդիսանում է վարչական իրավունքի կարևորագույն ինստիտուտներից մեկը, որը հնարավորություն է տալիս արտադատական կարգով վիճարկել վարչական ակտերը, վարչական մարմինների գործողությունները կամ անգործությունը՝ նպատակ ունենալով վերականգնել անձանց խախտված իրավունքները և վերացնել վարչարարության ընթացքում թույլ տրված սխալները: Եվ այս առումով, վարչական բողոքարկման վարույթում առանձնակի կարևորություն են ձեռք բերում բողոքի իրական, բովանդակային քննության, գործի փաստական և իրավական հանգամանքների ինքնուրույն ու բազմակողմանի գնահատման, վարչական մարմնի անաչառության, բողոքաբերի կողմից ներկայացված բոլոր փաստարկներին պատշաճ անդրադարձի և կայացվող որոշումների բավարար պատճառաբանվածության ապահովման խնդիրները: Մասնավորապես, վարչական մարմինների միջև հիերարխիկ ենթակայության, վարչական մարմնի կողմից իր իսկ իրականացրած վարչարարության վերանայման հնարավորության («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդված 70, մաս 2), բողոքների ձևական, ոչ բովանդակային քննության, կայացվող որոշումների ոչ բավարար հիմնավորվածության և վարույթի ձգձգումների պատճառով, ըստ էության, փաստացի կարող է սահմանափակվել պատշաճ վարչարարության բովանդակությունը: Արդյունքում կարող է նվազել վարչական բողոքարկման վարույթի արդյունավետությունը:

Վարչական բողոքարկման վարույթում պատշաճ վարչարարությունը պետք է դիտարկել ոչ մի-

այն որպես առանձին ընթացակարգային երաշխիքների ամբողջություն, այլ նաև որպես վարչարարության որակի և վարչարարության նյութական իրավաչափության գնահատման չափանիշ: Կատարված հետազոտության շրջանակներում բողոքարկման վարույթը դիտարկվում է որպես վարչական համակարգի ներսում վարչարարության թերությունների և սխալների ուղղման և անձի իրավունքների իրական պաշտպանության մեխանիզմ, որի շրջանակներում գնահատման առարկա պետք է դառնա վարչարարության ընդհանուր պատշաճությունը, հիմնավորվածությունը, համաչափությունը և արդյունավետությունը:

Մեր կողմից իրականացված հետազոտության նպատակն է ուսումնասիրել վարչական բողոքարկման վարույթում պատշաճ վարչարարության իրավունքի ապահովման հիմնախնդիրները, բացահայտել գործող իրավակարգավորումների խնդիրները, ինչպես նաև մշակել վարչական բողոքարկման վարույթի արդյունավետության և ընթացակարգային երաշխիքների կատարելագործմանն ուղղված առաջարկություններ: Նշվածի համատեքստում, ի թիվս այլնի, աշխատության շրջանակներում առաջարկվում է վարչական բողոքարկման վարույթում վարչարարության որակի գնահատման չափանիշների համակարգ, որը ներառում է բողոքի իրական քննությունը, գործի փաստական հանգամանքների ինքնուրույն և լրիվ պարզումը, որոշումների պատշաճ պատճառաբանվածությունը, բողոքարկման մարմնի անաչառությունը:

Հետազոտության մեթոդաբանությունը

Հետազոտության շրջանակներում կիրառվել են ֆորմալ-տրամաբանական և ֆորմալ-իրավական, ինչպես նաև համակարգային, կառուցվածքային-գործառնության, համեմատական և իրավական վերլուծության մեթոդները, որոնք օգտագործվել են ուսումնասիրության, հասկացությունների և իրավական բովանդակության բացահայտման գործընթացում: Ուսումնասիրվել են ՀՀ Սահմանադրության, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի համապատասխան կարգավորումները, ինչպես նաև արդի իրավական չափանիշներն ու դոկտրինալ մոտեցումները:

Հետազոտության արդյունքներ և քննարկում

Պատշաճ վարչարարության իրավունքը հանդիսանում է իրավական պետության և հանրային իշխանության իրավաչափ գործունեության կարևորագույն բաղադրիչներից մեկը. իրավական պետությունում հանրային իշխանությունը սահմանափակված է Սահմանադրությամբ, օրենքներով, մարդու իրավունքներով և չի կարող գործել կամա-

յականորեն: Վարչարարության արդյունավետությունը պայմանավորվում է ոչ միայն վարչական մարմինների կողմից ընդունվող որոշումների բովանդակային իրավաչափությամբ, այլ նաև այն ընթացակարգային երաշխիքներով, որոնց ապահովմամբ իրականացվում է վարչարարությունը: Նշվածից անմիջականորեն բխում է, որ վարչական վարույթը պետք է կազմակերպվի և իրականացվի այնպես, որ այդ գործընթացում ապահովվի անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը, վարչական մարմինների գործունեության թափանցիկությունն ու անաչառությունը, և, իհարկե, կայացվող որոշումների պատշաճ հիմնավորվածությունը:

Պատշաճ վարչարարության իրավունքն ամրագրվել է ՀՀ Սահմանադրությամբ, որի 50-րդ հոդվածով սահմանվել է անձին առնչվող գործերի անաչառ, արդարացի և ողջամիտ ժամկետում քննության իրավունքը, անձի՝ իրեն վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու իրավունքը և անձի համար միջամտող անհատական ակտ ընդունելուց առաջ անձի լավամ լինելու իրավունքը (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 50, մաս 1,2,3):

Պատշաճ վարչարարության իրավունքը սերտորեն փոխկապակցված է Սահմանադրությամբ ամրագրված իրավական պետության սկզբունքի հետ (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 1) և հանդես է գալի որպես հանրային իշխանության իրավաչափ գործունեության կարևորագույն սահմանադրաիրավական երաշխիքներից մեկը: Իրավական պետության պայմաններում հանրային իշխանության իրականացումը պետք է հիմնված լինի մարդու և քաղաքացու հիմնարար իրավունքների և ազատությունների ապահովման, իրավական որոշակիության, համաչափության, ինչպես նաև կամայականության բացառման սկզբունքների վրա: Ժամանակակից սահմանադրաիրավական դոկտրինում ընդգծվում է, որ լավ մշակված սահմանադրությունները, որպես կանոն, կոչված են նպաստելու համաչափ և ոչ կամայական պետական վարքագծին²: Այս համատեքստում պատշաճ վարչարարության իրավունքը հանդիսանում է Սահմանադրությամբ ամրագրված պահանջների համակարգ, որն ուղղված է վարչարարության գործընթացում անձի իրավունքների և օրինական շահերի արդյունավետ ապահովմանը և պաշտպանությանը:

Պատշաճ վարչարարության իրավունքի ձևավորումը պայմանավորված է վարչական մարմինների կողմից հանրային իշխանության կամայական իրականացումը սահմանափակելու անհրաժեշտությամբ³: Ժամանակակից վարչական իրավունքի դոկտրինում պատշաճ վարչարարության իրավունքը դիտարկվում է որպես հիմնարար իրավունք, քանի որ այն ձևավորում է քաղաքացի-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ների իրավունքը՝ հանրային իշխանություններից ակնկալելու վարքագծի որոշակի չափանիշ, այնպիսի վարքագիծ, որը հիմնված է իրավունքի գերակայության սկզբունքի վրա՝ Եվ, հետևաբար, վարչական վարույթի ընթացքում անձին լսելու, ներկայացված փաստարկները բազմակողմանի և օբյեկտիվ գնահատելու պարտականությունները պետք է դիտարկել ոչ միայն որպես վարչարարության արդյունավետ կազմակերպման միջոցներ, այլ նաև որպես մարդու հիմնարար իրավունքների պաշտպանության և իրավական պետության սկզբունքի իրականացման կարևորագույն երաշխիքներ:

Տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ վարչական բողոքի քննարկումն իրականացվում է նույն օրենքի II բաժնով սահմանված դրույթներին համապատասխան, եթե նույն բաժնով այլ բան նախատեսված չէ («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 75, մաս 1): Ընդ որում, նույն օրենքի 2-րդ բաժնով սահմանվել են վարչական վարույթի ընդհանուր կանոնները, ընթացակարգային ընդհանուր պահանջները: Նշված իրավակարգավորումից, ըստ էության, հետևում է, որ վարչական բողոքի քննարկման գործընթացն իրենից ներկայացնում է վարչական վարույթի ինքնուրույն տեսակ, որի նկատմամբ կիրառելի են վարչական վարույթի ընդհանուր սկզբունքներն ու ընթացակարգային երաշխիքները:

Ուստի, վարչական մարմինը բողոքարկման վարույթի շրջանակներում պարտավոր է պահպանել վարչական վարույթի ընդհանուր սկզբունքները և ապահովել անձի՝ Սահմանադրությամբ երաշխավորված պատշաճ վարչարարության իրավունքի արդյունավետ իրացումը: Հակառակ պարագայում վարչական բողոքարկման վարույթը չի կարող լիարժեք ապահովել անձի իրավունքների արդյունավետ արտադական պաշտպանության գործառույթի իրականացումը: Վարչական բողոքարկման վարույթի որակը պայմանավորված է ոչ միայն ձևական առումով օրենքով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ, այլ նաև այն հանգամանքով, թե որքանով է բողոքարկման վարույթի ընթացքում ապահովվում անձի իրավունքների իրական և արդյունավետ պաշտպանությունը, վարչական մարմնի կողմից ներկայացված փաստարկների բազմակողմանի և օբյեկտիվ գնահատումը, ինչպես նաև վարչական մարմնի կողմից իրականացված վարչարարության նկատմամբ անձի վստահության ձևավորումը:

Այսպիսով, վարչական բողոքարկման վարույթում պատշաճ վարչարարության իրավունքի ապահովումը պետք է դիտարկել ոչ միայն որպես ընթացակարգային պահանջների պահպանման խնդիր, այլ նաև որպես վարչարարության որակի,

արդյունավետության և հանրային իշխանության մարմինների նկատմամբ վստահության ապահովման կարևորագույն իրավական երաշխիք:

Կարծում ենք՝ վարչական բողոքարկման վարույթում վարչարարության որակի գնահատման համար անհրաժեշտ է հաշվի առնել վարչական բողոքարկման ինստիտուտի գործառույթային նշանակությունը. վարչական բողոքը չի կարող դիտարկվել միայն որպես անձի կողմից վարչական ակտի, վարչական մարմնի գործողության կամ անգործության վերաբերյալ անհամաձայնություն հայտնելու ընթացակարգային միջոց, այլ այն իր իրավական բնույթով նաև արդեն իսկ իրականացված վարչարարության իրավաչափությունը, պատշաճությունը և անձի իրավունքների պաշտպանության իրական արդյունավետությունը վերանայելու պահանջ է՝ ուղղված իրավասու վարչական մարմնին: Եվ այս առումով, վարչական բողոքարկման վարույթը պետք է դիտարկել ոչ միայն որպես անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության միջոց, այլ նաև որպես վարչարարության օրինակականության, պատշաճության և վարչական համակարգի ներսում օրինակականության պահպանման մեխանիզմ: Հետևաբար, ակնհայտ է, որ վարչական բողոքարկման վարույթի արդյունավետությունը չենք կարող գնահատել միայն այն հանգամանքով, թե բողոքը բավարարվել է, թե մերժվել: Կարևոր նշանակություն ունի այն հանգամանքը, թե արդյո՞ք բողոքը քննող մարմնին իրականում վերանայել է վիճարկվող վարչարարությունը, բազմակողմանիորեն քննարկել՞ և գնահատել՞ է անձի փաստարկները, գործի բոլոր հանգամանքները և կայացրել՞ է պատճառաբանված որոշում: Վարչական բողոքարկման վարույթն իր նպատակով և նշանակությամբ ուղղված է անձի իրավունքների պաշտպանությանը և վարչական մարմնի որոշման վերանայմանը, հետևաբար, այդ վարույթում վարչական մարմինը չի կարող գործել միայն որպես նախկինում ընդունված ակտի հիմնավորումները պաշտպանող, կրկնող մարմին. բողոքը քննող մարմինը պետք է հանդես գա որպես վարչարարության օրինակականությունը, պատշաճությունը և որակն ինքնուրույն գնահատող սուբյեկտ:

Այս առումով վարչական բողոքարկման վարույթում վարչարարության որակը, ըստ էության, կարող է գնահատվել միմյանց հետ փոխկապակցված հետևյալ չափանիշներով՝ բողոքի իրական և բովանդակային քննության, գործի փաստական հանգամանքների ինքնուրույն և լրիվ պարզման, որոշումների պատշաճ պատճառաբանվածության, ինչպես նաև բողոքարկման մարմնի անաչառության և ինքնուրույնության չափանիշներով: Ստորև մեր կողմից կքննարկեն վարչական բողոքարկման վարույթում պատշաճ վարչարարության ապահովման հարցում դրանցից յուրաքանչյուրի դերն ու

նշանակությունը:

Այսպես, վարչական բողոքի քննության շրջանակներում իրավասու վարչական մարմինը պետք է գնահատի ոչ միայն վարչական բողոքի ձևական համապատասխանությունն օրենքով սահմանված պահանջներին, այլ նաև պետք է պարզի բողոք բերող անձի իրական կամքը, վերջինիս կողմից ներկայացված փաստական հանգամանքները և ակնկալվող վերջնական իրավական հետևանքը, որին անձը ձգտում է հասնել բողոքի քննարկման արդյունքում: Այլ կերպ ասած՝ վարչական բողոքարկման վարույթում առաջնային նշանակությունը պետք է տրվի ոչ թե ձևական մոտեցմանը, այլ վարչական բողոքի բովանդակային ընկալմանը, ինչը բխում է պատշաճ վարչարարության էությունից: Վարչական մարմնի առաջնային խնդիրն է պարզել՝ արդյո՞ք իրականում խախտվել է անձի իրավունքները, թե՛ ոչ:

Նշվածի համատեքստում կարևոր նշանակություն ունի նաև անձի կողմից իր բողոքի պատշաճ ներկայացմանը և բողոքարկման վարույթում անձի իրավունքների արդյունավետ իրացմանը նպաստելու՝ վարչական մարմնի պարտականությունը: Այսպես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ եթե դիմումում առկա են ձևական սխալներ, որոնք կարող են շտկվել, ապա վարչական մարմինը դրանք մատնացույց է անում դիմողին՝ նրան հնարավորություն ընձեռելով շտկելու այդ սխալները, կամ ինքն է շտկում դրանք՝ նախապես կամ հետագայում դիմողին իրազեկելով այդ մասին: Եթե դիմումին կից ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, ապա վարչական մարմինը դիմողին առաջարկում է սահմանված ժամկետում համալրել այդ ցանկը («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 32):

Նշված կարգավորումը կարևոր նշանակություն ունի պատշաճ վարչարարության տեսանկյունից, քանի որ այն ուղղված է անձի իրավունքների պաշտպանության ապահովմանը և վարչարարության ընթացքում ձևական խոչընդոտների վերացմանը: Օրենսդրական նշված կարգավորումը բույլ է տալիս արձանագրել, որ վարչական վարույթի իրականացման նպատակով պայմանավորված՝ դիմումի կամ բողոքի ձևական թերությունները չպետք է հիմք հանդիսանան անձի պահանջի, բողոքի մերժման համար: Ընդհակառակը, ամրագրվել է վարչական մարմնի պարտականությունը՝ նպաստելու անձի կողմից իր իրավունքների արդյունավետ իրացմանը՝ հնարավորություն տալով վերացնելու բողոքի պատշաճ քննությանը խոչընդոտող թերությունները:

Սակայն գործող իրավակարգավորումը հիմնականում վերաբերում է դիմումի կամ բողոքի

ձևական թերություններին և, ըստ էության, ուղղված է առավելապես տեխնիկական կամ ձևական սխալների շտկմանը: Մինչդեռ, կարծում ենք, վարչական բողոքարկման վարույթում պատշաճ վարչարարության ապահովումը պահանջում է վարչական մարմնի առավել ակտիվ դերակատարում նաև բողոքի բովանդակային հստակեցման հարցում: Մասնավորապես, գործնականում անձը կարող է ոչ ճշգրիտ ձևակերպել իր պահանջը, սխալ ընտրել իրավական հիմքը, ոչ լիարժեք ներկայացնել իր դիրքորոշումը կամ իրավաբանորեն սխալ ձևակերպել ակնկալվող իրավական հետևանքը: Եվ այսպիսի իրավիճակներում միայն ձևական սխալների շտկման հնարավորությունը բավարար չէ անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման համար, քանի որ եթե վարչական մարմինը չի փորձում պարզել բողոք բերող անձի իրական կամքը, բողոքի իրական նպատակը, ապա վարչական բողոքարկման վարույթը կարող է վերածվել ձևական ընթացակարգի, ինչը կհակասի պատշաճ վարչարարության էությանը:

Վերոնշյալի համատեքստում կարելի է ասել, որ պատշաճ վարչարարության սկզբունքից բխում է վարչական մարմնի՝ ոչ միայն ձևական սխալների շտկմանը նպաստելու, այլ նաև բողոքի բովանդակային հստակեցմանը աջակցելու պարտականությունը: Այսինքն՝ բողոքը քննող իրավասու մարմինը բողոքարկման վարույթում պետք է հանդես գա որպես ակտիվ դերակատար՝ մատնանշելով և հնարավորություն տալով անձին հստակեցնելու իր պահանջները, պահանջվող իրավական հետևանքը, ներկայացնելու լրացուցիչ փաստարկներ, ճշտելու այն հանգամանքները, որոնց վրա հիմնվում է բողոքը: Նշված պարտականության սահմանման անհրաժեշտությունը բխում է վարչական վարույթի նպատակից, քանի որ բողոքարկման վարույթում վարչարարության հիմնական խնդիրը պետք է լինի ոչ թե անձի իրավական գիտելիքների պակասի կամ ոչ ճշգրիտ ձևակերպումների օգտագործումը բողոքը մերժելու համար, այլ անձի իրավունքների և օրինական շահերի իրական ու արդյունավետ պաշտպանությունը:

Ուստի վարչական բողոքարկման վարույթում նպատակահարմար է ձևավորել այնպիսի մոտեցում, համաձայն որի՝ վարչական մարմնի՝ ձևական սխալների շտկմանը նպաստելու պարտականությունը կներառի նաև բողոքի բովանդակային հստակեցմանը նպաստելու պարտականությունը, ինչը հնարավորություն կտա առավել լիարժեք իրացնելու պատշաճ վարչարարության սահմանադրաիրավական բովանդակությունը և բարձրացնել վարչական բողոքարկման վարույթի արդյունավետությունը:

Միաժամանակ, բողոքը քննող մարմինը չպետք է սահմանափակվի միայն այն փաստական

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տվյալներով և հիմնավորումներով, որոնց վրա հիմնվել է համապատասխան վարչական մարմինը վեճի առարկա վարչարարությունն իրականացնելիս, բողոքարկվող վարչական ակտը կայացնելիս, քանի որ վարչական բողոքարկման վարույթի իմաստը իրավասու մարմնի կողմից երկրորդ անգամ՝ արդեն բողոքի փաստարկների լույսի ներքո, գործի փաստական և իրավական հիմքերի գնահատումն է: Իսկ վերանայվող ակտի պատճառաբանությունը բողոքը քննող մարմնի կողմից մեխանիկորեն կրկնվելու պարագայում բողոքարկման վարույթը կորցնում է իր ինքնուրույն նշանակությունը և վերածվում է ձևական հաստատման ընթացակարգի:

Վարչական բողոքարկման վարույթում փաստերի ինքնուրույն և լրիվ պարզման պահանջը բխում է ոչ միայն պատշաճ վարչարարության ընդհանուր սկզբունքներից, այլ նաև վարչական բողոքարկումը կարգավորող օրենսդրական կոնկրետ նորմերից:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ վարչական բողոքը քննարկվում է բողոքարկված վարչական ակտի իրավաչափության, իսկ հայեցողական լիազորության իրականացման դեպքում՝ նաև նպատակահարմարության տեսանկյունից: Նույն օրենքով նախատեսվում է նաև, որ վարչական մարմինը վարչական բողոքը քննարկելիս առաջնորդվում է ինչպես գործում առկա, այնպես էլ լրացուցիչ ներկայացվող ապացույցներով («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 75, մաս 2,3):

Վերոնշյալ կարգավորումներից հետևում է, որ վարչական բողոքարկման վարույթը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կառուցված է ոչ թե բացառապես ձևական վերահսկողության, այլ վարչարարության բովանդակային վերանայման տրամաբանության վրա: Այսինքն՝ բողոքը քննող մարմնին վերապահված է ոչ միայն նախնական վարչական ակտի իրավական հիմքերի ստուգման, այլ նաև վարչարարության ընթացքում ձևավորված փաստական և իրավական ամբողջ իրավիճակի վերագնահատման լիազորություն:

Բողոքարկման վարույթում լրացուցիչ ապացույցներ ներկայացնելու և գնահատելու իրավական հնարավորությունը նշանակում է, որ բողոքը քննող մարմինը չի կարող սահմանափակվել միայն վերանայվող ակտի պատճառաբանության մեխանիկական վերահաստատմամբ: Նման իրավակարգավորման և գործնականում դրա իրացման շնորհիվ ապահովվում է բողոքարկման վարույթի բազմակողմանիությունը, օբյեկտիվությունը և արդյունքում բողոքի վերաբերյալ պատճառաբանված որոշում կայացնելու հնարավորությունը:

Նույն տրամաբանությունն ունի նաև հայեցո-

ղական լիազորությունների իրականացման դեպքում վարչական ակտի նպատակահարմարության գնահատման հնարավորությունը. նպատակահարմարության ստուգումը ենթադրում է ոչ միայն իրավական նորմի ձևական կիրառման ստուգում, այլ նաև վարչական մարմնի կողմից ընդունված որոշման ողջամտության, համաչափության, անհրաժեշտության և տվյալ իրավիճակում առավել ճիշտ լուծում լինելու գնահատում: Բողոքը քննող մարմինը պետք է ոչ միայն պարզի վարչական ակտն օրենքին ձևականորեն համապատասխանելու, այլ նաև վարչարարությունն ամբողջությամբ օբյեկտիվ, համաչափ, հիմնավորված և անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության պահանջներին համապատասխան իրականացված լինելու հարցը: Հակառակ պարագայում, վարչական բողոքարկման վարույթը կկորցնի իր ինքնուրույն նշանակությունը և դերը, և չի ապահովի անձի իրավունքների իրական արտադատական պաշտպանությունն ու պատշաճ վարչարարության սկզբունքի լիարժեք իրացումը:

Այսպիսով, վարչական բողոքարկման վարույթի արդյունավետ իրականացումը ենթադրում է գործի փաստական և իրավական հանգամանքների ինքնուրույն, լրիվ և բազմակողմանի գնահատում:

Անդրադառնալով բողոքարկման վարույթի արդյունքում կայացվող որոշումների պատշաճ պատճառաբանվածության հարցին՝ պետք է նշել, որ վարչական բողոքարկման վարույթում պատշաճ վարչարարությունը ենթադրում է, որ բողոքարկման արդյունքում կայացվող որոշումը պետք է բովանդակի ոչ միայն բողոքը քննող մարմնի վերջնական եզրակացությունը, այլ նաև բողոք բերող անձի հիմնական փաստարկներին տրված հստակ պատասխանը: Որոշման բովանդակությունից պետք է պարզի լինի, որ անձի փաստարկները ոչ թե պարզապես արձանագրվել, այլ իրականում ուսումնասիրվել և գնահատվել են: Հակառակ դեպքում լսված լինելու իրավունքը կվերածվի ձևական իրավունքի, իսկ բողոքարկման վարույթը՝ ոչ արդյունավետ պաշտպանության միջոցի:

Ինչ վերաբերում է վարչական մարմնի անաչառության և ինքնուրույնության չափանիշին, ապա վարչական բողոքարկման վարույթում անաչառությունը չի նշանակում միայն այն, որ բողոքը քննող պաշտոնատար անձն անձնական շահագրգռվածություն չունի: Այն ենթադրում է նաև, որ բողոքը քննող մարմինը չպետք է կաշկանդված լինի համապատասխան վարչական մարմնի նախկին դիրքորոշմամբ: Բողոքարկման վարույթը պահանջում է ինքնուրույն իրավական գնահատում, հակառակ դեպքում այն կորցնում է իր ինքնուրույն նշանակությունը՝ վերածվելով վարչական համակարգի ներսում արդեն կայացված դիրքորոշման

www.aradaradutyjournal.com

ձևական վերահաստատման մեխանիզմի:

Վարչական բողոքարկման վարույթում բողոքը քննող մարմնի անաչառության և ինքնուրույնության պահանջը բխում է նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով ամրագրված՝ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության պահանջից, որի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները՝ բացառելով կանխակալությունը և նախապես ձևավորված դիրքորոշման ազդեցությունը վարչարարության արդյունքի վրա («Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենք, հոդվ. 37):

Հետևաբար, վարչական բողոքարկման վարույթում անաչառության սկզբունքը պետք է մեկնաբանել ոչ միայն սուբյեկտիվ, այլ նաև օբյեկտիվ իմաստով: Այսինքն՝ կարևոր է ոչ միայն այն, որ բողոքը քննող պաշտոնատար անձն անձնական շահագրգռվածություն չունենա, այլ նաև այն, որ բողոքարկման վարույթն իրականացված լինի այնպես, որպեսզի անձի մոտ օբյեկտիվորեն ձևավորվի վստահություն, որ իր բողոքի կապակցությամբ իրականացվել է իրական, բովանդակային, ինքնուրույն քննություն:

Վերոգրյալ չափանիշների պատշաճ ապահովումն ուղղակիորեն պայմանավորում է նաև վարչարարության նկատմամբ հանրային վստահության ձևավորումը: Վարչական բողոքարկման վարույթը կարևոր նշանակություն ունի ոչ միայն վարչական ակտերի վերանայման, այլ նաև վարչական համակարգի նկատմամբ անձի վստահության պահպանման տեսանկյունից: Վարչական բողոքներ կայացնելով՝ անձն ակնկալում է, որ վարչական մարմինը կկարողանա ինքնուրույն, օբյեկտիվ և անաչառ կերպով վերանայել իրականացված վարչարարությունը, գնահատել թույլ տրված հնարավոր սխալները և վերացնել իր իրավունքների խախտումները:

Եթե վարչական բողոքարկման վարույթը կրում է ձևական բնույթ, բողոքարկման մարմինը չի իրականացնում գործի փաստերի ինքնուրույն գնահատում կամ պարզապես մեխանիկորեն վերահաստատում է վերանայվող վարչական ակտը, ապա անձի մոտ ձևավորվում է ընկալում, որ վարչական համակարգն ի վիճակի չէ ինքնուրույն ուղղելու իր սխալները, որպիսի պայմաններում վարչական բողոքարկման վարույթը կորցնում է անձի իրավունքների արդյունավետ արտադատական պաշտպանության միջոց լինելու իր նշանակությունը, իսկ վարչական վեճը գրեթե անխուսափելիորեն տեղափոխվում է դատարան:

Հետևաբար, վարչական բողոքարկման վա-

րույթի արդյունավետ կազմակերպումը և պատշաճ վարչարարության սկզբունքների լիարժեք ապահովումը կարևոր նշանակություն ունեն ոչ միայն անձի իրավունքների պաշտպանության, այլ նաև Վարչական դատարանի բեռնաթափման, վարչական վեճերի վաղ փուլում լուծման և հանրային իշխանության մարմինների նկատմամբ վստահության պահպանման տեսանկյունից:

Վերոգրյալից հետևում է, որ վարչական բողոքարկման վարույթում վարչարարության որակը պետք է գնահատվի ոչ միայն օրենքով սահմանված ընթացակարգերի պահպանման, այլ նաև այդ ընթացակարգերի իրական արդյունավետության տեսանկյունից, եթե վարչական մարմինը պահպանում է ժամկետները, ընդունում է որոշում և ձևականորեն արձանագրում է բողոքի մերժումը, դա դեռ բավարար չէ պատշաճ վարչարարության ապահովման համար: Պատշաճ վարչարարությունը պահանջում է, որ բողոքարկման վարույթը լինի բովանդակային, օբյեկտիվ, հիմնավորված և ուղղված անձի իրավունքների իրական պաշտպանությանն ու վարչարարության ընթացքում թույլ տրված սխալների վերացմանը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք եզրակացնել, որ վարչական բողոքարկման վարույթում վարչարարության որակը պայմանավորված է ինչպես օրենքով սահմանված ընթացակարգերի պահպանմամբ, այնպես էլ բողոքի իրական և արդյունավետ քննությամբ, գործի փաստական հանգամանքների ինքնուրույն ու բազմակողմանի գնահատմամբ, որոշումների բավարար պատճառաբանվածությամբ և բողոքարկման մարմնի անաչառությամբ: Այս առումով վարչական բողոքարկման վարույթը պետք է դիտարկել ոչ միայն որպես վարչական ակտերի օրինականության վերահսկողության միջոց, այլ նաև որպես վարչարարության որակի, նյութական իրավաչափության և վարչական համակարգի ներսում սխալների ուղղման ապահովման ինքնուրույն մեխանիզմ:

Եզրակացություն

Կատարված վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ պատշաճ վարչարարությունն իր բովանդակությամբ ձևավորում է վարչարարության նյութական իրավաչափության և վարչարարության որակի գնահատման չափանիշների համակարգ, և վարչական բողոքարկման վարույթը պետք է դիտարկել ոչ միայն որպես վարչական ակտերի օրինականության վերահսկողության, այլ նաև վարչարարության պատշաճության, հիմնավորվածության, արդյունավետության և վարչական համակարգի ներսում սխալների ուղղման ապահովման մեխանիզմ:

Հետագոտության արդյունքում հիմնավորվում

www.aradaradutyjournal.com

է, որ վարչական բողոքարկման վարույթի արդյունավետությունը պայմանավորված է այն հանգամանքով, թե որքանով է բողոքը քննող վարչական մարմինն իրականացնում գործի փաստական հանգամանքների ինքնուրույն, բազմակողմանի և օբյեկտիվ գնահատում, ապահովում բողոքաբերի փաստարկների իրական քննությունը, կայացնում պատշաճ պատճառաբանված որոշում և գործում կանխակալությունից զերծ ու գործառութային առումով ինքնուրույն:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ վարչական բողոքարկման վարույթում վարչական մարմնի՝ սխալների շտկմանը նպաստելու պարտականության սահմանները պետք է ընդլայնել: Մասնավորապես, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով նախատեսված՝ ձևական սխալների շտկման մեխանիզմը բավարար չէ անձի իրավունքների արդյունավետ պաշտպանության ապահովման համար, եթե վարչական մարմինը չի նպաստում նաև բողոքի բովանդակային հստակեցմանը, բողոքաբերի իրական կամքի բացահայտմանը և պահանջվող, ակնկալվող իրավական հետևանքի ճշգրտմանը: Այս առումով առաջարկվում է վարչական մարմնի՝ բողոքի բովանդակային հստակեցմանը նպաստելու պարտականության սահմանումը:

Հետազոտության շրջանակներում ձևավորվել և առաջարկվել է վարչական բողոքարկման վարույթում վարչարարության որակի չափանիշների համակարգ, որի մեջ ներառվել են բողոքի իրական և բովանդակային քննության չափանիշը, գործի փաստական հանգամանքների ինքնուրույն և լրիվ պարզման չափանիշը, որոշումների պատշաճ պատճառաբանվածության չափանիշը, ինչպես նաև բողոքարկման մարմնի անաչառության և ինքնուրույնության չափանիշը: Հիմնավորվել է, որ նշված չափանիշների պատշաճ կիրառումը նպաստում է անձի իրավունքների արդյունավետ արտադատական պաշտպանությանը, Վարչական դատարանի բեռնաթափմանը, վարչական վեճերի վաղ փուլում լուծմանը և հանրային իշխանության նկատմամբ վստահության ձևավորմանը:

¹ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՀՀՊՏ 201.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, 03.05.2026թ., <https://www.arlis.am/hy/acts/102510>:

² Տե՛ս, Vicki C. Jackson, “Constitutional Law in an Age of Proportionality”, The Yale Law Journal, Vol. 124, No. 8, 2015, p. 3104.

³ Տե՛ս, A. W. Bradley, C. Himsworth, Good Government and Administrative Law: An Introductory Guide, Commonwealth Secretariat, London, 1996, p. 31.

⁴ Տե՛ս, Elisabetta Lanza, “The Right to Good Administration in the European Union. Roots, rationes and enforcement in antitrust case-law”, eoria del Diritto e dello Stato, 2008, p. 483.

⁵ Տե՛ս, Tom Mullen, “Internal Review Systems and Administrative Justice”, in The Oxford Handbook of Administrative Justice (eds. Joe Tomlinson, Robert Thomas, Marc Hertogh, Richard Kirkham), Oxford University Press, 2021, p. 1.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. A. W. Bradley, C. Himsworth, Good Government and Administrative Law: An Introductory Guide, Commonwealth Secretariat, London, 1996.
2. Elisabetta Lanza, “The Right to Good Administration in the European Union. Roots, rationes and enforcement in antitrust case-law”, eoria del Diritto e dello Stato, 2008.
3. Tom Mullen, “Internal Review Systems and Administrative Justice”, in The Oxford Handbook of Administrative Justice (eds. Joe Tomlinson, Robert Thomas, Marc Hertogh, Richard Kirkham), Oxford University Press, 2021.
4. Vicki C. Jackson, “Constitutional Law in an Age of Proportionality”, The Yale Law Journal, Vol. 124, No. 8, 2015.
5. «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ. 413, հոդվ. 69, 26.04.2026թ., <https://www.arlis.am/hy/acts/220987>:
6. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, ՀՀՊՏ 201.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 1118, 26.04.2026թ. , <https://www.arlis.am/hy/acts/102510>:

Мери Амбарцумян

Соискатель кафедры публичного и международного права
Европейского университета Армении

РЕЗЮМЕ

Право на надлежащее администрирование в процедуре административного обжалования

Надлежащее и эффективное осуществление производства по административному обжалованию имеет важное значение с точки зрения защиты прав лица, разгрузки Административного суда и формирования доверия к органам публичной власти. Эффективность производства по административному обжалованию обусловлена не только соблюдением органом, рассматривающим жалобу, процессуальных требований, но также реальным и содержательным рассмотрением жалобы, всесторонней оценкой фактических обстоятельств дела, надлежащей мотивированностью решений и беспристрастностью органа, рассматривающего жалобу. В рамках исследования были рассмотрены проблемы обеспечения права на надлежащее администрирование в производстве по административному обжалованию, а также выделены основные критерии оценки качества администрирования в производстве по административному обжалованию.

Ключевые слова: право на надлежащее управление, производство по административному обжалованию, административная жалоба, материальная правомерность административной деятельности, качество административной деятельности, административное производство, рассмотрение жалобы по существу, беспристрастность административного органа, мотивированность решений, внесудебная защита.

Meri Hambardzumyan

PHD Candidate at the Chair of Public and International Law,
European University of Armenia

SUMMARY

The right to good administration in administrative appeal proceedings

The proper and effective implementation of administrative appeal proceedings is of significant importance from the perspective of the protection of individual rights, the alleviation of the workload of the Administrative Court, and the formation of trust in public authorities. The effectiveness of administrative appeal proceedings is conditioned not only by the observance of procedural requirements by the body examining the complaint, but also by the actual and substantive examination of the complaint, the comprehensive assessment of the factual circumstances of the case, the proper reasoning of decisions, and the impartiality of the body examining the complaint. Within the framework of the research, the issues of ensuring the right to good administration in administrative appeal proceedings were addressed, and the main criteria for assessing the quality of administration in administrative appeal proceedings were identified.

Key words: right to good administration, administrative appeal proceedings, administrative complaint, substantive legality of administrative action, quality of administration, administrative proceedings, substantive review of the complaint, impartiality of the administrative body, reasoned decisions, extrajudicial protection.

Բնագիրը ներկայացվել է 22.05.2026թ.
Ընդունվել է տպագրության 02.06.26թ.

ԳՈՂԱՐ ԱԴՈՆՑ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ներքին անվտանգության և վերահսկողության վարչության ՀԿԳ ավագ քննիչ,
ՀՀ Եվրոպական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի դասախոս,
Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի ամբիոնի հայցորդ

ԱՆՄԵՂՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՎԱՐԿԱԾԻ ԽԱԽՏՍԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարական իրավունքում անմեղության կանխավարկածի խախտման արդյունքում առաջացող իրավական հետևանքների և խախտված իրավունքի պաշտպանության մեխանիզմների ուսումնասիրությանը: Հետազոտության արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ թեև անմեղության կանխավարկածի սկզբունքը լայնորեն ուսումնասիրված է ինչպես միջազգային, այնպես էլ ներպետական իրավական դաշտում, դրա խախտման պարագայում առաջացող իրավական հետևանքները և արդյունավետ պաշտպանության միջոցները դեռևս ամբողջական գիտական վերլուծության չեն ենթարկվել:

Հոդվածում ուսումնասիրվել են անմեղության կանխավարկածի սկզբունքի միջազգային և ներպետական իրավական հիմքերը՝ անդրադառնալով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասին, ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային իրավունքին:

Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ անմեղության կանխավարկածի խախտումները կարող են դրսևորվել ինչպես դատավարական, այնպես էլ ոչ դատավարական գործողություններով:

Հատուկ ուշադրություն է դարձվել ՀՀ վճռաբեկ դատարանի՝ Սեդրակ Քոչարյանի վերաբերյալ թիվ ԵԳ/0112/11/19 գործով արտահայտված իրավական դիրքորոշմանը, որով դատարանը տարբերակել է անմեղության կանխավարկածի խախտման դեպքերը՝ ըստ դրանց դատավարական և ոչ դատավարական բնույթի: Հոդվածում հիմնավորվում է, որ նման մոտեցումը լիարժեք և արդյունավետ լուծում չի ապահովում, քանի որ քրեական վարույթի շրջանակներում պաշտոնատար անձանց ոչ դատավարական գործողություններով թույլ տրված խախտումները հաճախ ավելի մեծ ազդեցություն են ունենում անձի հեղինակության և հանրային ընկալման վրա, քան դատավարական խախտումները:

Հեղինակը առաջարկում է անմեղության կանխավարկածի խախտման հետևանքները տարբերակել ոչ թե գործողության դատավարական կամ ոչ դատավարական բնույթով, այլ խախտում թույլ տված սուբյեկտների կարգավիճակով: Եթե խախտումը թույլ է տրվել քրեական վարույթի շրջանակներում գործող հանրային մասնակցի կամ դատարանի կողմից, ապա իրավական պաշտպանությունը պետք է իրականացվի քրեադատավարական մեխանիզմներով՝ ներառելով դատական երաշխիքների վարույթում բողոքարկման հնարավորությունը և հրապարակային ներողություն խնդրելու պարտականության սահմանումը: Իսկ մասնավոր անձանց կամ քրեական վարույթի հետ կապ չունեցող սուբյեկտների կողմից թույլ տրված խախտումների դեպքում կիրառելի կարող են լինել քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցները:

Հոդվածում առաջարկվում են նաև օրենսդրական փոփոխություններ՝ ուղղված արդարացված անձանց ռեաբիլիտացիայի արդյունավետության բարձրացմանը, մասնավորապես՝ վարույթ իրականացնող մարմինների կողմից արդարացման կամ քրեական հետապնդման դադարեցման վերաբերյալ հրապարակային հաղորդագրությունների պարտադիր տարածման միջոցով:

Հիմնադրադեպ - Անմեղության կանխավարկածի սկզբունք, անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտում, քրեադատավարական պաշտպանության մեխանիզմներ, քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցներ, դատավարական և ոչ դատավարական գործողություններ, արդարացված անձի ռեաբիլիտացիա, քրեական վարույթի հրապարակայնություն:

Ներածություն

Անմեղության կանխավարկածի սկզբունքն իր տեղն է գտել «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 11-րդ հոդվածում, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասում, «Քաղաքացիական և քաղաքական

իրավունքների մասին միջազգային դաշնագրի» 14-րդ հոդվածում, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Անկախ Պետությունների Համագործակցության Կոնվենցիայի» 6-րդ հոդվածի 2-րդ մասում: Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը միացել է վերոգրյալ բոլոր միջազգային փաստաթղթերին, ուս-

www.aradaradutyjournal.com

տի անմեղության կանխավարկածն իր առանցքային տեղն է զբաղեցնում ՀՀ Սահմանադրության, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

Այս սկզբունքի նպատակն է կանխել անձի նկատմամբ որպես հանցագործի վաղաժամ և չար դարացված վերաբերմունքը, ինչպես նաև ծառայում է որպես անձի իրավունքների և ազատությունների հարգման և պաշտպանության երաշխիք: Այն թե որքանով է նշված սկզբունքը պահպանվում պետության կողմից խոսում է կոնկրետ պետության տարածքում օրինականության և հումանիզմի սկզբունքների մակարդակի մասին: Անմեղության կանխավարկածից ամենափոքր շեղումն էլ հանգեցնում է արդարադատության ոլորտում օրինականության սկզբունքի խախտմանը և քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի ոտնահարմանը:

Անմեղության կանխավարկածի նպատակը ինչպես քրեական վարույթի մասնակիցների դատավարական գաղվածության պահպանումն է, այնպես էլ այլ անձանց գաղված վերաբերմունքը ենթադրյալ հանցանք կատարած անձի նկատմամբ, ինչը պետք է բացառի ի սկզբանե մեղադրական ուղղվածությունը և այսպես ասած կողմակալությունը, անմեղ համարվելու իրավունքների խախտումը:

Առանց այս սկզբունքի հնարավոր չէր լինի ապահովել քրեական դատավարության կողմերի հավասարությունը, ինչն իրականում արդեն իսկ շատ բարդ է, հաշվի առնելով նրանց փաստացի հնարավորությունների էական տարբերությունները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն.

1. Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

2. Չապացուցված մեղավորությունը հավասարազոր է ապացուցված անմեղությանը:

3. Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը կամ քրեական վարույթն իրականացնող մարմնին ցույց տալ որևէ աջակցություն: Մեղադրյալի անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել նաև նրա պաշտպանի, օրինական ներկայացուցչի, գույքային պատասխանողի և նրա ներկայացուցչի վրա: Մեղադրանքի ապացուցման և ի պաշտպանություն մեղադրյալի բերված փաստարկների հերքման պարտականությունը հանրային քրեական հետապնդման դեպքում կրում է դատախազը, իսկ մինչդատական վարույթում՝ նաև քննիչը: Մասնավոր քրեական հետապնդման դեպքում այդ պարտականու-

թյունը կրում են տուժողը և նրա ներկայացուցիչը:

4. Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր ողջամիտ կասկածները, որոնք չեն փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի:

ՀՀ վճռաբեկ դատարանը մի շարք նախադեպային որոշումներում փաստում է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը երաշխավորում է հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի՝ միջազգայնորեն ճանաչված հիմնարար իրավունքը՝ համարվելու անմեղ մինչև մեղադրական դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ սկզբունքի վրա են խարսխված քրեադատավարական առանցքը կազմող մի շարք ինստիտուտներ: Այդ պատճառով, ինչպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և Մարդու իրավունքների կոմիտեն, այնպես էլ Վճռաբեկ դատարանը մշտապես կարևորել են անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանումը քրեական վարույթի ողջ ընթացքում՝ սկսած դրա ամենավաղ փուլից:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի մեկնաբանման շրջանակներում Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

- հայտարարությունն այն մասին, որ անձին պարզապես կասկածում են հանցագործություն կատարելու մեջ, պետք է հստակորեն տարբերակվի այն բացահայտ արված հայտարարությունից, որ անհատը, թեպետ դեռ չի կայացվել վերջնական մեղադրական եզրակացություն, կատարել է տվյալ հանցագործությունը,

- անմեղության կանխավարկածի խախտում է այն դեպքը, երբ դատական որոշման կամ պաշտոնատար անձի կողմից արված հայտարարության մեջ կարծիք է արտահայտվում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի մեղքի վերաբերյալ՝ նախքան նրա մեղքը կհաստատվի օրենքով սահմանված կարգով⁴,

- անմեղության կանխավարկածը որպես քրեական գործի վարույթի դատավարական երաշխիք, ի թիվս այլնի, որոշակի պահանջներ է սահմանում՝ կապված դատական իշխանության մարմինների կամ այլ հանրային պաշտոնատար անձանց կողմից կասկածյալի (մեղադրյալի, ամբաստանյալի) մեղավորության վերաբերյալ կանխակալ արտահայտությունների հետ⁵ շեշտադրելով վերջիններիս կողմից կատարվող հայտարարություններում բառերի ընտրության կարևորությունն այն դեպքում, երբ խոսքը գնում է հանցանքի կատարման մեջ օրենքով սահմանված կարգով չմեղադրված և չդատապարտված անձանց մասին⁶:

Անկախ նրանից, որ բոլոր պետությունները և օրենդորդեն և նախադեպային որոշումներում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

հստակ արձանագրել են անմեղության կանխավարկածի սկզբունքի կարևորությունը, սակայն իրականության մեջ բազմաթիվ են իրավիճակները, երբ քննարկվող սկզբունքը ոտնահարվում է: Տվյալ պարագայում առաջանում է հարց. ի՞նչ իրավական հետևանքներ պետք է առաջանան անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման պարագայում և իր խախտված իրավունքների համար ի՞նչ ընթացակարգով անձը կարող է ստանալ իրավական պաշտպանություն:

Թեև անմեղության կանխավարկածի սկզբունքը իրավական գիտության մեջ բազմիցս դարձել է քննարկման առարկա, սակայն դրա խախտման դեպքում առաջացող իրավական հետևանքներն ու դրանց համար հայցող պաշտպանության մեխանիզմները դեռևս ամբողջ ծավալով ուսումնասիրված չեն:

Սույն հոդվածի նպատակներն են ուսումնասիրել անմեղության կանխավարկածի հնարավոր խախտման դեպքերը, վեր հանել քննարկվող սկզբունքի խախտման արդյունքում առաջող հնարավոր հետևանքները, ուսումնասիրել անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման դեպքում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները, դրա վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի իրավական դիրքորոշումը, վեր հանել առաջացող խնդիրներն ու առաջարկել լուծման տարբերակներ:

Թեմայի ուսումնասիրության արդյունքում ներկայացվել են անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման պարագայում առաջացող իրավական հետևանքների և դրանց վերականգման համար իրավական պաշտպանություն ստանալու մեխանիզմների տեսլականը և դրա հիման վրա առաջ քաշվող օրենսդրական հնարավոր փոփոխությունները:

Հոդվածը կազմված է՝

1. Ներծությունից, որտեղ ներկայացվել է թեմայի արդիականությունը, գիտական նորույթը, ուսումնասիրության նպատակները:
2. Հոդվածի մեթոդաբանությունից, որտեղ նկարագրվել են հետազոտության ընթացքում կիրառված մեթոդները:
3. Հետազոտության հիմնական մասը, որտեղ ներկայացվել են թեմայի քննարկումն ու դրա արդյունքները:
4. Եզրակացություն, որտեղ ամփոփվել է ուսումնասիրված նյութն ու ներկայացվել են հնարավոր առաջարկները:
5. Գրականության ցանկ, որտեղ ներկայացվել են թեմայի վերաբերյալ գիտական աշխատանքները, ինչպես նաև միջազգային դատական ակտերն ու ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումները:

Հոդվածի մեթոդաբանություն.

Հետազոտության ընթացքում կիրառվել են անալիզի, ինդուկցիայի, դեդուկցիայի, ընդհանրացման, իրավահամեմատական, տրամաբանական վերլուծության, համակարգակառուցվածքային և իրավական մոդելավորման մեթոդները:

Հետազոտության թեմայի քննարկումն ու արդյունքները.

Ինչպես հայտնի է իրավունքի ընդհանուր տեսությունից, իրավական յուրաքանչյուր նորմի պարտադիր տարր է դրա չկատարման համար նախատեսված սանկցիան, որով արտահայտվում է պետության բացասական գնահատականը իրավական նորմի պահանջների խախտման և դրանք խախտած անձանց նկատմամբ: Պետությունը՝ ի դեմս իր մարմինների և պաշտոնատար անձանց, ստանձնել է մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ապահովման պարտականությունը:

Քննարկվող սկզբունքի հիմնական բաղադրիչները երեքն են.

1. անձը հանցագործության մեջ մեղավոր կարող է ճանաչվել բացառապես օրինական ուժի մեջ մտած դատավճռով (անձի դատավարական կարգավիճակի կանոն և երաշխիք),
2. անձը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը, մեղադրանքի ապացուցման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները (ապացուցման բեռի կանոն),
3. չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի (ապացույցների գնահատման կանոն):

Այս բաղադրիչներից վերջին երկուսը կարելի է բնութագրել որպես քրեադատավարական բաղադրիչներ, որոնց խախտման դեպքում առաջացող իրավական հետևանքներն արձանագրված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով և կարող են հանգեցնել ինչպես պացույցի կորստի, այնպես էլ անձի արդարացման: Սակայն անմեղության կանխավարկածի բուն էությունը միայն սկզբունքի դատավարական բաղադրատարրերի մեջ չէ: Սկզբունքի կարևոր դերակատարումը նրանում է, որ անձը համարվի անմեղ, քանի դեռ դրա հակառակը չի ապացուցվել օրենքով սահմանված կարգով:

Խոսելով անմեղության կանխավարկածի կարևորության մասին Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձ է կատարել նաև դրա խախտման հնարավոր դեպքերին: Գատարանը սկզբունքի խախտման հնարավոր դեպքերն ու դրա հետևանքները քննարկել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում՝ որոշ դեպքերում արձանագրելով ընդհանուր դատավարության անարդարացիությունը: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը մի շարք նախադեպային որոշումներում ընդգծել է, որ անմեղու-

www.aradaradutyjournal.com

թյան կանխավարկածի խախտում է համարվում ցանկացած պաշտոնական հայտարարություն կամ դատական ակտ, որով արտահայտվում է անձի մեղավորության վերաբերյալ դիրքորոշում՝ նախքան նրա մեղքի ապացուցումը օրենքով սահմանված ընթացակարգով: Այլ կերպ՝ ոչ միայն դատարանները, այլև պաշտոնատար անձինք մինչև դատավճռի կայացումը պարտավոր են զերծ մնալ անձին հրապարակայնորեն մեղավոր ներկայացնելուց: Սա վերաբերում է թե՛ պետական իշխանության ներկայացուցիչների հայտարարություններին, թե՛ մինչդատական փուլերում տրվող ձևակերպումներին՝ անզույշ խոսքերի օգտագործում, որը ենթադրում է մեղավորություն: Նման դեպքերը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից գնահատվում են որպես Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասի խախտում:

Պաշտոնատար անձինք իրենց հրապարակային ելույթներում պարտավոր են պահպանել անմեղության կանխավարկածի սկզբունքը և մեղադրյալին չհամարեն մեղավոր մինչև դատավճռի ուժի մեջ մտնելը: Ինչպես քննիչը, այնպես էլ դատախազը չեն որոշում մեղադրյալի վերջնական մեղավորությունը, այդ մասին նրանց հետևությունները միայն ենթադրություններ են: Դատարանը մինչև գործն ըստ էության լուծող դատական ակտի կայացման պահին իր գործողություններով, այդ թվում՝ որոշումներով, որևէ կերպ չպետք է սուբյեկտիվ դիրքորոշում հայտնի ամբաստանյալին ներկայացված քրեական մեղադրանքի հիմնավորվածության կամ անհիմն լինելու մասին: Դատարանը չի կարող հանդես գալ ո՛չ մեղադրանքի, ո՛չ էլ պաշտպանության կողմում, չի կարող կատարել նրանց պարտականությունները: Պետությունը պետք է ապահովի դատարանի անկախությունը և անկողմնակալությունը:

Անդրադառնալով դատախազի կողմից անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանության սահմաններին Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ միանշանակ է, որ դատախազը պարտավոր է ապահովել անձի անմեղության կանխավարկածը և զերծ մնալ այնպիսի ձևակերպումներից, որոնք կասկածի տակ կղենն անձի անմեղությունը: Սակայն այս պնդումը բացարձակ չէ, քանի որ վերջիվերջո դատախազը քրեական դատավարության կարգավորումների համաձայն հանդես է գալիս մեղադրանքի կողմում և մեղադրանք է պաշտպանում դատարանում: Դատական նիստի ընթացքում մեղադրանքի պաշտպանության գործառույթն իրականացնելիս դատախազի վրա չի կարող տարածվել անմեղության կանխավարկածի պահպանման բացարձակ արգելք՝ կատարված արտահայտությունների տե-

սանկյունից, քանի որ առնվազն տարակուսելի կլինի, եթե դատախազը մեղադրանք պաշտպանելիս հենց ինքը կասկածի տակ դնի մեղսագրվող արարքը ենթադրյալ հանցանք կատարած անձի կողմից կատարված լինելու փաստը:

Բայց միաժամանակ, հասկանալի է, որ նույն դատախազը, դատական նիստերի դահլիճից դուրս, հանդիսանալով պաշտոնատար անձ և տվյալ պահին այլևս չիրականացնելով մեղադրանքին պաշտպանության իր սահմանադրական լիազորությունը, պարտավոր է զգուշավորություն ցուցաբերել խոսքում, օրինակ հարցազրույցներ տալիս:

14. «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի շրջանակներում նշել է, որ անմեղության կանխավարկածը ենթադրում է նաև իրավունք՝ արժանանալու այդ սկզբունքին համապատասխան վերաբերմունքի: Հետևաբար, այն պարտականություն է հանրային իշխանության բոլոր ներկայացուցիչների համար՝ ձեռնպահ մնալու վարույթի արդյունքը կանխորոշելուց:

Պաշտոնատար անձանց կողմից հրապարակային ելույթներում անմեղության կանխավարկածի սկզբունքի պաշտպանության հարցը սերտ կապված է նաև խոսքի ազատության և իրավապահ համակարգի գործունեության հրապարակային սկզբունքի հետ: Հասարակության հետաքրքրությունը տեղի ունեցող հանցագործությունների նկատմամբ բարձր է, քանի որ դրանք առնչվում են բնականոն կյանքի տարբեր ոլորտներին, ուստի նաև առաջ է գալիս անհրաժեշտություն տեղի ունեցող հանցագործությունների դեպքերի մասին իրազեկել նաև հասարակությանը: Հրապարակայինության սկզբունքը կարևոր է նաև իրավապահ համակարգի թափանցիկության և հաշվետվողականության, ինչպես նաև քրեական իրավունքի խնդիրների, մասնավորապես, ընդհանուր պրեվենցիայի տեսանկյունից: Սակայն միաժամանակ կարևոր է արձանագրել, որ հրապարակայնության շեմն ու անմեղության կանխավարկածի սկզբունքի պահպանությունը իրարից բաժանվում են շատ նուրբ գծով և սկզբունքին չվնասալու համար յուրաքանչյուր դեպքում պետք է առանձնահատուկ զգուշավորություն դրսևորել:

Այս կապակցությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս դիրքորոշումներ է հայտնել՝ նշելով, որ Դատարանը տարբերակում է այն արտահայտությունները, որոնք ուղղակի կասկածի մասին են, այն արտահայտություններից, որոնք ուղղակիորեն ամբազրում են անձի մեղավորությունը:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ մասն արգելում է

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պետական պաշտոնյաների կողմից ընթացիկ քրեական հետաքննությունների վերաբերյալ հայտարարություններ անելը, որոնք հանրության մոտ ձևավորում են խրախուսում են կասկածյալի մեղավոր լինելու վերաբերյալ կարծիք և կանխորոշում են իրավասու դատական մարմնի կողմից փաստերի գնահատումը¹¹ : Այնուամենայնիվ, իշխանությունները կարող են հանրությանը տեղեկություններ տրամադրել հասարակությանը տեղի ունեցող քրեական հետաքննությունների մասին, այնքանով, որքանով դա արվում է անհրաժեշտ գոյությունս¹² :

Նշվածի հետ մեկտեղ հարկ է, որ անմեղության կանխավարկածի սկզբունքը կարող է խախտվել ոչ միայն պաշտոնատար անձանց, այլ նաև զանգվածային լրատվական միջոցների և այլ ֆիզիկական անձանց կողմից: Բնականաբար նշված դեպքերում անմեղության կանխավարկածի խախտման ազդեցությունն անձի վրա նույնը չէ, ուստի և դրա իրավական հետևանքները նույնը չեն կարող լինել:

Քննարկվող հարցի առնչությամբ կարևոր է հասկանալ

1. Ի՞նչ հետևանքներ պետք է առաջանան անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման դեպքում,
2. Ի՞նչ իրավական ընթացակարգի միջոցով անձը կարող է ստանալ իրավական պաշտպանություն,
3. Հրապարակայնության սկզբունքի ապահովման հետևանքով արդյոք տուժում է անմեղության կանխավարկածի սկզբունքը և ինչպես կարելի է կարգավորել դրանց հարաբերակցությունը:

Անմեղության կանխավարկածի խախտման դեպքում առաջացող իրավական հետևանքների խնդիրն անդրադարձել է նաև ՀՀ վճռաբեկ դատարանը՝ Սեդրակ Ռոբերտի Քոչարյանի վերաբերյալ 2022 թվականի նոյեմբերի 24-ի թիվ ԵԴ/0112/11/19 գործով: Մասնավորապես, քննարկվող դեպքում բողոքաբերը, որը հանդիսացել է ՀՀ գլխավոր դատախազությունը, պնդել է, որ հրապարակված հաղորդագրության բովանդակությամբ թույլ չի տրվել Ս. Քոչարյանի անմեղության կանխավարկածի խախտում, քանի որ հրապարակման մեջ ըստ էության արձանագրվել է, որ նախաքննության փուլում գտնվող քրեական գործով Ս. Քոչարյանին առաջադրվել է մեղադրանք, շարադրվել է մեղադրանքի ձևակերպումը և առկա է ծանուցում առ այն, որ ենթադրյալ հանցանքի մեջ կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Անդրադառնալով անմեղության կանխավարկածի խախտման դեպքում քրեադատավարական ընթացակարգով իրավական պաշտպանություն

հայցելու մեխանիզմներին ՀՀ վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ գործնականում անմեղության կանխավարկածը կարող է խախտվել՝ իր բնույթով ընթացակարգային և նյութական առումներով: Օրինակ՝ ընթացքի մեջ գտնվող վարույթի շրջանակներում անձի անմեղության կանխավարկածը խախտող հայտարարություններ անելը, որը չի ազդում գործով վերջնական որոշման կայացման վրա, անմեղության կանխավարկածի ընթացակարգային խախտում է :

Մինչդեռ, անմեղության կանխավարկածի այնպիսի խախտումները, որոնք պաշտպանության կողմի ապացույցների անտեսմամբ, ազդում են դատական ակտի կամ այլ վերջնական որոշման բովանդակության վրա (ինչպես օրինակ՝ Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործով սույն որոշման 13.1-րդ կետում ներկայացված վճռի), իրենց բնույթով նյութական են:

Դատարանն արձանագրել է, որ եթե անմեղության կանխավարկածի նյութական բնույթի խախտումները կարող են թույլ տրվել, որպես կանոն, քրեական վարույթի հանրային մասնակիցների կողմից, ապա ընթացակարգային բնույթի խախտումներ կարող են կատարել ինչպես հանրային մասնակիցները, այնպես էլ վարույթի մասնավոր մասնակիցները, ավելին՝ նույնիսկ վարույթի մասնակից չհանդիսացող պետական իշխանության ներկայացուցիչներ, մարմիններ, պաշտոնատար անձինք, զանգվածային լրատվության միջոցներ, այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք: Այսինքն՝ հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ինչպես վարույթն իրականացնող մարմնի, այնպես էլ առհասարակ քրեական դատավարության սուբյեկտի կարգավիճակ չունեցող անձանց կողմից: Նման պայմաններում առաջ է գալիս անմեղության կանխավարկածի խախտման կապակցությամբ արդյունավետ իրավական պաշտպանություն հայցելու անհրաժեշտությունը, որը նույնպես կարևորվում է մարդու իրավունքների պաշտպանության միջազգային մարմինների կողմից: Այս առումով հատկանշական են Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածի առնչությամբ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները: Այս համատեքստում դատարանը մի շարք գործերով ընդգծել է, որ Եվրոպական կոնվենցիայի այդ հոդվածը պահանջում է ներպետական պաշտպանության միջոցի առկայություն՝ Եվրոպական կոնվենցիայով նախատեսված՝ «վիճարկելի» բողոքի էությունը քննելու և համապատասխան օգնություն տրամադրելու համար, չնայած որ պայմանավորվող պետություններին տրվում է որոշակի թույլատրելի հայեցողության շրջանակ՝ կապված այն ձևի հետ, որով նրանք կատարում են Եվրոպական կոնվենցիայի այս դրույ-

www.aradaradutyjournal.com

թով նախատեսված իրենց պարտականությունները :

Բացի այդ, դատարանը կարևորել է, որ 13-րդ հոդվածով պահանջվող պաշտպանության միջոցը պետք է լինի «արդյունավետ»՝ ինչպես գործնականում, այնպես էլ օրենսդրության մեջ, ընդ որում՝ դրա կիրառումը չպետք է անարդարացիորեն խոչընդոտվի պետության գործողություններով կամ բացթողումներով: Ավելին, հարկ է նաև հիշատակել, որ ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R (2004) 6 հանձնարարականի հավելվածում Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն անդամ պետություններին հորդորել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումների լույսի ներքո վերանայել իրենց իրավական համակարգերը և, ըստ անհրաժեշտության, օրենսդրության կամ դատական որոշումների միջոցով ամրագրել անհրաժեշտ և պատշաճ միջոցներ՝ երաշխավորելու համար Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով նախատեսված՝ իրավական պաշտպանության արդյունավետությունը :

Վճռաբեկ դատարանի դիրքորոշման համաձայն, որը ակտուալ է մինչ օրս, քանի որ քրեադատավարական համապատասխան կանոններում խնդրի լուծմանն ուղղված որևէ միջոց չի ձեռնարկվել, փաստվել է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ սույն օրենսգրքով նախատեսված որոշումների և գործողությունների օրինական և հիմնավոր չլինելու դեմ բողոքները դատարան կարող են ներկայացվել կասկածյալի, մեղադրյալի, պաշտպանի, տուժողի, քրեական դատավարության մասնակիցների, այլ անձանց կողմից, որոնց իրավունքները և օրինական շահերը խախտվել են այդ որոշումներով և գործողություններով, և եթե նրանց բողոքները չեն բավարարվել դատախազի կողմից: (...)

5. Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին: Դատավորի որոշման պատճենն ուղարկվում է դիմողին և վարույթն իրականացնող մարմնին»:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Անձի պատիվը, արժանապատվությունը, գործարար համբավը ենթակա

են պաշտպանության այլ անձի կողմից հրապարակայնորեն արտահայտված վիրավորանքից և գրպարտությունից՝ սույն օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված դեպքերում ու կարգով»:

Դատարանի դիրքորոշման համաձայն գործնականում անմեղության կանխավարկածը կարող է խախտվել տարբեր եղանակներով: Ուստի, ելնելով պետություններին տրված իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների որոշակիացման թույլատրելի հայեցողության շրջանակից՝ կարևոր է քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ խախտված անմեղության կանխավարկածի կապակցությամբ իրավական պաշտպանություն հայցելու ընթացակարգերը տարբերակել իրավունքի այլ ճյուղերով նախատեսված իրավական պաշտպանության հնարավորություններից:

Այս առումով քրեադատավարական գործիքակազմը, մասնավորապես՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը, կիրառելի է օրենսդրի կողմից սահմանված անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում: Այսպես, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգը կիրառելի է «օրենսգրքով նախատեսված որոշումների [կայացման] և գործողությունների [կատարման]» արդյունքում խախտված անմեղության կանխավարկածի կապակցությամբ իրավական պաշտպանություն հայցելիս: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասի վերլուծությունից բխում է, որ հետագա դատական վերահսկողության առարկան քննիչի, դատախազի, օպերատիվ-հետախուզական գործողություններ իրականացնող մարմինների՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված որոշումներն են և գործողությունները: Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով կարող են բողոքարկվել վերոնշյալ սուբյեկտների՝ քրեական վարույթի շրջանակում կայացված այն որոշումներն ու կատարված այն գործողությունները, որոնք ենթադրաբար հակասում են քրեադատավարական օրենքի պահանջներին: *Ուստի, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը կարող է կիրառելի լինել քրեադատավարական իրավահարաբերությունների շրջանակում թույլ տրված անմեղության կանխավարկածի խախտումների դեպքում:*

Մինչդեռ, գործնականում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի անմեղության կանխավարկածը կարող է խախտվել ոչ միայն դատավարական (դատավարական գործողություններով կամ դատավարական որոշումներով), այլ նաև ոչ դատավարական գործունեության (մամլո ասուլիսներին մասնակցելով, հրապարակային արտահայտություններ, մամլո հաղորդագրություններ անելու)

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

արդյունքում: Ըստ այդմ էլ, անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտման դեպքում իրավական պաշտպանություն հայցելու մեխանիզմները պետք է տարբերակվեն՝ ելնելով այդ խախտման բնույթից և այն թույլ տվող անձի ex officio կարգավիճակից: Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ անմեղության կանխավարկածի խախտման դեպքում մինչ քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ իրավական պաշտպանություն հայցելը, կարևոր է պատշաճ գնահատման ենթարկել, թե ա) արդյո՞ք անմեղության կանխավարկածը ենթադրաբար խախտելիս ex officio անձը հանդես է եկել որպես քրեադատավարական սուբյեկտ, բ) արդյո՞ք անմեղության կանխավարկածը ենթադրաբար խախտվել է քրեադատավարական բնույթ կրող, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգերի շրջանակներում: Նշվածի առումով պետք է նկատի ունենալ, որ անձի անմեղությունը խախտող պաշտոնատար անձի՝ քրեադատավարական սուբյեկտ լինելու հանգամանքը դեռևս բավարար չէ քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ իրավական պաշտպանություն հայցելու կառուցակարգը գործադրելու համար: Այսպես, պետք է նկատի ունենալ, որ քրեադատավարական սուբյեկտները կարող են կատարել նաև ոչ դատավարական գործողություններ, օրինակ՝ քրեական վարույթն իրականացնող քննիչը կարող է հանրային հետաքրքրություն ներկայացնող գործով քննչական մարմնի անունից հարցազրույց տալ զանգվածային լրատվության միջոցներին և իր հայտարարություններով կասկածի տակ դնել հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի անմեղությունը: Մեկ այլ օրինակի դեպքում՝ համապատասխան քննչական մարմինը կարող է տեղեկատվություն հրապարակել իր պաշտոնական կայքէջում կամ սոցիալական ցանցի էջում՝ հանրային հետաքրքրություն ներկայացնող գործով և ևս իր հայտարարություններով կասկածի տակ դնել հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձի անմեղությունը: Նման դեպքերում, թեև անձի անմեղության կանխավարկածը խախտող հայտարարություններն արվում են քրեադատավարական սուբյեկտի կամ մարմնի կողմից, սակայն հանցանքի կատարման վերաբերյալ հանրությանը տեղեկատվություն տրամադրելու համար ո՛չ հարցազրույց տալը, ո՛չ էլ կայքէջում համապատասխան տեղեկատվություն տրամադրելը քրեադատավարական բնույթ չունեն, դրանք չ՛են քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված գործողություններ չեն: Հետևաբար, համանման իրավիճակներում անձն իր անմեղության կանխավարկածի խախտված իրավունքի կապակցությամբ իրավական պաշտպանություն չի կարող հայցել քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ:

Ուստի, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության քրեադատավարական կառուցակարգը կարող է անմեղության կանխավարկածի խախտման դեպքում իրավական պաշտպանության արդյունավետ գործիքակազմ ծառայել միայն, եթե վերոհիշյալ իրավունքը ենթադրաբար խախտվել է վարույթն իրականացնող մարմնի դատավարական գործունեության ընթացքում վերջինիս կայացրած որոշումներով կամ կատարած դատավարական գործողություններով: Այս առումով, որպես օրինակ կարող է դիտարկվել Վիրաբյանն ընդդեմ Հայաստանի գործը, որտեղ դիմումատուին իր նկատմամբ գործի վարույթը կարճելու դատավարական որոշման մեջ տեղ գտած, իր անմեղության կանխավարկածը խախտող ձևակերպումների կապակցությամբ իրավական պաշտպանություն էր հայցել քրեադատավարական գործիքակազմի կիրառմամբ՝ դրանց իրավաչափությունը վիճարկելով չ՛է քրեական դատավարության օրենսգրքի շրջանակներում:

Վերոգրյալի հետ մեկտեղ, հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, Եվրոպական կոնվենցիայի 13-րդ հոդվածով երաշխավորված՝ իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունքի համատեքստում, քննարկելով անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտման դեպքում իրավական պաշտպանության հնարավոր եղանակների հարցը, կայուն նախադեպային իրավունք է ձևավորել, որ իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական միջոցները կարող են արդյունավետ լինել: Մասնավորապես, մի շարք գործերով պատվի և արժանապատվության քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցները, որոնք նյութական փոխհատուցման հետ մեկտեղ նախատեսում են իրավունքի խախտման փաստի ճանաչում և խախտման դադարեցում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից գնահատվել են իբրև արդյունավետ Եվրոպական կոնվենցիայի իմաստով :

Հետևաբար, վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ, Վճռաբեկ դատարանը փաստում է, որ քրեադատավարական իրավահարաբերություններից դուրս, դատավարական բնույթ չկրող գործողություններով անձի անմեղության կանխավարկածի խախտման դեպքում հանցանքի կատարման մեջ մեղադրվող անձն իրավական պաշտպանություն կարող է հայցել քաղաքացիական դատավարության ընթացակարգով: Այս առումով կարևոր է նկատի ունենալ, որ մինչև մեղադրական դատական ակտի կայացումը և դրա օրինական ուժի մեջ մտնելը, անձի անմեղությունը կասկածի տակ դնող հայտարարությունները կամ գործողությունները կարող են դիտարկվել որպես միջամտություն՝ անձի պատվի և արժանապատվու-

www.aradaradatumjournal.com

թյան նկատմամբ: Նման պայմաններում, վարույթն իրականացնող մարմնի ոչ դատավարական գործունեության կամ քրեական վարույթի շրջանակում ոչ դատավարական սուբյեկտների կողմից անձի անմեղության կանխավարկածի ենթադրյալ խախտման դեպքում վերջինս կարող է օգտվել օրինակ՝ վիրավորանքի կամ գրպարտության համար ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված իրավական պաշտպանության միջոցներից, որոնք փոխհատուցման հետ մեկտեղ նախատեսում են նաև ներողություն խնդրելու, համապատասխան տեղեկությունը հերքելու հնարավորություն: Վճռաբեկ դատարանը փաստում է, որ այս առումով արդեն իսկ ձևավորվել է համապատասխան իրավակիրառ պրակտիկա, երբ անմեղության կանխավարկածի խախտման կապակցությամբ հայցվել է իրավական պաշտպանություն՝ քաղաքացիական օրենսդրությամբ նախատեսված գործիքակազմի կիրառմամբ¹⁷:

Վերոգրյալ դիրքորոշումը կարծում են ամբողջական և արդարացի լուծում չի առաջարկում անմեղության կանխավարկածի խախտման պարագայում առաջացող հետևանքների տեսնակյունից: Առաջին հերթին պետք է հստակ արձանագրել, որ խոսքը գնում է ըստ էության քրեադատավարական սկզբունքի մասին, որի խախտումը փաստացի առաջացնում է այլ ճյուղային իրավունքներով նախատեսված պատասխանատվություն: Այսինքն քրեադատավարական սկզբունքի խախտման հետևանքների վերաբերյալ կանոններ քրեադատավարական նորմերում բացակայում են: Փաստացի ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշմամբ արձանագրվել է, որ վարույթի շրջանակներում ոչ դատավարական գործողությունների արդյունքում քրեադատավարական սկզբունքի խախտումն առաջացնում է քաղաքացիաիրավական հետևանքներ: Իհարկե քաղաքացիաիրավական ընթացակարգով խախտված իրավունքի պաշտպանությունը կարող է արդյունավետ միջոց հանդիսանալ խախտված իրավունքների վերականգնման տեսանկյունից, սակայն ոչ բոլոր պարագաներում:

Ըստ էության անմեղության կանխավարկածի սկզբունքի պաշտպանության թիրախը հանդիսանում է անձի անունն ու բարի համբավը, ուստի թեև քաղաքացիաիրավական գործիքակազմը կարող է որոշակի առումով բարոյական և ֆինանսական փոխհատուցում տրամադրել անձին, սակայն այն ունակ չէ ամբողջ ծավալով վերականգնեն անձի խախտված իրավունքը: Բացի այդ, գաղտնիք չէ, որ քրեադատավարական նորմերն ունեն ավելի «ուժեղ» ազդեցություն և որոշակի առումով ավելի մեծ իմպերատիվություն, քան քաղաքացիաիրավական նորմերը: Վերոգրյալը հիմնավորվում է նրանով, որ օրինակ քաղաքացիական դատարանների կողմից կայացված դատական ակտերի պարտա-

դիրության պահանջի չպահպանումը վերջնարդյունքում առաջացնում է քրեաիրավական հետևանքներ՝ դատական ակտի դիտավորյալ չկատարման համար առաջացնելով քրեական պատասխանատվություն:

Այսինքն, թեև քաղաքացիաիրավական պաշտպանության մեխանիզմները կարող են արդյունավետ լինել, սակայն դրանք չեն կարող բավարար համարվել անմեղության կանխավարկածի խախտման դեպքում իրավական պաշտպանություն ստանալու տեսանկյունից:

Խոսելով սկզբունքի խախտման դեպքում առաջացող հետևանքների և դրանց համար հայվող իրավական պաշտպանության մասին, փաստորեն ՀՀ վճռաբեկ դատարանը այն տարանջատել է ըստ խախտման հիմք հանդիսացող գործողությունների տեսակի՝ դատավարական և ոչ դատավարական գործողություններ:

Մինչդեռ, օրինակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դրանք տարանջատել է ըստ խախտում թույլտված սուբյեկտների: Մասնավորապես, Դատարանն արձանագրել է, որ երբ անմեղության կանխավարկածը խախտող արտահայտությունները կատարվել են մասնավոր անձանց կամ կազմակերպությունների կողմից, օրինակ՝ թերթ, հրատարակումներ, և չեն հանդիսանում պետական մարմինների կողմից տրամադրված պաշտոնական տեղեկատվության որևէ մասի բառացի վերարտադրություն (կամ այլ կերպ՝ դրա ուղղակի մեջբերում), ապա Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ կետի շրջանակներում խնդիր չի առաջանում, սակայն կարող է առաջանալ 8-րդ հոդվածի տեսանկյունից (տես՝ Mityanin and Leonov v. Russia, 2019 թ., §§ 102 և 105, ինչպես նաև Mulosmani v. Albania, 2013 թ., § 141, և McCann and Healy v. Portugal, 2022 թ., §§ 65-66):

Այսինքն, ՄԻԵԴ նախադեպային որոշումներից կարելի է փաստել, որ մասնավոր անձանց և պաշտոնատար անձանց կողմից անմեղության կանխավարկածի խախտման դեպքում տարբերակված մոտեցում է դրսևորվում: Մասնավոր անձանց և ՉԼՄ-ների կողմից որևէ անձի անմեղության կանխավարկածի խախտման պարագայում խոսքը գնում է ոչ թե այդ սկզբունքի ավելի լայն իմաստով դատավարական խախտման, այլ անձի մասնավոր կյանքի, այն է պատվի և արժանապատվության մասին: Թեև ՉԼՄ-ների և մասնավոր անձանց կողմից անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտումը ևս կարող է հետևանքներ առաջացնել անձի համար, սակայն այն չունի նույն ուժգնությունը, ինչ կոնկրետ քրեական վարույթի հետ առնչություն ունեցող պաշտոնատար անձի կողմից քրեադատավարական սկզբունքի խախտումը: Հարկ է նշել, որ նշվածը վերաբերում է նաև քրեական վարույթի հետ առնչություն չունեցող պաշտոնատար

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

անձանց կողմից անմեղության կանխավարկածի խախտման դեպքերին: Այսինքն անկախ զբաղեցրած պաշտոնից, եթե անմեղության կանխավարկածի սկզբունք թույլ տված անձն առնչություն չունի քրեական վարույթի հետ, ապա նրա գործողությունները պետք է դիտարկվեն անձի մասնավոր կյանքին վնասող իրավահարաբերությունների հաստատման:

Վերոգրյալի դեպքում, ըստ ՄԻԵԴ նախադեպային որոշման առաջանում են Կոնվենցիայի 8-րդ հոդվածով նախատեսված իրավունքի խախտման հետևանքներ, ինչն էլ ներպետական իրավունքում կարող է դրսևորվել քաղաքացիաիրավական հետևանքների տեսքով և այդ քաղաքացիաիրավական օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության մեխանիզմները կարող են արդյունավետ լինել:

Թեև վերոգրյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագարել է, որ, եթե պաշտոնատար անձն անմեղության կանխավարկածի սկզբունքը խախտել է դատավարական գործողության արդյունքում, ապա այդ պարագայում կարող է հայցել քրեադատավարական պաշտպանություն, սակայն որևէ կերպ անդրադարձ չի կատարել, թե ինչ հետևանք դա կարող է առաջացնել: Եթե այս պնդումը վերաբերում է անմեղության կանխավարկածի այն բաղադրատարրերին, որոնք հանգեցնում են անօրինական դատական ակտի կայացման կամ քրեադատավարական նորմերի էական խախտմամբ ապացույցի ձեռք բերման, ապա պարզ է, որ դա հանգեցնելու է քրեադատավարական նորմերով նախատեսված իրավական հետևանքների:

Ինչ վերաբերում է քրեական վարույթի ընթացքում կամ դրա ավարտից հետո վարույթին առնչություն ունեցած պաշտոնատար անձանց կողմից ոչ դատավարական գործողությունների արդյունքում անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման իրավական հետևանքներին, ապա գտնում են, որ դրանց համար քաղաքացիաիրավական պաշտպանության մեխանիզմների նախատեսումը որևէ պարագայում չի կարող հանդիսանալ արդյունավետ պաշտպանության միջոց:

Նշվածի առնչությամբ տարանջատենք երկու հնարավոր իրավիճակ: Առաջին դեպքում իրավապահ մարմինները, ապահովելով հասարակության կողմից հանրորեն վտանգավոր արարքների մասին տեղեկացված լինելու անհրաժեշտությունը և իրենց գործունեության հրապարակայնությունը, կատարում են տարբեր բնույթի հրապարակումներ, որոնցից շատերի դեպքում ենթադրյալ հանցանք կատարած անձանց նույնականացումը խնդիր չի առաջացնում: Նման հրապարակումները նույնիսկ զգուշավորության դեպքում որևէ կոնկրետ անձի կողմից որևէ հանցանքի կատարման մասին հասա-

րակության մեջ որոշակի կարծիք են ստեղծում: Հետագայում, որոշակի ժամանակ անց, անձը, ում վերաբերյալ կատարվել էին հրապարակումները կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, նրա նկատմամբ կարող է արդարացման դատավճիռ կայացվել, սակայն արդեն այս պարագայում որևէ հրապարակում այդ մասին տեղի չի ունենում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 43-րդ կետի համաձայն ռեաբիլիտացիան Հայաստանի Հանրապետության կողմից արդարացված մեղադրյալին Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան տրվող հատուցումն, ինչպես նաև նրա իրավունքների վերականգնումն է:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի համաձայն՝

1. Արդարացված մեղադրյալն իրավունք ունի պահանջելու անօրինական քրեական հետապնդում հարուցելու, հարկադրանքի միջոցներ կիրառելու, դատապարտելու, ինչպես նաև իրավունքների կամ ազատությունների անօրինական այլ սահմանափակումների հետևանքով իրեն պատճառված վնասի հատուցում:

2. Արդարացված մեղադրյալը որպես հատուցում իրավունք ունի ստանալու՝

1) աշխատավարձը, թոշակը, նպաստը կամ այլ եկամուտը, որից նա զրկվել է.

2) գույքն առգրավելու, արգելադրելու, բռնագրավելու կամ այլ կերպ տնօրինելու հետևանքով պատճառված վնասը.

3) անազատության մեջ գտնվելու հետևանքով ծախսված գումարը.

4) փաստաբանին վճարված գումարը.

5) վճարված դատական ծախսերը:

3. Արդարացված մեղադրյալն իրավունք ունի նաև՝

1) վերականգնվելու նախկին աշխատանքում (նախկին պաշտոնում), իսկ դրա անհնարինության դեպքում ստանալու համարժեք աշխատանք (պաշտոն) կամ նախկին աշխատանքը (պաշտոնը) կորցնելու հետևանքով պատճառված վնասի դրամական փոխհատուցում.

2) բոլոր տեսակի աշխատանքային ստաժների մեջ հաշվակցելու անազատության մեջ պահելու ձևով պատիժը կրելու ժամանակը.

3) վերականգնելու պատվավոր կամ զինվորական կոչումը, կարգը, աստիճանը, որակավորման դասը կամ պետական պարգևը:

Այսինքն, ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ թեև նախատեսված է արդարացվածի ռեաբիլիտացիայի ինստիտուտ, սակայն որևէ դրույթ նախատեսված չէ այն դեպքերի համար, երբ որոշակի անձի կողմից որևէ ենթադրյալ հանցանք կատարելու մասին նախկինում կատար-

վել են հրապարակումներ, այդ թվում՝ իրավապահ մարմինների կողմից քրեական վարույթներով մամուլի հաղորդագրություններ են տարածվել, սակայն անձն, օրինակ, դատարանի դատավճռով ճանաչվել է անմեղ: Գտնում եմ, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի բովանդակային պաշտպանության համար անհրաժեշտ է կատարել օրենսդրական փոփոխություն, որով որպես արդարացված անձի ռեաբիլիտացիա բոլոր այն դեպքերում, երբ համապատասխան մարմինների կողմից դեռևս նախաքննության փուլում կատարվել են քրեական վարույթի մասին հրապարակումներ, որոնք հետագայում հերքվել են կայացված եզրափակիչ դատավարական կամ դատական ակտով, ապա օրենսդրորեն պետք է նախատեսել անձի անմեղության մասին վկայող հրապարակման պարտադիրությունը սահմանող պարտականություն: Վարույթ իրականացնող մարմինը ի սկզբանե քրեական վարույթի մասին հրապարակումներ կատարելով նաև պետք է նախատեսվի, որ հետագայում հրապարակելու է նաև այդ վարույթի վերջնական արդյունքը, որն էլ հանրության մոտ ամբողջական պատկեր կստեղծի որևէ հանցանքին անձի առնչության մասին:

Ինչ վերաբերում է երկրորդ իրավիճակին, ապա դրանք ներառում են այնպիսի դեպքերը, երբ վարույթի շրջանակներում հանրային մասնակցի կամ դատարանի կողմից ոչ դատավարական գործողությունների արդյունքում, մասնավորապես հրապարակային ելույթներով, խախտվում է անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը:

Ինչպես արդեն իսկ նշվել է, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ ոչ դատավարական գործողությունների արդյունքում անձի անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման համար անձը կարող է իրավական պաշտպանություն հայցել քաղաքացիաիրավական պատասխանատվության տիրություն:

Միաժամանակ գտնում եմ, որ վարույթի հանրային մասնակցիցների կողմից անմեղության կանխավարկածի խախտման ազդեցությունն անձի վրա նույնը չէ ինչ մասնավոր անձանց կողմից նման խախտում թույլ տալու դեպքում: Առավել ևս, երբ խոսք է գնում վարույթին անմիջական մասնակցություն ունեցող պաշտոնատար անձանց գործողությունների մասին: Օրինակ, նախաքննություն իրականացնող քննիչի կողմից հարցազրույցի ընթացքում թույլ են տրվում X-ի կողմից հանցանք կատարելու վերաբերյալ պնդումներ: Նման դիտարկումները հասարակության մեջ առաջացնում են միանշանակ կարծիք X-ի հանցագործ լինելու վերաբերյալ: Նույնիսկ այն պարագայում, եթե հետագայում անձի վերաբերյալ որոշում կայացվի հանրային քրեական հետապնդումն արդարացնող հիքմով դադարեցնելու, կամ անձն արդար-

րացվի Դատարանի կողմից, միևնույն է հասարակության մեջ անձն արդեն իսկ պիտակավորված է լինելու որպես հանցագործ: Նման պարագայում նախաքննություն իրականացնող քննիչի արտահայտությունները, թեև չեն հանդիսանում դատավարական գործողություն, բայց ավելի մեծ վնաս կարող են հասցնել անձին, քան դատավարական խախտումները:

Քրեական վարույթի շրջանակներում անմեղության կանխավարկածների խախտման դեպքերի մեծամասնությունը տեղի է ունենում վարույթի հանրային մասնակիցների կողմից ոչ դատավարական գործողությունների արդյունքում՝ հրապարակումներ, հարցազրույցներ և այլն: Նման գործողությունների հետևանքները որպես կանոն շատ ավելի լայն տարածում են ունենում, քան դատավարական որոշումների կամ գործողությունների կատարման դեպքում, ուստի առաջինի պարագայում հետևանքներն ավելի մեծ ու վնասակար են: Նման իրավիճակում պաշտոնատար անձը թեև չի կատարում որևէ դատավարական գործողություն, սակայն այնուամենայնիվ խախտումը թույլ է տալիս քրեական վարույթի շրջանակներում լիազորություններ իրականացնելիս, ուստի դրա համար առաջացող հետևանքները ևս պետք է նախատեսված լինեն քրեադատավարական օրենսդրությամբ: Տվյալ պարագայում քաղաքացիաիրավական մեխանիզմների միջոցով պաշտպանության հայցումը կարող է լինել օժանդակ միջոց, բայց չի կարող փոխարինել քրեական վարույթի շրջանակներում պաշտպանություն ստանալու հնարավորությունը:

Քրեաիրավական պաշտպանության հնարավոր միջոցների կիրառման հնարավորությունները քննարկելիս հարկ է նշել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածի 4-րդ մասի իրավական կարգավորումը, որի համաձայն՝ արդարացված մեղադրյալի պահանջով քրեական հետապնդում հարուցած մարմինը պարտավոր է հրապարակային ներողություն հայցել նրանից:

Այն իրավիճակներում, երբ քրեական վարույթի շրջանակներում վարույթի հանրային մասնակիցների կամ դատարանի ոչ դատավարական գործողությունների արդյունքում խախտվում է անձի անմեղության կանխավարկածը, ապա անձը նույնիսկ մինչև արդարացված կարգավիճակ ստանալը պետք է հնարավորություն ունենա վարույթն իրականացնող մարմնի գործողությունը բողոքարկելու դատական երաշխիքների վարույթի շրջանակում, իսկ Դատարանն էլ բողոքի քննարկման արդյունքում մեղադրյալից հրապարակային ներողություն հայցելուն պարտավորեցնելու մասին որոշում կայացնելու հնարավորություն ունենա: Այս կարգի սահմանումը կարևոր է նաև այն առումով, որ այնուամենայնիվ քրեական վարույթի շրջանակներում քրեադատավարական սկզբունքի խախտումը

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կառաջացնի քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված պարտականություն և կհանդիսանա զսպիչ մեխանիզմ ոչ դատավարական գործողություններով անձի անմեղության կանխավարկածի սկզբունքը խախտելու հարցում:

Վերոգրյալի իրականացման համար անհրաժեշտ է փոփոխություն կատարել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 299-րդ հոդվածում՝ անձի համար սահմանելով հնարավորություն դատական երաշխիքների վարույթի շրջանակներում ստանալ իր խախտված իրավունքի պաշտպանություն: Անհրաժեշտ է նաև կատարել փոփոխություն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 164-րդ հոդվածում՝ մեղադրյալի համար սահմանելով հնարավորություն պահանջել քրեական հետապնդում հարուցած մարմնին պարտավորեցնել հրապարակային ներողություն հայցել նրանից:

Ի հիմնավորումն վերոգրյալի հարկ է նշել, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր նախադեպային որոշումներում արձանագրել է, որ նույնիսկ այն դեպքում, եթե մեղադրյալը հետագայում՝ վերջնաորոշումը, ճանաչվել է մեղավոր, չի գրկում նրան նախաքննության ընթացքում իր անմեղության կանխավարկածի խախտումն արձանագրելու և խախտված իրավունքի վերականգնում պահանջելու հնարավորությունից:

Եզրակացություն:

Անփոփելով վերոգրյալը, պետք է փաստել, որ անմեղության կանխավարկածի սկզբունքի խախտման դեպքում քաղաքացիաիրավական մեխանիզմներով պաշտպանության հայցումը արդյունավետ է, բայց ոչ ամբողջական: Թեև ՀՀ

վճռաբեկ դատարանն առաձին անգամ անդրադարձել է քննարկվող սկզբունքի խախտման դեպքում առաջացող հետևանքներին, այնուամենայնիվ եզրահանգում ենք, որ պաշտպանության մեխանիզմների տարանջատման հիմքում դնելով գործողությունների դատավարական կամ ոչ դատավարական լինելու փաստը, առաջացող խնդրի կապակցությամբ Դատարանն ամբողջական և համապարփակ լուծում չի առաջարկել, ուստի գտնում են, որ անմեղության կանխավարկածի խախտման հետևանքները պետք է տարանջատել ոչ թե դատավարական և ոչ դատավարական գործողությունների տեսակյունից, այլ ելնելով խախտում թույլ տված սուբյեկտների շրջանակից:

Եթե խախտումը թույլ է տրվել մասնավոր անձի կամ քրեական վարույթի հետ առնչություն չունեցող պաշտոնատար անձի կողմից, ապա այն պետք է դիտարկվի ՄԻԵԿ-ի 8-րդ հոդվածի շրջանակներում և ներպետական իրավունքում կարող է դրսևորվել քաղաքացիաիրավական պաշտպանության մեխանիզմներով, իսկ եթե խախտումը թույլ է տրվել քրեական վարույթի շրջանակներում՝ վարույթի հանրային մասնակցի կամ դատարանի կողմից, ապա այն պետք է պաշտպանվի քրեադատավարական պաշտպանության մեխանիզմով՝ սահմանելով պաշտոնատար անձի գործողությունները դատական երաշխիքների վարույթի շրջանակում բողոքարկման և դրա արդյունքում հրապարակային ներողություն հայցելու պարտականության սահմանման հնարավորություն:

¹ М. С. Строгович. Право обвиняемого на защиту и презумпция невиновности /М. С. Строгович. -М.: Наука, 1984. - С. 65):

² ՀՀ Վճռաբեկ Դատարանի որոշումը Սեդրակ Քոչարյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0112/11/19 քրեական գործով Matijasevic v. Serbia գործով 2006 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 23037/04, 48-րդ կետ:

³ Garycki v. Poland գործով 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռը, գանգատ թիվ 14348/02, 66-րդ կետ

⁴ Allenet de Ribemont v. France գործով 1996 թվականի օգոստոսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 15175/89, 35-36-րդ կետեր, Nesták v. Slovakia գործով 2007 թվականի փետրվարի 27-ի վճիռը, գանգատ թիվ 65559/01, 88-րդ կետ:

⁵ Dakaras v. Lithuania գործով 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 42095/98, 41-րդ կետ

⁶ Giedrius Nemeiksis “The challenges of the presumption of innocence in Lithuanian Criminal Proceedings”, November, 2024, հասանելի՝ https://www.researchgate.net/publication/385568693_The_Challenges_of_the_Presumption_of_Innocence_in_Lithuanian_Criminal_Proceedings.

⁷ European Court of Human Rights - Case of Vardan Martirosyan v. Armenia (Application no. 13610/12), 2021 թվականի հունիսի 15-ի որոշումը // LawEuro, 2021, URL: <https://laweuro.com/?p=15291>

⁸ Allenet de Ribemont v. France, 1995, §§ 37 and 41, Peša v. Croatia, 2010, § 149, Gutsanovi v. Bulgaria, 2013, §§ 194-198, Konstas v. Greece, 2011, §§ 43 and 45, Dakaras v. Lithuania, 2000, § 42, Khuzhin and Others v. Russia, 2008, § 96

⁹ Գրետա Արզումանյան, Արմինե Քարդումյան, «Անմեղության կանխավարկածի որոշ հիմնախնդիրները ԱՀ քրեական դատավարությունում», հասանելի <https://arar.sci.am/dlibra/publication/375413/edition/346199/content>

¹⁰ Իսմոիլովը և այլք ընդդեմ Ռուսաստանի, 2008, § 161; Բուտկևիչյունս ընդդեմ Լիտվայի, 2002, § 53):

- ¹² Ֆատուլյան ընդդեմ Ադրբեջանի, 2010, § 159; Ալենետ դը Ռիբեմոն ընդդեմ Ֆրանսիայի, 1995, § 38; Գարիցկի ընդդեմ Լեհաստանի, 2007, § 69):
- ¹³ Amal Clooney, Philippa Webb, *The Right to a Fair Trial in International Law*, Oxford University Press (2020), էջ 249:
- ¹⁴ Petropavlovskis v. Latvia գործով 2015 թվականի հունվարի 13-ի վճիռը, գանգատ թիվ 44230/06, 91-րդ կետ:
- ¹⁵ Ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R (2004) 6 հանձնարարականի հավելվածը, 4-րդ կետ:
- ¹⁶ ՀՀ Վճռաբեկ Դատարանի որոշումը Սեդրակ Քոչարյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0112/11/19 քրեական գործով
- ¹⁷ ՀՀ Վճռաբեկ Դատարանի որոշումը Սեդրակ Քոչարյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0112/11/19 քրեական գործով
- ¹⁸ Dušan Matijašević ընդդեմ Serbia, 2006 թ., § 49, Miroslav Nešćák ընդդեմ Slovakia, 2007 թ., § 90)

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- 1. Ազգային դատական համակարգերի արդյունավետության խնդիրների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ 2004 թվականի մայիսի 12-ի թիվ R (2004) 6 հանձնարարականի հավելվածը, 4-րդ կետ:
- 2. Գրետա Արգումանյան, Արմինե Քարդումյան, Անմեղության կանխավարկածի որոշ հիմնախնդիրները ԱՀ քրեական դատավարությունում, հասանելի <https://arar.sci.am/dlibra/publication/375413/edition/346199/content>, վերջին ակցելություն 14.05.2026թ.:
- 3. ՀՀ Վճռաբեկ Դատարանի որոշումը Սեդրակ Քոչարյանի վերաբերյալ թիվ ԵԴ/0112/11/19 քրեական գործով
- 4. М. С. Строгович. Право обвиняемого на защиту и презумпция невиновности /-М.: Наука, 1984. - С. 65
- 5. Amal Clooney, Philippa Webb, *The Right to a Fair Trial in International Law*, Oxford University Press (2020), 249 էջ:
- 6. Allenet de Ribemont v. France գործով 1996 թվականի օգոստոսի 7-ի վճիռը, գանգատ թիվ 15175/89
- 7. Giedrius Nemeiksis “The challenges of the presumption of innocence in Lithuanian Criminal Proceedings”, November, 2024, հասանելի՝ https://www.researchgate.net/publication/385568693_The_Challenges_of_the_Presumption_of_Innocence_in_Lithuanian_Criminal_Proceedings, վերջին հասանելիություն՝ 14.05.2026թ.
- 8. Garycki v. Poland գործով 2007 թվականի փետրվարի 6-ի վճիռը, գանգատ թիվ 14348/02
- 9. Daktaras v. Lithuania գործով 2000 թվականի հոկտեմբերի 10-ի վճիռը, գանգատ թիվ 42095/98,
- 10. Matijasevic v. Serbia գործով 2006 թվականի սեպտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 23037/04
- 11. Dušan Matijašević v. Serbia, 2006 թվականի դեկտեմբերի 19-ի վճիռը, գանգատ թիվ 23037/04
- 12. Nesták v. Slovakia գործով 2007 թվականի մայիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 65559/01,
- 13. Petropavlovskis v. Latvia գործով 2015 թվականի հունվարի 13-ի վճիռը, գանգատ թիվ 44230/06,

References

- 1. Evropaayi khorhurd, Nakhararneri komite, «Azkayin datakan hamakargeri ardyunavetutyany khndimeri veraberyal handznararakan» t’iv R (2004) 6, 12 mayisi 2004 t’., havelvats, ket 4:
- 2. Greta Arzumanyan, Armine Kardumyan, «Anmeghut’yan kankhavarkatsi vorosh himnakhndirneri AH qreakan datavarut’yunum», hasaneli՝ Armenian Scientific Articles Repository
- 3. (verjin hasaneliut’yun՝ 14.05.2026 t’.):
- 4. HH Vchrrabek dataran, Sedrak Kocharyani veraberyal voroshum, qreakan gorc t’iv ED/0112/11/19:
- 5. M. S. Strogovich, Pravo obvinyaemogo na zashchitu i prezumpciya nevinovnosti, Moskva: Nauka, 1984, s. 65.
- 6. Amal Clooney, Philippa Webb, *The Right to a Fair Trial in International Law*, Oxford University Press, 2020, p. 249.
- 7. Allenet de Ribemont v. France gorcov 1996 t’vakani ogostosi 7-i vchiry, gangat t’iv 15175/89:
- 8. Giedrius Nemeiksis, “The Challenges of the Presumption of Innocence in Lithuanian Criminal Proceedings”, November 2024, hasaneli՝ ResearchGate publication
- 9. (verjin hasaneliut’yun՝ 14.05.2026 t’.):
- 10. Garycki v. Poland gorcov 2007 t’vakani petrvari 6-i vchiry, gangat t’iv 14348/02:
- 11. Daktaras v. Lithuania gorcov 2000 t’vakani hoktemberi 10-i vchiry, gangat t’iv 42095/98:
- 12. Matijasevic v. Serbia gorcov 2006 t’vakani septemberi 19-i vchiry, gangat t’iv 23037/04:
- 13. Dušan Matijašević v. Serbia, 2006 t’vakani dektemberi 19-i vchiry, gangat t’iv 23037/04:
- 14. Nesták v. Slovakia gorcov 2007 t’vakani mayisi 27-i vchiry, gangat t’iv 65559/01:
- 15. Petropavlovskis v. Latvia gorcov 2015 t’vakani hunvari 13-i vchiry, gangat t’iv 44230/06:

Գոար Ադոնց

Старший следователь по особо важным делам Управления внутренней безопасности и контроля Антикоррупционного комитета Республики Армения
 Преподаватель юридического факультета Европейского университета Армении
 Соискатель кафедры уголовного права и уголовно-процессуального права Российско-Армянского (Славянского) университета

РЕЗЮМЕ***Правовые последствия нарушения презумпции невиновности в уголовно-процессуальном праве Республики Армения***

Настоящая статья посвящена исследованию правовых последствий нарушения презумпции невиновности и механизмов защиты нарушенного права в уголовно-процессуальном праве Республики Армения. Актуальность исследования обусловлена тем, что, несмотря на широкое изучение принципа презумпции невиновности как в международном, так и во внутригосударственном правовом поле, правовые последствия его нарушения и эффективные средства правовой защиты до настоящего времени не подвергались комплексному научному анализу.

В статье исследованы международно-правовые и внутригосударственные основы принципа презумпции невиновности с обращением к пункту 2 статьи 6 Европейской конвенции о защите прав человека и основных свобод, Конституции Республики Армения, Уголовно-процессуальному кодексу Республики Армения, а также к прецедентной практике Европейского суда по правам человека и Кассационного суда Республики Армения.

В результате проведенного анализа установлено, что нарушения презумпции невиновности могут проявляться как посредством процессуальных, так и непроцессуальных действий.

Особое внимание уделено правовой позиции Кассационного суда Республики Армения, выраженной по делу Седрака Кочаряна № ЕД/0112/11/19, согласно которой случаи нарушения презумпции невиновности разграничиваются в зависимости от их процессуального или непроцессуального характера. В статье обосновывается, что подобный подход не обеспечивает полного и эффективного решения проблемы, поскольку нарушения, допущенные должностными лицами в рамках уголовного производства посредством непроцессуальных действий, зачастую оказывают более существенное влияние на репутацию лица и общественное восприятие, чем процессуальные нарушения.

Автор предлагает разграничивать правовые последствия нарушения презумпции невиновности не по критерию процессуального или непроцессуального характера действий, а исходя из статуса субъекта, допустившего нарушение. Если нарушение допущено публичным участником уголовного производства либо судом, правовая защита должна осуществляться уголовно-процессуальными механизмами, включая возможность обжалования в рамках производства по судебным гарантиям и возложения обязанности принесения публичных извинений. В случаях же нарушения со стороны частных лиц или субъектов, не связанных с уголовным производством, применимыми могут выступать гражданско-правовые средства защиты.

В статье также предлагаются законодательные изменения, направленные на повышение эффективности института реабилитации оправданных лиц, в частности посредством установления обязанности распространения публичных сообщений об оправдании лица либо прекращении уголовного преследования со стороны органов, осуществляющих производство.

Ключевые слова: Принцип презумпции невиновности, нарушение принципа презумпции невиновности, уголовно-процессуальные механизмы защиты, гражданско-правовые механизмы защиты, процессуальные и не процессуальные действия, реабилитация оправданного лица, публичность уголовного судопроизводства.

Gohar Adonts

Senior Investigator for Particularly Important Cases, Internal Security and Oversight Department, Anti-Corruption Committee of the Republic of Armenia
 Lecturer, Faculty of Law, European University of Armenia
 PhD Applicant, Department of Criminal Law and Criminal Procedure Law, Russian-Armenian (Slavonic) University

SUMMARY***Legal consequences of violating the presumption of innocence in the criminal procedure law of the Republic of Armenia***

This article is devoted to the study of the legal consequences of violating the presumption of innocence and the mechanisms for protecting violated rights within the criminal procedure law of the Republic of Armenia. The relevance of the research is stated by the fact that, although the principle of the presumption of innocence has been extensively examined in

both international and domestic legal frameworks, the legal consequences arising from its violation and the effective remedies available for the protection of violated rights have not yet been comprehensively analyzed in legal scholarship.

The article examines the international and domestic legal foundations of the presumption of innocence, with reference to Article 6 §2 of the European Convention on Human Rights, the Constitution of the Republic of Armenia, the Criminal Procedure Code of the Republic of Armenia, as well as the case law of the European Court of Human Rights and the Court of Cassation of the Republic of Armenia.

The analysis demonstrates that violations of the presumption of innocence may occur through both procedural and non-procedural actions. Special attention is paid to the legal position expressed by the Court of Cassation of the Republic of Armenia in the case of Sedrak Kocharyan No. ED/0112/11/19, in which the Court differentiated violations of the presumption of innocence according to their procedural or non-procedural nature. The article substantiates that such an approach does not provide a complete and effective solution, since violations committed by public officials within criminal proceedings through non-procedural actions often have a more significant impact on an individual's reputation and public perception than procedural violations.

The author proposes distinguishing the legal consequences of violating the presumption of innocence not on the basis of whether the act is procedural or non-procedural, but according to the status of the subject committing the violation. Where the violation is committed by a public participant in criminal proceedings or by a court, legal protection should be ensured through criminal procedural mechanisms, including the possibility of judicial review within judicial guarantees proceedings and the imposition of an obligation to issue a public apology. In cases where the violation is committed by private individuals or entities unrelated to criminal proceedings, civil law remedies may serve as appropriate means of protection.

The article also proposes legislative amendments aimed at increasing the effectiveness of the rehabilitation institution for acquitted persons, particularly through imposing an obligation on competent authorities to publicly disseminate information concerning acquittals or the termination of criminal prosecution.

Key words: Principle of the presumption of innocence, violation of the principle of the presumption of innocence, criminal procedural protection mechanisms, civil law remedies, procedural and non-procedural actions, rehabilitation of acquitted persons, publicity of criminal proceedings.

Բնագիրը ներկայացվել է 11.05.2026թ.
Ընդունվել է տպագրության 27.05.26թ.

ՄՀԵՐ ԲԱԴԴԱՍԱՐՅԱՆ

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԱՆՍԱՆ
ՄԿՁԲՈՒՆՔԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

Հնդվածում դիտարկվում են իշխանությունների բաժանման սկզբունքի կատարելագործման հիմնական խնդիրները սահմանադրական բարեփոխումների համատեքստում: Գնահատված են առկա մարտահրավերները և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման համակարգի բարելավմանն ուղղված առաջարկությունները՝ պետական ապարատի արդյունավետ գործունեության և մարդու իրավունքների պաշտպանության ապահովման նպատակով:

Հիմնադրադր - իշխանությունների բաժանման սկզբունք, սահմանադրական բարեփոխումներ, օրենսդիր իշխանություն, գործադիր իշխանություն, դատական իշխանություն, իշխանությունների հավասարակշռում, պետական իշխանություն, իրավական համակարգ, բարեփոխում:

Ժամանակակից ազգային պետականաշինության գործնական խնդիրն ու բարդությունը կայանում են նրանում, թե ինչպես իրականացնել պետական կառավարման համակարգի ձևափոխման գործընթացը՝ հաշվի առնելով հայ հասարակության առջև ծառայած արդի մարտահրավերները, զարգացման համաշխարհային միտումները, պահանջները, առանձնահատկություններն ու ավանդույթները: Օտարերկրյա պետությունների փորձի կիրառմամբ կառուցված ցանկացած մոդելի կենսագործման համար անհրաժեշտ է ստեղծել համապատասխան պայմաններ և նախադրյալներ, քանի որ ոչ բոլոր հանգամանքներն են երաշխավորում քաղաքական ինստիտուտների և մեխանիզմների արդյունավետությունը, ինչպես նաև դրանց ժողովրդավարական բնույթը՝ մի երկրից մյուսը տեղափոխելիս:

Եթե վերլուծենք Արևմուտքի փորձի հիման վրա իշխանությունների բաժանման սկզբունքով իշխանության կազմակերպման համար ժամանակակից Հայաստանում առկա պայմաններն ու նախադրյալները, ապա կբախվենք բավականին բարդ և հակասական իրավիճակի: Մեր երկրում ընթացող սահմանադրական բարեփոխումների համատեքստում առանձնահատուկ կարևորություն է տրվում իշխանությունների զսպումների և հակակշիռների հստակ սահմանադրական սահմանմանը, ինչպես նաև դրանց գործառնությանը, զսպող և հակակշռող լիազորությունների դինամիկ հավասարակշռության ապահովմանը: Սահմանադրական հակակշիռը պետական իշխանության ինստիտուտի գործառնության ընդհանուր շվեթերոդ լիազորություն է, որը պետք է դինամիկայի մեջ պահպանի իշխանությունների բաժանման սահմա-

նադրական հավասարակշռությունը:

Ինչպես նշված է Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում. «Համաչափության և գործառնության հավասարակշռության սկզբունքների հիման վրա, համակարգային մոտեցմամբ և միջազգային փորձի հաշվառմամբ պետք է հաղթահարվեն իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իրացման հետ կապված թերություններն ու բացթողումները՝ ապահովելով «գործառնություն - ինստիտուտ - լիազորություն» շղթայի ներդաշնակությունը, ինչպես նաև իշխանության ճյուղերի գործառնությանը, զսպող և հակակշռող լիազորությունների հավասարակշռվածությունը, լիազորություններին համապատասխանող հանրային-իրավական պատասխանատվության անխուսափելիությունը»:

Միաժամանակ պետք է երաշխավորվի իշխանության բոլոր ճյուղերի գործառնության անկախությունը: Նրանց փոխհարաբերությունները պետք է կառուցվեն զսպումների և հակակշիռների արդյունավետ համակարգի վրա, իսկ սահմանադրական լիազորությունների հետ կապված ծագող հարցերը պետք է ունենան վեճերի լուծման հստակ սահմանված իրավական ընթացակարգեր:

Իշխանությունների բաժանման արդյունավետ համակարգի հաստատման համար սոցիալական հիմք կարող է հանդիսանալ միայն տնտեսական և սոցիալական կյանքի բազմակարծությունը, ապրանքների ազատ արտադրողների առկայությունը (այն չափով, որքանով թույլ են տալիս պատմական հանգամանքները), ովքեր ունեն իրենց սեփական շահերը և ճանաչում են այլոց իրավունքը՝ ունենալու իրենցից տարբերվող շահեր ու արժեքներ՝

պաշտպանելով դրանք բոլոր թույլատրելի միջոցներով, ներառյալ քաղաքական մակարդակը: Բարեփոխումները, որոնք որպես նպատակ հռչակում են երկրի ժողովրդավարացումը, նշանավորեցին խառն տնտեսության և բազմակարծիք հասարակության ստեղծմանն ուղղված շարժման սկիզբը: Սակայն դրանց հիմքում դրված են միայն առաջին քարերը: Ընդհանուր առմամբ, դրանց վերակառուցման գործընթացը դեռևս հեռու է ավարտից: Հենց սա է բարդացնում երկրի նոր քաղաքական համակարգի ձևավորման ժամանակ իշխանությունների բաժանման առաջատար սկզբունքներից մեկի հաստատումը:

Հայկական ազգային կատարմամբ իրականացվող բարեփոխումների «շուկային» մեթոդների հետևանքները, մեր կարծիքով, սահմանափակեցին ապրանք արտադրողների բավականին լայն անկախ խմբի և, ընդհանուր առմամբ, հասարակության միջին շերտի ձևավորման հնարավորությունները: 1990-ական թվականների սկզբին տնտեսական ոլորտում զարգացող միտումները շարունակում են վատթարացնել ժողովրդավարական բազմակարծիք տնտեսության ստեղծման հեռանկարները՝ ուժեղացնելով դրա մոնոպոլացումը: Նման իրավիճակում մեծանում է սուբյեկտիվ գործոնների առավելագույն ազդեցության ռիսկը պետականաշինության գործընթացի և պետական կառավարման այնպիսի ձևերի ու մեթոդների հաստատման վրա, որոնք նախևառաջ սպասարկում են որոշակի անձանց խմբային (կլանային) շահերը:

Իշխանությունների բաժանման համակարգի հաստատման և դրա հաջող գործունեության մեկ այլ նախադրյալ ու պայման է իրավական պետության ձևավորումը: Եվ այստեղ, ցավոք, ստիպված ենք արձանագրել հասարակության անպատրաստ լինելու փաստը իշխանությունների բաժանման սկզբունքի իրացման խնդրի լուծմանը: Հասարակական կարգի և քաղաքական իշխանության բնույթի անորոշությունը խոչընդոտում է հասարակության կայուն իրավական բազայի ձևավորմանը, զինաթափում է դատական իշխանությունը և այն դարձնում քաղաքական կոնյունկտուրայի պատանդը:

Իշխանությունների բաժանման մեխանիզմի հաստատման և արդյունավետ գործունեության համար, հետևաբար, բացարձակապես անհրաժեշտ է ձևավորել ուժեղ և անկախ դատական իշխանություն, որն ունակ կլինի հասարակության մեջ ամրապնդել իրավունքի գերակայությունը:

Սահմանադրական իրավունքի տեսության առանցքային խնդիրը կայանում է հենց նրանում, որպեսզի երաշխավորվի իշխանության ճյուղերի գործառնության հավասարակշռությունը դինամիկայի մեջ: Դրա համար յուրաքանչյուր սահմանադրական գործառնության լիազորություն պետք է

հավասարակշռվի և զսպվի իշխանության մյուս ճյուղերի համապատասխան լիազորություններով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 5-րդ հոդվածի դրույթների նորմատիվ բովանդակությունը հիմնվում է նախևառաջ Հայաստանում պետական իշխանության միասնության վրա: Դիտարկվող նորմը հաստատում է իշխանական լիազորությունների բաժանումը իշխանության տարբեր մարմինների միջև, սահմանում է նրանց անկախությունը իրենց լիազորությունների իրականացման գործում և մեկ մարմնի միջամտության անթույլատրելիությունը մյուսի լիազորությունների ոլորտ:

Ժամանակակից սահմանադրական իրավունքի բազմաթիվ տեսաբանների համար (մասնավորապես՝ գերմանացի պետական գործիչ Կ.Հեսսեի) իշխանությունների բաժանման սկզբունքի հիմնական բնութագրերն են մարդկանց համատեղ գործունեության կարգավորումը և կարգապահությունը, իշխանության առանձին ճյուղերի, դրանց լիազորությունների և սահմանափակումների սահմանումը, ընդհանուր աշխատանքի կարգավորումը, պետական մարմինների լիազորությունների հավասարակշռությունը և, ի վերջո, պետական իշխանության միասնության սահմանափակումը:

Բանն այն է, որ իշխանությունների բաժանման սկզբունքը վերացական չէ: Այն ենթադրում է նաև լիազորություններով օժտված իշխանության տարբեր ճյուղերի գործառնության առումով հստակ սահմանված և անկախ իրականացվող փոխազդեցություն ու հավասարակշռվածություն: Այս համատեքստում միջազգային փորձը փորձում է սահմանադրորեն սահմանել իշխանության սահմանափակումները, ստեղծել իշխանությունների փոխկապակցվածության և գործողությունների «պարտադիր» համաձայնեցման համակարգ (խորհրդարանի կողմից կառավարության ծրագրի հաստատումը, Նախագահի վետոյի իրավունքը, խորհրդարանի՝ Նախագահի վետոն հաղթահարելու իրավունքը, Նախագահի՝ խորհրդարանը արձակելու իրավունքը, խորհրդարանի՝ կառավարությանը անվստահություն հայտնելու իրավունքը և այլն):

Իր հերթին, իշխանությունների հավասարակշռության պահպանման կարևորագույն պայման է պետական իշխանությունների լիազորությունների խաթարված հավասարակշռության բացահայտման, գնահատման և սահմանադրական կարգով վերականգնման արդյունավետ համակարգի առկայությունը: Սա հնարավոր է միայն այն դեպքում, եթե իշխանության երեք ճյուղերից յուրաքանչյուրը նվազագույնը օժտված լինի այնպիսի լիազորություններով, որոնք կապահովեն դրա էության դրսևորումը:

Ամենամեծ վտանգն են ներկայացնում այս-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պես կոչված իշխանության նոր ճյուղերի որոնումները, որոնք հիմնականում իշխանության գործառնության կամ կազմակերպչական բաժանման մեջ առկա շփոթության արդյունք են և «կանաչ լույս» են բացում կորպորատիվ կառավարման համակարգի շրջանակներում քաղաքական, վարչական և տնտեսական ուժի կենտրոնացման համար: Նման մոտեցումների հիմքում ընկած է իշխանությունների բաժանման ոչ թե գործառնության, այլ կազմակերպչական մոտեցումը:

Իշխանությունների բաժանման վրա հիմնված քաղաքական համակարգի արդյունավետ գործունեությունն անհնար է առանց նոր քաղաքական էլիտայի ձևավորման: Սակայն իրականությունն այնպիսին է, որ վերջին տարիներին, հասարակական ցնցումների ընթացքում, քաղաքական կադրերի ընտրության և առաջխաղացման մեխանիզմը բավականին արագ և հիմնավորապես քանդվել է, իսկ դրա փոխարեն մինչ օրս ոչինչ չի ստեղծվել: Իհարկե, բազմակարծիք քաղաքական համակարգին անհարիր է այն առաջխաղացման մեխանիզմը, որը տասնամյակներ շարունակ գերիշխում էր խորհրդային երկրներում: Բայց նորը նույնպես դժվար թե արագ ձևավորվի: «Ժողովրդավարական ալիքի» առաջնորդներն իրենց զանգվածում դրսևորեցին բավականին ցածր մասնագիտական որակներ և քաղաքական մշակույթի մակարդակ: Հենց այդ պատճառով առաջիկա տարիներին մենք ստիպված կլինենք լուծել իշխանությունների բաժանման համակարգի ձևավորման խնդիրը՝ հին էլիտայի ակտիվ մասնակցությամբ: Հենց սրանում են կայանում հիմնախնդրի ամենալուրջ հակասություններն ու դժվարությունները:

Իշխանությունների բաժանման համակարգը սահմանադրական կառուցվածքում պետք է ապահովի հավասարակշռություն իշխանության ճյուղերի միջև: Իշխանության երեք ճյուղերի մարմիններն անկախ են իրենց լիազորությունների շրջանակներում և չեն միջամտում այլ մարմինների լիազորություններին: Սակայն դա չի նշանակում, որ այդ մարմինները մեկուսացված են միմյանցից: Վերջին հաշվով, դրանք միասնական պետական իշխանության երեք ստորաբաժանումներն են, որոնք սերտորեն փոխգործակցում են, և առանց դրանցից մեկի՝ մյուսի կայունությունը, անվտանգությունը և առաջընթացը գուրկ են իմաստից:

Թեև վերջին տարիներին վերաբերմունքը պետության նկատմամբ էապես նվազել է, այդուհանդերձ, դրա օգտագործումը իշխանության հեղինակության վերականգնման, ժողովրդավարացման և արդյունավետության բարձրացման համար պետք է ճանաչել նպատակահարմար և անհրաժեշտ: Սակայն կարևոր է հիշել, որ հասարակական-քաղաքական զարգացման մեջ պետության դերի վերականգնման գործընթացը չպետք է մեզ վերա-

դարձնի պետությունների այն տիպերին, որոնք գերիշխում էին անցյալում: Դա պետք է լինի նոր, ժամանակակից պետություն, որը գործում է ժողովրդավարական սկզբունքների հիման վրա և համապատասխանում է քաղաքական համակարգերի զարգացման արդի միտումներին:

Սահմանադրական բարեփոխումների բնագավառում միջազգային փորձը վկայում է այն մասին, որ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման և ապահովման որոշումը կախված է իրավական և սահմանադրական մշակույթի մակարդակից, պետությունների ավանդույթներից, իրավական համակարգում ավանդույթների և սովորույթների տեղից ու դերից:

Համաշխարհային փորձը ցույց է տալիս, որ հնարավոր է նաև իշխանությունների ներթափանցումը միմյանց մեջ: Այս դեպքում առանցքային է լիազորությունների հստակ տարանջատումը, որպեսզի դա չհանգեցնի սահմանադրական ճգնաժամի: Բացի այդ, իշխանությունների միջև փոխհարաբերությունները դրսևորվում են «զսպումների և հակակշիռների» համակարգի միջոցով, որը թույլ չի տալիս իշխանության ճյուղերից որևէ մեկին դուրս գալ իր իրավասության սահմաններից և, ընդհակառակը, հնարավորություն է տալիս իշխանության մի ճյուղին վերահսկել մյուսներին և նրանց պահել իրենց իրավագործության շրջանակներում: Սրա էությունը կայանում է նրանում, որ պետական իշխանության ճյուղերից յուրաքանչյուրն ունի այնպիսի լիազորություններ, որոնք թույլ են տալիս վերահսկել և ազդել մյուս ճյուղերի վրա, համագործակցել միմյանց հետ կարևորագույն պետական որոշումների ընդունման ժամանակ:

Այս առումով կարևոր նշանակություն ունի այն փաստը, որ հասարակության զանգվածային գիտակցության մեջ ավանդաբար ուժեղ է եղել պետության ընկալումը որպես պաշտպանի, կայունության, անվտանգության և առաջընթացի երաշխավորի: Եվ չնայած այն հանգամանքին, որ վերջին տարիներին վերաբերմունքը պետության նկատմամբ կտրուկ նվազել է, այդուհանդերձ, դրա օգտագործումը իշխանության հեղինակության վերականգնման, ժողովրդավարացման և արդյունավետության բարձրացման համար պետք է ճանաչվի նպատակահարմար և անհրաժեշտ: Միևնույն ժամանակ անհրաժեշտ է հիշել, որ հասարակական-քաղաքական զարգացման մեջ պետության դերի վերականգնման գործընթացը չպետք է մեզ վերադարձնի անցյալի պետություններին, որոնք գերիշխում էին մեր երկրում: Դա պետք է լինի նոր, ժամանակակից պետություն, որը գործում է ժողովրդավարական սկզբունքների հիման վրա և համապատասխանում է քաղաքական համակարգերի զարգացման արդի միտումներին: Սահմանադրական բարեփոխումների բնագավառում միջազգա-

յին փորձը վկայում է, որ Սահմանադրության մեջ իրավունքի գերակայության սկզբունքի ամրագրման և ապահովման կոնկրետ որոշումները զգալի չափով կախված են իրավական և սահմանադրական մշակույթի մակարդակից, պետականաշինության ավանդույթներից, իրավական համակարգում ավանդույթների և սովորույթների տեղից ու դերից:

«Հայեցակարգային մոտեցումը կայանում է նրանում, որ իշխանության իրականացման ժամանակ ժողովուրդը և պետությունը պետք է սահմանափակված լինեն մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով: Կարևոր է այն, թե որքանով իրավաչափ են սահմանված այդ սահմանափակումները, ինչպես են դրանք ստանում իրավական որոշակիություն իրավական համակարգի և իրավակիրառ պրակտիկայի սահմանադրականացման միջոցով՝ ապահովելով սահմանադրականությունը»:

Անկախ բազմազան դրսևորումներից, իշխանությունների բաժանումը գոյություն ունի միայն այնտեղ, որտեղ.

1. Առկա է ժողովրդավարական պետություն և շուկայական տնտեսություն (այսինքն՝ ստեղծված են բավարար պայմաններ արտադրողական ուժերի և արտադրական հարաբերությունների ազատ զարգացման համար), հասարակության քաղաքական գիտակցության բարձր մակարդակ.

2. Օրենքն ունի բարձրագույն իրավաբանական ուժ և ընդունվում է օրենսդիր (ներկայացուցչական) իշխանության կողմից.

3. Օրենսդիր և գործադիր իշխանությունների միջև ապահովված է լիազորությունների հավասարակշռություն.

4. Գատական մարմիններն անկախ են և ինքնուրույն իրենց իրավասության շրջանակներում.

5. Նախատեսված են իրավական միջոցներ իշխանության բոլոր ճյուղերի փոխադարձ զսպման համար:

Իշխանությունների բաժանման և զսպման հիմնախնդիրը նախևառաջ բնութագրում է երկրում սահմանադրական ժողովրդավարության և պառլամենտարիզմի զարգացման աստիճանը: Ոչ խորհրդարանական հարաբերություններում այս սկզբունքը ձեռք է բերում յուրօրինակ դրսևորում: Խնդիրը կայանում է նրանում, որ լայն իմաստով իշխանությունների հավասարակշռվածության համար գործառնության դեր է խաղում նաև խորհրդարանական փոքրամասնությունը: Այն պետք է ի վիճակի լինի և հնարավորություն ունենա զսպել քաղաքական մեծամասնությանը սահմանադրական դաշտի շրջանակներում՝ հակադրվելով նրա օրենսդրական գործունեությանը, հանդես գալ որպես իրավասուբյեկտ, որը նաև դատական քննության է ներկայացնում իրավական ակտերի սահմանադրականության հարցը: Հակառակ դեպքում

մենք կբախվենք «դե ֆակտո» միակուսակցական խորհրդարանի և դրանից բխող բոլոր բացասական հետևանքների հետ:

Սահմանադրական մշակումների միջազգային փորձը վկայում է այն մասին, որ նման համակարգերում, անկախ դրանց բարդության աստիճանից, նույնպես գտնվել են արդյունավետ լուծումներ, որոնք ստացել են հասարակական գործնական ստուգում: Սակայն դրա համար կարևոր է այն, որ նախևառաջ անհրաժեշտ է լուծել «գործառնության ստիտուտ-լիազորություն» համակարգի ներդաշնակեցման հարցը: Երկրորդ՝ անհրաժեշտ է հստակեցնել և համաձայնեցնել իշխանության յուրաքանչյուր ճյուղի գործառնությանը, զսպող և սահմանափակող լիազորություններն այնպես, որպեսզի մի կողմից ապահովվի իշխանության յուրաքանչյուր ճյուղի հարաբերականորեն անկախ և լիարժեք գործունեությունը՝ չխախտելով «գործառնություն-ստիտուտ-լիազորություն» համակարգի հավասարակշռությունը, իսկ մյուս կողմից՝ անհրաժեշտ ու բավարար զսպող միջոցների շնորհիվ պահպանվի այդ հավասարակշռությունը դինամիկայի մեջ:

Հայաստանում իշխանությունների բաժանման և հավասարակշռվածության սահմանադրական հիմնախնդիրը պահանջում է ներկա վիճակի համապարփակ գնահատում, առկա թերությունների, խնդրահարույց և անկատար լուծումների վերհանում, դրանց համակարգային վերլուծություն և առաջարկություններ այդ խնդիրների հաղթահարման վերաբերյալ:

Մեզ մոտ առկա խնդիրները պայմանավորված են ինչպես կառավարման ձևի առանձնահատկություններով, այնպես էլ իշխանությունների բաժանման և հավասարակշռվածության սկզբունքի ոչ նպատակահարմար կիրառմամբ, համակարգային առումով անկատար լուծումներով, ինչպես նաև իրավական մշակույթի ցածր մակարդակով և պառլամենտարիզմի ոչ բավարար կայունությամբ:

Սահմանադրական մակարդակում «գործառնություն-ստիտուտ-լիազորություն» եռակազմ շղթայում դեռևս ապահովված չէ անհրաժեշտ ներդաշնակ հարաբերակցությունը: Առանց դրա չի կարող ապահովվել գործառնությանը, զսպող և սահմանափակող լիազորությունների ցանկալի հավասարակշռվածությունը: Վերջինիս բացակայությունը էապես սպառնում է կայուն զարգացմանը, պետական իշխանության իրականացման ոլորտում հանգեցնում է սովերային հարաբերությունների և մեկնաբանության սուբյեկտիվ շրջանակների վտանգավոր ընդլայնմանը:

Անկախ կառավարման ձևից և իշխանությունների բաժանման սկզբունքի ընկալման մակարդակից, ժողովրդավարական վարչակարգերի և իրավական պետության համար անխուսափելի անհրաժեշտություն է ոչ միայն իշխանությունների բա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ժանուճը, այլև հավասարակշռվածությունը: Ինչպես իրավագիտորեն նշում է Լիտվայի Սահմանադրական դատարանի նախկին նախագահ Էգիդիյուս Կուրիսը. «Իշխանությունների բաժանումը ենթադրում է դրանց հավասարակշռություն, իսկ հավասարակշռությունը, ինչպես հասկանալի է, չի կարող լինել այն իշխանությունների միջև, որոնք ունեն տարբեր կշիռ»:

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ ներկայումս առավել ընդունելի են համարվում իշխանությունների բաժանման հետևյալ հիմնական չափանիշները. ա) իշխանության ճյուղերի հարաբերական անկախությունը, բ) անհրաժեշտ սահմանադրական ինստիտուտների, դրանց լիազորությունների առկայությունը, ամբողջականությունը և համապատասխանությունը գործառույթներին, գ) պետական իշխանության հավասարակշռված գործունեության անընդհատության երաշխավորվածությունը, ինչն իր հերթին ենթադրում է ներսահմանադրական երաշխիքների ամրագրում, որոնց օգնությամբ հնարավոր կլինի վերհանել, գնահատել և վերականգնել խաթարված գործառույթային հավասարակշռությունը: Միայն այս դեպքում է հնարավոր ապահովել դինամիկ և ներդաշնակ զարգացում, խուսափել քաղաքական և հասարակական «պայթյունավտանգ» որոշումներից:

Իշխանությունների բաժանման և զսպումների հարցում, որպես այս սահմանադրական սկզբունքի իրական կիրառման գնահատման չափանիշ, սկզբունքային նշանակություն ունի դատական իշխանության արդյունավետ կազմակերպման հիմնախնդիրը, որը պայմանավորված է ոչ միայն այս ոլորտում ինստիտուտների հստակեցմամբ, այլև դատական մարմինների կողմից դրանց լուծման համար սահմանադրաիրավական անհրաժեշտ և երաշխավորված պայմանների առկայությամբ՝ հաշվի առնելով նաև պետական իշխանության օրենսդիր և գործադիր մարմինների կողմից դատական համակարգի վրա ազդեցության պոտենցիալ հնարավորությունը պետության ցանկացած պայմաններում:

Դատական իշխանության տարանջատումը պետական իշխանության մյուս ճյուղերից և դրա սահմանադրաիրավական ամրագրման անհրաժեշտությունը սահմանադրական իրավունքի գիտության առանցքային հիմնախնդիրներից է ժամանակակից ժողովրդավարական համակարգերում, որոնք ընդունում են իշխանությունների բաժանման սկզբունքը. դրա լուծումը կասկածի տակ չի դրվում ինչպես եվրոպական, այնպես էլ ամերիկյան իրավական համակարգերի տեսաբանների կողմից:

Հատուկ ուշադրություն պետք է դարձնել Ազգային ժողովի օրենսդրական գործունեության ամ-

րապնդմանը և նրա վերահսկողական դերին: Դրա համար անհրաժեշտ է.

- Ամրապնդել Ազգային ժողովի դերը պետական իշխանության և կառավարման մարմինների ձևավորման գործում,
- Ուժեղացնել Ազգային ժողովի մարմինների դերը օրենսդրական գործունեության ոլորտում,
- Ընդլայնել Ազգային ժողովի լիազորությունները վերահսկողության բնագավառում,
- Ամրապնդել խորհրդարանական փոքրամասնության իրավունքների սահմանադրական երաշխիքները:

Անհրաժեշտ է ներդնել պետական իշխանության մարմինների միջև սահմանադրական լիազորությունների վերաբերյալ վեճերի իրավաբանական լուծման արդյունավետ համակարգ: Ավելին, սահմանադրական մակարդակում պետք է առավելազույնս բացառել համակարգային կոնֆլիկտները, իսկ իրավական կարգավորման բարձրագույն խնդիրը պետք է դառնա դինամիկ գործառույթային ներդաշնակության ապահովումը:

Անհրաժեշտ է երաշխավորել պետական մարմինների և պաշտոնատար անձանց հանրային-իրավական պատասխանատվությունը իրենց լիազորությունների իրականացման համար: Բոլոր սահմանադրական ինստիտուտների համար պետք է հստակ սահմանվեն նրանց գործառույթները, լիազորությունների շրջանակը և յուրաքանչյուր տարվա արդյունքներով գործունեության հանրային ամփոփման կարգը՝ Սահմանադրությանը և օրենքին համապատասխան:

Սահմանադրական մակարդակում անհրաժեշտ է հստակեցնել գործադիր իշխանության կառուցվածքային համակարգը, ինչպես նաև դրա համակարգային փոխկապակցվածության շրջանակները Հանրապետության Նախագահի և Ազգային ժողովի հետ: Պետք է հաղթահարել այն իրավիճակը, երբ բազմաթիվ գործադիր մարմինների գործունեությունը դուրս է մնում օրենսդիր մարմնի վերահսկողությունից:

Անհրաժեշտ է հնարավորինս շուտ հաղթահարել գործադիր իշխանության գործառույթային տրոհումը: Գործադիր իշխանությունը պետք է օժտված լինի իր գործառույթների կատարման համար համապատասխան լիազորություններով, ընդ որում՝ Հանրապետության Նախագահին պետք է վերապահվեն բացառապես այն լիազորությունները, որոնք համապատասխանում են պետության գլխի նրա դերին և ունեն զսպող ու հավասարակշռող լիազորությունների բնույթ:

Հանրապետության Նախագահը պետք է օժտված լինի Սահմանադրության շրջանակներում գործող լիազորություններով՝ երկրում սահմանադրականության պահպանման մշտական մոնիթորինգ իրականացնելու համար և, դրանից ելնելով,

նպաստի օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բնականոն գործունեության ապահովմանը:

Սահմանադրական մակարդակում պետք է ամրագրվեն և երաշխավորվեն դատական իշխանության գործառնության, կառուցվածքային, նյութական և սոցիալական անկախության համար անհրաժեշտ ու բավարար պայմանները: Այդ պայմանների բացակայությունն անխուսափելիորեն կհանգեցնի կոնֆլիկտային իրավիճակների, և արդյունքում կխաթարվի տվյալ համակարգի ժողովրդավարացման ընդհանուր օրինաչափությունը (եթե պետությունը գտնվում է զարգացման անցումային փուլում) կամ դրա հետագա ժողովրդավարական զարգացումը: Որպես այդպիսի պայմաններ կարևոր են.

Դատական իշխանության անկախության և պետական իշխանության մյուս ճյուղերից դրատարանջատման սահմանադրաիրավական ամրագրումը՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության ապահովման կարևորագույն երաշխիք:

Դատավորների՝ որպես արդարադատություն իրականացնող սուբյեկտների կարգավիճակի սահմանադրաիրավական ամրագրումը և արտակարգ դատարանների գոյության բացառումը:

Դատական համակարգի կառուցվածքի և դրա գործունեության (արդարադատության իրականացման) ընդհանուր սկզբունքների ամրագրումը:

Իսկ ինչո՞վ է պայմանավորված դատական իշխանության գործունեության պայմանների հենց սահմանադրաիրավական ամրագրման անհրաժեշտությունը:

Նախ՝ բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող ակտի միջոցով տվյալ պետության պետական իշխանության ինստիտուցիոնալ համակարգում դատական իշխանության անկախությունը և դրա անկողմնակալ իրականացումը երաշխավորելու համար:

Երկրորդ՝ որպեսզի պետական իշխանության ողջ համակարգի (ներառյալ դատականի) ինստիտուցիոնալ գործունեությունը կառուցվի սահմանադրական օրինականության միասնական սկզբունքի վրա:

Երրորդ՝ որպեսզի ապահովվի դատական իշխանության՝ որպես պետության կարևորագույն սոցիալական գործառնություն իրականացնող ինստիտուտի կայունությունը, ինչպես նաև ապահովվի արդարադատության անխուսափելիությունը:

Չորրորդ՝ որպեսզի երաշխավորվի «զսպումների և հակակշիռների» համակարգի անշեղ կատարումը:

Հայաստանի սահմանադրական իրավունքում իշխանությունների բաժանման (տարանջատման)

և հավասարակշռման հայեցակարգի կիրառումը դիտարկվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի կողմից իր ՄԳՈ-766 որոշման մեջ, որտեղ ասվում է. «...պետական իշխանությունը հանդես է գալիս որպես պետության կողմից կազմակերպված ժողովրդական հանրային իշխանության ձև, որն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա: Այդ բաժանումն իրականացվում է՝ ելնելով իշխանության գործառնության բնույթից, ինչի կապակցությամբ ստեղծվում են անհրաժեշտ կառույցներ՝ իշխանության մարմիններ, որոնք սահմանադրորեն օժտված են համապատասխան լիազորություններով և լիազորված են իրականացնել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար նրանք լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով»:

«Իշխանությունների բաժանման» հայեցակարգը դիտարկել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը իր մի շարք որոշումներում: Այսպես, գնահատելով դատարանի անկախությունը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի համատեքստում, Եվրոպական դատարանը նշում է. «...Ինչ վերաբերում է գործադիր և դատական իշխանությունների բաժանմանը, ապա ոչ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը, ոչ էլ դրա որևէ այլ կետ պետություններից չի պահանջում իշխանությունների փոխազդեցության սահմանները համապատասխանեցնել տեսական սահմանադրական հայեցակարգերին» (Klein and others v. the Netherlands, Judgment of 06 May 2003, 193): Մեկ այլ գործով Դատարանը պնդում է, որ «կառավարության և դատական իշխանության միջև իշխանությունների բաժանման հայեցակարգը կարևոր նշանակություն է ձեռք բերել նախադեպային իրավունքում» (Stanford v. the United Kingdom, Judgment of 28 May 2002, 78): Այսպիսով, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը հաստատել է, որ եվրոպական իրավական համակարգերի բազմազանության պայմաններում իշխանությունների բաժանման սկզբունքի իրացումն ունի օրինաչափ դրսևորում՝ տվյալ սկզբունքի էության անձեռնմխելիության շրջանակներում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության նորմերի և պրակտիկայի վերլուծությունը ցույց է տալիս, որ իշխանությունների բաժանման սկզբունքն ուղեկցվում է որոշակի իրավական պահանջներով, որոնք համակցության մեջ հանգեցնում են հետևյալին.

ա) օրենքները պետք է լինեն իրավաբանորեն հիմնավորված և խստորեն համապատասխանեն Սահմանադրությանը,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

բ) գործադիր իշխանությունը հիմնականում պետք է զբաղվի օրենքների կիրառմամբ, դրանց կատարման ապահովմամբ և միայն խստորեն սահմանափակված դեպքերում կարող է իրականացնել նորմաստեղծ գործունեություն,

գ) պետք է ապահովվի լիազորությունների հավասարակշռություն օրենսդիր և գործադիր մարմինների միջև, ինչը կբացառի կամայական որոշումների ընդունումը, հատկապես՝ ողջ իշխանության կենտրոնացումը դրանցից մեկի ձեռքում,

դ) պրակտիկայում պետք է ապահովվի դատական իշխանության անկախ և ինքնավար համակարգը՝ օժտված լայն վերահսկողական գործառնություններով,

ե) իրավասությանը վերաբերող վեճերը կարող են լուծվել բացառապես սահմանադրական ճանապարհով՝ պատշաճ իրավական գործընթացի պահպանմամբ,

զ) սահմանադրական համակարգը պետք է յուրաքանչյուր իշխանության համար նախատեսի մյուս երկու իշխանությունների կողմից զսպման և հակակշռման իրավական ընթացակարգ, այսինքն՝ իշխանության ճյուղերի միջև փոխադարձ զսպման և հակակշռման մեխանիզմներ:

Նշված պայմանները ամբողջությամբ ամրագրված չեն Սահմանադրության մեջ, սակայն դրանք անվերապահորեն բխում են դրանում ամրագրված իշխանության երեք ճյուղերի միջև փոխհարաբերություններին վերաբերող մի շարք առանցքային դրույթներից և կազմում են այդ դրույթների ներքին տրամաբանությունը:

Այս հարցերի լուծումը քաղաքական համակարգի և քաղաքացիական հասարակության բնա-

կանոն գործունեության գրավական է, ինչին հնարավոր կլինի հասնել քաղաքական և հասարակական կազմակերպությունների նպատակաուղղված գործունեության, հրապարակայնության միջոցով՝ առանց գործողության արմատական և ծայրահեղ մեթոդների:

Ամփոփելով՝ կարելի է ընդհանրացնել. այն բանի սահմանադրական ամրագրումը, որ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարել միայն այնպիսի գործողություններ, որոնց համար նրանք լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, մի կողմից երաշխավորում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի իրացումը, մյուս կողմից՝ երաշխիք է ստեղծվում Սահմանադրության 3-րդ հոդվածում ամրագրված դրույթի իրացման համար, համաձայն որի՝ պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով ու ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք:

Պետական կառավարման համակարգում իշխանությունների բաժանման սկզբունքի հաստատման լավագույն մեթոդը կլինեի ոչ թե նախկին քաղաքական կառույցների լիակատար կործանումը, այլ դրանց աստիճանական, բայց հետևողական էվոլյուցիան՝ լուծվող հիմնախնդիրների և իրավասությունների վերանայմամբ, ինչպես նաև դրանց աշխատանքի արդյունավետության անվերապահ բարձրացման հիման վրա:

Գրականության ցանկ

1. Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ, Երևան, 2014թ., էջ 9: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Կազմ.՝ Գ. Հարությունյան, Ա.Վաղարշյան, Երևան, 2010, էջ 89: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ: Կազմ.՝ Գ. Հարությունյան, Ա.Վաղարշյան, Երևան, 2010, էջ 90:
2. Հեսսե Կ., Գ.ՖՀ սահմանադրական իրավունքի հիմունքները, Մոսկվա, 1981, էջ 237: Սահմանադրությունը XXI դարում: Համեմատաիրավական հետազոտություն: Պատ. խմբ.՝ պրոֆեսոր Վ.Ե.Չիրկին, Մոսկվա, 2014:
3. Էգիդիյուս Կուրիս, Իշխանությունների բաժանման դոկտրինը Լիտվայի Սահմանադրական դատարանի պրակտիկայում: Սահմանադրական դատարանը որպես իշխանությունների բաժանման երաշխավոր: Չեկույցների ժողովածու, Մ., 2004, էջ 106:
4. G. Harutyunyan, A. Mavcic. The Constitutional review and its development in the modern world (a comparative constitutional analysis). Yerevan Ljubljana, 1999, էջ 382:
5. Herman Schwartz, Packing the courts. The conservative campaign to rewrite the Constitution, New York, 1988; Henry J. Abraham, The judicial process, Oxford University Press, 1993; John B. Gates, Charles A. Johnson, The American Courts, A

Critical Assessment, Washington D.C. 1991; King, Minimum Standards of Judicial Independence, 1984; Russell R. Wheeler and Cynthia Harrison «Creating the Federal Judicial System, 1994; M.V. Tushnet, Constitutional Law, New York U.-Press, 1992; Williams Burnham, Introduction to the Law and Legal system of the United States, St. Paul, Minn., 1999; Williams J.S., Constitutional Analysis, St. Paul, 1979:

Мгер Багдсарян

РЕЗЮМЕ

*Основные вопросы совершенствования принципа разделения властей
в контексте конституционных реформ*

В статье рассматриваются основные вопросы совершенствования принципа разделения властей в контексте конституционных реформ. Оцениваются существующие проблемы и рекомендации по совершенствованию системы разделения властей и системы сдержек и противовесов с целью обеспечения эффективного функционирования государственного аппарата и защиты прав человека.

Ключевые слова: принцип разделения властей, конституционные реформы, законодательная власть, исполнительная власть, судебная власть, баланс властей, государственная власть, правовая система, реформа.

Mher Baghdasaryan

SUMMARY

*The main issues of improving the principle of separation
of powers in the context of constitutional reforms*

The article examines the main issues of improving the principle of separation of powers in the context of constitutional reforms. The existing challenges and recommendations for improving the system of separation and checks and balances of powers are assessed in order to ensure the effective functioning of the state apparatus and the protection of human rights.

Key words: principle of separation of powers, constitutional reforms, legislative power, executive power, judicial power, balance of powers, state power, legal system, reform.

Բնագիրը ներկայացվել է 25.05.2026թ.
Ընդունվել է տպագրության 02.06.26թ.

ՄՀԵՐ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

**ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅՈՒՐԱՑՆԵԼՈՒ
ՀԱՆՅԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՏԵՍԱԿ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ,
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՓՈՐՁԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ**

Հոդվածում քննարկվում են իշխանությունը յուրացնելու հանցագործության տեսական և իրավական մոտեցումները՝ ներառյալ այս հանցակազմի սահմանման, կառուցվածքի և պատասխանատվության մեխանիզմների առանձնահատկությունները: Վերլուծվում են իշխանության յուրացման և լիազորությունների գերազանցման դրսևորումները ինչպես պետական, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմիններում:

Առանձնակի ուշադրություն է դարձվում արտասահմանյան առաջադեմ փորձին, մասնավորապես՝ Եվրոպական միության, ԱՄՆ-ի և հետխորհրդային երկրների քրեական օրենսդրություններում իշխանության չարաշահման համար պատասխանատվության մոտեցումներին: Դիտարկվում են դատական վերահսկողության և հակակոռուպցիոն ինստիտուտների դերը լիազորությունների չարաշահումը կանխարգելելու գործում:

Հիմնավորվում է, որ իշխանությունը յուրացնելու հանցագործության արդյունավետ հակազդումն անհնար է առանց սահմանադրական կարգի հիմնարար սկզբունքների՝ իշխանությունների տարանջատման, իրավունքի գերակայության, սուբսիդիարության և ժողովրդավարական հաշվետվողականության պատշաճ ամրագրման և իրականացման: Բացահայտվում են հայաստանյան իրավական համակարգում առկա խնդիրները և առաջարկվում են օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ:

Հիմնարարներ - Իշխանության յուրացում, իշխանության չարաշահում պաշտոնեական հանցագործություններ, սահմանադրական կարգ, իշխանությունների տարանջատում, իրավունքի գերակայություն:

Ներածություն: Իշխանությունը յուրացնելու և պաշտոնական լիազորությունները չարաշահելու հանցագործությունները ժամանակակից ցանկացած իրավական համակարգում համարվում են պետական կառավարման արդյունավետության և օրինականության ամենապուրջ սպառնալիքներից մեկը: Այս արարքները ոչ միայն խաթարում են պետական մարմինների բնականոն գործունեությունը, այլև ուղղակիորեն ոտնահարում են քաղաքացիների իրավունքները, խարխյում հանրային վստահությունը իշխանության նկատմամբ և լուրջ վնաս հասցնում սահմանադրական կարգի հիմքերին: Հանցագործության այս տեսակի հակազդման արդյունավետությունը մեծապես կախված է նրանից, թե որքանով է քրեական օրենսդրությունը ճշգրիտ սահմանում հանցակազմի տարրերը, որքանով են կիրառվող պատասխանատվության մեխանիզմները համապատասխանում վտանգավորության աստիճանին, և, որ ամենակարևորն է, որքանով է ողջ պետական կառավարման համակարգը կառուցված սահմանադրականության սկզբունքների հիման վրա:

Տարբեր երկրներում իշխանությունը յուրացնելու հանցագործության իրավական կարգավորման տարատեսակ մոտեցումները պայմանավորված են ինչպես ազգային իրավական ընտանիքների պատկանելությամբ, այնպես էլ պատմական, քաղաքական և մշակութային առանձնահատկու-

թյուններով: Արևմտաեվրոպական երկրներում, ինչպես նաև ԱՄՆ-ում, իշխանության չարաշահման դեմ պայքարում առանցքային դեր են խաղում դատական վերահսկողության զարգացած ինստիտուտները, հակակոռուպցիոն մասնագիտացված մարմինները և քաղաքացիական հասարակության լայն մասնակցությունը: Հետխորհրդային տարածքի շատ պետություններում, այդ թվում մեր երկրում, չնայած օրենսդրական բարեփոխումներին, դեռևս առկա են լիազորությունների բաշխման անորոշությունը, քաղաքական նեղ շահերից կախյալությունը, դատական համակարգի անկախության անբավարար մակարդակը և արդյունավետ մոնիթորինգի կառուցակարգերի բացակայությունը:

Հետազոտության արդիականությունը պայմանավորված է նրանով, որ իշխանության յուրացումը լուրջ սպառնալիք է սահմանադրական կարգին և պետական կառավարման արդյունավետությանը, իսկ տարբեր երկրների օրենսդրական մոտեցումների համեմատական վերլուծությունը հնարավորություն է տալիս բացահայտել հակակոռուպցիոն լավագույն մեխանիզմները: Հայաստանում ընթացող վարչատարածքային ու դատաիրավական բարեփոխումների պայմաններում չարաշահումների ռիսկերի կանխարգելումը և սահմանադրականության սկզբունքների ամրագրումը դառնում են առանցքային խնդիր, հատկապես միջազգային չափանիշներին համապատասխանեցման պար-

www.araratjournal.com

տավորության համատեքստում:

Պետական իշխանության բռնագավթման հարցը ժամանակակից իրավաբանական գիտության ամենահիմնական, արդիական և վիճահարույց թեմաներից մեկն է, քանի որ այն վերաբերում է պետության իրավական բնույթը սահմանող հիմնարար կատեգորիաներին և ինստիտուցիոնալ սկզբունքներին՝ իշխանության օրինականությանը, իշխանությունների տարանջատման սկզբունքին, հանրային ինստիտուտների իրավական պատասխանատվությանը և իշխանության թույլատրելի վերաբաշխման սահմաններին:

Այս թեմայի արդիականությունը որոշվում է ոչ միայն դրա տեսական նշանակությամբ, այլև գործնական հետևանքներով. գլոբալ քաղաքական վերափոխումների, սահմանադրական բարեփոխումների և ավտորիտար միտումների ամրապնդման համատեքստում իշխանության բռնագավթման սպառնալիքը գնալով ավելի ու ավելի է քողարկվում: Իշխանության բռնագավթումը կարող է իրականացվել ոչ միայն բռնի հեղաշրջման կամ օրենքի կոպիտ խախտման միջոցով, այլև այնպիսի ընթացակարգերով, որոնք, կարծես, համապատասխանում են գործող իրավական կարգին, ինչը զգալիորեն բարդացնում է նման երևույթների ճանաչումը:

Հողվածի նպատակն է բացահայտել իշխանությունը յուրացնելու հանցագործության հիմնական տեսակետները, վերլուծել արտասահմանյան երկրների առաջադեմ փորձը, ինչպես նաև պարզել, թե սահմանադրական կարգի որ հիմնարար սկզբունքներն են առանցքային նշանակություն ունենում այս հանցագործությունների կանխարգելման և դրանց համար արդյունավետ պատասխանատվության մեխանիզմներ ստեղծելու գործում: Արդյունքում կառաջարկվեն օրենսդրական և ինստիտուցիոնալ բարեփոխումներ՝ ուղղված Հայաստանի Հանրապետությունում իշխանության չարաշահման դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը և սահմանադրական կարգի ամրապնդմանը:

Գրականության ակնարկ: Մի շարք երկրների, մասնավորապես նախկին Խորհրդային Միության տարածքում առաջացած պետությունների պետականաշինության գործընթացների խորը վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանցից մի քանիսը, չնայած ազգային սահմանադրությունների մակարդակով պետական և սոցիալական զարգացման հռչակված ժողովրդավարական սկզբունքներին, միտումներ են ցուցաբերում կամ արդեն գործնականում իրականացնում են իշխանության յուրացման ուղղությամբ կոնկրետ քայլեր: Արտաքին պետականաշինությունը (պետականաշինության սահմանադրական դոկտրինայի և պրակտիկայի զարգացումը այդ երկրներում) ընդհանուր առմամբ տեղի է ունենում միջազգային հանրության կողմից մշակ-

ված ժողովրդավարական զարգացման ուղիներին համապատասխան և այդ երկրների Հիմնական օրենքի դրույթների շրջանակներում:

Դուք կարող եք բռնագավթել նաև օրինականորեն ձևավորված իշխանությունը, եթե այն չարաշահում եք, այսինքն՝ օգտագործում եք այն անօրինական նպատակով՝ ի վնաս հասարակության և պետության, գերազանցում եք իշխանության լիազորությունները»:

Պետական իշխանության բռնագավթում (լատ.՝ օգտագործում, անօրինական գավթում, չարաշահում)՝ պետական իշխանության բռնի գավթում կամ դրա յուրացում որևէ կուսակցության, կազմակերպության, պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից, որն ունի նման լիազորություններ կամ որոշակի քանակությամբ լիազորություններ: Սահմանադրությամբ և օրենքներով տրված լիազորությունները չեն պատկանում որևէ կուսակցության: Այն կարող է տեղի ունենալ պետական հեղաշրջման կամ ռազմական հեղաշրջման և այլնի հետևանքով:

Պետական իշխանության բնույթը քննելիս՝ Է. Վյատրը առաջարկում է գիտության մեջ առկա մոտեցումները պայմանականորեն դասակարգել հետևյալ կերպ. «վարքաբանական (իշխանությունը որպես վարքագծի հատուկ տեսակ, որը ազդում է ուրիշների վարքագծի վրա), հեռագրական (իշխանությունը դիտվում է որպես որոշակի նպատակի հասնել), գործիքային (իշխանությունը որպես որոշակի միջոցների օգտագործում), կառուցվածքային (իշխանությունը դիտվում է որպես կառավարվողի և կառավարվողի միջև հարաբերություն), կոնֆլիկտային (իշխանությունը որպես որոշումներ կայացնելու և նյութական բարիքներ բաշխելու ունակություն կոնֆլիկտային իրավիճակներում), իշխանությունը որպես ազդեցություն, հրամաններ և ուրիշների պարտավորություն՝ ենթարկվելու նման հրամաններին»³: Այս դեպքում Է. Վյատրը հավատարիմ է վերջին մոտեցմանը, որը, չնայած էական պարզաբանումների և լրացումների ենթարկվելուն, ընդհանուր առմամբ լայն տարածում է գտել արտասահմանյան գիտական գրականության մեջ և ճանաչվում է բազմաթիվ հետազոտողների կողմից:

Վերոնշյալ մոտեցումները իշխանության յուրացման ընդհանրացնելով կարող ենք ասել, որ դա կարող է տեղի ունենալ իշխանության անօրինական (հակասահմանադրական) գավթման միջոցով, որը կարող է իրականացվել հետևյալի պատճառով՝

- զինված ապստամբություն, պետական հեղաշրջման հետևանքով կամ ռազմական դավադրության հետևանքով.
- ուրիշի լիազորությունների յուրացում՝ սեփական լիազորությունները գերազանցելու կամ ուրիշի լիազորությունները յուրացնելու միջոցով: Լիազորություններ:

- իշխանության չարաշահում, այսինքն՝ դրա օգտագործում անօրինական նպատակով՝ ի վնաս հասարակության և պետության;

- սահմանադրորեն ստեղծված մարմինների և օրինական նշանակված անձանց լուծարում՝ դրա համար օրինական լիազորությունների բացակայության դեպքում, ուժի կիրառմամբ կամ սպառնալիքով՝ սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված կարգով ընտրության կամ նշանակման փոխարեն:

Այսպիսով, իշխանության յուրացումը կարող է լինել ինչպես բռնի գործողություններ, որոնք ակնհայտ են իրենց հասարակական վտանգավորությամբ և անօրինականությամբ (զինված ապստամբություն, պետական հեղաշրջում, ռազմական դավադրություն), այնպես էլ ոչ բռնի գործողություններ, որոնք տեղի են ունենում իշխանության առանձին ճյուղերի լիովին օրինական ներկայացուցիչների կողմից պետական իշխանության զավթման վերաբերյալ համապատասխան ռազմավարության մշակման շնորհիվ (ուրիշի իշխանության վերագրում՝ լիազորությունների գերազանցմամբ կամ ուրիշի լիազորությունների յուրացմամբ. իշխանության չարաշահում. սահմանադրորեն ստեղծված մարմինների և օրինական նշանակված անձանց լուծարում՝ դրա համար օրինական լիազորությունների բացակայության դեպքում և այլն): Իշխանության յուրացման սուբյեկտներ կարող են լինել ցանկացած անձ կամ անձանց խումբ, կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, հասարակական գործիչներ, ռազմական կառույցների ղեկավարներ, անջատողական շարժումների առաջնորդներ, ահաբեկչական խմբավորումների առաջնորդներ, պետական մարմիններ, տեղական ինքնակառավարման մարմիններ, նրանց պաշտոնատար անձինք, ովքեր չունեն իշխանություն կամ Սահմանադրությամբ և օրենքներով որոշակի լիազորություններ:

Ժողովրդավարական, իրավական պետությունում իշխանության բռնազավթման անթույլատրելիությունը պահանջ է, որը նախատեսված է ինստիտուտների կայունությունը, ինքնիշխանության պաշտպանությունը և սահմանադրական կարգը ապահովելու համար: Սակայն, գործնականում, հենց իշխանության իրականացման օրինական մեխանիզմների փոխարինումը, առանձին սուբյեկտների կամ կառույցների կողմից դրա «յուրացումը» և իշխանության ճյուղերի միջև հավասարակշռության խաթարումն է, որը դառնում է քաղաքական ճգնաժամերի, մարդու իրավունքների խախտումների և իրավունքի գերակայության հիմքերի քայքայման հիմնական աղբյուրը:

Պետական իշխանության բռնազավթման սահմանման գիտական մոտեցումների ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված

է նրանով, որ ժամանակակից պայմաններում այն կարող է ընդունել «հիբրիդային» ձևեր՝ քողարկվելով որպես իրավական բարեփոխումներ, արտակարգ միջոցառումներ կամ ինստիտուցիոնալ վերափոխումներ: Մեր կարծիքով, այս երևույթի միասնական իրավական սահմանման բացակայությունը խոչընդոտում է դրա ժամանակին ճանաչմանը և արդյունավետ արձագանքին:

«Չավթում» (լատիներեն *usurpatio* – բռնազավթում, չարտոնված յուրացում) տերմինը լայնորեն օգտագործվել է քաղաքական և իրավական բառապաշարում հնագույն ժամանակներից: Պլատոնի և Արիստոտելի աշխատություններում վերլուծվում են կառավարման այն ձևերը, որոնք շեղվում են իդեալականից, մասնավորապես՝ բռնակալությունը՝ որպես պետական գործառույթների կամայական և անօրինական զավթման ձև՝ առանց ժողովրդի համաձայնության: «Քաղաքականություն» աշխատության մեջ Արիստոտելը նշում է, որ «բռնակալությունը միապետական իշխանություն է, որը ձգտում է մեկ կառավարչի օգտին. օլիգարխիան ձգտում է հարուստների օգտին. Ժողովրդավարությունը ձգտում է աղքատների օգտին. բայց ոչ մեկը չի դիտարկում ընդհանուր բարօրությունը»:

«Օրենքների ոգին» (1748) աշխատության մեջ Շառլ Մոնտեսքյուն ուղղակիորեն կապում է իշխանության բռնազավթումը իշխանությունների տարանջատման սկզբունքի խախտման հետ՝ նշելով, որ «եթե օրենսդիր և գործադիր իշխանությունները միավորվեն մեկ անձի կամ հաստատության մեջ, ազատություն չի լինի, քանի որ պետք է վախենալ, որ այս միապետը կամ սենատը կստեղծեն բռնակալական օրենքներ՝ դրանք նույնքան բռնակալորեն կիրառելու համար: Ազատություն չի լինի նաև, եթե դատական իշխանությունը չառանձնանա օրենսդիր և գործադիր իշխանություններից: Եթե այն միավորված է օրենսդիր իշխանության հետ, ապա քաղաքացիների կյանքն ու ազատությունը կլինեն կամայականության ողորմածության տակ, քանի որ դատավորը կլինի օրենսդիրը: Եթե դատական իշխանությունը միավորված է գործադիրի հետ, ապա դատավորը հնարավորություն է ստանում դառնալ ճնշող» : Այսպիսով, նույնիսկ բնական իրավունքի դասական վարդապետությունների և վաղ լիբերալիզմի շրջանակներում, իշխանության բռնազավթումը դիտվում էր ոչ միայն որպես հանցագործություն, այլև որպես իրավական կարգի ոչնչացման սպառնալիք, որը հետագայում վերածվեց դրական իրավական կատեգորիայի, արտացոլվեց սահմանադրություններում և միջազգային իրավունքում:

20-րդ դարում, հատկապես Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ընկած ժամանակահատվածում, իշխանության բռնազավթման խնդրի նկատմամբ ուշադրությունը մեծացավ ավ-

տորիտար և տոտալիտար ռեժիմների առաջացման պատճառով: Հետազոտողները, մասնավորապես Գ. Քելսենը, ընդգծեցին, որ բռնագավթունը խաթարում է պետական իշխանության իրավական լեգիտիմությունը և պահանջում է դրա ճնշման կամ օրինական կարգի վերականգնման համար նախատեսված մեխանիզմ:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության մեթոդաբանական հիմքը կազմվել է համեմատական-իրավական և համակարգային վերլուծության, ֆորմալ-իրավական մեթոդի և վերլուծության ու սինթեզի մեթոդների միջոցով: Հետազոտության մեթոդաբանությունը հիմնված է իրավական երևույթների բազմակողմանի և համակարգված վերլուծության սկզբունքների վրա, ինչի շրջանակում կիրառվել են ինչպես ընդհանուր գիտական, այնպես էլ հատուկ իրավաբանական մեթոդներ: Համեմատաիրավական մեթոդի կիրառմամբ ուսումնասիրվել և վերլուծվել են Հայաստանի Հանրապետության, Ռուսաստանի Դաշնության, Վրաստանի, Բալթյան երկրների (Լատվիա, Էստոնիա, Լիտվա), Գերմանիայի և Ֆրանսիայի օրենսդրությունները, ինչը հնարավորություն է տվել բացահայտել իշխանության յուրացման հանցակազմի սահմանման, պատասխանատվության մեխանիզմների և տույժերի տարբեր մոտեցումները: Դոգմատիկ (քննադատա-իրավական) մեթոդով իրականացվել է քրեաիրավական նորմերի բովանդակային վերլուծություն, պարզվել են հանցակազմի տարրերի և պատժաչափերի առանձնահատկությունները: Պատմաիրավական մեթոդի շնորհիվ դիտարկվել է իշխանության չարաշահման ինստիտուտի էվոլյուցիան տարբեր իրավական համակարգերում: Ֆորմալ-տրամաբանական մեթոդը կիրառվել է սահմանադրական կարգի հիմունքների (իշխանությունների տարանջատում, իրավունքի գերակայություն, սուբսիդիարություն) և իշխանության յուրացման հանցագործության միջև պատճառահետևանքային կապերի բացահայտման համար:

Վերլուծություն և արդյունքներ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի համաձայն, իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից համարվում է հանցագործություն: Մայր օրենքն այսպիսով սահմանում է պետական իշխանության օգտագործման հիմնարար սկզբունքը:

Ռուսաստանի Դաշնության Քրեական օրենսգրքի 285-րդ հոդվածը սահմանում է քրեական պատասխանատվություն պաշտոնեական դիրքի չարաշահման համար, այսինքն՝ պաշտոնատար անձի կողմից իր լիազորությունների օգտագործումը անձնական կամ երրորդ անձի շահերի համար, ինչը հանգեցնում է քաղաքացիների, կազմակերպությունների, հասարակության կամ պե-

տության իրավունքների և օրինական շահերի էական խախտման:

Ինչպես ցույց է տալիս Ռուսաստանում պետականաշինության պրակտիկան, կան նաև այլ բաղադրիչներ, որոնք նպաստում են իշխանության յուրացմանը: Դրանք ներառում են՝

- սահմանադրական և իրավական մեխանիզմի բացակայությունը կամ դրա անարդյունավետ գործունեությունը մեկ ձեռքում իշխանության չափազանց կենտրոնացումը սահմանափակելու և կանխելու համար, ինչը հանգեցնում է անձնական իշխանության ռեժիմի հաստատմանը, որը չի սահմանափակվում որևէ իրավական հակակշիռներով, երբ իշխանության վրա փաստացի մենաշնորհի կա կամ մեկ անձի, կամ անձանց բավականին սահմանափակ խմբի կողմից՝ նման իշխանության չարաշահման համապատասխան հետևանքներով: Միևնույն ժամանակ, մենք նշում ենք, որ Ռուսաստանի օրինակով կարող ենք պնդել, որ իշխանության նման կենտրոնացումը բավականին հաճախ տեղի է ունենում հակասահմանադրական մարմինների ձեռքում, որոնք կրկնօրինակում կամ փոխարինում են սահմանադրական ինստիտուտները: Այս հակասահմանադրական իշխանության կառուցվածքներից մի քանիսը ձևականացված են, օրինակ՝ նախագահական վարչակազմի ապարատը կամ Ռուսաստանի Անվտանգության խորհուրդը, իսկ որոշները գոյություն ունեն կարծես «քաղաքականությունից դուրս»՝ ինչպես նախագահին մոտ մարդկանց նեղ շրջանակը:

- իշխանությունների տարանջատման սկզբունքը, որը հռչակված է, բայց չի աջակցվում իշխանության հավասարակշռության արտոնություններով, զսպումների և հակակշիռների համակարգի համահարթեցմամբ, որը նպաստում է քաղաքական մոնոկենտրոնության համակարգի ձևավորմանը և օրենսդիր և դատական մարմինների վերափոխմանը իշխանության առանձին անկախ ճյուղերից գերիշխող վարչակազմի հավելվածի, քանի որ կառավարում է պետության ղեկավարը: Այսպիսով, նույն Ռուսաստանում նախագահական լիազորությունների ընդլայնումը և իշխանության մյուս ճյուղերի լիազորությունների նեղացումը տեղի են ունեցել ինչպես պետության ղեկավարի հրամանագրերի, այնպես էլ Սահմանադրական դատարանի դաշնային օրենքների և ակտերի պատճառով, այդ թվում՝ Ռուսաստանի Հիմնական օրենքի մեկնաբանության միջոցով:

- սահմանադրությամբ հռչակված արժեքների ձևական բնույթը, իրավապահ պրակտիկայի անջատումը երկրի Հիմնական օրենքից, նման պրակտիկայի շեղումը սահմանադրությամբ հռչակված պետականության և օրինաստեղծ գործունեության հիմնական սկզբունքներից, դրանց զուգահեռ գոյությունը: Նախևառաջ, խախտվում են

www.ardaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

այնպիսի կարևոր սահմանադրական սկզբունքներ, ինչպիսիք են իշխանությունների տարանջատումը, իրավունքի գերակայությունը, իշխանության փոփոխելիությունը, քաղաքական, տնտեսական, գաղափարախոսական բազմակարծությունը և այլն:

Վրաստանի Քրեական օրենսգրքի 332-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է պատասխանատվություն պաշտոնեական լիազորությունների չարաշահման համար, որը կարող է պատժվել ազատազրկմամբ մինչև հինգ տարի ժամկետով, տուգանքով, ինչպես նաև որոշակի պաշտոններ զբաղեցնելու իրավունքից զրկելով մինչև երեք տարի ժամկետով:

Լատվիայի Հանրապետության Քրեական օրենքի 318-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն պաշտոնեական դիրքի չարաշահման համար, մասնավորապես՝ պաշտոնատար անձի կողմից ծառայողական դիրքը շահադիտական նպատակներով օգտագործելու դեպքում: Այս հանցագործությունը պատժվում է ազատազրկմամբ՝ մինչև հինգ տարի ժամկետով:

Էստոնիայի Քրեական օրենսգրքի 291-րդ հոդվածը նախատեսում է պատասխանատվություն լիազորությունների չարաշահման համար, իսկ

առանձին դեպքերում պատիժը կարող է սահմանվել նաև խիստ պատիժ՝ մինչև ազատազրկում:

Լիտվայի Հանրապետության Քրեական օրենսգրքը նույնպես քրեականացնում է պաշտոնեական դիրքի չարաշահումը, որը պատժվում է տուգանքով կամ ազատազրկմամբ մինչև 6 տարի ժամկետով, եթե արարքը կատարվել է ֆինանսական կամ այլ անձնական շահ ստանալու նպատակով¹¹:

Գերմանիայի Քրեական օրենսգրքի (§ 339 StGB) 339-րդ հոդվածի համաձայն՝ դատավորը կամ պաշտոնատար այլ անձը, ով իր լիազորություններն օգտագործում է կողմնակալ որոշում կայացնելու նպատակով, ենթակա է քրեական պատասխանատվության¹²: Այս հանցակազմը հայտնի է որպես «իրավունքի խեղաթյուրում»:

Ֆրանսիայի Հանրապետության Քրեական օրենսգրքի 432-1 հոդվածը սահմանում է պատասխանատվություն իշխանության կամ պաշտոնական լիազորությունների չարաշահման համար: Այս հանցագործությունը պատժվում է 10 տարվա ազատազրկմամբ և 150,000 եվրոյի չափով տուգանքով:

Աղյուսակ 1

ՀՀ և այլ պետությունների իշխանությունների յուրացման իրավական հետևանքները

Պետություն	Իրավական ակտ / հոդված	Հանցակազմի բովանդակություն	Պատիժ
Հայաստանի Հանրապետություն	Սահմանադրություն, հոդ. 3	Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից համարվում է հանցագործություն	Սահմանադրական արգելք
Ռուսաստանի Դաշնություն	ՔՕ հոդ. 285	Պաշտոնեական դիրքի չարաշահում՝ անձնական կամ երրորդ անձի շահերի համար	Քրեական պատասխանատվություն
Վրաստան	ՔՕ հոդ. 332, մաս 1	Պաշտոնեական լիազորությունների չարաշահում	Ազատազրկում մինչև 5 տարի, տուգանք, պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկում մինչև 3 տարի
Լատվիայի Հանրապետություն	Քրեական օրենք հոդ. 318	Ծառայողական դիրքի օգտագործում շահադիտական նպատակներով	Ազատազրկում մինչև 5 տարի
Էստոնիա	ՔՕ հոդ. 291	Լիազորությունների չարաշահում	Տուգանք կամ ազատազրկում
Լիտվայի Հանրապետություն	Քրեական օրենսգրք	Պաշտոնեական դիրքի չարաշահում՝ ֆինանսական կամ անձնական շահ ստանալու նպատակով	Տուգանք կամ ազատազրկում մինչև 6 տարի
Գերմանիա	StGB §339	«Իրավունքի խեղաթյուրում»՝ դատավորի կամ պաշտոնատար անձի կողմից լիազորությունների կողմնակալ օգտագործում	Քրեական պատասխանատվություն
Ֆրանսիայի Հանրապետություն	ՔՕ հոդ. 432-1	Իշխանության կամ պաշտոնական լիազորությունների չարաշահում	Ազատազրկում մինչև 10 տարի և 150,000 եվրո տուգանք

Համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած բոլոր ութ պետություններում իշխանության յուրացումը քրեորեն պատժելի է, դրա որակյան չափանիշներն ու պատժի խստությունը զգալիորեն տարբերվում են: Ամենախիստ մոտեցումն առանձնանում է ֆրանսիական և ռուսական օրենսդրություններում, որոնք նախատեսում են ազատազրկման առավելագույն ժամկետներ (համապատասխանաբար 10 տարի), մինչդեռ Հայաստանը, Վրաստանը և Լատվիան ունեն 3-8 տարվա սահմանաչափեր:

Քրեաիրավական նորմերի բովանդակային ուսումնասիրությունը ցույց է տվել, որ իշխանությունը յուրացնելու հանցակազմի տարրերը զգալիորեն տարբերվում են ըստ երկրների: Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածը որպես պարտադիր հետևանք սահմանում է «էական վնասը», որը, սակայն, օրենսդրորեն հստակեցված չէ թողնելով դատական հայեցողության լայն դաշտ: Ի հակադրություն սրան, Գերմանիայի քրեական օրենսգրքի 339-րդ հոդվածը (Rechtsbeugung) հանցակազմի էական տարր է համարում օրենքի «դիտավորյալ խեղաթյուրումը» առանց պարտադիր նյութական վնասի, ինչն ավելի շատ շեշտում է արարքի ձևական անօրինականությունը: Ֆրանսիական մոտեցումը (Հոդված 432-1) առանձնանում է նրանով, որ հանցակազմը սահմանում է որպես «օրենքի կիրարկումը խոչընդոտելուն միտված միջոցառումներ», այլ ոչ թե ուղղակի լիազորությունների չարաշահում: Ռուսաստանի Դաշնության 285-րդ հոդվածը, ինչպես և Հայաստանը, պահանջում է «իրավունքների և օրինական շահերի էական խախտում», սակայն առանձնացնում է որակավորող հանգամանքներ (պաշտոնի բարձրաստիճան լինելը, ծանր հետևանքները), ինչը մանրամասնեցնում է տույժի անհատականացումը: Վերլուծությունը բացահայտում է, որ հետխորհրդային երկրներում (Հայաստան, Ռուսաստան, Վրաստան, Լատվիա, Լիտվա) հանցակազմը հիմնականում կառուցված է «նյութական վնաս» տրամաբանությամբ, մինչդեռ եվրոպական իրավական ընտանիքում (Գերմանիա, Ֆրանսիա) գերակշռում է «օրենքի խեղաթյուրման» ձևական մոտեցումը, որն ավելի արդյունավետ է համարվում իշխանության չարաշահման կանխարգելման տեսանկյունից:

Իշխանության չարաշահման ինստիտուտի էվոլյուցիան ցույց է տալիս, որ այս հանցագործության ըմբռնումը զարգացել է իշխանությունների տարանջատման սկզբունքի ամրապնդմանը գույճաբար: Ֆրանսիայում հեղափոխությունից հետո ձևավորված ավանդույթը հատկապես զգայուն է եղել իշխանության կամայականությունների նկատմամբ, ինչի արդյունքում արդեն 1791 թվականի օրենսդրությամբ սահմանվել է պաշտոնատար

անձանց պատասխանատվությունը: Գերմանիայում Rechtsbeugung հանցակազմը ձևավորվել է 19-րդ դարում արձագանքելով ֆեոդալական դատարանների կամայականություններին, և մինչ օրս այն մնում է դատավորների համար առանձնահատուկ պատասխանատվության ինստիտուտ: որի դրա յին իրավունքում, որի ժառանգությունն են կրում Հայաստանը, Ռուսաստանը և Բալթյան երկրները, իշխանության յուրացումը երկար ժամանակ դիտարկվել է հիմնականում «պետական ապարատի» պաշտպանության տեսանկյունից, այլ ոչ թե անհատի իրավունքների: Հետխորհրդային տարածքում անցումը շուկայական տնտեսության և ժողովրդավարական ինստիտուտներին 1990-2000-ական թվականներին հանգեցրեց օրենսդրությունների վերանայմանը, սակայն, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը, Հայաստանի և Ռուսաստանի քրեական օրենսգրքերում դեռևս զգացվում է խորհրդային մոտեցման ազդեցությունը «էական վնասի» ոչ հստակ սահմանման և գործընթացային երաշխիքների թուլության տեսքով: Բալթյան երկրները (Լատվիա, Էստոնիա, Լիտվա), անկախություն վերականգնելուց հետո, ավելի ակտիվորեն ինտեգրվեցին եվրոպական իրավական չափանիշներին, ինչի արդյունքում նրանց օրենսդրություններում պատժաչափերը և հանցակազմի տարրերը էապես մոտեցան գերմանական և ֆրանսիական մոդելներին:

Սահմանադրական կարգի հիմունքների (իշխանությունների տարանջատում, իրավունքի գերակայություն, սուբսիդիարություն) և իշխանության յուրացման հանցագործության միջև պատճառահետևանքային կապերի բացահայտումը ցույց է տալիս հետևյալ տրամաբանությունը. եթե պետությունում իշխանությունների տարանջատման սկզբունքը թույլ է ամրապնդված կամ անարդյունավետ է գործնականում, ապա գործադիր իշխանության մարմինները հակված են յուրացնելու օրենսդիր և դատական լիազորություններ, ինչը նախադրյալներ է ստեղծում քրեական պատասխանատվության մեխանիզմների խուսափման համար: Իրավունքի գերակայության սկզբունքի խախտումն արտահայտվում է նրանով, որ պաշտոնատար անձինք իրենց ոչ թե օրենքին, այլ «նպատակահարմարությանը» ենթարկվելու դեպքում ավելի հաճախ են դիմում լիազորությունների գերազանցման: Սուբսիդիարության սկզբունքի (լիազորությունների բաշխման) թուլությունը, այսինքն՝ կենտրոնական իշխանության կողմից տեղական ինքնակառավարման լիազորությունների անհիմն կենտրոնացումը, հակառակ ակնկալիքին, չի նվազեցնում, այլ մեծացնում է իշխանության յուրացման ռիսկերը. քանի որ որոշումներն ընդունվում են քաղաքացուց հեռու, դրանց նկատմամբ հանրային վերահսկողությունը թուլանում է: Օրի-

www.aradaradutyjournal.com

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նակ, Հայաստանում մինչ համայնքների խոշորացումը գործող 915 համայնքները թեկուզ սահմանափակ, բայց ավելի անմիջական վերահսկելի էին, մինչդեռ խոշորացված 71 համայնքներում, չնայած ռեսուրսների ավելացմանը, հանրային վերահսկողության մեխանիզմները չեն հասցրել ադապտացվել նոր մասշտաբներին, ինչը պոտենցիալ բարձրացնում է չարաշահումների ռիսկը:

Եզրակացություններ: Իշխանության յուրացման հանցագործության կարգավորման մոտեցումները զգալիորեն տարբերվում են ըստ իրավական համակարգերի. եվրոպական երկրներում (Գերմանիա, Ֆրանսիա) շեշտը դրված է օրենքի խեղաթյուրման ձևական հանցակազմի վրա, մինչդեռ հետխորհրդային պետություններում գերակշռում է «նյութական վնասի» պահանջը: Հայաստանի օրենսդրությունը հիմնականում համահունչ է հետխորհրդային տարածքի մոդելին, սակայն «էական վնասի» հասկացության անորոշությունը, դատական անկախության սահմանափակումները և սահմանադրական կարգի հիմունքների (իշխանությունների տարանջատում, իրավունքի գերակայություն) ոչ լիարժեք իրականացումը խոչընդոտում են արդյունավետ հակազդմանը: Արտասահմանյան փորձը ցույց է տալիս, որ առանց ինստիտուցիոնալ բարեփոխումների, քրեաիրավական նորմերը մնում են անարդյունավետ:

Ըստ կատարված վերլուծության առաջարկվում է.

- Քրեական օրենսդրության ճշգրտում. ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածում օրենսդրուրեն հստակեցնել «էական վնասի» չափանիշները (օրինակ՝ արժույթային արտահայտությամբ կամ սոցիալական հետևանքների ծանրության աստիճանով)՝ հետևելով գերմանական և ֆրանսիական մոդելներին, որտեղ գերակշռում է օրենքի խեղաթյուրման ձևական հանցակազմը:

- Դատական անկախության ամրապնդում. Սահմանադրական մակարդակով ամրագրել դատավորների նշանակման, կարգապահական պատասխանատվության և գործերի բաշխման թափանցիկ մեխանիզմներ՝ իշխանության յուրացման գործերով հետապնդումից դատական համակարգի պաշտպանվածությունն ապահովելու համար:

- Հանրային վերահսկողության և մասնակցության մեխանիզմների ներդրում. Պարտադիր դարձնել տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ռազմավարական պլանների և խոշոր ծախսային որոշումների նախագծերի հանրային քննարկումը, ինչպես նաև ստեղծել անկախ մոնիթորինգի էլեկտրոնային հարթակ՝ քաղաքացիների կողմից պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ հաղորդումների ներկայացման և դրանց արձանագրման համար:

¹ Юридический научно-практический словарь-справочник (основные термины и понятия) / Скакун О.Ф., Бондаренко Д.А. / Под общ. ред. профессора Скакун О.Ф. Харьков: Эспада, 2007. 488 с.

² Y.S. Shemshuchenko (ed.) et al. Kyiv: M.P. Bazhan Ukrainian Encyclopedia, 2004. Vol. 6: T–Ya. 768 p` <https://kup.edu.ua/doc/juridichna-enciklopedija-v-6-t.-redkol.-ju.s.-shemshuchenko-vidp.-red.-ta-in.pdf>

³ Вятр Е. Социология политических отношений. М.: Прогресс, 1979. 464 с

⁴ Аристотель. Политика. М.: Академический проект, 2020. 318 с., <https://www.litres.ru/book/aristotel/politika-18979153/chitat-onlayn/>

⁵ Монтескье Ш.Л. О духе законов. М.: РИПОЛ Классик, 2019. 690 с.` <https://www.litres.ru/book/sharl-monteske/oduhe-zakonov-43135312/chitat-onlayn/>

⁶ Hans Kelsen General Theory of Law and State. Cambridge: Harvard University Press, 1949. 516 p

⁷ Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդված 3` <https://www.president.am/hy/constitution-2015/>
⁸ УК РФ Статья 285. Злоупотребление должностными полномочиями` <https://www.consultant.ru/document/>

cons_doc_LAW_10699/2da8d7a9884839c44d98466e0b1a63101b298844/

Investigation is underway under first part of article 332 of the Criminal Code of Georgia, which envisages imprisonment up to 3 years` <https://is.ge/>

¹⁰ “Dienesta stāvokļa ļaunprātīga izmantošana”: <https://likumi.lv/>

¹¹ Valstybės tarnautojas ar jam prilygintas asmuo, piktnaudžiavęs tarnybine padėtimi` <https://lrvalstybe.lt/>

¹² “German Criminal Code” (Strafgesetzbuch — StGB), § 339 “Rechtsbeugung” (Distortion of law). https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html

¹³ Criminal Code of the French Republic (Code pénal),

https://www.vertic.org/media/National%20Legislation/France/FR_Code_Penal_extracts.pdf

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Հոդված 3: Ընդունված է 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով: <https://www.president.am/hy/constitution-2015>
2. Аристотель. Политика. – М.: Академический проект, 2020. – 318 с. Режим доступа: <https://www.litres.ru/book/aristotel/politika-18979153/chitat-onlayn/>
3. Вятр Е. Социология политических отношений. – М.: Прогресс, 1979. – 464 с.
4. Монтескье Ш.Л. О духе законов. – М.: РИПОЛ Классик, 2019. – 690 с. Режим доступа: <https://www.litres.ru/book/sharl-monteske/o-duhe-zakonov-43135312/chitat-onlayn/>
5. Скакун О.Ф., Бондаренко Д.А. Юридический научно-практический словарь-справочник (основные термины и понятия) / Под общ. ред. профессора Скакун О.Ф. – Харьков: Эспада, 2007. – 488 с.
6. Уголовный кодекс Российской Федерации, Статья 285 «Злоупотребление должностными полномочиями». Режим доступа: https://www.consultant.ru/document/cons_doc_LAW_10699/2da8d7a9884839c44d98466e0b1a63101b298844/
7. Criminal Code of the French Republic (Code pénal), Article 432-1. Available at: https://www.vertic.org/media/National%20Legislation/France/FR_Code_Penal_extracts.pdf
8. “Dienesta stāvokļa ļaunprātīga izmantošana” (Latvian Criminal Code, Article 318). Available at: <https://likumi.lv/>
9. German Criminal Code (Strafgesetzbuch — StGB), § 339 “Rechtsbeugung” (Perverting the course of justice). Available at: https://www.gesetze-im-internet.de/englisch_stgb/englisch_stgb.html
10. Hans Kelsen. General Theory of Law and State. – Cambridge: Harvard University Press, 1949. – 516 p.
11. Investigation is underway under first part of article 332 of the Criminal Code of Georgia (abuse of official authority). Available at: <https://is.ge/>
12. Valstybės tarnautojas ar jam prilygintas asmuo, piktnaudžiavęs tarnybine padėtimi (Lithuanian Criminal Code, Article 228). Available at: <https://lrvalstybe.lt/>
13. Y.S. Shemshuchenko (ed.) et al. Legal Encyclopedia. – Kyiv: M.P. Bazhan Ukrainian Encyclopedia, 2004. – Vol. 6: T–Ya. – 768 p. Available at: <https://kup.edu.ua/doc/juridichna-enciklopedija-v-6-t.-redkol.-ju.s.-shemshuchenko-vidp.-red.-ta-in.pdf>

РЕЗЮМЕ

Различные подходы к преступлению насильственного захвата власти насильственного удержания власти, зарубежный опыт и основы конституционного порядка.

В статье рассматриваются теоретические и правовые подходы к преступлению узурпации власти, включая особенности определения, структуры и механизмов ответственности за это преступление. Анализируются проявления узурпации власти и злоупотребления властью как в государственных, так и в органах местного самоуправления.

Особое внимание уделяется передовому зарубежному опыту, в частности, подходам к ответственности за злоупотребление властью в уголовном законодательстве Европейского союза, США и постсоветских стран. Рассматривается роль судебного контроля и антикоррупционных институтов в предотвращении злоупотребления властью.

Обосновывается невозможность эффективного противодействия преступлению узурпации власти без надлежащего закрепления и реализации основополагающих принципов конституционного порядка: разделения властей, верховенства права, subsidiarity и демократической подотчетности. Выявлены проблемы, существующие в армянской правовой системе, и предложены законодательные и институциональные реформы.

Ключевые слова: узурпация власти, злоупотребление властью, преступления должностных лиц, конституционный порядок, разделение властей, верховенство права.

Mher Baghdasaryan

SUMMARY

Various approaches to the crime of usurping power, foreign experience and the foundations of the constitutional order

The article discusses the theoretical and legal approaches to the crime of usurpation of power, including the features of the definition, structure and mechanisms of responsibility for this crime. The manifestations of usurpation of power and abuse of authority in both state and local self-government bodies are analysed.

Particular attention is paid to advanced foreign experience, in particular, to the approaches to responsibility for abuse of power in the criminal legislation of the European Union, the USA and post-Soviet countries. The role of judicial control and anti-corruption institutions in preventing abuse of authority is considered.

It is substantiated that effective counteraction to the crime of usurpation of power is impossible without proper fixation and implementation of the fundamental principles of the constitutional order: separation of powers, rule of law, subsidiarity and democratic accountability. The problems existing in the Armenian legal system are identified and legislative and institutional reforms are proposed.

Key words: Usurpation of power, abuse of power, official crimes, constitutional order, separation of powers, rule of law.

Բնագիրը ներկայացվել է 25.05.2026թ.
Ընդունվել է տպագրության 02.06.26թ.

JUSTICE
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

ISSN 1829 1252

